

Խորեն Արամունի
ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆԸ

Խմբագիր՝ Նարե Դավթյան
Սրբագրիչ՝ Զուլիխետա Խաչատրյան
Ձևավորումը՝ Խորեն Արամունի
Հեղինակի գծանկարը՝ Էմիլ Գազազի

Khoren Aramouni
House of Correction

Editor - Nare Davtyan
Copy Editor - Julieta Khachatryan
Design - Khoren Aramouni
Sketch Portrait of the Author - Emil Kazaz

ISBN 978-9939-52-033-9

Տպարան



... Մինչ ընթերցելդ

...ասեմ, որ գրքում, երկիր մոլորակի վրա տեղի ունեցած իրական կյանքի պատմություն է, իմ կյանքի մի փոքրիկ ժամանակաշրջան, համառոտ, իրական և պարզ:

1969 թվին մուտք եմ գործել Սովետական Միություն և փաստ փարի անց ճողոպրել դուրս:

Թե իրենից ինչ է ներկայացնում այս գիրքը, թող որոշի ընթերցողը: Անշամբ ես խորին համոզումով կասեի, որ սա լոկ վավերագրություն չէ, այլ կյանքի մի բով, որով անցել են հայրենադարձված սերնդակից իմ ընկերներն ու բարեկամները՝ յուրաքանչյուրը յուրովի:

Գրքում կհանդիպեք կերպարների, որոնց անունները միտումնավոր չեմ նշել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ մարդիկ, ժամանակի պահանջից ու պայմանների թելադրանքից ելնելով հեռացել են իրենց ճշմարիտ, գուցե և վեհ մարդկային խառնվածքից, սակայն նաև կան մարդիկ, որոնք կրում են իրենց իրական անունները:

Խ. Արամունի

Խորեն Արամունի

ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆԸ

Պարզ վկայագրություն

Երևան
2008 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Բարև, Չարենց...

Վերջերս վերընթերցեցի «Երևանի ուղղիչ տնից» գործը: Քանի որ էր, ինչ մղձավանջներով էի պառկում: Ուսանող ժամանակ էլ էի կարդացել այդ գործը, բայց կարդացել էի կարդալու համար, քննություն հանձնելու համար, իսկ հիմա գտա, որ բերանս ջուր գցող բանաստեղծիս այս գործի տակ ինչ-որ առեղծված է թաքնված: Ախր, անունդ լսելիս կամ արտասանելիս աներևույթ մի գոյ է պարփակում ինձ ու կարոտ եմ զգում, կարոտ ընթերցանության, որը այսօր դարձել է դասական հաճույք, կարոտ՝ բառին, կարոտ՝ «ես իմ անուշ Հայաստանի...», քո նկատմամբ դարձել եմ Պավլովի շունը: Պավլովը շանը կերակրելուց առաջ զանգ էր հնչեցնում, որոշ ժամանակ անց, նկատեց, որ զանգը հնչեցնելուց հետո, մինչև կերակրելը, շան բերանը ջուր է ընկնում, հիմա ես դարձել եմ էն շունը, իսկ դու և քո բառը՝ բերանս ջուր գցող զանգակ:

Գիտե՞ս ինչ, Եղիշե ջան, Սովետական Միությունը, գոնե ինձ համար դարձավ «ուղղիչ տուն»: Նույն ուղղիչ տունը, որտեղ դու «վայելել» ես ընդամենը վեց ամիս, իսկ ես՝ տաս տարի: Դու սկսում ես այսպես. «Իրերի դժբախտ քերումով ես առիթ ունեցա մուր վեց ամսվա ընթաց-

քում բավականին ծանոթանալու Երևանի Ուղղիչ Տան կյանքին և այժմ ես ուզում եմ նկարագրել այդ հետաքրքիր վայրը...»:

Այդ «...հետաքրքիր վայրը...» ընկնելու համար միլիոնավոր սփյուռքահայեր էին երազում:

Անգամ կարդացածս գրքերի մեջ դեռ չեմ հանդիպել մի բանտարկյալի, որը իր կրած տարիների առաջին իսկ օրվանից բանտախցում տարբեր հարկերից եկող երաժըշտություն լսի ու հմայվի «քամանչայի կրծքային» թավ ձայնից. «Բաց պատուհանի միջից ես րեսսա դիմացը մի շարք լուսավոր պատուհաններ և այդ պատուհաններից իմ ականջին հասան երգի, մանդոլինի, սրինգի, քամանչի և բարձր խոսակցության ու ծիծաղի ձայներ»:

Եղիշե ջան, այնպես ես գրում, կարծես բանտի փոխարեն քեզ Կոմիտասի անվան երաժշտանոցն են տարել: Շատ լավ ես սկսել, անցնենք առաջ:

Չանձրուլթի փոխարեն անմիջապես քեզ տիրում է մի «անուշ տիրություն». «խորը օպորիմիստական տիրություն», որով համակված է նաև «Բեթովենի հերոսական երաժշտությունը, որն այնքան սիրում էր Վլադիմիր Իլյիչ Լենինը»: Թե Լենինը ինչ գործ ունի այստեղ... Գիտեմ, հիմա ժպտում ես:

Հետո հետաքրքիր է, որ բանտում առաջին քո այցելող հիվանդապահ Մնոյը, ժպտալով թեյ է առաջարկում, հա-

մաճայնվում է լուսամուտը գիշերով բաց թողնել (որը արգելված էր) ու դուք եկել եք այն եզրակացության, որ. «Այսպեղ այնքան էլ մռայլ չէ..., ինչպես եղել է քեռի Գուստոսկու «Մռայլ Տանը...»: Եվ այդ օրվանից ձեր առաջ բացվում է. «Միանգամայն անծանոթ, աներևակայելի, իր յուրօրինակությամբ և անսպասելիությամբ համարյա զարմանալի մի աշխարհ...»:

Ես ևս, նույնը կգրեի այն օրերի մասին, երբ մուտք գործեցի միանգամայն անծանոթ, աներևակայելի, իր յուրօրինակությամբ և տարօրինակությամբ, համարյա զարմանալի մի աշխարհ, որն այնքան էլ նման չէր «Երևանն է խոսում»-ի նկարագրված «Լենին պապիկի» ստեղծած դրախտին, որը կոչվում էր՝ Սովետական Միություն :

Եղիշե ջան, զարմանում եմ, որ «Ուղղիչ Տան» պետք առաջին անգամ քեզ հանդիպելիս ժպտացել է: Հետո ուղղիչ տան պետք զենք չի ունեցել, առաջինը ինքն է հայտնել իր ազգանունը, հայտնել է, որ առավոտից մինչև երեկոյան ժամը յոթն ազատ ես, մինչև գիշերվա տասներկուսը կարող ես գնալ կուլտ-բաժին, մինչև ինը-տասը գրադարան-ընթերցարանը բաց է, սիրով խոստացել է կատարել քո ցանկությունները և անմիջապես քեզ գրասեղան է խոստացել: Հետո ասել է, թե կալանավոր բանվորները ազատ են, ցերեկը գնում են դուրս՝ աշխատանքի, իսկ

երեկոյան վերադառնում են, դա տեղի է ունենում առանց պահակների ուղեկցութեան, առանց հսկիչների, որովհետև հին ժամանակներն անցել էին: Հետո առաջարկում է թեյ խմել ու գնալ, ծանոթանալ տեղի արհեստանոցներին՝ կոշկակարանոց, դերձականոց, հյուսնոց, դարբնոց, խոզանականոց և այլն... Հետո սկսում են զարմանալ մաքուր, կոկ հագնված, սափրված, ինտե-լիգենտի արտաքին ունեցող այն երիտասարդների վրա, որոնք աշխատում էին հիվանդանոցում: Հետո ծանոթանում են «միջնորդ» կանանց՝ Անուշի ու Մարգարիտի հետ, որոնց հետագայում կարոտով կամ ափսոսանքով են հիշում. «Նայես ի՞նչ են ամուսնում հիմա նրանք՝ Մարգարիտն ու Անուշը»:

Այս ամենից հետո հանդիպեցի մի դրվագի, որը դառը հուշ արթնացրեց:

Մեջբերեմ քո իսկ տողերը.

- Ծանոթացիր,-ներկայացրեց նրան Բենժամենը,- մեր Լազգին է, սանիտարական սեկցիայի նախագահի օգնականը:

Ես սեղմեցի Լազգու ձեռքը, և նրա դեմքը բավականությունից վարդի տեսք ընդունեց:

- Ինչո՞ւ համար ես բռնված:
- Հե՛ջ: Չնչին բանի:
- Ո՞նց թե չնչին բանի:
- Բյա հի՞նչ: Մե՛ կնկա խամար: Պոռնիկ կնկա խամար:

- Ի՞նչ արիր որ...

- Հե՛ջ: գլուխը կտրի, դրի ոտքերու արանք: Հարբած
ի: Բռնիւն բերին:

- Բյա դա հեջ է, որ ասում ես «Հեջ»:

- Բյա հի՞նչ, կնիկն հի՞նչ ա՛՝ կնկա խամար բռնեն՝
թալեն Ուղղիչ Տուն: Աշխարք հենքան կնիկ կա... Շնի՛ց
շար:

Չնայած դու էլ ես կնոջ վրա կրակել (քո պարագայում
պատճառներն ինձ շատ չեն հուզում) հանճարեղ մարդ ես
ու դա համարում ենք տիպիկ երևույթ ու... Լավ, անցնենք
առաջ:

Եղիշե ջան, ես քո հանճարը տեսնում եմ նաև այս
գործում, քանի, որ աշխարհում և ոչ մի տեղ, ոչ մի բան-
տում կալանավորը, հատկապես, մտավորական կալանա-
վորը, չի կարող երկրորդ օրն իսկ բակ դուրս գալ, հիանալ
այնտեղի մաքրությանմբ ու անասելի տպավորությամբ
խոսել այն ծաղկանոցի մասին, որի շուրջ դրված ցածրիկ,
երկարավուն նստարաններին նստած կալանավորներն
ընթերցանությամբ էին զբաղված:

Ընթերցողին թվում է, թե խոսում ես Նիկոլայ երկրորդի
պալատի պարտեզների ու ծաղկանոցների մասին, մանա-
վանդ, որ ասում ես՝ «մի վայրկյան եթե մոռանալու
լինեի՛նք Ուղղիչ Տան պատերը՝ կարող էր թվալ թե
ազատ քաղաքացիներ են քաղաքային բուլվարում...»:

Փաստորեն, սովետական կարգերը վեց տարի շարու-

նակ միայն ցարական բանտի վերափոխմամբ է զբաղվել...

Բայց արդյո՞ք վերափոխվել էր:

Հիմա ես եմ գրում.

Բախտի բերումով ես առիթ ունեցա մոտ տաս տարվա ընթացքում բավականին ծանոթանալու Սովետական Միության Ուղղիչ Տան կյանքին և այժմ ուզում եմ նկարագրել այդ հետաքրքիր վայրը...

Ես իմ անուշ Հայաստանի անկախացած դարը եմ սիրում:

ՀԱՅՐԵՆԻՔ, ՈՐԻՆ ՏՎԵՑԻՆՔ ՄԵՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինձ թվում է, մինչև հիմա գնացքի հետևից վազում են, արտասավխառն աչքերով ձեռք են թափահարում ու երանի տալով՝ բարի ճանապարհ մաղթում: Ինձ թվում է, մինչև հիմա տեղ չեմ հասել, գնացքը իր ուրիշ-միկ երաժշտությամբ մեզ ուղեկցում է դեպի ավետյաց երկիր, դրախտավայր՝ Հայաստան:

Գնում էինք հասարակ մարդուն արժանավայել կյանքով ապրելու: Գնում էինք մեզ գտնելու, ձուլվելու մեր իսկ էություն մեջ, արմատ գցելու, հայրենի հողում ամրանալու:

Գնում էինք...

Մինչև սահման եղբայրս մեզ հետ էր: Նա հրաժարվել էր սովետական ամեն ինչից: Մինչև սահման, համարյա, խոսք չփոխանակեցինք: Լուռ էինք: Ընտանիքի բոլոր անդամներս լուռ էինք: Մեր նախա-

դասություններին փոխարինելու էին եկել կարճ ու կտրուկ, շատ անհրաժեշտ բառեր՝ հա, չէ, կեր, քնիր, նստիր, գլխի շարժում, ձեռք, աչք, նշաններ... այնքան, որ իրար հասկանանք:

Միմյանց աչքերի մէջ նայել չէինք կարողանում: Մեղավորի ու անմեղի զգացումը սպանում էր, ո՞վ էր մեղավորը, ով՝ անմեղը, կամ ի՞նչ մեղավորի ու անմեղի խոսք կարող էր լինել...

Գնացքը շարունակ երկարում էր, քիթը՝ Ջուլֆա, պոչը՝ Թեհրան: Կտրվելուց էինք վախենում:

Մեր անխոս ու լուռ զրույցը տեքց մինչև Իրանի սահմանամերձ քաղաք՝ Ջուլֆան, որտեղ էլ տեղի ունեցավ գնացքի փոխանակում և մեզ փոխադրեցին սովետական պոեզ (գնացք):

Գնացքը կտրվեց: Կտրվեցին նաև մեր պորտալարերը: Նոր ծնունդ, նոր աշխարհ:

Իջնել հնարավոր չէր, ձայնդ գնացքից դուրս չէր գնում, լուսամուտները չէին բացվում, հաղորդակցման միակ միջոցը դրսում՝ ճանապարհ ղեկողների հետ, սարսափած հայացքներն էին, արտասովախառն աչքերն ու ձեռքով համբույրներ հղելը:

Շղթորս վերջին հայացքը խամրող հիշողությանս պահոցի ամենապայծառ ու ամենացնցող պատկերն է:

ՄՈՒՏՔ

1969-ի նախավերջի ամիսն էր, իրականացնում էինք մեր պապերի չորս հարյուր տարվա երազը: Ցուրտ էր, բայց ոչ ամպամած: Սահմանապահ ոուս զինվորների սիբիրյան սառնամանիքով լի հայացքների տակ սարսուկացին ջերմության գիրկը շտապող ուղևորների մարմինները: Կենդանի էակների մոտ երբեք այդքան անտարբեր, անհաղորդակից հայացք ու սառած աչքերի չէինք հանդիպել: Ընտանիքիս անդամների ունեցած չնչին բառապաշարը իսպառ չքացել էր: Հաղորդակցման ոչ մի միջոց չէր մնացել, չգիտես ինչու, մեկս մյուսից ամաչում էինք, գուցե ինչոր բանից էինք վախենում, թվում էր, թե՛ ուր որ է, սահմանապահ «ոռոտները» կրակելու են: Կալաչնիկովների գովքը շատ էինք լսել: Թեհրանից Ջուլֆա ձգված գնացքին փոխարինել էր միակ վագոնը, որի կուպեններում մի ընտանիքի փոխարեն տեղավորել էին, ո՛չ, լցրել էին, երեք ընտանիք: Ջուզարանը փակ էր, ջուր չկար, կամաց-կամաց օդի, թթվածնի պակաս էինք զգում:

Հսկայամարմին ոուս սպասավորուհին, ժանյակներով ձևավորված սպիտակ համազգեստով, ավելի շատ դասարանի ավագի դեր էր տանում:

Հայրենադարձվողներից մեկը, որի փողկապը

երբեք չքանդվեց, ինքնակամ հանձն առավ թարգմանչի պարտականությունը, դարձավ վագոնի հայ դեկավարն ու հսկիչը: Նեղ միջանցքի մի ծայրից՝ մյուսը, սրա ու նրա վրայից թռչելով, մի կերպ կտրում, ու երբեմն էլ խոժոռ հայացքով այս կամ այն դժգոհողի վրա մատ էր թափ տալիս, սպառնում՝ ճակատագիրը գրողին անիծող տատիկին ու մթնոլորտից տրտնջացող ջահել հարսներին: Նրա մի քանի ամսում յուրացրած ուսերենը բոլորին զարմացնում էր:

Դեպի «արևը» տանող ցրտաչունչ ու լուռ կանգնած վագոնը տնքաց, միջոցը լցվեց հառաչանքներով, ուղևորների աչքերը փայլեցին, հույսի ու լույսի շողերը փոխանցվեցին միմյանց ու ոմանց հարցական հայացքները պատասխան չստանալով՝ նորից սառեցին...

Գնացքի տնքոցները կրկնվեցին, անիվների դանդաղ շարժումը մեր սրտերի զարկերի հետ շնչակտուր լինելու չափ՝ թափ ստացան:

Ուշ գիշեր էր, խավարը ձեղքելով Արաքսն էինք անցնում: Բոլորի չրթներին մի երգ էր սառել՝ «Մայր Արաքսի ափերով...», գնացքը նորից կանգ առավ: Փողկապավորը մոտեցավ «ավագին», երկու-երեք բառ փոխանակեց ու հպարտությունքով դիմեց ուղևորներին. «Մենք հիմի Սովետական Միությունում ենք, բոլորիդ աչքները լույս լինի»:

Փողկապավորի հայտարարությունը, ինչպես որ

պետքն էր, արձագանք չգտավ:

Մենք «ուղղիչ տանն» էինք՝ սահմանամերձ սովետական Զուլֆայում:

Ժամեր շարունակ, առանց որևէ բացատրություն սպասում էինք, ինչի՞, ոչ ոք չգիտեր:

Հանկարծ ռադիոալիքների ձայն լսվեց: Ինչ-որ մեկը փորձում էր կայան որսալ: Փողկապավորը մոտեցավ նրան, դիրք ընդունեց, ու թավ ձայնով սպառնաց.

- Ըստի Թեհրան չի հա, ըտուր ձենը կտրի, թե չէ...

- Քեզ ինչ, ասլան դու ո՞վ ես, լավ եմ անում, քեզ ինչ:

- Լավ, ցույց կտամ, թող մե ցած գանք, կասեմ՝ ես ով եմ,- ասաց փողկապավորն ու մոտեցավ ոուս «ավագին»:

Լույսը չէր բացվում, լույսը ուշանում էր, իսկ գնացքի գաղջ օդը շնչակտուր էր անում, հատկապես մեծահասակներին:

«էս ա, լուսը կբացվի ու մենք բոլորս կտեսնենք Սովետական Միությունը», - գյուտ կատարածի հպարտությամբ իր անկապ հայտարարությամբ կրկին հանդես եկավ փողկապավորը:

Պահածոյացված ուղևորները լուսաբացի հետ սկսեցին վերակենդանանալ ու ինչ-որ արտառոց բան տեսնելու ակնկալիքով մոտենալ լուսամուտներին: Դրսում մարդկային հատ ու կենտ շարժուն ստվեր-

ները հույսի կետեր դարձան: Աստիճանաբար տեսանելի դարձան անթրաչ դեմքերը, ընդգծվեցին դիմագծերը: Մարմիններ, որոնք մտցվել էին գորշ գույնի փափուկ կիսամուշտակների մեջ, գլուխներ, որոնք ծածկվել էին սև, լայնեզր գլխարկներով: Բոլորը կծկված, ուսերը վեր ցցած, քայլում կամ տեղում դոփում էին: Բոլորի բերանից գոլորչու հետ միասին սիգարետի ծուխ էր դուրս գալիս:

Լույսը բացվել էր: Վերակենդանացած ուղևորների հայացքները հույսի լույս էին ճառագում:

Փակ լուսամուտների ետևի ճշոցներն ու լացի ձայները չգիտեմ որքանով էր հասնում Երևանից մեզ դիմավորելու եկած ներգաղթ կոմիտեի հայազգի ներկայացուցչի ականջին: Նա տեղի թուրքերից տարբերվում էր իր հագուկապով ու փողկապով: Զգում էինք, որ հայերեն չեն խոսում, այնուամենայնիվ, գնացքից չհեռացող մեր հույսն էր:

Գնացքի աշխատողներից մեկը, ձեռքին բանալու պես մի բան, մոտեցավ մի լուսամուտի, դեպի ուղևորները դառնալով՝ ինչ-որ բան ասաց, ապա երկու ձեռքով հեռանալու ցուցմունք տվեց: Փողկապավորը բացատրեց՝ հեռու կանգնեք ու կոկորդը մաքրեց: Լուսամուտներից մեկը բացվեց: Անմիջապես ավելի քան յոթ-ութ գլուխ դուրս ցցվեցին ու գոռացին. «Զուր, ջուր»:

- Ամոթ ա, խելոք կեցեք, ըստի Պարսկաստան չի,-

միջամտեց փողկապավորն ու մեկնած ջրամանները տվեց հավաքված թուրքերին:

Արտասահմանյան թերմոսներից վերադարձան ընդամենը երկուսը: Առաջին անգամ սառը գնացքի մեջի տապ անապատում տեսա արևահար մարդկանց, որոնց կարգի էր հրավիրում փողկապավորը:

Մի բան, որ մինչ օրս չեմ կարողանում հասկանալ՝ մեզ դիմավորելու եկած ներգաղթ կոմիտեի նրկայացուցչի «բարի գալստյան»ը փոխարինող խոսքն էր. «Մի մտածեք, մի գույզ չուլկին, նասկին, կամբինացին, կամ զաժիգալկան, մի ամսվա տան վարձ ա»:

Ոչ «չուլկի»-ից բան հասկացանք, ոչ «նասկիից» ոչ «կամբինացիից» ոչ «զաժիգալկայից» ոչ էլ տան վարձի չափից, մեզ ջուրն ու զուգարանն էր հետաքրքրում, իսկ մեր փողկապավոր ինքնակոչ կառավարիչը, հայաստանցի ներկայացուցչի հայերենը բացատրեց այսպես. «Ասում ա, մի վախենաք, գուլպաներդ, տակի շորներդ ու վարտիկներդ կծախեք՝ տան վարձ կտաք»:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀՈՂ

Սահմանապահների հսկողությամբ, մեզ՝ «դատապարտյալներին», իջեցրին սովետական հող: Յոթա-

նասուն-ութսուն հոգի էինք: Կալանավորի պես շարքով տարան մինչև մոտակա ճաշարանը, որն ավելի շատ նման էր Իրանում, ճանապարհներին հանգրվանած, կիսաճաշարան-թեյատներին: Ինքնաեռ եռում էր, թեյի բաժակները չխկչխկում էին, մատուցողները դես ու դեն էին վազում, նրանք հաղորդակցվում էին բարձրաձայն, համարյա գոռալով: Մեզ՝ «Համբոներիս» ու «Գիքորներիս», անհանգրստացնում էր չինովներին ու սահմանապահ զինվորների սառած հայացքները: Միակ հայերեն խսողը ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչն էր: Փողկապավորը նրա կողքից չէր հեռանում: Երբեմն-երբեմն մի երկու նախադասութուն փոխանակում ու հայացքով ստուգում էր բախտակիցների վերաբերմունքը: Հայաստանից եկած ներկայացուցիչը մի կարճ ճառից ու «ամեն ինչ լավ կլինի» ասելուց հետո, տեղ գրավեց սրճարանի մի անկյունում: Նրան միացան մի քանի թուրք պաշտոնյաներ ու մի զինվորական: Փողկապավորը միացավ իր ընտանիքին հատկացված սեղանին: Սեղանները մինչև «բարիքներով» լցվելը՝ երկու անգամ թեյ հիշեցնող գունավոր տաք հեղուկ մատուցվեց: Հայրենիքի ճանապարհը բռնածները հոգնած ու կիսաքուն, «չայ» կամ «սու» էին կանչում: Մատուցվեց նաև թեթև ուտելիք: Մեզ թույլ չէին տալիս մոտենալ սրճարան-ճաշարանի լուսամուտներին: Սահմանապահ զինվորները մի քանի երիտա-

սարդների նկատողություն արեցին, հետո փողկապավորը հանդիսավոր կանգնեց ու դիմելով «ոչ կարգապահ» երիտասարդներին՝ հայտարարեց. «Քանի անգամ ասեմ, ամոթն էլ լավ բան ա, ըստի Պարսկաստան չի, ու՞ր եք մեր պատվի հետ խաղում, ինչի մե դադա չեք դադարում, նստե՛ք, հացներդ կերե՛ք, ամոթ ա՛, չէ՞: Վալլա, բաշար չեն»: «Ճառից» հետո հանդիսավոր նայեց ներգաղթ կոմիտեի ներկայացուցչին, կարծես ծափերի էր սպասում, տպավորությունն այդպիսին էր: Ճաշարանում մի պահ լուռություն տիրեց ու ենթագիտակցաբար հասկանալով իր պահվածքի ու խոսքի անհեթեթությունը, ուշադրությունը սևեռեց սեղանի բարիքներին:

Հիսուն մետրի չափ հեռավորության վրա, ցանցապատված մի արգելանոցում տեսանք մեզանից մեկերկու շաբաթ շուտ ժամանած հայրենադարձների, որոնք մեզ ողջույններ հղելուց բացի, բղավում էին. «Մեսլէ խար փաշիմուն միչավին, վալի նաթարսիդ» (էչի պես կփոշմանեք, բայց չվախենաք): Թե քանի ժամ սպասեցինք սրահում՝ չեմ հիշում, միայն ուրախացա, երբ ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչն ինձ ասաց, որ հորս հիվանդության պատճառով մեզ և մի քանի այլ վատառողջ մարդկանց ընտանիքներին տեղավորում են հյուրանոցում, իսկ մյուսները շարունակելու են մնալ գնացքի մեջ:

Ուրախացա...

Եռահարկ շենք էր «Հյուրանոց» ասվածը: Ավելի շատ բնակելի շենք էր հիշեցնում: Մուտքից իսկ հասկանալի էր, թե ինչ մեծ «պատվի» էինք արժանացել: Երկրորդ հարկի սենյակներից մեկը մեզ էին տրամադրել: Խոհանոցատիպ անկյունում մի լվացարան, մի քանի բաժակ, երեք մահճակալ, կարմիր ներկած հատակ, ավելին պետք էլ չէ...

Երանի մեզ էլ պահեին գնացքի մեջ: Մինչև լույս փայտոջիլներին կերը դարձանք: «Քնեցինք» մի ոտքի վրա՝ կանգնած: Մեզ տարել էին «Ուղղիչ Տուն»: Դատապարտվել էինք չորս հարյուր տարի առաջ Շահ Աբբասին գերի ընկնելու, երկրից բացակայելու համար:

Հաջորդ օրը, առավոտյան շուտ դուրս եկա բակ, կամ փողոց, չիմացա, բակ էր, թե՞ փողոց: Մեկը մոտեցավ.

- Սալամ,- ասաց նա ու կիսատ հայերենով հասկացրեց, որ հյուրանոցից հեռու չգնամ, սահման է, Արաքսը շատ մոտ է: Չէի հասկանում, ինչու էին կարծում, թե չորս հարյուր տարի հայրենիք երազած մարդը հայրենիքին արժանանալու հաջորդ իսկ օրը կարող է փախուստի դիմել:

- Չայ վա՞ր,- իմացածս թուրքերենով հարցրի նրան:

- Վար, վար,- ասաց ու կամաց հրելով հասկացրեց,

որ ետ վերադառնամ Հյուրանոց:

Գիշերը այնքան էի ինձ քորել, մաշկս կարմրել էր, տեղ-տեղ փայտոջլիլի արյան հետքեր կային: Հոտը քթիս տակից չէր հեռանում: Վերադարձա ոջլանոց: Բաղնիք չկար, գուգարանը հանրային էր՝ դրսում: Հայրս դողում էր, աչքերի մեջ մեղավորությունն էր բույն դրել, մի պահ նայեց ինձ ու դողդոջ գլուխը կախեց: Մայրս նրա հագուստն էր փոխում, աչքերը թաց էին, գուցե հիշել էր սահմանի մյուս կողմում թողած անդրանիկ որդուն:

- Պապ, ասում ա հիմա թեյ կբերենք,- ուղեցի լուծությունը խզել ու բացել կարմրած աչքերով քույրերիս ձգված ջղերը:

Հայրս ժպտաց ու գոհունակությունն նշան արեց:

Բողոքելու տեղ չունեինք: Տեր չունեինք: Սպասել էր պետք:

Զուգարանի հերթ էր: Երիտասարդ ու տարեց, մեկ այս, մեկ մյուս ոտքի վրա ցատկոտում, անհամբերությունն նշաններ էին ցույց տալիս: Բարիլույսներս մոռացել, մեկս մյուսից խոռվածի պես, մեղավոր էինք փնտրում:

Կանչեցին ճաշարան:

Կարագով, պանրով ու քաղցր թեյով նախաճաշից հետո մեզ իրավունք տվեցին ազատ ճեմել թույլատրելի սահմաններում: Երեք-չորս հարկանի ոջլապատ շենքերը զարդարված էին Լենինի ժպտաղեծ

մեծադիր դիմանկարով, մուրճ ու մանգաղով, Մարքսի, Էնգելսի ու Լենինի կիսադեմերով, հպարտ կեցվածք ընդունած, հաստաբազուկ բանվորով, ալ գլխաշորով, երջանիկ ժպիտով կին տրակտորիստի աչքերից լույս ճառագող ու կարմիր վզկապով պիոներների պաստառներով ու ուսաստառ ինչ-որ կարգախոսերով:

Սանութ էր: Անհամարձակ ներս մտա: Նպարատուն չէր, ամեն ինչ կար և ոչինչ չկար: Լիմոնադի ու մածուկի դատարկ շշեր, փոչեծածկ կերպասներ, կոշիկ հիշեցնող ոտնամաններ, բլիթներ, հաց:

Գոգնո-ցով մի կին նստած արևածաղիկ էր չրթում, ինձ չնկատեց, կամ չուզեց նկատել: Դուրս եկա:

Ոչ ոք խոսել չէր ուզում: Բոլորն անակնկալի եկած սպասում էին: Փոքր երեխա ունեցողները երեխաներին ամուր, այնպես էին կպցրել կրծքներին, թվում էր, թե ուր որ է, ինչ-որ մեկը նրանցից խլելու է ձագուկներին: Բոլորի աչքերում սարսափ կար: Երբեք իմ ժողովրդին այդքան անհամարձակ չէի տեսել: Թե ինչի՞ց էին վախենում՝ չէի հասկանում: Ես էլ էի վախենում, որևէ մեկի բոպեական բացակայությունն անգամ չփոթ էր առաջացնում:

Օրվա երկրորդ կեսին, մեկիկ-մեկիկ երևացին մեզանից առաջ եկածները: Հարյուր տարվա կարոտ ապրածի պես, ծանոթ ու անծանոթ ողջագուրվեցին, «հները» պատմեցին իրենց մեկ-երկու չաբաթվա

փորձառություններից, հուսադրեցին մեզ ու ոմանք անցան աշխատանքի:

Փողկապավորի շապիկի օձիքները ցցվել էին, ըստ երևույթին, հենց այդպես էլ պառկել էր, չալվարը ճմռվել էր, Թեհրանից դուրս գալուց հետո, երևի չէր սահիրվել: Շատ պաշտոնական մոտեցավ մի երիտասարդի, խոժոռվեց, հայացքը ուղիղ աչքերին՝ ասաց.

- Բա դու գետինը չմտա՞ր, էրեզ ի՞նչ էիր ճվում՝ մեսլէ խար փաշիմուն միչին, մագար քեզ թվում ա ըստի պարսկերեն իմացող չկա: Ըստի Պարսկաստան չի, այ բալամ, խելքդ գլուխդ հավաքի: Ու՞մ տղեն ես...

- Քեզ ի՞նչ: Դու, էիր պակաս, գնա բարա խոշդ ա գալում...

Մոտակայքում առվի պես բան էին փորում: Բահ ու քլունգ ձեռքներն առած, ոմանք սկսեցին օգնել թուրք բանվորներին: Մոտեցավ հայազգի ներկայացուցիչը. «էստեղ սովետական միություն ա, բոլորը հավասար են, աշխատանքը ամոթ չի, մեր հայրենիքը Սովետական Միությունն ա, հենց էստեղից պիտի սկսեք կառուցել», - սիգարետները բերաններին նստած անատամ, անթրաչ ու լայնեզր գլխարկներով եղբայրական ժողովրդի ներկայացուցիչներ՝ թուրք բանվորների մոտ, բարոյախոսեց նա ու հայտարարեց. «Երևանից ժամանած երգի-պարի անսամբլը համերգ ունի, չհեռանաք, պիտի գնանք կուլտուրայի տուն:

- Իմացաք, չէ՞,- ներկայացուցիչի ասելիքը շարունակեց փողկապավորը,- ըստի Սովետական Միության ա, մեր հայրենիքն ա, ըստուց պիտի սկսենք, հացից հետո էլ քոնսերթ կա, հացներդ կուտեք, հետո կեթանք քոնսերթ, ես էլ կգամ:

«Կուլտուրայի տուն»։ Թե ինչ էր «կուլտուրայի» տունը դեռ չգիտեինք:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԸ

Ժամանակավոր կացարանի վերածված լվացարանազուրկ ու զուգարանազուրկ գնացք-հյուրանոցի լուսամուտներից վզերը ծռած, դեպի հեռուները նայող կանանց հայացքները շատ ավելի խոսուն էին քան տարբեր անկյուններում, խումբ-խումբ հավաքված տղամարդկանց բանավոր տրտունջներն ու լավատեսների հուսադրումները:

Նորից զուգարանի հերթ էր, կարճ, բայց հերթ էր: Զուգարանը, զուգարանի նման չէր, պարզապես քաքդ թողնելու ինչ-որ վայր էր, որի անդուռ մուտքի աջ կողմում մեխված էր սովետական ուսատառ օրաթերթերից կտրված թղթի կտորներ, իսկ ներսում փորված հորի վրայի երկու տախտակներն անգամ, ծածկված էին եղբայրական ժողովրդների գունագեղ,

չնչակտուր անող ու աչք մրմնացնող, թաց ու չոր կղկղանքներով, որոնց շուրջ հաճույքով պար բռնած իշամեղունները, մուտք գործելուդ պես, վրա էին տալիս, որպեսզի չլինի թե իրենց բաժին ընկածը ինչ-որ կերպ թալանվի:

Տղամարդիկ միգելու համար այնքան էլ մտահոգված չէին, ինչ-որ անկյուն գտնում էին, իսկ մեծ գործի համար զուգարան կոչված վայրում ոտքի տեղ փնտրելն ու գտնելը ավելի երկար էր տևում, քան, ինչպես արևմտահայերն են ասում՝ քաքնելը, որից հետո, ոչ նախաճաշի, ոչ էլ ճաշի ախորժակ էր մնում:

Հերթի մեջ էր նաև փողկապավոր ինքնակոչ առաջնորդը: Լուրջ կանգնած, գլուխը բարձր, հայացքով հետևում էր անց ու դարձերին:

- Չե՞ս կրում դադար կանգնես, ի՞նչ ես էս ոտ, էն ոտ անում,- կողքի անհամբերին զգուշացրեց փողկապավորը:

- Չեմ դիմանում, հարգելի պարոն, թափում ա:

- Դիմացի, դիմացի, հայրենիք ենք էթում, բա ի՞նչ իր ուզում:

- Ասեմ, էդ Կուլտուրան ո՞վ ա, որ պիտի էթանք իրանց տուն քոնսերթի,- ծանրութունը մի ոտքից մյուս ոտքի վրա գցելով, հարցրեց անհամբերը:

- Կեթանք, կիմանաս, էն էլ մեզ պես մարդ ա,- առանց հարցնողին նայելու, գիտակից ձևացավ փողկապավորը:

* * *

Հարյուրից ավելի հայրենիք մեկնողներից ընդամենը քսանհինգ-երեսուն հոգի էին հավաքվել կուլտուրայի տուն զնալու համար: Ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչի հորդորները մնացին անարձագանք, ստիպված այդ քանակով էլ ուղևորվեցինք դեպի կուլտուրայի տուն ըմբռնանելու հայրենի արվեստագետների ժողովրդական երգերի կատարումը, որի համար Իրանում մարդիկ մեկ տոմսի դիմաց պատրաստ էին վճարել իրենց ողջ ունեցվածքը:

Դարպաս հիշեցնող, լայն բացվող երկու դռները մեզ կուլ տվին ու հայտնվեցինք կիսամութ միջանցքի մեջ: Պատերին կուլտուրայի տան միջոցառումների լուսանկարներ էին, երեխաների նկարչական գործերի ցուցանմուշներ, պիոները Լենինի հետ, պիոները խնձոր է ուտում, կոլխոզ, սովխոզ ու բերքահավաք, գարնանացան, տրակտոր, հանքափոր, գործարան, ծխնելույզից դուրս եկող ծուխ, հրթիռ, արբանյակ, Լենինը՝ նստած, Լենինը՝ կանգնած, Լենինը՝ ճառասելիս, Լենինը՝ կարմիր վզկապով, Լենինը՝ գլխարկով, առանց գլխարկի, Բրեժնևի լուսանկարը, կիսանդրին, ուսերեն ու ուսատառ աղբերեջաններեն լողունգներ, առաջնորդների կիսանդրիներ ու վերջապես մի դուռ, որից մեզ կանչեցին ներս: Այնտեղ կար վարագույրով ծածկված մի բեմ, շուրջ երկու հարյուր տեղանոց փայտյա գունաթափ նստարաններ ու...

Վարագույրը բացվեց: Բեմ բարձրացավ ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչը. «Հայրենակիցներ, որպեսզի դուք, կարանտինայի այս կարճ ժամանակաընթացքում, չձանձրանաք մենք Երևանից հրավիրել ենք «Կոունկ» ժողովրդական երգի անսամբլին: Իսկ մինչև համերգը, նախատեսել ենք ցուցադրել դոկումենտալ մի կինո Հայաստանի մասին, որից հետո բեմ կհարվիրենք անսամբլին»:

- Ժողովուրդ ջան, կինո, յանի ֆիլմ,- տեղից կանգնեց ինքնակոչը, հայտարարեց, գոհունակությամբ նայեց ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչին ու նստեց:

Կինոն սկսվեց: Սովետական բազմազգ ժողովուրդների անխախտ բարեկամության ու վերածնված Հայաստանում երջանիկ ապրող քաղաքացիների մասին էր: Այնտեղ բոլորը ժպտում էին, բոլորը երջանիկ էին, աշխատում էին, կոլխոզների ու սովխոզների տրակտորների հոնդյունը խլացնում էր շրջվար բռնած աշխատավորների երգը, գործարաններում բոլորը սպիտակ համազգեստներով էին, մաքուր, կոկիկ, բարեհամբույր, մեկը մյուսի նկատմամբ հարգալից, շինարարական կոունկները անտառի էին վերածվել, սովետական քամին ցեմենտի գործարանի փոշին քշում էր հակառակ քաղաքի ուղղությամբ՝ դեպի լեռները: Բանվոր, ինժիներ, աշխատավոր, պետ ու հավաքարար խոսում էին

Հայերենի գրական բյուրեղյա լեզվով: Այդ վավերագրականում տեսանք նաև աշխարհի ամենամեծ ձմերուկը, ամենամեծ նուռը, ամենամեծ խաղողի ողկույզը, ամենակարմիր ու մեծ լուլիկը, ամենահամեղ ծիրանը, ամենասքանչելի կոնյակն ու ամենաընտիր գինին, անգամ ամենազարմանալին՝ հավի ամենամեծ ձուն:

Ներկաները հուզված էին: Հուզումը նկատել էր ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչը: Ֆիլմի ավարտից հետո բեմ բարձրացավ ու մինչև «Կոունկ»ին հրավիրելը ներկաներին հավաստիացրեց, որ չուտով ականատես են լինելու այն բոլորին, ինչ տեսան դակումենտալ կինոյում:

Ինքնագործ համույթի ելույթը մեզ համար արհեստավարժի տպավորություն թողեց, միայն չհասկացանք, թե ինչու չերգեցին այն մի քանի երգերից գոնե մեկը, որոնք ցանկացան լսել հայրենիքի ճանապարհին հանգրվանած ներկաները: Ասենք՝ «Կոունկը», որը շատ լավ է մնացել ուղեղիս ծալքերում: Երկրորդ զարմանքը այն էր, որ ներկաներին թույլ չտվեցին հանդիպել հայրենի իրենց քույրերին ու եղբայրներին, պատճառաբանելով, որ իրոք հոգնած են և պետք է անմիջապես վերադառնան Երևան:

ԱՌԱՋԻՆ ԳՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Երկու շաբաթ, սահմանային այդ քաղաքում մեզ սնեցին, ու դարձրին փայտոջիլների սննուղը: Երկու շաբաթ հանրային պետքարանով ու առանց բաղնիքի կարողացանք, հանուն հայրենիքի, գոյություն քարչ տալ մինչև հասավ ծննդավայրից բերած մեր իրերի սահմանային ստուգումների օրը:

Մեզ զգուշացրել էին, արդեն գիտեինք, որ ինչ-ինչ իրեր արգելված էին կրել սովետական երկրի սահմաններից ներս, ինչպես օրինակ՝ ծամոն, Աստվածաշունչ, իսլամների սուրբ գիրք՝ Ղուրանը և այսպիսի անհեթեթ մի շարք բաներ: Մինչդեռ բոլոր հայրենադարձների մոտ հարյուրավոր տուփ ծամոն կար, դա գիտեեր թե՛ ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչը, թե՛ թուրք սահմանապահներն ու ստուգողները: Ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչը արդեն ուղղակի և ոչ ուղղակի զգուշացրել էր՝ ծամոնները հայտնաբերելու դեպքում մի քանի տուփ «զցեք առաջները», բայց ուրիշ բաների մասին ոչինչ չէր ասել:

Մենք այնքան էլ «բեռնավորված» չէինք: Միակ բանը որ անհանգստացնում էր, գրքերով լի հսկա ու ծանր սնդուկն էր, որը առաջինը գրավեց ստուգողների ուշադրությունը: Բացեցին: Հարցերի շարան

սկսվեց: Նրանց հետաքրքրեց Հաֆիզը, Սաադին, Խայամը, Ֆիրդուսին, Նիզամին ու պարսկական միջնադարյան ու ժամանակակից մի շարք գրողների գործերը: Վերցրեցին ու խոստացան ստուգումներից, նրանց ինչ լինելը պարզելուց հետո վերադարձնել, թեպետ մենք հաջորդ օրը հեռանալու էինք: Իմ այն պնդումներին, որ միջնադարում, ոչ դաշնակցական է եղել, ոչ կոմունիստ և ոչ էլ Ամերիկայի Միացեալ Նահանգներ, պատասխանեցին բազմանշանակալից հայացքներ փոխանակելով ու արհամարական ժպիտներով:

Այդպես էլ գրքերը մնացին սահմանապահների մոտ, մինչև այսօր էլ սպասում ենք պատասխանի...

ԱՌՎՋԻՆ ԴԱՍԸ

Սովետական Զուլֆայում անցկացրած տասնհինգ այդ օրերը ավելի երկար թվացին քան չորս հարյուր տարի բացակայությունը հայրենիքից: Բոպե շուտ ուզում էինք Հայաստան մտնել, վեհապանձ Արարատի քղանցքը համբուրել էինք ուզում:

Եկավ այդ օրն ու գնացքը իր զիլ կանչով ավետեց մեր շարժումը դեպի Հայաստան:

Բոլորի աչքերը արտասուքով էին լցված, ոմանք

նույնիսկ հեկեկում էին: Հակառակ մեր հիմնավորումներին, որ էջմիածնում հարազատ եղբայր ունենք, որ հայրս հիվանդ է, նրան խնամել է պետք, մենք երեխաներս դպրոցական ենք, մայրս վատառողջ է... նրանք՝ մեր տերերը, նպատակահարմար գտան մեզ տեղավորել Հրազդան քաղաքի արվարձաններից մեկում, որը կոչվում էր Հրազդանի միկրո շրջան:

Սպասարկող ուս կանանց կողքին կային նաև հայեր: Զինվորական կանոնակարգով էին վերաբերվում բոլորի հետ, ուղևորների ոգևորությունը՝ հայկին տեսնելու, շատ արագ մարեց: Երևանի ճանապարհին էինք, չէինք դժգոհում:

Ասացին, որ արդեն Հայաստանի հողի վրա ենք: Գնացքի միալար երաժշտությունը հայկականացավ, օտար ամայի ճափեքից տուն դարձողները, ցրտահար ճանճերի պես, դեմքերը ափերի մեջ առած, կպել էին գնացքի ապակիներին: Նոյեմբեր ամիսն էր, մառախլապատ օր: Վեհապանծ Արարատը, մեր բախտից, չդիմավորեց մեզ: Ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչը մի վազոնից՝ մյուսը գնալով կուպեններն էր ստուգում, իսկ փողկապավորը նրա հետևից քարշ գալով, սրան ու նրան կարգի էր հրավիրում:

Ուղևորները շտապեցին դեպի լուսամուտները: Դրսում մարդկանց՝ հայերի, էինք տեսնում, մեր երագած մարդկանց, ոչնչով չէին տարբերում մեզանից, մի գլուխ, երկու աչք, երկու ձեռք, երկու ոտք՝ երկրա-

յին հասարակ արարածներ էին: Գնացքը տեղ-տեղ կանգնում էր: Ամեն մի կանգառ երկար էր թվում անչափ...

«Արդեն մտնում ենք Երևան», - հայտարարեց կոմիտեի ներկայացուցիչը: Նորից բոլորը կպան ապակիներին:

Երևանում էինք, կայարանի շենքը բոլոր ավագներին ու միջհասակներին ծանոթ էր՝ լուսանկարներով: Հայրենադարձված ծանոթ ու հարազատ դեմքերը մեկը՝ մյուսի հետևից հայտնվում ու օղային համբույրներ էին ուղղում իրար: Յուրաքանչյուր ընտանիքի համար, տասնյակ մարդիկ էին եկել դիմավորելու: Հորեղբայրս ութ ամսվա հայրենադարձված էր: Ավելի շատ իրերի հանդեպ էր ուշադիր, քան մեր: «Վեչերից» զգուշացեք, վեչերը հաշվեք, տեղ չթողնեք: Ռուսերեն «Վեչ» բառը, հայերենացվել էր:

Մենք տեղավորվեցինք, էջմիածին տանող ավտոբուսի մեջ:

Հորեղբայրս, Երևանի ներգաղթ կոմիտեի գրասենյակում, իր «գործը տեսել էր», Հրազդանի միկրոչրջան գնալու փոխարեն ուղևորվելու էինք էջմիածին:

Մեր ավտոբուսի մեջ էր նաև հիշյալ կոմիտեի էջմիածնի մասնաճյուղի պատասխանատու ներկայացուցիչը, էջմիածին գնացողների թիվն ու անվանացանկը ճշտեց ու վարորդին կարգդրեց շարժվել:

Նստեց իմ առջևի նստարանին: Հորեղբայրս մտավ քիթս ու պարսկերենով ասաց.

- Մոտոդ ի՞նչ կա:

- Ոչինչ, ինչի՞ համար:

- Լավ գրիչ, ֆանդաք, զաժիգալկա, ծամոն...

- Ինչի՞ համար:

- Տաս էս մարդուն, - ցույց տվեց ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչին:

- Ամոթ ա:

- Ամոթ չի, հետո կիմանաս, որ ամոթ չի:

- Բայց բան չունեմ, մոտո ոչինչ չկա:

- Էդ ձեռիդ զոնթիկը, չաթրը, տուր իրան:

- Չեմ տա, ամոթ ա...

- Նոր ես, խամ ես, չես հասկանում, տուր հետո կասեմ:

Ստիպեց: Ոչ թե համոզեց, այլ ստիպեց: Ժամանակը կարճ էր, մինչև էջմիածին քսան ըոպե ճանապարհ էր: Քսան ըոպեում պիտի սերտեի հասարակության աչքի առաջ կաշառք տալու արհեստը, ես կասեի՝ արվեստը...

Քննությունս գերազանց հանձնեցի, այդ օրը մնացի առանց զոնթիկի...

ՕՐԵՆՔԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Հորս հորաքույրը, իր ընտանիքով, ութ-ինն ամիս էր ինչ հայրենադարձվել էր: Վեց տղաներով ու դստեր հետ, նաև թոռնիկներով ու ծոռներով տեղավորվել էին Հրազդանի միկրո շրջանում, որտեղ, որ պետք է բնակվեինք նաև մենք: Մեկ-երկու տասնյակ հինգ հարկանի նորակառույց շենքերից բաղկացած այդ գոգտրիկ վայրը, նախկին թեհրանաբնակների համար ոչ քաղաք էր, ոչ ավան, ոչ էլ բնակավայր, պարզապես տեղ էր:

Հայաստան մտնելուս երկրորդ օրը երեկոյան ինձ տարան այդ միկրոշրջան կոչված տեղը՝ հորաքրոջս տուն: Հակառակ նստած ծանր ձյան ու ցրտաշունչ քամուն՝ սենյակները տաք էին: Պառերին դիպչել չէր լինում: Տաք էին նաև հորաքրոջս զավակները՝ հպարտ, առույգ, լիահույս:

Գերդաստանը հավաքվեց: Երեկոյան սեղանը բացվեց, ժիր և առույգ ընտանիքի անդամների դեմքերին դժգոհության նշույլ անգամ չկար: Բաժակները մի քանի անգամ թարմացվելուց հետո ներս մտավ ինձ անծանոթ մի մարդ, շրջանի բարբառին հատուկ շեշտադրությամբ բարևեց, տնեցու անմիջականությամբ ու համարձակությամբ տեղ գրավեց «ախպերների» կողքին ու բաժակը մեկնեց:

Նորեկին ծանոթացրին, ասացին որ ներգաղթ կոմիտեի Հրազդանի շրջանի ներկայացուցիչն է: Զգաստացա, տնական լեզվիս քիչ թե շատ գրական շունչ տվի, հայրենիքիս պաշտոնիայի հետ էի սեղան նստել:

- Ե՞րբ ես եկել, ջահել ջան:

- Երեկ:

- Անունդ ի՞նչ ա,- հարյուր տարվա մտերմիկի պես վրա տվեց նա:

- Խորեն, Քեչիչյան:

- Այ տղա, հորդ անունը Արամ չի՞:

- Հա, բա ի՞նչ ա, դու որտեղից գիտես մեր քեռուն,- հնչեղ վրա բերեց տղաներից մեկը:

- Այ, ձեր ցավը տանեմ, էս ամբողջ օրը իրան եմ ման գալիս, էգուց առավոտ ժամը յոթին պոեզը գալիս ա, ձեր վեչերը պիտի ստանաք: էս ձեզ էջմիածին են տարել, վեչը խի՞ են դրգել հստեղ,- լրջանալու պես հարցրեց կոմիտեի ներկայացուցիչն ու պատասխանի չսպասելով խոսակցությունն նյութը փոխեց:

Երեկոն անցավ ջերմ, երգերով, անեկդոտներով, բայց ինձ համար տակավին անսովոր, երկարաշունչ բաժակաճառերով:

Եղբայրների ներքին շրթունքները կախվել էին: Դա նրանց մոտ բավականություն նշան էր: Բոլորս էլ քիչ թե շատ, ոգելիցի ազդեցություն տակ էինք: Կես գիշերից անց իջանք ներքև, ավելի քան երեսուն

սանտիմետր ձյուն էր նստել: Քայլում էինք: Կոմիտեի ներկայացուցիչն, ըստ երևույթին, տուն էր գնալու: Ծենքերից հարյուր-երկու հարյուր մետր հեռավորության վրա, մեկը մյուսի կողքին շարված ժեշտի ավտոտնակների մոտ, ներկայացուցիչը, առանց տարիք, մեծ ու փոքր, ծանոթ ու անծանոթ նայելու, հանեց առնն ու հայտարարեց. «Տղերք, չե՞ք չոում»:

Ձյան վրա երկարեց միզաներաժշտությունը: Քաղաքի ղեկավարը չոում էր իր քաղաքի վրա: «Ով սուտ ասի՝ մեռնի», կասեր Թումանյանի Գիքորը:

Սառը եղանակ էր, ծոծրակիցս քրտինքի կաթիլները գլորվեցին դեպի ողնաշարս: Հեռու քաչվեցի, հորաքրոջս տղան նկատեց անելանելի վիճակս, զնգուն ծիծաղն ամեն ինչ բացատրեց ու ավելացրեց. «Այ տղա, ինչի՞ ես զարմանում, ըստի սենց ա, դեռ շատ բաներ կտանես»:

* * *

Տղաներից ամենակրտսերը, որն ինձանից հինգ-վեց տարով մեծ էր, գիչերով ծանոթի մեքենա էր ապահովել, առավոտյան դեռ լույսը չբացված մի կերպ մեզ հասցրինք կայարան: Այն, բացի կայարանից, ամեն ինչի նման էր: Կիսակառույց մի սրահ, անկյուններից մեկում տնակի նմանվող մի գրասենյակ, փոքրիկ պատուհան, վրան ոռսերենով ինչ-որ բան գրված, հավանորեն՝ տոմսարկղ: Սրահի կենտրոնում՝ մի սառը վառարան: Ամեն ինչ սառած էր:

Գնացքը ժամանակին ժամանեց: Չորս ընտանիքի իրերն իջեցրին ձյան վրա, ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչը ինչ-որ թուղթ ստորագրեց, բեռնատար վագոնի դռները փակվեցին:

- Ո՞նց եք տանելու,- ներկայացուցիչը դիմեց հորաքրոջս տղային:

- Եսիմ:

Բեռնատար կվարձենք, ի՞նչ ա, մեքենա չկա՞,- միամտաբար հարցրեցի ես:

- Այ տղա ի՞նչ վարձել, ի՞նչ բան,- ծիծաղեց բարեկամս ու գնաց մեքենա գտնելու: Ինձ կանգնեցրին պահակ: Մեկ երկու ժամում միկրոչրջան նշանակվածները իրենց իրերը տարան, մնացի միայնակ՝ ես ու սնդուկները: Ցուրտը մի կողմից, սովն ու վախը մյուս կողմից, քսանմեկ տարեկան «առյուծիս» մի բուռ դարձրած մտքերել էր սնդուկների արանքը: Չորս ժամ պահակութունից հետո, հորաքրոջս տղան՝ Սամվելը մի այլ ազգականի՝ Հրաչի հետ, բեռնատարով հայտնվեցին: Սամվելի ձեռքին մի կտոր երչիկ, սոխ ու մատնաքաչ կար: Չգիտեի բարև ասեմ թե՞ լաց լինեմ: Սառել էի, ոսկորներս ճոճուում էին: Չորս հոգով, վարորդը ներառյալ, մի կերպ, վեց հսկա սնդուկները տեղավորեցինք թափքի վրա և ուղևորվեցինք դեպի էջմիածին: Սամվելը նստեց վարորդի կողքին, իսկ ես ու Հրաչը, մի-մի տաք ծածկոցների մեջ փաթաթված, խցկվեցինք թափքում

դրված սնդուկների արանքը: Մատնաքաշը, երչիկն ու սոխը, Հրաչի ծոցից դուրս եկած կես շիշ օղու հետ, բեռնատարի ցրտաշունչ թափքի վրա, հիշարժան իմ «լավագույն» ճաշերից մեկն է: Մինչև մութն ընկնելը, երեք անգամ ընկանք ավտոտեսուչների թակարդը, իսկ մութը կոխելուն պես՝ ամեն քայլափոխի կանգնեցնում էին: Ես չատ բան չէի հասկանում, միայն տեսնում էի, թե ինչպես է վարորդը հայհոյանքներով մոտենում նրանց, վարորդական գրքույկը տալիս, անմիջապես ետ վերցնում ու հայհոյանքներով վերադառնում:

Բեռնատարը նախ իրավունք չուներ այդ ժամին դուրս գալու, ուղեգիր էր պետք: «Օրենքի» մարդիկ լավ էին հասկանում դա ու ամեն քայլափոխի շվցնելով օրենքի անունից փող էին պոկում:

Տեղացիների համար սովորական այս երևույթը, երեք օրվա հայրենադարձիս համար, տարօրինակ ու անհասկանալի էր: Ինձ զգացի օրենքի ճիրաններում: Միրտս սկսեց խառնել ու առաջին անգամ փսխեցի սովետական «օրենքի» ու նրա «պաշտպան» միլիցիոնների վրա:

«Մրսել է», - ասացին մերոնք:

ԱՌԱՋԻՆ ԳՆՈՒՄՍ

Հաջորդ օրը հարազատիս հետ շտապեցի դուրս գալ փողոց:

«Այ, սենց որ գնաս, էջմիածինն ա՛ վանքը: «Գայանեն» մի քիչ էն յան ա, «Հոփսիմեն» աջի վրա յա, մի հատ փոքր եկեղեցի դիմացի փողոցի վրա յա, հիմա գո՞մ ա... Անդրեասը, էչն էնտեղ ա պահում»:

Գնում էինք դեպի հրապարակ: Չէի քայլում, թևածում էի: Ամեն ինչ նոր էր, նոր աշխարհ, նոր մոլորակ, անգամ բենզինի հոտն էր ուրիշ: Շենքերի ճակատներին Մարքսի, էնգելսի ու Լենինի պատկերներ էին, եղբայրություն, բարեկամություն ու խաղաղություն քարոզող տարբեր ազգագրեր: Աստղերի ու «ՓԱՌՔ»-երով լեցուն կարմիր կարգախոսները, դրամատիրական երկրների առևտրական գովազդներին զիջում էին միայն իրենց խամրած գույներով:

Բարեկամս մոտեցավ մի կրպակի:

- Սայլուտ, կա՞:

Առանց մեզ նայելու, առանց պատասխանի, կրպակում նստած վաճառողը մի սիգարետ մեկնեց ու գումարն ստացավ:

- Ի՞նչ արժի,- հետաքրքրվեցի ես:

- Երեսուն կոպեկ, բայց մինչև քառասուն չտաս՝ չի տա,- քրքջաց բարեկամս:

Կոպեկի արժեքը չգիտեի, բայց ինձ զարմացրեց հավելյալ վճարումը:

- Ինչի՞ պիտի ավել տաս:

- Էդ էլ իրա փափախն ա, բա պիտի ապրի չէ՞:

- Հիմի, որ ես էթամ, երեսուն կոպեկ տամ, չի՞ տա:

- Չէ, չի տա, ուզում ես փորձիր, որ չի ճանաչում, չի տա, ավել էլ տաս, նորից չի տա, կվախենա:

- Հե՞ր:

- Կվախենա: Անծանոթ մարդու չի տա: Գնա, փորձիր: Առ, երեսուն կոպեկ, ասա «Սայուտ» եմ ուզում:

Գնացի: Անհաստատ քայլերով մոտեցա կրպակին, մեկ աջ, մեկ ձախ նայեցի ու երեսուն կոպեկ դրի անցքի մեջ.

- Բարև ձեզ:

- Էս ի՞նչ ա, արա:

- Մի հատ Սայուտ եմ ուզում:

- Չունեմ:

- Նոր ընկերս առավ:

- Արա, թող ուզող քաչի, արա, էս ո՞վ ա, արա,- երեսուն կոպեկս վերցրեց շարտեց:

Բարեկամիս ծիծաղը չէր դադարում, ես ջրի մեջ լողում էի, սրտիս զարկերը հարյուրի սահմաններում շարունակեցի ճանապարհս, մինչ օրս բարեկամս շարունակում է ծիծաղել: Գոնե ինձ այդպես է թվում:

«Փափախ»: Թե որտեղից է գալիս այս բառը և ժամանակի ընթացքում ինչպիսի իմաստնափո-

խությունների է ենթարկվել, թողնենք մասնագետներին: Բայց ոչ, քանի որ «փափախը» Հայաստանում ամենաչատ օգտագործվող բառերից մեկն էր, անգամ ավելի շատ, քան խնդրելը, շնորհակալությունն ու ներողությունը, ուրեմն չի կարելի անտարբեր մնալ այդ բառի հանդեպ: Դիմենք ժամանակի ամենաընդունված բացատրական բառարանին, իմ շատ սիրելի և հարգարժան դասախոս դոկտոր-Պրոֆեսոր էդվարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանին».

ՓԱՓԱՒ 1- Մորթն գլխարկ: 2- փխր. Տղամարդկության, քաջության, արիության խորհրդանիշ: 4- փխր. Ապօրինի եկամուտ, չարաշահումով, խարդախությամբ ձեռք բերած եկամուտ, շահ:

«Էդ էլ իրա փափախն ա, բա պիտի ապրի չէ՞»:

ԵՐԿՈՒ ԲՈՒՅՐԵՐԻ ԶՐՈՒՅՑԸ

Մայրս իր հորեղբոր աղջկան քույր էր համարում: Հազար ինը հարյուր քառասունվեց թվականին էին հայրենադարձվել: Ապրում էին Հոկտեմբերյանի շրջանի գյուղերից մեկում: Ընտանիքով եկել էին կարոտ առնելու, բարի գալուստ ասելու: Դատարկ չէին եկել, խնձոր, չիր, չամիչ, նուռ, տնական օղի,

գինի, լավաչ, պանիր, մեղր... Դեկտեմբեր էր, երևի մտածել էին տոնական օրեր են մոտենում...

Ինը հոգիանոց հորեղբորս ընտանիքին հատկացրած երկու սենյականոց բնակարանի ննջասենյակը լեցուն էր իրերով, տեղավորվել էինք տարբեր ազգականների մոտ, մնացածներս էլ պառկում էինք սենյակներից մեկի հատակին՝ կողք-կողքի: Մորաքույրս տեսնելով իրավիճակը, այդուհանդերձ, գիշերը քեֆից հետո ընտանիքին ուղարկեց գյուղ, իսկ ինքը մնաց մի քիչ էլ կարոտն առնելու, գիշերը քրոջ հետ լուսացնելու:

Ուշ գիշեր էր: Բոլորը ննջում էին: Հյուրն իր անցած դժվարին կյանքի մասին էր պատմում ու զոհունակությամբ խոսում՝ վերջին տարիների լի ու առատ կյանքից:

Զրույցը շարունակվում էր, մայրս լսում էր, բայց երբեմն, հարցական հայացքը այնպես էր սևեռվում քրոջ վրա, կարծես տարակուսած հարցնում էր՝ «Ձեմ հասկանում»:

Մորաքույրս գլխի ընկավ.

- Այ քուր, ասում եմ աղջկաս՝ Վարսիկին, պսակում եմ: Մի լավ տղա ա, տեղացի ա, բայց լավն ա, ավտոգապչաստների խանութի նաչալնիկ ա, հերն էլ Հոկտեմբերյանի լիմոնադի ցեխի վարիչն ա: Էս վեց ամիս ա, օժիտ եմ դգում, ամեն ինչ առել եմ: Ծանոթ ունեմ, մեր ոայոնի ունիվերսիտետի դիրեկտորն ա, հա-

րևանիս հորեղբոր տղեն ա, ինչ ուզեմ ատկազ չկա: Սպալնին չեխական եմ առե, կոավաթով, տմբուչկեքով, գարդիրորով, ամեն ինչ... Փեսիս նասկի, մայկա, տոուսիկ, սապոզներ ... աղջկաս՝ կամբինացի, դերիա, սապաչկիներ, պատածելնիկ... Կուխնիի համար Զիլ Մոսկվա խալաձելնիկ, զանավեսկաները...

Մայրս նորից ինձ է նայում, ես էլ հասկացնում եմ, որ բան չեմ հասկանում ու ինքս մտածում. «Երանի սրանց, շուտ են եկել, մաքուր հայերեն են խոսում»:

- Այ քուր, էդ քո ասածներից բան չեմ հասկանում, էդ ինչե՞ր ես առել:

- Վայ, այ քուր ջան, հայերեն եմ խոսում: Խի՞, դու չգիտե՞ս զանավեսկեն որն ա, փարդա, էլի, լավ հա՛ վարագույր, հիմի էղավ, մենք էլ էդ ենք սովորի, դուք էլ կասեք, ինչ ա էղել որ, - աչխույժ վրա բերեց մորաքույրն ու լիաթոք ծիծաղեց:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՎԵՐՈ

Ազգականս, որը շատ թե քիչ հարգված էր մասամբ հարուստ լինելու համար, ինչ-ինչ ճանապարհներով, պարսից կառավարութունից գաղտնի, կարողացել էր մուտք գործել Սովետական Հայաստան:

Հիմնականում լուռ էր, չէր արտահայտվում, չլինի թե պարսից իշխանությունները գլխի ընկնեն: Մի օր հայրս շատ վշտացած՝ օրոր-շորոր տուն եկավ: Հայաստան այցելած հորեղբոր տղայի տնից էր գալիս, իրեն ասել էր, թե. «Եթե մարդը կոտոչ հանելու ընդունակ լիներ, հիմի մեր բոլոր հայրենադաձները կոտոչ հանած կլինեին»: Հայրս դժգոհ էր մնացել իր հորեղբոր տղայից և փորձում էր մեզ համար առիթ չստեղծել նրա հետ հանդիպելու:

Մի օր էլ նա ինձ կանչեց, իսկ ես մերոնց բան չասացի: Ուրախ էի, որ գնում էի հայրենիք տեսած մարդու հանդիպելու, բայց թե ինչու էր ինձ ուզել, դա պարզ չէր: Մեկ ուզում էի գնալ, որպեսզի ինձ համոզի հրաժարվել սովետների երկիր գնալուց, մեկ էլ վախենում էի, որ իսկապես գուցեև համոզի ու ես զրկվեմ հայրենիք տեսնելուց...

Հանդիպումը եղավ շատ կարճ: Մի տուփ դրեց առաջս ու շատ լուրջ ու խորհրդավոր ձայնով տվեց իր առաջադրանքը. «Տուփը չբացես, ձերոնց ցույց չտաս, չլինի թե քույրերդ տեսնեն, կտանես Հայաստան: Սահմանի վրա, թե որ ուզեցին բացեն՝ չթողնես, կասես չեմ ուզում, վերցրեք ձեզ: Եթե անցավ՝ կպահես, մինչև հորեղբորդ տղան՝ Գ-ն կգա կվերցնի: Նորից եմ ասում, վտանգավոր բան չի, բայց չբացես, հա՞, հոպարի բալա»:

Վերջում սիրալիր վերաբերմունք ցույց տալով,

քսան թուման դրեց գրպանս ու ավելացրեց. «Վեր-
ցրու, մի շապիկ էլ քեզ համար կառնես»:

Առարկել չկարողացա: «Պայթուցիկը» գիրկս առա
ու ճանապարհվեցի տուն:

* * *

Այդ տուփը գիշերները ինձ մղձավանջ էր բերում,
մերոնցից գաղտնիք պահելը, դավաճանություն զգա-
ցում էր առաջացնում, չլինի թե ճանապարհին ինչ-որ
փոճանք բերի, օրեր շարունակ չէի կարողանում
ազատվել այդ առեղծվածային տուփից, մինչև մի օր
համբերությունս հատված կիսվեցի ընկերներիցս
մեկի հետ: Նա ամեն ինչ արեց ինձ համոզելու, որ
տուփը բացեմ և պայմանավորվեցինք երեկոյան հան-
դիպել իրենց տանը, որտեղ հավաքվելու էին մի խումբ
տղերք մեր հերթական բարի երթի բաժակները
թարմացնելու:

Երեկոյան, մինչ տղաների լրումը, մի առանձին
սենյակում մենք, երկուսով փորձեցինք բացել գաղտ-
նիքը: Անկեղծ լինելու համար ասեմ, որ անգամ վա-
խենում էինք, այնպիսի զգուշությունք էինք պատուում
սովարաթուղթը, որ չլինի թե հանկարծ ...

Մի ճեղք բացվեց, ընկերս մատը ներս տարավ,
սեղմեց, ասաց. «փափուկ ա»: Ճեղքը լայնացրինք,
երկու մատերով ներս մտանք ու ինչ-որ ռեզինից կլոր
բան հանեցինք, անմիջապես հասկացանք դրա ինչ
լինելը, նայեցինք միմյանց երեսի, հարցական հա-

յացքներինս պատասխանը եղավ ծիծաղի պոռթկումը, հետո ամբողջ մարմինս լողաց ջրի մեջ, ընկերոջս ծիծաղը չէր հատվում, հետո դրանցից մեկը ձեռքն առավ ու սկսեց փչել:

- Էս, բարիերթիդ երեկոյի համար փուչիկներ է տվել, էսօր բոլորը փչելու ենք,- կատակեց նա ու տուփը դրեց մահճակալի տակ:

Երեկոյան, երբ տղաները քիչ-թե շատ գինովցած էին սկսեցին մեկիկ-մեկիկ փչել ապահովիչներն ու իմ առաքելությանը կատակի տալ ...

* * *

Ամանաթը ստացող ազգականս, որը ինձանից ավելի քան տաս տարի մեծ էր և մեզանից տաս ամիս չուտ էր հայրենադարձվել, սկսեց հաճախակի հանդիպել մեզ: Շատ էր սիրալիր դարձել: Առիթ բաց չէր թողնում մեզ օգտակար գտնվելու, նաև ամեն ինչ անում էր ինձ հետ առանձնանալու, իսկ ես խուսափում էի, խուսափում ու ամաչում էի, որովհետև նրան հասցեագրված «պայթուցիկը» դեռ թեհրանում բացել ու իմացել էի նրա ինչ լինելը, գաղտնիքը կիսել էի ընկերներիս հետ ու դարձել էր անեկդոտների նյութ:

Մի օր էլ նա համարձակվեց հարցնել.

- Լսիր, խորեն ջան, ափին պիտի մի բան դրկեր, քեզ ոչինչ չի^ո տվել...

- Հա, կարծեմ գիրք ա, թե՞ ծամոն, չգիտեմ, սնդուկների մեջ ա, կբացեմ, կտամ:

- Չէ, չէ, չբացես, էդ մեր քաղսովետի նախագահի համար ա, բնակարանի հարց կա, իրան պիտի տամ, ինքը շատ գրագետ ա, գիտնական, պարտիական մարդ ա, խոստացել ա, երկու սենյակի փոխարեն երեք տա, չլինի թե բացես...

- Չէ, սնդուկին մասին ա խոսքս, սնդուկը որ բացենք կտամ...

Յուլի 1970 թ. հրատ.

Սիրելի և ոչ մի վայրկեան անմոռանալի Խորեն Հան
Յոյսով եմ այս ՏԱՍԶԻ նամակս Ձեզ պիտի գտնի ամենայն ուրախու-
թեան մեջ:

Յիրթլիս, արդէն Յ ամիս է, որ քեզանից նամակ չեմ տա-
ցել և այս փոփոխութեամբ մեծ վիշտ է պատճառել ինձ ինդրում եմ
վերոյիշեալ խնդրի անյաջողութեան պատճառը տեղեկացնէք Հայաստանի
Պրեսուլտանը , , խոփուլտանը , , :

Խոր առլը բեթը ինչինա բալթա , ասում էին Չայաստան
էթացողները և նդնում են բայց դու շիգարա լայնացել ես, բարա
թո մը նամակ գրի, Գը առչկներն են պառնում թէ տարած փու-
չիկներն ենփթում որ ուզում ես լրգամին գնոի տկո՞ անց կաց-
նես թէ փուչիկները ձեռիցդ իլում են:

Սիրելիս յաջորդ նամակդ որ անպայման չես ուշացնի պետի գրես ինձ
ըր և նոյնպէս իմ, հարգասիրեցից, որովհետև շատուց է որ անտեղեկ եմ:
գրիր ինձ Խնահեցից Արմիկից, և ուրիշներեց, Բարկենից, Խորենից որ
Արշալոյսի Կնակում նշել էիր և այդ ես լսել եմ Պրն. Նորայրից և դեռևս
չեմ կարդացել: Գրի ըրն գործից կամ համարարանից, և առորեայ կենրից,
գրիր այն անցուղարից որ անաստես ես եղել դու:

Բարևում են Վարդանը, Վլզգէնը, Պատ-ը Պրն. Նորայրը և բոլոր ու բոլորը
Յաջողութիւն

Ըր եղբայր.....

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻՍ

Առաջին իսկ օրերից սկսեցի այցելել մեզանից քիչ, թե չատ, չուտ հայրենադարձված ընկերներին, բարեկամներին ու հարազատներին:

Ամենաուշագրավը նրանց բնակարաններն ու տան կահ-կարասին էր: Նույնանման մեկ, երկու և երեք սենյականոցներ, որոնք կահավորված էին նույն «Արագած» սառնարաններով, նույն արտադրանքի հեռուստացույցերով, ձայնարկիչներով, ժամացույցներով, մահճակալներով ու անգամ զգեստապահարաններով: Չգիտեմ ինչու, բոլորի հեռատեսիլները ծածկվում էին Սայաթ Նովայի գունավոր դիմանկարով դաջված արհեստական թավչատիպ ծածկոցով: Բարեբախտաբար, չատ չուտ գլխի ընկա, որ սովետական քաղաքացու բնակարանի ներքին ձևավորման համար ինքը՝ պետութունն է ճաշակ թելադրողն ու որոշում կայացնողը: Առնվազն էլեկտրական արտադրանքների ու կահ-կարասիների հարցում քաղաքացու համար չկար այլընտրանք. «Սա է, ու վերջ»: Հետագայում այդ երևույթը նկատեցի նաև հայրենակիցների մտածողություն մեջ, մի բանի մասին երկու կարծիք լինել չէր կարող, մամուլը, հեռուստատեսությունն ու տեղեկատվական բոլոր

միջոցները թելադրում էին այն ամենի մասին, ինչի մասին պետք է մտածեր ու ձևավորվեր սովետական քաղաքացին:

Հայրենադարձված բարեկամներիս ավելի քան իննիսուս տոկոսը չէր աշխատում: Բերածները տասնապատիկ ու քսանապատիկ վաճառում ու ըստ պահանջի ապրում էին: ԿԳԲ-ն (ՊԱԿ-ը Պետական Անվտանգության Կոմիտե) նրանց «արտոնել» էր առևտուր անելը: Նորեկներն իրենց ապրանքը իրացնելու համար հասնում էին մինչև Բաքու, Տաշքենդ, միջին ու հեռավոր Ասիայի ամերը:

Մի դեպք պատմեմ:

Օդանավակայանում, Երևան-Տաշքենդ ուղեթռիչքը իմ ներկայությունը կասեցվեց: Ուղևորներին իջեցրին, նրանց իրերը ևս բեռնաթափեցին ու հայտարարեցին. «Տեխնիկական թերությունների պատճառով թռիչքն անհայտ ժամանակով հետաձգվում է»:

Բանը նրանում էր, որ մեր հայրենադարձ «լավ տղերքը» իրենց միջնորդ տերերի՝ ԿԳԲ-ի անմիջական համագործակցությամբ, օդանավակայանի պատասխանատու, համապատասխան անձի կամ անձանց հետ լեզու էին գտել: Երևան-Տաշքենդ թռիչքն իրականացվող ինքնաթիռն ամբողջովին

«զնել» ու բարձել էին Իրանից բերած էժանագին զառկտորներով, որոնք Տաշքենդում վաճառվում էր բավականին թանկ զնով: Կաշառքը թոփչքի համար կազմել էր ավելի քան 100 հազար ռուբլի: Այսինքն մի ուսուցչի կամ բժիշկի 100 տարվա, իսկ հավաքարարի շուրջ 120-130 տարվա աշխատավարձը:

Չզարմանաք, եթե ասեմ, տղաները Տաշքենդից վերադառնում էին ճամպրուկները լցված ռուբլիներով ու աղամանդներով: Ոչ ոք նրանց մազին անգամ դիպչել չէր կարող, քանզի արթուն աչքերով գործարքին հետևում էր նույն իրենք՝ երկրի անվտանգությունն ապահովող մարմինները, կուսակցությունն առաջինից մինչև վերջին քարտուղարների փայլուն հայացքների տակ:

ՈՒՍՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ

Հայրենիքիս որ ծայրամասն էլ զնում էինք, ժողովուրդի համար քիչ թե շատ, կարելիություններ կային օգտվելու տեղի կուլտուրայի տներից, երաժշտական ու մարզական դպրոցներից, մանկամսուրից, մանկապարտեզներից...

Ցանկացած հարազատի, կամ պարզապես, որ հայի տուն էլ մտնում էինք, գիր ու գրականություն

կար, երաժշտական ինչ-որ գործիք, արվեստի ինչ-որ պատառ, մեծ ու փոքր գրադարան, ընթերցանությունը համատարած երևույթ էր: Մեծ հաճույք էինք ապրում հյուրերի համար նախատեսած նրանց մահճակալներից, մաքուր ու սպիտակ, բրդյա ներքնակներից, ծածկոցներից ու փափուկ բարձերից... Քառասունվեց-յոթ թվականներին հայրենադարձված մեր հարազատները, այնպես ինչպես հարկն էր, բացի ալկոհոլի չարաչահումից ուրիշ առաջընթաց համարյա չէին ապրել, յուրաքանչյուրի մոտ կար թամադայության տաղանդ կամ շնորհք, նրանց երկարաշունչ բաժակաճառերը երբեմն գերազանցում էին ՍՄԿԿ համագումարների Բրեժնևյան ճառերից: Պարզ է, սովետական քաղաքացին ժամանակին խոսելու պակաս է բերել, չի կարողացել ասել այն, ինչ ցանկացել է, իսկ մերոնք հայրենադարձվելուց հետո, գոյությունները պահպանելուց ու սիրերյան տարածքները ոտքով ու գնացքով չկտրելու ջանքերից բացի, ուրիշ զբաղմունք չեն ունեցել: Մի պատառ հացով գոհացել ու երկարաշունչ գովասանքներով փառաբանել են իշխանությունն ու տիրող համակարգը: Նրանց աչքերի մեջ սառած սարսափը դեռ ամբողջովին չէր հալչել, կարոտի տենչը դեռ գոյատևում էր, հանդիպելիս այնպես էին փաթաթվում... Ինչ նշանակութուն ունեն, թե ում տղան կամ թոռնես, բավական էր, որ ծննդավայրից ես եկել, այնպես

Չրոտ էին համբուրում ու դարդղ առնում... Բանտարկյալի տպավորություն էին թողնում, բայց այդ տպավորությունը անմիջապես փարատվում էր, երբ մեր առաջ իրենց սրտից բացի, բացվում էին լի ու առատ սեղանները...

Նրանց փոխարինելու եկած սերունդը ուսյալ լինելուց բացի, այդքան կաշկանդված չէր, ինչքան իրենց ծնողներն էին: Հայրենի հողում ծնված, այդ հողից սնված ու սովետական դաստիարակություն տեսած հետնորդների ու իրենց ծնողների միջև ընկած խրամատը բավականին խորն էր, նրանք իրենց պապերի երկրից այնքան գիտեին, ինչքան մենք մեր հայրենիքից: Նրանց պապերը վախից ոչինչ չէին պատմել իրենց ծննդավայրից, անգամ խուսափել էին խոսել այն քաղցր հուշերից, որոնք կարող էին աքսորի պատճառ լինել, իսկ հայրենիքից մեզ հասած տեղեկությունները լցված էին սուտ պրոպագանդաներով: Մենք միմյանց չէինք ճանաչում այնպես, ինչպես պետքն էր...

* * *

Առաջին նոր տարին էր: Հունվարի երկուսին շտապեցինք Արարատ քաղաք՝ տատիկիս ու նրա տղա՝ Լևոն քեռուս տուն: Իսկ մորս հորեղբոր տղան՝ Մովսեսը, մեզ պատիվ անելու համար բոլորիս իր տուն կանչեց:

Ժամը երեքն էր, դուռը ներս մտնելուն պես, մեր ոտքերի տակ ոչխար մորթվեց: Մեր՝ նորեկներին, խաթեր համար էր բացվել նաև լայնարձակ սենյակի ճոխ ու առատ սեղանը: Ինչպես ասում են, սեղանի վրա անգամ աքլորի ձու կարելի էր գտնել՝ Հայաստանում դժվար գտնվելիք ցիտրուսային մրգեր, տանձ, խնձոր, խաղող, չորացած զանազան մրգեր, բանջարեղեն, ամբողջական մի գոջի, ձկնեղեն, սառած խաչլամա, կարտոֆիլ, թխվածքներ, բաստուրմա, սուջուխ, բլինչիկ, պասուս տոլմա...

Մի քանի կին գոգնոցները կապած, հլու հնազանդ, միայն մատուցում ու տղամարդկանց ցանկություններն էին կատարում: Սեղանի մոտ նստած էին երկու կին՝ մայրս, որպես նորեկ ու նրա իննսունամյա մայրը, որը բոլորի կողմից հարգված «Մեծ նան» էր: Բակում ջահելներն էին, ոչխարին էին մորթագերծ անում:

Մովսեսը, մորս հորեղբոր տղան, կարճահասակ էր, քայլերը արագ էին ու հաստատուն, ծաղկատար ու մի քիչ լայն դեմք ուներ: Չէիր կարողանում հասկանալ ծիծաղը անկեղծ էր, թե՞ չինծու: Իշխող էր, ընտանիքում միապետ, մի քիչ բարձրաձայն ու խոսել սիրող պինդ տղամարդ էր: Նաև հավատացյալ կոմունիստ, սիրահարված Սովետական Միության կարգերին ու թունդ հակակապիտալիստ: Ամբողջ Արարատի շրջանում մի Ֆոտո կար, որի տերն ու տիրականն էր, բառիս բուն իմաստով մոնոպոլիստ,

երկրորդ, երրորդ ֆոտոններ բացելու փորձեր ժամանակին արվել էին, բայց հենց Մոսվեսի կողմից գործը խափանվել էր: Հարազատների դժվարություններին լուծում տվողն էր, չրջսովետից մինչև կենտկոմ, դռները բաց էին նրա առաջ: Հավասարակշռությունից դուրս էր գալիս, երբ Ամերիկայի անուն էր լսում, ատում էր արտագաղթողներին:

Այդ օրը Մոսվեսի տրամադրությունը սովորականից ավելի բարձր էր: Ժպիտը դեմքին, հրամայական տոնայնությամբ «հրավիրեց» սեղանի շուրջ: Նստեցինք: Ամենակրտսերը ես էի՝ քսանմեկ տարեկան: Սեղանից պոկվելու իրավունք չունեի, որովհետև այն բացվել էր իմ և մորս պատվին: Թվով տասներկու հոգի նստած, ընտանիքի մատուցող կանայք՝ կանգնած և բակում գառան գլխին պատուհաս դարձած մի քանի շարժուն, գործունյա երիտասարդներ:

Մոսվեսը մորս ու իմ գլխից շատ հեռու չէր գնում, ձեռքը հաճախ էր դնում՝ մեկ իմ, մեկ՝ մորս ուսին, նրա կատակախառն, երկարաչունչ ու հայրենասիրական բարիզալստյան բաժակաճառից հետո, սեղանակիցները մեկիկ-մեկիկ ոտքի կանգնեցին, յուրաքանչյուրը յուրովի արտահայտեց իր հայրենասիրությունը, յուրովի մեկնաբանեց մեր հայրենադարձության երևույթն ու բարի գալուստ մաղթեց: Ինն այդպիսի ճառերից հետո, հարգելի թամաղան՝ Մոսվեսը, նորից

ոտրքի կանգնեց, շատ խիստ հրավիրեց բոլորի ուշադրությունն ու ավելացրեց.

- Սիրելի հարազատներ, քիչ հետո խորովածը պատրաստ կլինի, բայց մինչ այդ ուզում եմ մեր սիրելի քույր Խանումից խնդրել, որ ձեր բոլորի բարի մաղթանքների ու բարիգալստյան խոսքի պատասխանը ինքը տա: Նա նոր է եկել հայրենիք, առաջին անգամն է Հայաստանում ամանորի սեղանի նստել, հիմա էլ վայելում է իր կարոտած հարազատների ներկայությունը: Դե, քույրիկ Խանում, քեզ ենք լսում:

Սակավախոս մայրս մի պահ իրար անցավ ու ասաց. «Ի՞նչ ասեմ»:

- Բա եղավ, Խանում քույրիկ, էսքան մարդ ա կենացդ խմել, էսքան բարի մաղթանքներ, բարի գալըստյան խոսքեր...

- Շնորհակալ եմ, ի՞նչ ասեմ, Խորենս կասի, ես չեմ իմանում:

- Կսովորես, Խանում քույրիկ, դու էլ կսովորես, - ասաց Մովսեսն ու դիմեց անդադար վազքի մեջ գտնվող կանանց, - Չերմուկ բերեք, սեղանը թարմացրեք, պանիր, կանաչի բերեք, էդ խորովածը ի՞նչ եղավ... Դե, Խորեն ջան, հիմի դու պիտի, թե՛ քո, թե՛ մորդ ջարմեն քաչես, ալավերդին քո մոտ:

Ես քիչ, թե շատ, սովոր էի առանց հորս, ուրախության կամ հոգեհացի սեղանների նստելուն, բայց դեռ խոսքս չսկսած Մովսեսը նորից շարունակեց.

- Միրելի հարազատներ, մինչև հիմա հայրենադարձված իմ բարեկամներից խորենը միակն է, որ իրանում համալսարան է գնացել, և այստեղ պիտի ուսումը շարունակի, եկաճներից ոչ մեկը խելքը գլխին կրթություն չունի, դրա համար էլ ես շատ եմ հարգում թե՛ իր հորը՝ Արամին, որը հիվանդ տանը պառկած է, թե իր մորը, որը հանձն է առել իր ամուսնու խնամքը միայնակ կատարելու, չխանգարելով խորենի ուսմանը և, թե իրեն խորենին, որը իր ուսերի վրա է վերցրել ընտանիքի հոգան ու բերել է հայրենիք, բայց չեմ կարողանում հասկանալ, որ էսպիսի խելացի ընտանիքի մեջ, ինչպես է պատահել, որ իրենց Արչավիր տղան միանալով դավաճան, հայրենադավ ու պնակալեզ դաշնակներին, լքել ա իր ընտանիքին ու իրենց հետ չի եկել Սովետական Հայաստան...

- Այ, Մովսես ջան, բա էդ ասելու բան ա,- կիսահամարձակ միջամտեց ամենահամարձակը:

- Կատակ եմ անում, ցավդ տանեմ,- շտապեց Մովսեսն ու քրքջաց:

- Կատակ ա անում խորեն ջան, քեռին ա, մի նեղանա,- ուզեց վերքիս սպեղանի դնել համարձակը:

- Ի՞նչ եղավ էդ խորովածը,- խոսքը փոխեց Մովսեսը:

- Մովսես ջան, թե որ ուզես ճիշտն իմանաս, հենց դաշնակներն են հայրենասեր, լրիվ Պարսկաստանի հայությունին իրանք են տեր կանգնում, գնա տես

դպրոցներում իմ Արչավիրը ինչպիսի հայերեն ա դաս տալիս,- մի կերպ խոսքն ավարտեց մայրս ու սկսեց սրբել արտասուքը:

Մովսեսը մոտեցավ մորս, քրքջաց ու փաթաթվեց նրան.

- Կատակ եմ անում այ քուր, լավ, լավ, հիմա որ էդպես ա, եկեք էս էլ խմենք Արչավիրի կենացը:

- Չէ, պետք չի քեռի, կոմունիստը դաշնակցականի կենացը չի խմի, էս նստածների մեջ մատնող կլինի, ընտանիք ունես, մեղք ես,- համարձակ մեջ ընկա ես:

Մովսեսը կարմրեց, փրփրաց: Ըստ երևույթին մինչ այդ ոչ մի «ընտանի» երիտասարդ չէր համարձակվել նրա խոսքին խոսք բերել, ու այդպես ծառանալ իր դեմ: Դուրս ելավ: Սենյակում քար լռություն էր: Բոլորը ինչ-որ անակնկալի էին սպասում:

Վերադաձավ: Շատ լուրջ բաժակը բարձրացրեց ու կենացը հատկացրեց Մեծ նանին: Ճառը կարճ տևեց, խոսքը փոխանցեց սեղանակիցներին, որոնք մեկիկ-մեկիկ վեր կացան իրենց սրտի խոսքն ասացին ու նստեցին: Մթնոլորտը լարված է երևում: Մովսեսի ձեռքը իմ ու մայրիկիս ուսից պոկվել էր: Նա հաճախ էր դուրս ու ներս անում, բայց կենացները հավուր պատշաճի չարունակվում էին, յուրաքանչյուր կենացին ելույթ էին ունենում առնվազն ութ-ինը հոգի, այսինքն այդ երեկո ես պիտի լսեի շուրջ յոթանասուն բաժակաճառ, տասնվեցը տևել էր շուրջ երկու ժամ,

եթե հաշվի չառնենք աստիճանաբար ներկաների գինովնալու և ճառերի ձգձգվելու հավանականությունը, փաստորեն դեռ պիտի համբերեինք նաև վեցից ութ ժամ լսելով ևս հիսունի շուրջ բաժակաճառ: Համոզված էի որ տատս, ինչու ոչ նաև մայրս չէին համբերի, իսկ ես, արդեն իսկ վրդովված էի:

Սորովածը եկավ, շշերը մեկը մյուսի հետևից մերկանում ու անհայտանում էին, տղաները իրենց գործը հիանալի էին կատարում:

Կենացները թարմացան, Մովսեսը հիշեց նաև հայրիկիս, մեր անցյալին, պապիս ու ողջ Քեչիչյան գերդաստանին, հետո մոտեցավ ինձ, ներողամտությունամբ փարվեց ու կտրուկ պահանջեց, որ երկու խոսք ասեմ:

- Ես իմ խոսքը կասեմ, բայց պիտի գնամ:

- Ոչ մի գնալ, քեռու բալա, գնալ չկա, էսօր էստեղ ենք, հալա ինչքա՞ն կենացներ կան:

- Ես պիտի իմ խոսքն ասեմ ու գնամ: Գործ ունեմ:

- Սոսքդ կասես ու կնստես,- ավելի խիստ վրաբերեց Մովսես քեռիս:

- Ասա, լավ,- ականջիս ասաց Լևոն քեռիս,- ասա՛ լավ, բալաս, ասա, ասա...

- Ես հիվանդ հայր ունեմ, մեզ է սպասում...

- Թող քույրերդ նայեն, ի՞նչ են անում,- մեր ընտանիքի գործերին միջամտելու իրեն խիստ իրավունք վերապահելով ձայնը բարձրացրեց Մովսեսը:

- Այ, Մովսես ջան...

- Ոչ մի Մովսես, էս սեղանը բացել եմ Խանուս քույրիկիս համար, իրավունք չունի գնա և վերջ:

- Նախ շնորհակալ եմ սեղան բացողից, շնորհակալ եմ նաև բոլորից, որ խմեցին մեր կենացը, հորս, պապիս ու մեր Քեչիչյան գերդաստանի, հին ու նոր ննջեցյալներին...

- Ապրես, ապրես քեռու բալա, բա որ ասում եմ, - ոգևորվեց Մովսեսը:

- Նոր տարվա օրեր են, առաջին տարին է եկել ենք, հազար ու մի կարոտ ունենք, դրա հետ միասին ունենք նաև հիվանդ հայր ու ամուսին, քույրերս էլ ջահել են, մենակ են, նոր երկիր ա, տխուր են, պիտի միասին լինենք, խնդրում եմ թույլ տաք մենք գնանք, դուք ձեր քեֆը շարունակեք, մինչև տուն հասնենք ինը, տասը կդառնա:

- Ոչ մի գնալ: Գնում ես ի՞նչ անես, հայրենիքը քրերիդ համար օտար չի, ոչ էլ տխրելու տեղ ա, դու էլ տեղդ կնստես, երբ ասեմ, էն ժամանակ էլ կգնաս, որ ասում եմ արտասահմանի ջահելները երեսառած են... Հլա թող իմ երեխեքը համարձակվեն...

Մթնոլորտը շիկացավ: Բոլորը լուռ, ես շարունակեցի:

- Քեռի ջան, ես սիրած աղջիկ ունեմ, ուզում եմ գնամ նոր տարվա երրորդ օրը նրա ու իմ ընտանիքի հետ լինել, ամոթ ա, ի՞նչ ա:

- Վայ ես քո դաս տվողի, ո՞նց ես համարձակվում, քո ի՞նչ ժամանակն ա, ես քո լիտի, աներես, անամոթ, ես քեզ սիրած... ցույց կտամ...

Մի քանի հոգի ոտքի ելան, գնացին դեպի ինձ մոտեցող Մովսեսը, կանայք հավաքվեցին սեղանի շուրջ, տղաները խորովածի շերտ ձեռքներին կանգնեցին, պարտաճանաչ զինվորականի կարգապահ-հռթյամբ օղակեցին սեղանը:

- Այ բալամ, ի՞նչ գործ ունես,- վրա բերեց սարսափած մայրս ու փորձեց ինձ առաջնորդել դեպի ելքի դուռը:

- Ձե, քուր ջան, չէ, համբերիր, նստեք, մի քիչ էլ նստեք, հայկական աղաթ ա, սովոր չեք, պիտի համբերեք, դուք էլ կսովորեք,- համոզեց ներկաներից մեկը:

Քեֆը ձևականորեն շարունակվեց, Մովսեսին տարան մաքուր օղ շնչելու: Համարձակ սեղանակիցը անցավ հերթական կենացներին, բաժակաճառերը երկարեցին: Անդադրում քայլող Մովսեսը լուռ նստել էր սեղանի ծայրին, գլուխը համարյա չէր բարձրանում, խոտված երեխայի տպավորություն էր թողնում: Կանայք դեռ վազքի մեջ, սրա ու նրա հրամաններն էին կատարում, սենյակը սիգարետի ծխի մեջ կորել էր, տղաներն ու տան աղջիկները չէին համարձակվում նստել սեղանի շուրջ, նրանք միայն սպասարկողների դեր էին կատարում: Մեկ էլ մորս գլուխը

ընկավ ուսիս:

Շտապ օգնությունը չհասած, մայրս ի վիճակի եղավ ոտքի կանգնել: Քեֆը չավարտված, մենք՝ ազատագրված գերիներս, գիշերվա ժամը տասն անց շարժվեցինք դեպի մեր ընտանիքի գիրկը:

ՉԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՉԵՐԹԵՐԸ

Հետաքրքիրն այն էր, որ մարդիկ հերթ էին կանգնում անկախ նրանից, թե ինչ է վաճառվում: Կանգնում էին: Ոմանք կանգնում էին, մինչև հայտարարվեր. «պրծավ, չկա»: Այդ, հաճախ օգտագործվող ու սովորական խոսքերից հետո, թեթևակի ձեռք թափ տալով մարդիկ հեռանում էին:

Հերթերի մեջ ապրողներին սկզբում խղճում էի, հետո այն դարձավ սովորական՝ այսինքը կենսաձև նաև ինձ համար:

Հերթը՝ հերթ: Բայց վաճառասեղանի մոտ ինչու՞ էին միմյանց շալակ բարձրանում, միմյանց գլխի ընկնում, քաչքչում, վաճառասեղանը բրթում, կշեռքը շրջում... Եվ սա ուղեկցվում էր քաչկոտուքով, գզվոտոցով, աղմուկ-աղաղակով... Հետո, դա էլ դարձավ սովորական կենսաձև նաև ինձ համար: Այսինքն ապրում, դաստիարակվում էի այնպես, ինչպես

պահանջում էին կարգերը:

Այդ հերթերից յուրանքանչյուրը մի պատմվածքի, վիպակի նյութ էր: Հերթերի մեջ մարդիկ կարդում էին, գրում, բարեկամներ գտնում, սիրահարվում, կովում, բամբասում...

Երբ քաղաքում շատանում էին հերթերը, զգալի էր դառնում վեճերը, զզվուտոցներն ու տուր-տփոցները, դա նշանակում էր տոն է: Այդպիսի եռուզեռը իր գագաթին էր հասնում ամանորյա նախատոնական օրերին: Շահողները երկրորդ համաշխարհային պատերազմի հաշմանդամները, թոշակառու պապիկներ ու տատիկներ ունեցողները, առավել ևս՝ ծանոթ ունեցողներն էին:

Միակ տեղը, որտեղ կշռաքար, կշեռք ու հերթ չկար և քառս էր տիրում ավտորուսներում էին, ավելի ճիշտ ավտորուս բարձրանալն էր:

Հինգ տարի շարունակ ավտորուսով եմ երթևեկել: Գրեթե ամեն օր գնում էի Երևան, որտեղ սովորում էի և իհարկե վերադառնում տուն: Այն, ինչ պիտի պատմեմ, համատարած երևույթ էր կրում գոնե Հայաստանում:

Կանգառում կուտակված մարդիկ՝ ուսանող, բանվոր, արհեստավոր, դասախոս, գիտաշխատող, բժիշկ, ինժեներ, մոտակա գյուղերից Երևան ժամանած մանրածախ առևտրականներ, ավտորուսի էին սպասում: Բոլորի հայացքները դեպի ձախ՝ սպասում էին:

Յուրաքանչյուր ավտորուսի ժամանումը, մագնիսի պես նրանց քաշում էր իր հետևից: Դոնները բացվելուն պես երեսուն-քառասուն հոգի, երկու մասի բաժանված, ուզում են միասին բարձրանալ: Հիմնականում լուռ, երբեմն բողոքի ու տրտունջի արտահայտություններ էի լսում, մեկը մյուսին կարգի հրավիրելով՝ վայրենի, կուլտուրա չունեցող, անհարմար չզգացող, անհասկացող անասուն էր անվանում: Եզրակացությունները թողնվում էր տոմսավաճառին կամ վարորդին, նրանք էլ չէին ուշացնում, իրենց հեղինակավոր խոսքն էին ասում. «Արա մարդ եք, անասուն չեք հո՞, կուլտուրա ունեցեք» կամ «Վայրենի ես, ի՞նչ ա, չես տեսու՞մ երեխա կա գրկում»:

Կանգնած եմ, լեփ-լեցուն ավտորուսի համարյա կենտրոնական մասում: Հետևիցս ինչ-որ մեկն է սեղմում, կրծքերի հպումից զգում եմ, որ կին է, ամաչում եմ ետ նայել, ես էլ, իմ հերթին, անկախ իմ կամքից, առջևիս կանգնածին եմ սեղմում: Այսինքն ով ում հասնում՝ սեղմում է: Երբեմն էլ ահել ու ջահել անհարմար վիճակի մեջ գտնվելով, բռնաբարվում, բայց իրենց բարոյականությունն ու արժանապատվությունը չխաթարելու համար պարզապես լուռ եմ:

Յուրաքանչյուր կանգառում ավտորուսի վրա «հարձակվող» ուղևորներն առանցի իմանալու, թե ինչ է կատարվում կենտրոնական մասում, բղավում էին. «Մի քիչ առաջ շարժվեք էլի, մարդ եք չէ՞, մենք

էլ ենք ուզում տուն հասնել»։ Ո՛չ առաջ, ո՛չ ետ շարժվել հնարավոր չէր, անասունների պես մի կտոր դարձած մարդիկ ալիքվում կամ ճոճվում էին։ Առջևից բարձրացողները տոմսի գումարը մեկին տալով հասկացնում էին՝ փոխանցել, մեկը՝ մյուսին փոխանցելով հասնում էր տոմսավաճառին, դժվար թե որևէ մեկը տոմս պահանջեր։

Ընտանիքների անդամները, զույգերը կամ ընկեր-ընկերուհիները կրկնակի չվճարելու համար ավտոբուսից իջնելով բղավում էին. «Աղջի, ես հետևից տվել եմ, առջևից չտաս, կամ հակառակը՝ առջևից տվել եմ, հետևից չտաս»։

Երջանիկ նստածների բարձրաձայն, բոլորին ի լուր տարվող խոսակցությունները, ամենքի համար էր, կարող էիր նույնիսկ նախապատվությունը ընտրութուն անել, ում լսել, ում՝ ոչ։ Կողմնակի միջամտողներ էլ էին լինում, որևէ մի բան կարող էին ընդունել կամ չընդունել։ Սրա կամ նրա, այս կամ այն կարծիքը կիսել կամ չկիսել :

Ավտոբուսի կենտրոնական մասում տեղ գրաված ուղևորի՝ որևէ կանգառում իջնելն ինքնին մեծ ճիգ ու ջանք էր պահանջում։ Յուրաքանչյուր իջնողի համար ավտոբուսից տաս-տասնհինգ հոգի պարտադիր իջնում ու նորից բարձրանում էին։

Մինչև էջմիածին հասնելը, համարյա թե ավտոբուսը կիսվում էր։ Ամեն անգամ իջնելուց նախ կո-

ճակներս էի ստուգում, հետո ինքնությունս ստուգելու, գոյությունս հաստատելու համար ինձ ուժգին թափ էի տալիս, իհարկե վախը սրտումս՝ չլինի թե Մսրա Մելիքի պես երկու մասի բաժանվեմ: Այս ամենը տեղի էր ունենում մարդկության քաղաքակրթության բնօրրան՝ իմ Հայաստան լեռնաշխարհում:

Ամառ, թե ձմեռ, պահածոյացված ավտոբոսում խեղդոց էր, ամառը՝ շոգից ու քրտինքի հոտից, ձմեռը՝ ցրտից ու հպարտություն ներչնչող սխտորի պատվաբեր «բույրից»: Չխենթանալու համար մնում էր միայն ցուցաբերել հզոր կամք կամ ավտոբոսից դուրս թռչելու հերոսություն:

Յոթանասուն տարի շարունակ սովետական կարգերը պահողները ամեն ինչ արեցին մեր ժողովրդին կրթելու համար, մասամբ հաջողեց, բայց «քաղաքակրթել»՝ ո՛չ: Տաքարյուն հային հերթ կանգնել, կարգ պահպանել ու կանոններին ենթարկվել սովորեցնել՝ չհաջողեց:

Լավ, թե վատ, այդ հերթերի մեջ ես գտա հոյակապ ընկերներ, բարեկամներ, ունեցա հպանցիկ սերեր, չփվեցի տարբեր մակարդակի, տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ, թափանցեցի նրանց հոգու խորքերը, մուտք գործեցի նրանց ներաշխարհը, ճանաչեցի հային իր լավ ու վատ, իր գեղեցիկ ու թերի կողմերով: Տարիները որքան ձգվում, ես այդքան շատ էի ճանաչում ինքս ինձ...

ԱՌԱՋԻՆ ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Թեհրանում չկար հայոց դպրոց, որտեղ չլիներ հայոց եղեռնիին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշակոթողի լուսանկարը, կամ դրա մանրակերտը: Չկար աչակերտ, որը չկարողանար գծել այդ հուշակոթողը, Սասունցի Դավթի հուշարձանի ու Վարդան Մամիկոնյանի գծանկարի հետ համահավասար, այդ հուշակոթողը մեզ համար դարձել էր հայրենիքի խորհրդանիշ: Չկար հայ, որ չերազեր տեսնել, և ի հարգանս մեր անմեղ զոհերի, մի ծաղիկ դնել նրանց նվիրված հուշակոթողին: Ապրիլ ամիսը բոլոր մյուս ամիսներից առանձնանում էր:

Պայքարի, պահանջատիրության, ցասումի, բողոքի, սգո այդ ամիսը մեզ՝ երեխաներիս ու պատանիներիս համար խորհրդավոր էր այն աստիճան, որ այդ ամսվա մեջ անգամ սինեմա չէինք գնում, ամաչում էինք անեկզոտ պատմել, մեծ խնջույքներ ու հարսանիքներ չէին լինում, անգամ սուտ չէինք խոսում... Այդ օրը՝ 24-ը Ապրիլին, բոլորս՝ երեխա, պատանի, երիտասարդ ու ծեր, աքլորանում էինք Թուրքիայի դեմ ու հայկական տարբեր հաստատություններում, դպրոցներում ու եկեղեցիներում տեղի էին ունենում օրվա խորհուրդը հարգող տար-

բեր միջոցառումներ:

1970 թ. Սովետական Հայաստան, Ապրիլ ամիս:

Վերջին տարիներին Իրանից ներգաղթած բազմա-
հազար հայությանը ցրել էին երկրի տարբեր
քաղաքներում: Ամենուրեք ընկերներ ունեինք,
տակավին խորթ միջավայրը մեզ ստիպում էր հաճախ
հավաքվել միմյանց շուրջ: Հրազդան, Չարենցավան,
Աբովյան, էջմիածին քաղաքներում վխտող պատանի
ու երիտասարդ մի խումբ իրանահայեր, ի մի եկած
որոշեցինք Ապրիլի 24-ին, կազմակերպված ու պատ-
շած համազգեստով, մեր հարգանքի տուրքը տանք
Մեծ Եղեռնի զոհերին:

Բոլոր որոշումները իրագործվեցին: Երկու
ավտոբուս էր «վարձվել» Հրազդանի, Չարենցավանի
և Աբովյանի երիտասարդ հայրենադարձներին
հասցնելու պայմանավորված վայրը, երկու ծաղ-
կեպսակ և յուրաքանչյուր մասնակցի համար մի-մի
մեխակ էր պատվիրվել, աղջիկ, թե տղա հագնվել էին
սպիտակ ու մուգ կապույտ գույնի համազգեստ, իսկ
մի հսկա պաստառի վրա գրված էր. «Այսքան չարիք,
թե մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհն հային
կարդա նախատինք»: Գիտեինք, որ Ահարոնյանի,
անգամ անունը, տրոցկիստականի, հակահեղափո-
խականի, դաշնակցականի պիտակն է կրում, ուստի
պաստառը փաթաթված իր հետ տանում էր փոքր

քույրս՝ Անահիտը:

Երկու շաբթ կազմած, առաջինների ձեռքում ծաղկեպսակներ, գլխիկոր ու լուռ, հաղթանակի կամուրջից քայլելով շարժվեցինք դեպի հուշարձան: Կամուրջը դեռ չէինք կտրել, միլիցիոներները զգացնել տվին իրենց գոյությունը, իսկ բլուրը բարձրանալուն պես, որոշակի մարդկանց կողմից, հարցերի տարափ սկսվեց: Որոշում կար՝ չպատասխանել որևէ հարցի, չտալ կազմակերպչի անուն:

Այնպես ստացվեց, որ մեծանուն գիտնական Վիկտոր Համբարձումյանը, իր չքախմբով հայտնվեց մեր առջևի շաբթերում: Չգիտեմ ինչու գոտեպնդվեցինք: Թվում էր, թե մեզ չըջապատած, քաղաքացիական զգեստներով անվտանգության աշխատողները «հսկում» էին մեր կազմակերպած երթը՝ Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ: Մարդիկ ապշած մեզանով էին հետաքրքրվում, սակայն անվտանգության աշխատողները նրանց արգելում էին մոտենալ մեզ: Մենք լուռ ու գլխիկոր բարձրանում էինք: Գնալով, մեզ չըջապատած մարդկանց խմբերը խտանում էին: Բոլորի հարցական հայացքների տակ շարունակում էինք մեր երթը:

Հասանք հուշարձանին: Ծաղկեպսակները դրվեցին խոնարհված պատին ու բացվեց Ահարոնյանի խոսքերով պաստառը: Բացվելն ու հավաքվելը մեկ եղավ: Քույրս չքացավ: Իրարանցման մեջ մերոնք

ցրվեցին, բայց անվտանգության աշխատողները հասցրեցին բռնել մի քանիսին: Կազմակերպիչների անուններ էին ուզել, անհեթեթ հարցերից ոչ մեկից ստույգ պատասխան չստանալով, տվյալներ վերցրել ազատ էին արձակել:

Լուր եկավ, որ էջմիածնում ձերբակալել են տասնվեց տարին չբոլորած հորեղբորս տղային ու ընկերոջս՝ Էդուարդ Հախվերդյանին (բանաստեղծ և թարգմանիչ):

Շտապեցինք էջմիածին:

Հորեղբորս տղային տուն էին ուղարկել, իսկ Էդուարդը դեռ ոստիկատանն էր: Մայրը մազերն էր փետում, հայրն անհանգիստ շարժումներով փոքր սենյակի մի պատից մյուսն էր գնում ու միայն իրեն հասկանալի ձայնով խոսում:

Ես՝ Էդուարդի գրած հակասովետական շնչով բանաստեղծություններն էի հավաքում, «Ուլեր» (հաց) վերնագրով մի բանաստեղծություն ուներ, դա էի փնտրում: Զեռքս ընկավ պարսկերենով թարգմանված Բորիս Պաստերնակի «Բժիշկ ժիվագոն» ու մի քանի այլ «սրոցկիստական» հեղինակներ:

Հայտնեցին, որ գալիս են: Գրքերն ու գրությունները պատշգամբով փոխանցեցի հարևանին: Ներս մտան: Էդուարդն էր ու գեղադեմ, թիկնեղ, հիսնոց մի մարդ: Խոսում էր նաև պարսկերեն: Կիրթ էր: Հագ-

նրված էր կոկիկ, լողացած, սափրված էր, անզամ
օծանելիքի հոտ էր բուրում:

«Սիբիրից» վերադարձած էգուարդի դեմքին գույն
չկար: Մայրը ուշաթափվելու աստիճան ցնցվում էր:
Հայրը նրան տեսնելուն պես վրա բերեց. «Տարեք, լավ
եք արել, տարեք, թող ֆոտո դցի, ասա քեզ ինչ տենց
բաներ, որ մեկս ենք տենց բաների մեջ խառնվի,
որ...»:

էգուարդը կտրեց հոր խոսքը. «Այ, պապ, ուրիշ-
ները մարդ են սպանում, բռնաբարում են, գողություն
են անում, ծնողները պաշտպանում, փող են տալիս
բանտից հանում են, ես ի՞նչ եմ արել, մի հատ նկար եմ
նկարել, կպցրել եմ պատին, էնտեղ էլ էինք անում, ով
էր բան ասում, հալա մի հատ էլ բարիքալլա էին
ասում»:

Հայրը լաց եղավ:

Մեզ տանից հանեցին:

Բնակարանի խուզարկումից հետո, նորից ներս
մտանք:

Ամենացնցողը էգուարդի միլիցատանը տեսածն
էր. «Մի երիտասարդի գցել էին մեշոկի մեջ ու զինվո-
րական սապոզներ հագած միլիցիոներները աքացիով
հարվածում էին՝ «Հո՞ղ ես ուզում, արի մեր բակը
մշակի, սվոլիչ...»:

ՉԵՂԱԾՈՒՄ ԱԿԱՆՆԵՐՍ

Իրանի Հայ Հեղափոխական Դաշնակցության պատանեկան միությունը երբեմնի ակտիվիստներս սկսել էինք հաճախակի հանդիպել: Հանդիպումները աստիճանաբար ինչ-որ միություն ստեղծելու գաղափար ծնեց: Դրանք վերածվեցին ժողովների, ժողովները սկսեցին լուրջ բնույթ կրել, նաև քաղաքականացվել: Շատ չէինք, թվով ութ-ինը հոգի: Ստեղծվեց շատ սեղմ ծրագիր-կանոնագիր, որի հիմնական շեշտը դրվեց գաղտնապահության վրա: Նպատակը մեկն էր՝ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Շատ կարճ ժամանակում նպատակադրեցինք անկախության գաղափարը հասունացնել մեր հայրենակիցների մեջ: Դրա համար անհրաժեշտ էր ԳՐԱՄԵՔԵՆԱ: Շուկայում չկար: Պետությունը, վստահելի անձանց տալուց անգամ, գրանցում էր գրամեքենայի տառաձևը: Իսկ հայրենադարձի համար, այն էլ նոր, դա արգելված այն պտուղն էր որից օգտվելու համար կարող էիր ցկյանս անց կացնել «ուղղիչ տներում»:

Միակ ելքը գողանալն էր: Ժողովը որոշեց գողանալ Աբովյան քաղաքի դպրոցում գտնվող միակ գրամեքենան: Մեր նպատակին հասնելու համար ժողովների վայրը քաղաքի տարբեր մասերից փոխա-

դըրվեց մոտակա բլուրներն ու Ծաղկաձորի անտառները:

Հատուկ հանձնարարություններով տարբեր անդամներ սկսեցին ուսումնասիրել դպրոցի շենքի լուսամուտները, անգամ գրամեքենայի ծավալն ու քաշը, պահակատունը, տարածքը, դպրոցից մինչև գնացքի կայարանի տարածությունը:

Մանրամասնությունները մշակվել էր, մնում էր օրն ու ժամը որոշելը: Ունեինք դպրոցի շենքի հատակագիծը, գիտեինք գնացքի ժամանման ժամը, մինչև կայարան վազքով հասնելու տևողությունը... Ձեռք էինք բերել պահակին ուշաթափ անելու բոլոր միջոցները: Որոշում կար նաև անհրաժեշտության դեպքում պահակին, նույնիսկ, ֆիզիկական վնաս հասցնել:

Դեռ Թեհրանում էի, տղաներից մեկը մի նամակ էր գրել ու խնդրել իր համար «պտուղի» այնպիսի դանակ գտնել, որի վրա չորս «մատանի» լինի: Ես ոչ միայն կատարեցի նրա խնդրանքը, նաև մի հատ էլ ինձ համար գնեցի: Իհարկե, դրա մասին ընտանիքս երբեք էլ չիմացավ: Այդ դանակները ներկայացրինք ժողովականներին ու որոշվեց ծայրահեղ անհրաժեշտության դեպքում օգտագործել:

«Օպերացիայի» օրը նշանակվեց: Յուրաքանչյուրը գիտեր, թե որն է իր պարտականությունը: Գործողությունը նախորդող երկու ժողովներին խմբի ան-

դամներից մեկի ներկա չգտնվելը ինչ-որ կասկածների տեղիք տվեց: Որոշեցինք ժամանակավոր դադարեցնել հանդիպումներն ու հետաձգել գործողությունը...

Եվ հետաձգվեց ընդմիջտ:

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱԾԱԾԱԽՍ

Իրերը ստանալուն պես մեր կացարանը դարձավ փոքրիկ խանութ: Երբեմն հերթ էր գոյանում: Հորեղբորս խորհուրդով մեր կարողությունների սահմաններում տարել էինք ծամոն, ծակ-ծակ՝ սետկա-գուլպա, սուրճի գավաթներ, զաժիգալկա, օձատիպ շղթաներ, կանացի ներքնազգեստներ և այլն:

Միակ բանը, որ մեզ չատ էր զարմացնում, հորեղբորս, նրա կնոջ ու երեխաների պարսկերենով անընդմեջ զգուշացումն էր. «Զգուշացեք, չգողանան», «Փողը ստանալիս լավ հաշվեք»:

Հաճախորդները կիրթ ու միաժամանակ հարուստ մարդիկ էին, փողը կարծես նրանց համար արժեք չուներ: Առանց սակարկելու, ինչքան ուզում էինք՝ վճարում էին: Ոչ մի արտառոց դեպք:

Առևտուրը տևեց ոչ ավելի, քան մեկ շաբաթ: Երեք թե չորս ամիս, մեկ ննջարանով բնակարանում

տասնհինգ հոգով դիմացանք, հետո ինչ-որ ծանոթի սեփական բնակարանում մի սենյակ վարձեցինք: Աշխատող չունեինք: Հայրս հիվանդ էր, մայրս նրան էր խնամում, քույրերս արդեն դպրոց էին հաճախում, իսկ ես առաջին քայլերս էի անում մուտք գործելու պետական համալսարան: Մինչև նոր ուսումնական տարեշրջանը սկսվելը՝ դեռ ժամանակ կար: Փորձեցի աշխատանք փնտրել: Ռուսերեն չգիտեի, արհեստ չունեի, ողնաշարիս վնասվածքի պատճառով վախենում էի ծանր աշխատանք կատարել:

Մի օր կանչեցին.

- Կուզե՞ս սաղում տոմսավաճառ աշխատել,- մի հին սեղանի հետևը նստած չսափրված, երտասարդ մի տղա հարցրեց ու ավելացրեց,- մի քիչ դժվար գործ ա, բայց, լավ ա, էլի...

- Սա՞ղ, էդ ի՞նչ ա:

- Այգի: Այգում բիլիարդ, պինկպոնգ ու էդ ձևի խաղեր կան, մարդիկ կգան, կուզեն խաղան, տոմս կտաս, փողը կառնես, կթողես խաղան, փող չեն տա՝ չես թողնի:

- Ես կուզեմ, բայց պիտի գնամ մերոնց հարցնեմ, ես էդ բանից գաղափար չունեմ:

- Լավ, մինչև վաղը կսպասեմ, գնա, բայց, որ չեկար՝ գործը կտանք ուրիշի, էդ գործի համար խընդրողներ չատ կան, պրոստո հայրենադարձ ես, ջահել ես, ասինք՝ օգնենք, մինչև ոտի կանգնես: Համ էլ տես,

Թե որ կոֆեյի չաշկեք ունեք, բեր կառնեմ, փողով:

Գնացի տուն: Խոսեցի տեղացի հարևանիս, ծանոթների ու հետո հորեղբորս հետ, խորհուրդները բազմազան էին, աշխատանքի շուրջ միօրյա խորհրդակցությունները շատ բաներ լուսաբանեցին.

- Անպայման գնա ու աշխատիր,- չտապեց մեկը,- այ ցավդ տանեմ, օրը տաս-տասնհինգ ուրլի փափախ կա, փողը կառնես, տոմս չես տա, հա թող խաղան էլի, միայն իմացիր, կոֆեյի բաժակների համար փող չվեկալես:

- Ճիշտ ա ասում, փափախիցդ մի բան էլ վարիչին կտաս,- կարգը էդպես ա, չտաս, կզան կբռնեն, հայրենադարձ ես, կարող ա բան չանեն, բայց գործից կհանեն,- ասաց մի ուրիշը:

Երրորդը շարունակեց.

- Արա, խամ տղա ես, էդ սաղ մտնողները սաղ նստած հելած պլանքյաչ տղերք են, ո՞նց կարաս յուր գնալ, էրկու օր չես դիմանա, դրանք փող տվող չեն...

Իսկ ինձ փող էր պետք:

Հաջորդ օրը սուրճի վեց բաժակներով հանդիպեցի նախորդ օրվա երեսնոց տղային, զբոսայգու վարիչն էր: Ծանոթացրեց տեղանքին, աշխատանքին ու այն փոքրիկ պահեստին, որտեղ աշխատանքից հետո պահեստավորում էին խաղերի պարագաները: Ամենից շատ կարևորեց ու նույնքան լուրջ վերաբերվեց տոմսերի վաճառքի հարցերին:

- Նայիր, Հա, զգուշացնում եմ առանց տոմսի որևէ մեկին ըստ կամ շառ (գունդ, գնդակ) չտաս, էստեղ սովետ ա, կբռնեն կնստեցնեն, մեղք ես, լսել եմ հերդ էլ հիվանդ ա, էգուցվանից ժամը տասին կգաս աշխատանքի, տոմսերն էլ էգուց կտամ:

Ընդունվեցի աշխատանքի:

Հաջորդ օրը ժամը տասին մտա այգի: Համարյա մարդ չկար: Այգու պատը մեզ բաժանում էր մայր տաճարից: Մի դուռ կար, որի վրա գրված էր. «Այս խուցում ճգնել է Կոմիտաս Վարդապետը»: Նստեցի այդ դռան մոտ ու սպասեցի վարիչիս: Կամաց-կամաց տղաներ երևացին: Եկան բիլիարդի ու սեղանի թենիսների մոտ պպեցին: Լավ էին հագնված, կոկիկ, բայց յուրահատուկ:

Վարիչս ժամ ու կես ուշացումով եկավ: Զարմացավ, որ տեղում եմ, չեմ գնացել: Ուշացումը պատճառաբանեց քաղսովետում ունեցած քաչկոտուքով: Պահեստի բալանին տվեց, տոմսերը տվեց, մի քանի նոր ցուցմունքներից հետո ինձ մենակ թողեց:

Վախենում էի, ինչի՞ց, չգիտեի: Անծանոթ դեմքեր էին մոտենում, մարդկանց էին հարցնում, որոնց անուններն անգամ չէի լսել՝ Գող Վարո, Շոամ Լյովա, Շլգո Հովհան և այլն: Առաջին օրը ոչ սկսվել, ոչ վերջանում էր: Ամեն ինչ սպասելի էր, բայց ոչ երբևէ այսպիսի միջավայրի: Իրանահայի հայերենիս առողջանությունն ու հնչերանգը անմիջապես մատնում էր

ախպար կամ «պարսիկ» լինելս, ամեն մի «լավ տղայի» հետ խոսելիս քրտնում, չփոթվում էի, հաճախ նրանց հայերենը չէի հասկանմ, գողականների այդ որջը մի նոր աշխարհ էր: Աշխարհ, որի մուտքը ինձ նմանների համար վտանգավոր էր: Առաջին իսկ օրը հիսունի շուրջ մի մարդ, սպիտակ բաճկոնով, սև տաբատով ու սպիտակ փայլուն կոշիկներով մոտեցավ բիլիարդ խաղացող տղաներից մեկի ձեռքից վերցրեց փայտն ու շարունակեց նրա խաղը: Տասնհինգ ընկերս հետո մոտեցա նրանց.

- Ներողութուն, պարոն...

- Պարոնը հերզ ա, պիտուխ,- ասաց նա ու ձեռքի բիլիարդի փայտը էն ա պիտի գլխիս գար...

Հիշեցի, որ սովետական երկրում եմ.

- Կներեք, ընկեր, ձեր ժամը վերջացել ա:

- Արա թող ուղղ քաշիր, ես քո լավի... էս ով ա, արա...,- հետո շարը ձեռքն առավ ու դիմեց ընկերոջը,- Արա, չտամ էս գյաղին սատկցնեմ: Արա, իսկականից...

- Հեչ, բանի տեղ մի դիր, խաղդ՝ խաղա, նոր ա, խամ ա...

Ես փախչելու պես մտա պահեստ: Նստեցի միակ չորքոտանու վրա ու կիսամեռ վիճակում սպասեցի ինչ-որ նոր միջադեպի, կամ մեկին, որ կարողանա ինձ փրկել իրավիճակից:

Մեկ էլ մի կին ներս մտավ, խուճուճ մազեր, մսա-

կալված, վառ կարմիր ներկած շուրթեր, ոսկյա շնատամներ ու.

- Արա, դու պիտի կարենա՞ս էս բոզի տղերքի հախից գաս, արա ես սաղ էջմիածինը ք....ծ ունեմ չկարեցա, էս ով ա քո նման ոչխարին բերել, արա, սրանք գել են, արա, կուտեն քեզ, այ ցավդ տանեմ, կմորթեն...

- Բարև ձեզ,- վրա բերեցի ես:

- Հա, բարև, հասկցանք, այ ջահել, սրանք քեզ կմորթեն, էս սաղը իմն ա, տաս տարի ա էս իմ գործն ա, այ միամիտ գյաղա, դու ո՞նց կարաս յոլա գնաս: Լսել եմ նորեկ ես, ծամոն, բան-ման բերե՞լ եք: Բեր բիրիզ տուր ինձ, կծախեմ, փողդ կտամ:

Մեկ էլ մի բան ուժեղ հարվածեց մեր դռան ու խաղացողների մեջ իրարանցում եղավ: էս կինը վազեց նրանց մոտ, ամենաայլանդակ հայհոյանքներով սաստեց նրանց ու վերադարձավ.

- Չես դիմանա, ցավդ տանեմ, չես դիմանա,- ասաց նա ու սիգարետ վառեց:

Երեկոյան ժամը հինգի մոտ վարիչս հասավ: Փրկիչ հրեշտակ թվաց: Թեթևացա, ոնց որ հոգուս վերքին սպեղանի դնեին: Գուցե ուզում էի լաց լինել, չգիտեմ, բայց նաև սրտխառնոցի պես բան զգացի:

- Հը՞, ո՞նց ես: Ամեն ինչ լա՞վ ա,- օրոր-չորոր գալով հարցրեց նա ու առանց պատասխանի սպասելու շարունակեց,- տուր տոմսերը, տուր տենամ ինչքան

ես վաճառել...

Գիշերը մղձավանջի մեջ անցկացրի: Աշխատանքից հրաժարվել չէր կարելի, հաց էր պետք, նաև արժանապատվությունների հարց էր, պիտի հաղթահարեի...

Շարունակեցի աշխատել...

* * *

Բիլիարդի սեղաններից մեկը վնասվել էր, վերանորոգող էինք փնտրում, հիշեցի ազգականիս, որը Թեհրանում այդ աշխատանքի մեջ մեծ համբավ էր ձեռք բերել ու ինչ որ զրույցի ժամանակ ինձ ասել էր, որ իր մասնագիտությունից վերաբերող բոլոր գործիքները բերել է: Ղրա մասին ասացի վարիչիս: Խնդրեց կանչել. «Ինչքան որ պետքն է կտանք, միայն թե սեղանները կարգի բերի»:

Ազգականս չմերժեց: Արժան քաղաքից գործիքները տաքսու մեջ ղրաժ եկավ: Պայմանավորվեցինք հաջորդ օրվանից սկսել աշխատանքը: Գործիքները տեղավորեցինք պահեստում:

Հաջորդ առավոտ պահեստը բացելու կարիք չեղավ: Դուռը ջարդել ու գործիքները տարել էին:

Միլիցիան եկավ, ակտավորեց, մի քանի հարց ու փորձից հետո ասաց. «Միամիտ գյաղա եք էլի, արա, էդպիսի իմպոտնի գործիքները, էս լակոտների աչքի առաջ, էս պստիկ ղՖիլով, խլամ դոան հույսին կղնեն

պահե՞ստ... »:

Մեկ ամիս դիմացա: Վարիչս ամեն օր գալիս, աշխատածս գումարը ձեռքիցս առնում՝ զնում էր: Ես էլ որպես «ճարպիկ» տղա, ուրախանում էի, որ բացի աշխատավարձից, որը ամիսը յոթանասուն ուրբի էր, կարողանում էի օրը երկու-երեք ուրբի փափախ անել, որպեսզի հետագայում գլուխ գովեմ:

Յոթ տարի անց կուլտուրայի տանը աշխատելիս ինձ մոտեցավ վաղեմի ծանոթս՝ սաղի վարիչը, հիշեցրեց իմ այնտեղ աշխատելու ժամանակներն ու իմ փոխարեն ինքը գլուխ գովեց.

- Իսկականից որ ախպար էիր էլի, արա, օրական քսան-քսանհինգ ուրբի տալիս էիր, որ տանեմ բանկ, մուծեմ, քեզանից առաջ էն բոզի կնիկը երեք-չորս ուրբի էր տալիս, ես էլ հո էչ չէի, քո տված փողից միայն չորս-հինգ ուրբին էի մուծում, մնացածն էլ իմ քյարն էր...

ԱՅԼՍՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԽԱՆՈՒԹԸ

«Վայրուտայի խանութ» հասկացությունը ինձ համար պարզվեց մեր՝ Հայաստան մուտք գործելուց մի քանի շաբաթ հետո: Մարդիկ էին մոտենում ու

բառերի շատ խորհրդավոր արտասանությամբ ու նախադասությունները երկար ճանապարհ տանելուց հետո միայն, երրորդ մարդը զգուշությամբ, ականջիս տակ, հազիվ լսելի ձայնով, հարցնում էր. «Դուլար ունե՞ս»:

«Չէ՛»: Չհասկանալով հարցի բուն իմաստը, համարձակ պատասխանում էի նրանց, այն ինչ օրինավոր կերպով սահմանի վրա, գրանցել էի տասնհինգ ամերիկյան դոլար ու հատուկ փաստաթղթով դարձել էի նրա լիիրավ տերը:

Ամիսներ անց, երբ էջմիածնի Մայր տաճարի շուրջ քայլում էինք, մի խանութ նկատեցի, փորձեցի ներս մտնել, ընկերս զգուշացրեց.

- Չմտնես:

- Ինչու՞, - զարմացա ես:

- Չեն թողնի:

- Բայց ինչու՞:

- Էս վալյուտայի խանութ ա, կամ պիտի դոլար ունենաս, կամ տուրիստ լինես, էս միայն «այլմուրակայինների» համար ա:

Ջահել ուղեղիս մեջ տեղ չարավ ընկերոջս պատասխանը, հիչեցի իմ տասնհինգ դոլարն, իսկ խանութը մնաց առեղծվածային մի առևտրի կենտրոն, որտեղ մուտք գործելու համար պիտի լինեիր ազատ, ոչ սովետական քաղաքացի, առնվազն ունենայիր օրինավոր, գրանցված դոլար:

Սովետմուրակը նոր էր սկսել արտադրել «Վոլգա 24» մակնիշի մարդատար ինքնաշարժը: Հասարակ քաղաքացուն անհաս այդ «հրաշքին», տիրանում էին կամ նորեկ հայրենադարձները, վճարելով նրա եռակի ու քառակի արժեքը, կամ էլ պետական այրերը, բարձր խավի այն պաշտոնյաները, որոնք լայն կապերի մեջ էին կենտրոնի հետ ու ինչ-ինչ ներքին հաշիվներով, այն կարող էին ձևակերպել իրենց հիմնարկի վրա և օգտագործել որպես սեփական ինքնաշարժ:

Հայրենադարձ բարեկամներս արդեն գիտեին իմ անվամբ գրանցված տասնհինգ դոլարի փաստաթղթի մասին: Այդ փաստաթղթի շնորհիվ ես հաճախ էի հրավիրվում կեր ու խումերի: Շրջապատս մեծանում էր այնպիսի մարդկանցով, որոնց խոսակցության նյութը չէր ճեղքում ինքնաշարժի, դոլարի ու արտասահմանյան որոշ ապրանքների ու վերին խավերում ունեցած ծանոթների սահմանները:

Այս նորեկները բոլորն էլ կարողացել էին իրենց ապահովել ինքնաշարժերով: Մեկը՝ մյուսի հետևից ունեցած Մոսկվիչներն ու Ժիգուլիները փոխարինեցին «24 Վոլգաներով»:

«24 Վոլգան» դարձել է սովետական քաղաքացու խոսակցության առանցքը, հաճախ հպարտությամբ այն համեմատում էին ամերիկյան, ճապոնական, գերմանական ու ֆրանսիական, չվեղական այն

ինքնաշարժերի հետ, որոնց տեսել էին ոչ թե սովետական, այլ արտասահմանյան, բայց չարգելված ֆիլմերում: Սովետական քաղաքացուն հպարտություն ու պատիվ բերող «24 Վոլգայի» տերերը, եթե չունեին ավտոտնակ, ստիպված գիշերում էին ինքնաշարժի մեջ, որպեսզի չլինի թե իրենց «գեղուհին» զոհ դառնա փողոցային հարձակումներին կամ պարզապես «չբռնաբարվի» տաքարյուն այն երիտասարդների կողմից, որոնք արտասահմանյան «գեղուհիներ» տեսնելով, հաճախ էին երազախափ լինելով վթարի ենթարկվում:

Մի օր էլ ինձ առաջարկեցին վաճառել տասնհինգ դոլարանոցիս վկայականը: Լավ էին վճարում՝ հազար հինգ հարյուր դոլարի համարժեքով ուրբի, այսինքն երկու-երեք տարվա աշխատավարձս:

Բանը նրանում էր, որ մեր հայրենադարձ գործարար տղաները վերին խավերում գտել էին մարդիկ, կամ հակառակը՝ վերին խավի աշխատող լավ տղաները գտել էին միամիտ ախպարների, որոնց պատկանող դոլարի վկայականները, ինչ արժեքի էլ լինեք, գնում ու հատուկ մասնագետների միջոցով, կեղծում, ասենք 15-ը դարձնում էին 1500 կամ 15.000, երբեմն էլ, պարզապես, ներգաղթ կոմիտեին, կամ համապատասխան կազմակերպությունը, որոչ գումար տալով, նույն համարի տակ, գումարը փոփոխված նոր վկայական էին ստանում: Այդ փաս-

տաթուղթը նրանց թույլ էր տալիս մեկնել Մոսկվա, առանց հերթի գնել «24 Վոլգա» և «պետական գնով» ազատ վերավաճառել վերին դասի «լավ տղաներին»:

Հայրենադարձ գործարարներին «միամիտ» ասացի, որովհետև ընդամենը մի քանի տարի հետո, նրանք բոլորն էլ, քիչ թե շատ տարիներով ազատագրվեցին, կամ պարզապես սնանկացան ու երկրից դուրս գալու ելքեր փնտրեցին:

Ես չարժանացա «24 Վոլգային», բայց բախտ ունեցա դուարի իմ վկայականով ամեն մի անհեթեթ առիթով մտնել այլմոլորակայինների խանութը: Հասարակ քաղաքացիներից տարբերվում էի այդ վկայականով միայն, իմ մուտքը այլմոլորակայինների խանութ չատ քաղաքացիների նախանձն էր շարժում: Ես տեսնում էի այն ամեն ինչը, որ արգելված էր հասարակ մարդկանց ու աչքերիս չէի հավատում, մի՞թե կարելի է այս անհեթեթ բաները արգելել սեփական քաղաքացուն՝ «Վինստոն, Մարլբորո, Քենեթ, Հալֆ ընդ Հալֆ... տարբեր տեսակի ծխամորճեր, թութուններ, կրակվառիչներ, խմիչքներ, վիսկի, ջին, ազատ չուկայում փնտրվող հայկական կոնյակներ, հագուստեղեն, փողկապներ, հայկական հասարակ հուշանվերներ, չեխական բյուրեղապակիներ, հայրենադարձների բերած պարսկական անորակ արտադրանք ու առանձնապես ոչ մի արտառոց բան, բացի

իմ ազատ ել ու մուտից այլմոլորակայիններին հատուկ այդ խղճուկ վաճառատանը...

ԱՌՎՋԻՆ ԸՆԴՎՋՈՒՄՍ

Ավելի քան մեկ տարի սպասեցինք բնակարանի: Ընտանիքիս ծանր վիճակից ելնելով, հաճախ էի գնում քաղսովետ, որտեղ ինձ արդեն բոլորը ճանաչում էին: Քաղխորհրդի նախագահի տեղակալը վաթսուներեկ անց մարդ էր, ինձանից պահանջել էր հորս համար բժշկական տեղականք, որպեսզի ցածր հարկից բնակարան հատկացնեն: Բոլոր պահանջները բավարարել էի, անգամ մի գրություն էի տարել, որտեղ նշված էր. «Քաղաքացի Արամ Սավուդի Քեչիչյանն ի վիճակի չէ քայլելու»: Հանգիստ և լիահույս էի, որ մեզ չեն տեղավորելու առանց վերելակի շենքերի բարձր հարկաբաժիններում:

Հասավ երկար սպասված օրը: Գնացի քաղսովետ: Մի թուղթ տվեցին ձեռքս ու շնորհավորեցին, նաև ավելացրին՝ դուք այն բախտավորներից եք, որ լավ ժամանակներում եք եկել, հայրենիքը բարգավաճ վիճակում է, քառասունվեց թվականների եկողների պես քարանձավներում ու փլատակների տակ չեք պատսպարվել... Աչքս ընկավ թղթին, որին օրդեր էին ասում: Կարդացի հասցեն՝ Կամոյի փողոց, 2-դ շենք,

չորրորդ հարկ...

- Էս սխալ ա, ընկեր Հ...յան, մենք չենք կարող չորրորդ հարկ բարձրանալ:

- Կարող ես, կարող ես, ջահել տղա ես, քեզ ի՞նչ է եղել որ,- խոժոռվեց տեղակալ ընկեր Հ...յանը:

- Ես իմ մասին չեմ ասում, հորս մասին եմ մտածում, ասել եմ, չէ՞, որ հիվանդ ա, աստիճաններով բարձրանալ, անգամ քայլել չի կարող, բժշկից տեղեկանք եմ բերել, ձեր իսկ պահանջով:

- Էդ բժշկների տեղեկանքներով որ առաջնորդվենք, սաղին պիտի առաջին հարկ տանք, բա էդ հինգ հարկանիները ու՞մ համար են:

- Ես հրաժարվում եմ, ես չեմ կարող, չորրորդ հարկը ձեզ պահեք: Քանի անգամ տեղեկանք բերենք, որ հիվանդ ունենք, նա ի վիճակի չի...

- Ի՞նչ տեղեկանք , այ տղա, ոչ մի տեղեկանք էլ չես բերել, սենյակն ազատիր:

Այլևս անելիք չունեի: Քաղսովետի շենքից դուրս պրծա ու վազեցի դեպի տուն, հեռու չէր, տասնհինգ բոլակ ճանապարհ:

Տուն մտնելուն պես հորս աչքերը փայլեցին, բերանի անկյունից ջուր ծորաց ու գլուխը մի կերպ վզին պահելով, կոկորդից, ի նշան ուրախության, ինչոր ձայներ դուրս թռան, բայց զարմացավ, որ պատասխանի փոխարեն փորձում եմ իրեն շալակա առնել:

Քարչ տվեցի փողոց, ծանոթ գտա, գցեցի մեքենան ու գնացինք քաղսովեստ: Հորս կիսով չափ շալակս առած բարձրացա երկրորդ հարկ՝ նախագահի տեղակալի սենյակը, պառկեցրի հատակին ու դիմեցի նրան՝ «Ահա ձեզ տեղեկանք»:

- Այ տղա, էս ի՞նչ ես անում, էս ա, միլիցիա եմ կանչում:

- Ի՞նչ ուզում ես կանչիր, էս ժամին երրորդ ու չորրորդ անգամ տեղեկանք տվող բժիշկ չկա, ոչ էլ փող ունեմ, որ քեզ տամ,- ասացի ու հորս հատակին թողած դուրս եկա: Աստիճաններին նրա աղերսագին հառաչանքը հասավ ականջիս:

Գնացի բարեկամներիցս մեկի տուն ու մարդ ուղարկեցի իմանալու, թե ինչ է կատարվում:

Ինձ էին փնտրում: Ամբողջ քաղաքը ինձ էր փնտրում: Երեկոյան ժամը հինգն անց էր, քաղսովեստի շենքի դռները դեռ չէին փակվել: Նախագահն էր ժամանել, ում հարկն է դիմել էին, որպեսզի ինձ գտնեն, իսկ ես համառորեն մերժում էի ներկայանալ, մեզ ցածր հարկ փոխադրելու համար մինչև զրավոր երաշխավորագիր չտային, մի բան, որ սովետական երկրում օրենքով առաջնային խնդիր էր ու մեզ հասանելի:

Ժամը յոթն անց էր, ինձ համոզեցին: Գնացի: Քաղսովեստի շենքի դուռը դեռ բաց էր: Միլիցիոներները հետևեցին ինձ, բարձրացա երկրորդ հարկ, դեմս

դուրս եկավ ընկեր տեղակալն ու վրա բերեց. «Ձե՞ս ամաչում, այ տղա, էս ժամը քանի՞սն ա, մենք պարտավո՞ր ենք...»: Սուսքը չավարտած հարձակվեցի, այն ժամանակ ինձ համար ծերուկ, այդ ողորմելիի վրա ու դեմ տվի պատին: Երկու միլիցիոններ հասան ու... «Ասեք թող ներս գա», - լսեցի նախագահի ձայնը:

Ինձ տարան նախագահի սենյակ:

- Բարի երեկո:

- Բարի երեկո, էս ինչ ա, էս չգիտե՞ս որտեղ ես գտնվում, այ տղա, ինչի՞ ես ճակատագրիդ հետ խաղ անում, էստեղ...

- Հայրենիք ա:

- Լավ մի փրկաստիպիր, հայրենադարձ չլինելիդ հիմա... Ասա, ի՞նչ ա եղել, ի՞նչ ես սաղ քաղաքը խառնել, քեզ հեղափոխականի տեղ ես դրել... Գիտե՞ս, որ սա խուլիզանություն ա և կարող է քեզ բանտ տանեն:

- Հորս տարեք, իրա մեղքն ա:

- Հերդ ի՞նչ մեղք ունի, ինչու՞ ես էդ հիվանդ մարդուն էս օրը գցել: Գնա, գնա տես ինչ օրի ա:

- Մեղավոր ա նրանում, որ հիվանդ ա: Երեք անգամ տեղեկանք եմ բերել, չեք հավատացել, էս օր էլ կենդանի տեղեկանքն եմ բերել:

- Ընկեր Հ...յանին էստեղ կանչեք:

Կանչեցին: Եկավ:

- Ընկեր չ...յան, Քեչիչյանը քեզ տեղեկանք բերե՞լ
ա:

- Ոչ, ընկեր...

- Սուտ ա ասում:

- Ձենդ կտրի, նա չի կարող սուտ խոսել, հորիցդ
մեծ ա: Դուք գնացեք, ընկեր չ...յան:

- Բայց սուտ է ասում, ընկեր նախագահ:

- Լավ, վերջ տուր, հորդ տուն տար, վաղը կգաս
մոտս: Գլխացավանք մի սարքիր, ծանր կնստի վրադ,
մենք էլ մեր օրենքներն ու մեր ճանապարհները
ունենք, շատ առաջ չես գնա...

Համոզեցին: Գնացինք տուն:

Հաջորդ օրը նաև Համոզեցին ընդունենք երրորդ
հարկի երկու ննջասենյականոց մի բնակարան,
հետագայում, հնարավորության դեպքում ավելի
ցածր հարկ տեղափոխելու պայմանով:

Նոր չենք էր, բայց մաքրություն էինք անում,
պատերից սպիտակ ներկը թափվում էր, նորից
ներկել էր պետք, լուսամուտները լավ չէին փակվում:
Մեզ օգնում էին երկու հայրենադարձ ներկարարներ:
Խանդավառ մարդիկ էին, լավ խմում, ծխում ու ղոչաղ
աշխատում էին: Ի դեպ, հենց այդ չենքի կառուցող-
ներից էին:

Էս չենքը դուք եք ներկել, բա կարե՞լի ա էսպես

անորակ գործ անել:

Հարցիս հետևեց նրանց բարձր ու լիաթուք ծիծաղը:

- Այ բալամ, որ սենց չանենք, բա մեզ գործ որդից: Էս ներկի հետ, որ սիրիչ խառնեինք, հիմի մենք ի՞նչ պիտի անեինք: Հազիվ ենք ապրելու ծակը ճարի, բալամ, դու էլ կսովորես, մի քիչ համբերի, դու էլ կսովորես...

Երկու օր անց թակեցին դուռը, բացելուն պես մեկը վրա տվեց. «Արա, դուրս հելեք իմ տնից, էս իմ տունն ա, ես ձեր ախպար բերանը ք...մ, ութ տարի ա սպասում եմ, սաղ փողերս վարի գնաց, արա, կսատկցնեմ, կմոռթեմ ձեզ, ձեր պարսիկ բերանը, տասնհինգ տարի ա, վեց հոգով մի սենյակում ենք ապրում...»

Նոր բնակարանում, մի անգամ ևս հաստատվեց, որ մենք ոչ թե հայ, այլ պարսիկ ենք, իսկ հետագայում շենքը, որի մեջ բնակվում էինք իրանահայերս, ճանաչվեց որպես պարսիկների շենք:

Հետո, ամիսներ հետո, հանդիպեցի մեզ պարսիկի պիտակ կպցնող այդ հայրենակցիս, իմացա, որ էդ խեղճ մարդուց հազարներ էին վերցրել, մեր տեղը նրան էին խոստացել, անգամ հասցեն էին տվել, բայց վերջին օրը, նրան ասել էին, որ դեռ պիտի սպասի:

ԼՈՒՅՍԻ ՄԱՐԴԸ

Սովետական կենսաձևն ու կենսափորձը չատարագ էինք սերտում:

Բնակարանը ստանալուն պես, քիչ թե չատ փորձված հարազատներս սկսեցին դասեր տալ: Առաջին դասը էլեկտրականութուն գողանալու տարբերակներն էին:

Ա- Պառից պղնձյա պրովոզը հասցնել ու միացնել շտեպցելի մինուսին: Սոչիկը սկսում է թարս պտտվել:

Բ- Հաշվիչի վերևը ծակել ու ասեղի պես մի բան մտցնել մինչև դիպչի պտտվող սկավառակին, այն կղաղարի պտտվելուց, թիվ չի գրանցվի:

Գ- Լուսանկարչական պլյոնկեն սոչիկի ապակու կողքից մտցնել ներս, քանի որ պլյոնկեն հավաքվելու ընդունակ է, ներս մտնելով կհավաքվի, ծավալ կստանա, կդիպչի սկավառակին, կղաղարեցնի նրա պտույտը:

Դ- Խոսել «լույսի մարդու» հետ, ամիսը ինչ-որ չնչին գումար տալ, որպեսզի ընդհանրապես հրաժարվի իր ստուգելու պարտականություններից:

ՋՈՒՐԸ

Առաջին մեկ տարին ջրով ապահոված էինք: Ջուրը աստիճանաբար սկսեց նվազել, մեզ հետ միասին, ջրի ծարավ զգացին նաև ծորակները, հետո իսպառ չորացան: Կարճ ժամանակ հետո, մոռացանք նրանց բացելու և փակելու ձևը, ժանգոտվեցին ու մնացին մշտաբաց:

Ջրի ձայն լսելիս, հասկանում էինք, որ ջուր են տվել: Շտապում էինք լցնել վաննան, որպեսզի օգտագործեինք զուգարանի համար: Սկսեցինք վարժվել նաև քիթ ծակող զուգարանի հոտին: Չէինք հասկանում, մենք էինք ջուր խնայում, թե՞ պետութունը, մի բան, որ ինձ չատ էր անհանգստացնում, տարիներ շարունակ շենքի տակից հոսող ու մեր փողոցում, ճիշտ մեր շենքի դիմաց, բացված ասֆալտից դուրս հորդող ջրերն էին:

«ԿԱՊՈՒՅՏ ԶՐԱՇԵԸ»

Իրանում՝ «հրաշքի» երկրում, այդ «հրաշքը» չունեինք: Դա ամենամեծ պարզևն էր մեզ: Օգտագործում էինք ըստ պահանջի: Ջեռուցման սիստեմը ի սկզբանե կանոնավոր չաչխատելու պատճառով երևի, սկսեցինք հաչտվել այն մտքի հետ, որ գաղօջախը միշտ

պետք է արթուն պահել ու չխնայելով, տեղին ու անտեղի օգտագործել:

«Հերն էլ անիծած պետությանը», սա էլ դարձավ մեր ապրելու կարգախոսն ու պետության հերն իսկապես անիծվեց:

ՄԵՁ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԿԱՅ-ԿԱՐԱՍԻՆ

Բնակարանը ստացանք: Ներգաղթ կոմիտեից մարդ ուղարկեցին, թեթև հարցաքննություններից հետո ասացին, որ ըստ օրենքի, ներգաղթողներին բնակարան տրամադրելուց հետո, ապահովում են նաև կահ-կարասիներով՝ սեղանով, աթոռով, մահ-ճակալով ու զանազան իրերով: Հորեղբորս, ինձ և մի քանի այլ հայրենադարձների հետ պայմանավորվեցին հանդիպել Երևանում՝ նշելով հասցեն:

Հարգեցինք պայմանավորվածությունը: Որոշված օրը, ճիշտ ժամին ներկայացանք:

Բարեբախտաբար ժամանակին եկել էր նաև կոմիտեի ներկայացուցիչը: Ձեռքին բանալի կար: Բացեց փակի տակ գտնվող մի դուռ ու ասաց. «Ում, ինչ հարկավոր է, թող վերցնի, ամեն ինչ կա»:

Ներս մտանք, չորս ընտանիքի ներկայացուցիչներ էինք: Կանգնեցինք ու հայացքով զննեցինք կահ-

կարասիները: Կլոր սեղաններ, մեկ կամ երկու ոտքով, առանց ոտքի, «Հաշմանդամ» աթոռներ, տախտակներ, առանց դռների կամ մի դռնով զգեստապահարաններ, պոկված դռներ... Մի խոսքով աղետի պահեստ...

Դուրս եկանք:

- Հը՞, բան չուզի՞ք,- իբր թե զարմացավ կոմիտեի ներկայացուցիչը:

- Բայց ինչ կա, որ ինչ ուզենք: Մենք փող ունենք, շնորհակալ ենք, ձեզանից էլ, պետութունից էլ-, ասաց ապագա աներհայրս ու նրան լրացնելու եկավ հորեղբայրս.

- Ասում ես, սրանք տանենք ի՞նչ անենք, մի հատ սալեմ բան չկա:

- Դա ձեր իմանալիքն ա, թե որ կուզեք, դուռ ա, սեղանի երես, ոտք, աթոռ, տարեք մի քանի մեխ կխփեք, կղզեք յուր կզնաք էլի, թագա ապրանք ա...

- Չէ, ախպեր ջան, չենք ուզում, ես էլ եմ ձեզանից ու պետութունից շնորհակալ,- ասաց հորեղբայրս ու թևիցս բռնած շարժվեց դեպի փողոց:

- Այ, ընկեր, որ հղպես ա, արի էստեղ ստորագրի, որ հրաժարվում ես:

- Ինչի՞ց եմ հրաժարվում:

- Սեղան-աթոռից, մեքելից...

- Այ, ընկեր ջան, ճիշտ ա ախպար ենք, հարի՞Ք հո չենք: Էնտեղ ուր ա մեքել, փետի կտորներ են, տանեմ

ի՞նչ անեմ, դնեմ Հորս գոռը, թե՞ կոխեմ... Ախր բերանս բացել մի տա, թե չէ...,- կատաղեց Հորեղբայրս ու ճանապարհը շարունակելով ավելացրեց,- գետինն էլ չեն մտնում, հազարավոր սեղան, աթոռ, էլ ինչեր ասես չեն ստանում, տանում մասնավոր ծախում են, որը ջարդվում ա, չի ծախվում, բերում են մեզ ասում են՝ ստորագրեք, ի՞նչ ստորագրենք, դոռոմսաղներ, շատ գիտե՞նք էդ թուղթի վրա ինչ ա գրած, գոնե հայերեն գրեք:

ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ինչքան էինք ուրախանում, երբ ասենք ծննդավայրից կամ հեռու մոտիկ հարազատից նամակ էինք ստանում, իսկ գրելը, ինքը մի ծես էր, բարևների շարանը չէր վերջանում, վայ թե մեկին մոռանայիր, ինչպես էր վիրավորվում.... Նամակները ավելի արժևորվեցին, երբ երկաթյա վարագույրով բաժանվեցինք մեր հարազատներից: Յուրաքանչյուր հարազատի նամակ, գունավոր լուսանկար կամ գեղատեսիլ բացիկ տոնական մթնոլորտ էր ստեղծում: Հայաստանում, գինվորի ու խոպան գնացած հարազատի երկտողի համար՝ սեղան էր բացվում: Նամակը սուրբ մասունք էր, տարիներ պահում ու

հարազատի համն ու հոտն առնելուց բացի, երբեմն էլ, եթե այն լավ էր շարադրված, մի քանի անգամ հարևանների ու ամբողջ թաղի համար ընթերցվում էր: Նամակը գրականություն էր: Նամակը պահածո հուշ էր, մասունք: Ընկերներիս ու բարեկամներիս բոլոր նամակները խնամքով պահում էի, իսկ նախատոնական օրերի նամակներին ավելի անհամբեր ու սրտատրուփ էինք սպասում, մեծ ու փոքր Զատիկ, Մենդյան տոն, ամանոր... Սպասում էինք, չնորհավորական բացիկների...

Հայաստանյան երկրորդ ետ ամանօրյան օրերին սկսեցի այցելել փոստատուն, հարցնել նամակների ու բացիկների մասին. «Որ ուղարկեն, կբերենք էլի, վայ», - տրտնջալով պատասխանում էին աշխատակիցները: Այդ օրերին, նամակներ ու բացիկներ սպասողների սիրտը մինչև նամակաբերի գալն ու նրա գնալուց հետո տարբեր ութմերով էր աշխատում:

Զատիկական նախատոնական օրերին գնացել էի շուկա, աչքս ընկավ մի սեղանիկի, որի անկյունում դրված էին Զատիկի, Ս. Մենդյան ու ամանօրյան տոների վերաբերող արտասահմանյան բացիկներ: Զարմանքս փարատելու համար մոտեցա, նախ աչքիս ծայրով փորձեցի հավաստիանալ, հավատալ իմ տեսածին, ապա հարցրի գնի մասին.

- Արտասահմանյան են, ապեր, ոչ մի տեղ չկա,

Հատը իրեք մանեթ:

- Կարո՞ղ եմ նայել:

- Հա, վեկալ:

Վերցրեցի, նայեցի, բացիկների հետևի մասը վարպետությամբ շերտահանված էր, որոշների գրություններն էլ պարզապես մաքրած:

- Սրանք որտեղի՞ց:

- Քո ինչ գործն ա, ուզում ես, փողը տուր վեկալ, չես ուզում...

Ձեռքիցս խլեց բացիկներն ու խոթեց գրպանը:

Երեք օր հետո փոստատարը մտավ մեր տուն, այնպես՝ ինչպես կմտներ իր տուն: Ծնողներին թոշակն էր բերել, երկուսինը միասին անում էր իննիսուն ուրբի, կանխիկ էր բետում, ինչպես միշտ, վճարեց ութսունհինգ ուրբի:

- Պակաս է, հինգ ուրբի պակաս է, - ասացի ես:

- Ձէ, ցավդ տանեմ, պակաս չի, հլա լավ հաշվի:

- Երկու անգամ եմ հաշվել, ութսունհինգ ուրբի ա:

- Բա՞, ճիշտ ա էլի...

- Ձէ, իննիսուն ուրբի պիտի տաս:

- Ձէ, ցավդ տանեմ, միշտ էլ ութսունհինգ ուրբի եմ տվել: **Ձերոնց հարցրու՞:**

- Միշտ էլ պակաս ես տվել, սրանից հետո կտաս իննիսուն ուրբի, կոպիտ ու սպառնալից վրա բերեցի ես:

- Ամոթ ա, ամոթ, հինգ ուրլին ինչ ա, որ,- ասաց նա ու հինգ հատ մի ուրլիանոց դրեց սեղանին, ստորագրություն վերցրեց ու գնալու ընթացքին քթի տակ հասկացրեց. «Հմի ով կհավատա, որ, ձեզ թվում ա, ես չեմ տալիս»....

Ամիսներ շարունակ ծնողներիս չնչին թոշակը ուշանում էր, ուշացումը երկարեց այնքան ժամանակ, մինչև վերականգնվեց հինգ ուրլիների պահումները, որով էլ վերականգնվեց մեր ու փաստատարի սերտ «բարեկամությունը»:

ՊԱՐՍՏՈՑԻ

Ձեմ հիշում այս խաղը վերջին անգամ երբ եմ խաղացել, բայց դրա տարբերակին ականատես եղա, երբ մեր շենքի առջևում, մայթի վրա, հայտնվեց մի փայտյա հսկա սնդուկ: Թե ինչ կար այդ սնդուկի մեջ՝ հանելուկ էր, շենքի բնակիչների կարծիքները տարբեր էին: Մնդուկը սկսեց հետաքրքրել նաև երեխաներին, ոմանք թառեցին վրան, ոմանք փորձեցին ձեղք բացել, ոմանք էլ աջ ու ձախ նայելով իրենց հարկավորը՝ մի կտոր փայտիկ կամ տախտակը պոկել:

Ձմեռն անցավ, գարնան ծաղկների հետ ձեղք վերցրեց, ապա բացվեց սնդուկը, որի մեջ հայտնվեց

անսովոր մի սարքավորում: Նորից չենքի բնակիչներին մտորելու առիթ տվեց:

Կարծիքները տարբեր էին:

Հարցադրումներ արվեցին տնային կառավարչութունում, քաղսովետում, պարզելու համար սարքի ինչ լինելը, մինչև սկսվեց «ուսումնասիրություններ»:

Յուրաքանչյուր «մասնագետ» տնայնական ինչոր գործիքով, պատեհ առիթից օգտվելով, մոտենում էր այդ հսկայական գործիքին, տասը բան ջարդում, իրեն անհրաժեշտը քանդում, պոկում, տանում էր: Օրըստօր է, մեքենայի «աղիքները» ավելի էին դուրս ցցվում: Գունագեղ էլեկտրալարեր, պղնձե խողովակներ, պտուտակներ, փայլվուր թիթեղներ... այդ գանձից անբաժին չէին մնում նաև երեխաները...

Մեքենայից մնաց մետաղե մի կմախք, որը ձմռան սառնամանիքին սառցակալեց, իսկ հաջորդ գարնան վերջին ու ամռան սկզբին այն վերածվեց աղբանոցի, հարբեցողները միզեցին, իսկ անհամբեր, ծուլ երեխաների համար այն դարձավ լիարժեք զուգարան: Գարչահոտի «պարտադրանքը» բնակիչներին հասցրեց չըջսովետ: Շաբաթներ պահանջվեց, մինչև քաղսովետը մասնագետների օգնությունը հայտնաբերեց ոչ միայն մեքենայի ինչ լինելը, այլև պատկանելիությունը: Այդ գործի մեջ փորձառու մարդկանց համար դժվար չէր այն ձևակերպել մի հիմնար-

կի վրա, ապա խոտան համարելով՝ դուրս գրել: Պարզվեց, որ, առեղծվածային այդ «հսկան» Ջեխոս-լովակիայից բերված քիմնաքրման այնպիսի լվացքի մեքենա էր, որ ամբողջ հանրապետությունում մատների վրա կարելի էր հաշվել: Այն պարտադրել էին էջմիածին քաղաքին, քաղաքապետարանը պլանավորել է մեր շենքի տակ քիմնաքրման կետ բացել, բայց այն իրագործել չէր կարողացել, կամ չէր ուզել, գուցե և փաստաթղթերով իրագործել էին, բայց հասցեն չկար...

Եվ այդպես, ժողովրդի սեփականություն համարվող, տասնյակ հազարներ արժեցող այդ հսկա և անհրաժեշտ մեքենան, որը պետք է մաքրեր մարդկանց կեղտոտված հագուստները, աղտոտեց ոմանց հոգիներն ու առանց օգտագործվելու «համեղ» մասերը բաժանվեց շենքի բնակիչների ու երեխաների մեջ, իսկ կմախքը թաղվեց հանրային գերեզմանատան հարակից մի աղբանցում:

«ՋԵՅՍԶ ԲՈՆԴՅԱՆ» ԽԵՂՎԱՏՎԿՈՒԹՅՈՒՆ

Երբ առաջին անգամ հայրիկիս հիվանդանոց տարանք, նկատեցի, որ որոշ ծանր հիվանդների մահճա-

կալները տարբերում են իրենց սարքավորումով: Այդ մահճակալների վերջավորության՝ աջ և ձախ կողմերից, բռնակ դարձած երկու կեռ ձողեր կային, որոնցից մեկը պտտեցնելով կարող էիր հիվանդի մեջքը՝ գոտկատեղից վեր բարձրացնել, իսկ մյուսով՝ ծալել ոտքերը: «Լավ բան է», - մտածեցի ես ու հորս հիվանդանոցից դուրս գրվելուց հետո սկսեցի աչքի ծայրով այն փնտրել կահույքների խանութներում, հարցնել ու դիմել տարբեր բժիշկներին... Մի օր էլ էջմիածնում աչքս ընկավ մի խանութի, որտեղ բժշկական պիտույքներ էին լցրել: Սանութ էր, թե պահեստ, այդքան էլ հեշտ չէր զանազանել, այն ինձ հետաքրքրեց իր ցուցադրած մահճակալով միայն:

Գտա...

Դուռը փակ էր, աշխատանքային ժամերի ցուցանակ չկար, հարցրի դրացի խանութներին, ասացին, որ «Երբ քեֆը քաշում, գալիս ա»: Մի քանի օր հսկելուց հետո դուռը բաց տեսա:

Մտա:

- Բարև ձեզ:

- Բարև:

- Կներեք, էս կառավարը ի՞նչ արժի:

- Ծախու չի:

- Էս, խանութ չի՞:

- Ասի ծախու չի էլի...

- Բայց որտեղի՞ց կարող եմ էսպիսի մի կառավար

գնել:

- Ես չատ գիտեմ:

- Իսկ, չե՞ք ասի, ի՞նչ արժի:

- Այ, ընկեր, ասի ծախու չի էլի, ի՞նչ ես ուզում
ինձանից:

- Գիտես... Հայրս հիվանդ ա, անկողնային, ինք-
նուրույն նստել չի կարողանում, ես այսպիսի մի բանի
հետևից եմ, թե որ կարող ես ինձ օգնել, խնդրում եմ
էլի... գոնե ասեք ի՞նչ արժի և որտեղից...

- Էս խանութը միայն փոխանցումներով ա ապ-
րանք տալիս, էդ էլ միայն հիվանդանոցներին ու բուժ
կենտրոններին, անհատ քաղաքացիներին ծախելու
իրավունք չունենք, զինն էլ երկու հարյուր ութլի ա,
պրծա՞նք:

- Խորհուրդ կտա՞ս, ինչպես կարող եմ ձեռք բերել,
օգնիր էլի, խնդրում եմ:

- Հա, խորհուրդ կտամ: Խորհուրդ կտամ, որ էդ
հարցով ինձ չդիմես, եղա՞վ... Այս ապրանքը ծախելու
իրավունք չունեմ, ոնց կարամ քեզ տալ...

* * *

Տանը հիվանդին կերակրելու կամ հագուստը փո-
խելու համար երկու առողջ մարդու ջանք էր պահանջ-
վում: Մայրս այնքան էլ առողջ չէր, իսկ ես տառա-
պում էի ռադիկուլիտով, քույրերս չէին համարձակի
նրա փոխանորդները հագցնել: Տեսածս մահճակալը
կթեթևացներ մորս աշխատանքը, հիվանդին հան-

զիստ կնստեցներ, ուզած ժամին, մետաղյա բռնակը պտտեցնելով կծավվեին հիվանդի թմրած ոտքերը... Իսկ ես, ինչ գնով եղել էր, պարտավոր էի ձեռք բերել այդ սովորական ու միևնույն ժամանակ՝ անսովոր մահճակալը:

Հեքիաթներում կասեին «Քառասուն զօր ու զիշեր» փնտրելուց հետո ինձ խորհուրդ տվեցին, ծանոթի միջոցով դիմել հիվանդանոցի գլխավոր բժշկին:

Ծանոթը գտանք: Գլխավոր բժիշկը հերթագրվել էր ժիգուլի ավտոմեքենա ստանալու, մեր ծանոթից էր կախված այն ժամանակին ստանալու, անգամ մեքենայի գույնի հարցը: Դրանով հանդերձ, մաղարիչը խոստացանք ու սպասեցինք պատասխանի:

Պատասխանը հուսադրիչ էր, բայց պիտի սպասեինք:

Ես չէի հասկանում՝ ինչու՞ պիտի սպասեինք: Ծանոթս՝ ուշացումը բացատրեց այսպես. «Հիվանդանոցի չորս այդպիսի մահճակալներից մեկի մոտ, գլխավոր բժիշկը պիտի գտնի անսարքություն, դրա մասին զեկուցի համապատասխան մարմիններին, որպեսզի անսարք մահճակալը վերանորոգեն կամ դուրս գրեն ու պատվիրեն նորը: Նորը պատվիրելու դեպքում պետք է սպասել, մինչև կատարվի փոխանցման գործընթացը, հետո, թե ինչպե՞ս պետք է այդ մահճակալը մտնի հիվանդանոց ու նորից դուրս բերվի, բավականին բարդ հարց է: Ըստ երևույթին,

գլխավոր բժիշկը պետք է ինքը իր հերթին լեզու գտնի գույքապահի կամ պահեստապահի վարիչի հետ, որպեսզի հիվանդանոցի «հին» ու «խոտան» ապրանքը, ընդհանրապես դուրս չբերվի հիվանդանոցից և նոր մահճակալը ուղիղ տարվի ձեր տուն, կամ դու պարտավոր լինես ընդունել հինը, որպես խոտան ապրանք, իսկ նորը տարվի հիվանդանոց: Այս վերջին տարբերակը շատ ավելի հավանական է թվում, բայց երկու դեպքում էլ առանց մաղարիչների գործը գլուխ չի գա»:

Հինգ ամիս տևեց յոթ հարյուր ութի արժեցող «Ջեյմզ Բոնդյան» այս խաղը: Երկու հարյուր ութի մահճակալի գինը հավանորեն մտավ պետական դրամարկղ, իսկ հինգ հարյուրը, թե ինչպե՞ս բաժանվեց խաղի մասնակիցներին, դա իմ իմանալիք գործը չէր, արդյունքում հայրս, մինչև սպանվելը, արժանացավ նոր մահճակալի, դրանով նախ թեթևացավ մորս ֆիզիկական ջանքերը ամուսնուն կերակրելու և չարժելու գործում, ապա մեզ այցելող երեխաները հորս ոտքերն ու մեջքը ցած ու վեր անելով գտան հրաշալի զբաղմունք... Երկրորդ ամենահրատապ հարցը լվացքի մեքենան էր: Սկսեցի փնտրել, մոռանալով որ մեր հարկաբաժնում ջուր էր հասնում օրը մեկ կամ մեկուսուկես ժամ, այն էլ երբեմն չսպասվող ժամերին... Այս բոլորը տեղի էին ունենում սովետմիության աստեղային պատերազմի ամենաթեժ ժամանակներում...

ԱՔԼՈՐԱԿԱՆՉ

Գնացել էի ԲՈՒՀ-երի մինիստրություն: Ժամադրություն ունեի: Օրենք կար, արտասահմանից հայրենադարձված ուսանողները կարող էին առարկաների որոշակի տարբերություններ հանձնելով, համապատասխան մասնագիտությունը իրենց ուսումը շարունակել Հայաստանի համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Կյանքիս մեջ մինիստր կամ մինիստրի տեղակալի չէի հանդիպել: Այն բախտավորներից էի, որը հայրենիքում պիտի հանդիպեր բարձրաստիճան նման մի մարդու:

Հանդիպեցի:

Ճաղատ գլուխ, խոհուն աչքեր, բարեհամբույր, հասարակ, պարզ, բայց ոչ պարզունակ մարդու տպավորություն թողեց:

Ասլանյան էր ազգանունը:

Դողս անցավ, լեզուս բացվեց.

- Բարև ձեզ:

- Բարև, նստիր, նստիր երիտասարդ, ասում են հայրենադարձ ես, հա՞, Իրանի՞ց: Ուսանո՞ղ ես, որտե՞ղ ես սովորել, ո՞ր բաժնում...

Առանց պատասխանի սպասելու հարցերի տարափը շարունակվում էր, ակամայից ընդհատեցի.

- Այո, այո, այո- եղավ բոլոր հարցերի պատասխանը:

- Երեք ամիս առաջ Թեհրանում էի: Հրաշալի քաղաք է, հրաշալի համալսարան ունեն, նախանձելի բաներ չատ կային, մի բան, որ ինձ չատ զարմացրեց՝ օդանավի վայրէջքն էր: Վախից բերանս չորացել էր: Վերից քաղաքը լույսերի ծով էր թվում: Չէի հավատում: Համազված էի, որ եվրոպական ինչ-որ քաղաքում ենք վայրէջք կատարում: Իրանն ու Թեհրանը մեզ այնպես էին նկարագրել, որ կարծում էինք, թե ուղտերով ու ձիերով պիտի չըջենք քաղաքում:

Մինիստրի այս անկեղծությունն ու անմիջականությունը ինձ ազգակից-բարեկամի համ ու հոտ պարգևեց, «հարյուր տարվա ծանոթ» այս անձը, խամրող աչքերիս պատրույզը վեր քաշեց ու լույս սփռեց գալիք տանող ճանապարհիս:

Կանչեց օգնականին, հանձնարարություններ արեց, ու շեշտեց, որ ամեն կերպ օգտակար լինի:

Երեսունհինգ -քառասուն տարեկան, ձիգ, առույգ, չարժուն, արագախոս, լավ հագուկապով տղամարդ էր օգնականը: Ջրույցի առաջին իսկ րոպեին աչքը ընկավ փողկապիս ու հաճոյախոսեց.

- Շատ գեղեցիկ գալուստիկ ունես, էնտեղի՞ց ես բերել:

- Այո, այս նույնից մի հատ էլ ունեմ, կտամ քեզ, մյուս անգամ, որ եկա անպայման կրեբեմ:

- Չէ, պետք չէ, ամոթ ա, ինչ եք ասում, դրա համար չասացի...

Քիչ թե շատ կարճ նախադասություններ փոխանակելուց հետո ասաց.

- Գիտե՞ս ինչ, մի դիմում գրիր թող ինձ մոտ, ես կտամ մինիստրին, այսինքն ընկեր Ասլանյանին:

- Բայց ի՞նչ պիտի գրեմ, չգիտեմ:

- Լավ, վաղն արի, միասին կգրենք, ես կթելադրեմ, դու կգրես: Էսօր ժամանակ չունեմ, ժողովի պիտի գնամ, որ իմանայի...

* * *

Տանը, տնեցիներին ու հավաքված հարազատներին մոտ եղելությունը պատմեցի: Բոլորի խորհուրդը եղավ այն, որ փողկապս գոլորչիով հարթուկեմ ու տանեմ նրան տամ, թե չէ...

Հորեղբայրս այդ գործի մասնագետն էր:

Հաջորդ օրը նորից գնացի նախարարություն: Տեղակալը թելադրում, ես գրում էի. «Հայրենադարձվել եմ այսինչ թվականին, սովոել եմ Իրանում, Իսֆահանի պետական համալսարանի... խնդրում եմ ինձ հնարավորություն տալ կրթությունս շարունակել տեղիս ԲՈՒ-ի համապատասխան բաժնում...»:

- Բու, ի՞նչ ա,- հարցրեցի նրան:

- Ոչ թե բու, այլ ԲՈՒՀ, այսինքն՝ «Բարձրագույն Ուսումնական Հաստատություն»: Դե լավ, էս դիմումը կտանես, կմեքենագրես, տակը կստորագրես, վաղը

կրեբես:

Դուրս գալուն, թղթի մեջ փաթաթած փողկապը
թողեցի սեղանին:

Մեքենագրող չգտա, ամեն ինչին անծանոթ էի,
հաջորդ օրը ձեռագիր դիմումով ներկայացա նրան:

- Այ տղա, էս սաղ սխալ ա, էս արևմտահայերենի
ուղղագրությամբ ես գրել, տար թող մեկն ու մեկը
ուղղի, ոչինչ որ ձեռագիր լինի, միայն առանց սխալ-
ների:

- Կարո՞ղ եք դու գրել:

- Ձէ, իմ ձեռագիրը բոլորը գիտեն, կուզե՞ս էստեղի
աղջիկներին կասեմ քեզ կօզնեն:

Ուրախացա: Ծանոթացրեց մեկի հետ: խնդրեց ինձ
օգնել: Դիմումս վերցրեց, կարդաց.

- էս, ո՞ր անգրագետն է գրել:

- Ես եմ գրել, հայրենադարձ եմ, մենք էդպես ենք
գրում,- արդարացա ես:

- Դե էդպես ասա էլի: Ե՞րբ ես եկել,- բարիացակա-
մորեն հարցրեց նա:

- Վեց ամիս ա:

- Պարսկահայ ես, հա՞:

- Այո:

- Ծախու բան բերե՞լ եք:

- Այո, բայց վերջացել ա:

- էդ սետկա գուլպաներից հեչ չի մնացե՞լ:

- Կարծեմ մի քանի գույգ մնացել ա, վաղը կրեբեմ:

- Չէ, պետք չի, հենց էնպես էի հարցնում, դիմումդ թող, ես կուղղեմ, վաղը կգաս կվերցնես:

Սետկա գուլպաները ուրիշ հայրենազարձից գնեցի, աքլորի ծամոն ունեինք, մի քանի ծամոն էլ մեջը դրի ու հաջորդ օրը գնացի մինիստրություն:

Դիմումս պատրաստ էր: Ստորագրեցի և ուղղվեցի դեպի մինիստրի օգնականի գրասենյակը: Հայտնեցի, որ եկել եմ:

- Ասաց վաղը արի, էսօր շատ է զբաղված,- տեղեկացրեց թղթապանակների տակ կքված մի կին:

Գնացի «վաղը»: էստեղ չի, եղավ քարտուղարուհիներից մեկի պատասխանը:

Հաջորդ օրն ասացին՝ քաղաքից բացակայում է:

Դիմումիս հանձնելը քսան օր տևեց, ամեն օր գնում էի, օրը մեկի հետ էին ծանոթացնում, սպասեցնում, սուրճ էին տալիս ու...

Դիմումիս հանձնման օրը նկատեցի, որ հարկաբաժնի բոլոր կանայք սետկա գուլպաներով են, ծամոն են ծամում ու բարիլույսի ու բարևի փոխարեն «ծուղրուղու» են կանչում:

ՄՍԿԿ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

Մինիստրությունում ոռչում կայացվեց այն առարկանները, որոնք Իրանի համալսարանում չեմ անցել,

իսկ տեղի համալսարանի առաջին կուրսում արդեն անցել են, քննություն հանձնեմ ու 1971-72-ի ուսումնական տարին Երևանի Պետական Համալսարանի բանասիրական բաժնի երկրորդ կուրսում շարունակեմ ուսում:

Թվով ինն առարկա, այդ թվում՝ անտիկ գրականություն, գրաբար, հին աշխարհի դիցաբանություն, հայ հին գրականություն, գրականության տեսություն, հայ բանահյուսություն, ՍՄԿԿ պատմություն և այլն:

Ուսանողական նոր շրջապատիս հետ շփումների ու այս առարկաները պարապելու ընթացքում զգացի, որ ես շատ եմ տարբերվում հայրենի իմ հասակակիցներից: Նախ՝ իմ հայերենի իմացությունը բոլորովին էլ չի բավարարում Երևանի Համալսարանի տվյալ բաժնում սովորելու համար, ապա գոյություն ուներ նաև աշխարհաընկալման, լեզվամտածողության ու մշակույթների հսկա տարբերություն, որը հասկանալու համար տեղացի ուսանողն ու դասախոսը դեռ պատրաստ չէին, իսկ ես ներքին ողբերգություն էի ապրում, հատկապես, երբ զգում էի, որ ոչ թե խոսում եմ հայերեն, այլ հաճախ պարսկերեն մտքերս եմ թարգմանում հայերենի:

Ընդունվելու համար կամքի ուժ և ժրաջան աշխատանք էր պահանջվում:

Ֆիզիկապես վտիտ էի, բայց հոգով՝ հզոր: Գտա թե

կամքի ուժ, թե՛ աշխատելու եռանդ:

Գրականության տեսության առարկայի քննության համար պետք էր սերտեի պրոֆեսոր Էդվարդ Զրբաչյանի հեղինակած՝ «Գրականության Տեսություն» դասագիրքը: Քննությունս պետք է հանձնեի հենց իր՝ պրոֆեսոր Զրբաչյանի մոտ: Սկսեցի պարապել: Բարդ էր, հասկանալու համար առնվազն Հայաստանի միջնակարգը գերազանց ավարտողի մակարդակ էր պետք, իսկ ես ունեի վեցերորդ դասարանի հայկական կրթություն, ու համալսարանի հայերենի երկու տարվա դասընթացների սկսնակի փորձ...

Ելք չկար, սկսեցի գիրքը անգիր անել, ամիսներ տևեց, հավանական հարցերի պատասխանները այնպես էի անգիր արել, որ կարող էի բեմից էլ արտասանել:

Քննության օրն էր: Լսարանի դռան մոտ կանգնած սպասում էի: Զեռնափայտը ձեռքին, կաղալով մոտենում էր պրոֆեսորը, իսկ ես ամբողջ մարմնով դողում էի, հուզված էի, ինձ թվում էր՝ բեմ պիտի բարձրանամ ու բազմամարդ դահլիճում անգիր արած անհասկանալի ինչ-որ բան արտասանեմ:

- Էս լսարանը ազա՞տ է,- մեղմ հարցրեց պրոֆեսորը:

- Այո,- մի կերպ ինձ «հավաքելով» արտաբերեցի:

Մտանք: Նա պայուսակից ինչ-որ թերթիկներ հանեց, դրեց սեղանին ու բացեց ձեռքի լրագիրը:

Ես եմ ու պրոֆեսոր Զրբաչյանը: Ես եմ ու այն մարդը, որին հանդիպելու համար Իսֆահանի համալսարան-ցիներս կյանք կտային, որի նմանները նրանց համար յուրաքանչյուրը մի անհաս փառքի ճամփա էր...

- Տոմս վերցրեք, նստեք,- ասաց նա ու կենտրոնացավ լրագրին:

Տոմս վերցրի, նստեցի: Երկու ընկեր հետո պատ-րաստ էի պատասխանելու:

- Ես պատրաստ եմ, ընկեր Զրբաչյան:

- Էսքան շուտ:

- Այո:

- Արի, մոտիկ արի:

Մոտեցա, նստեցի:

- Սկսիր, պատասխանիր:

Առաջին հարցը արտասանեցի, զարմացած հայաց-քով նայեց ինձ ու կանխեց:

- Անցիր երկրորդ հարցին:

- Չգիտեմ,- չփոթված պատասխանեցի ես:

- Երրորդը:

Երրորդը ևս սկսեցի արտասանել, այս անգամ համբերությամբ լսեց ու...

- Պարսկահայ ես երևում, հա՞:

- Այո:

- Հայրենադա՞րձ ես, թե՞ եկել ես ուսանելու:

- Հայրենադարձ եմ, բայց պիտի սովորեմ:

- Հասկանու՞մ ես, քո պատասխանից բան հասկա-

նու՞մ ես:

- Ոչ, անգիր եմ արել,

- Ինչու՞:

- Որվհետեւ չեմ հասկանում:

- Այ տղա, ինձ էլ թվաց գիրքը դու ես գրել, բայց որ չնշանակեմ, ի՞նչ կանես:

Լոեցի: Հայրենի երկնակամարը գլխիս էր փլվում: Դրա մասին չէի մտածել: Չսովորե՞լ...

Պատերազմի հաշմանդամ պրոֆեսորի հայի հզոր ոգին փրկության ձեռքը մեկնեց ու զաչոտնիկս ուզեց, ինչ-որ բան նշանակեց ու վերադարձրեց.

- Համոզված եմ, որ կսովորես: Գնա:

* * *

Լևոն Ներսիսյան: Չէիր կարողանում գանազանել, աչքերն էին մարմնի վրա, թե՞ մարմինը աչքերի: Խոչոր, խոհուն, խելացի, տիրող, գերող, գամող աչքեր էին: Երիտասարդների կուռքն էր: Անտիկ գրականություն էր դասավանդում, նրա մոտ էի հանձնելու քննությունս:

Հանդիպեցի միջանցքում:

Ծանոթացանք: Հապճեպ պատմեցի կարգավիճակիս մասին.

- «Կգնաս Հոմերոսի «Իլիականն ու Ոդիսականը» կկարդաս՝ կգաս», - ասաց նա ու սիգարետ վառեց:

Երկու շաբաթ հետո նորից հանդիպեցի, թույլ

չտվեց խոսելու:

- **Կարդացի՞ր:**

- **Այո:**

- **Ի՞նչը:**

- **Իլիականն ու Ողիսականը:**

- **Գրքույկդ տուր:**

Տվեցի

- **Բարի գալուստ, ուսումդ շարունակիր,- ասաց, ոտքի վրա գրքույկիս մեջ ինչ-որ գնահատական դրեց ու վերադարձրեց:**

* * *

Բոլոր քննություններս հանձնել էի, մնում էր ՍՄԿԿ պատմությունը: Չհասկացա, թե ինչպես հասա էջմի-ածին: Արարատը երբեք այդքան պարզ ու ժպտուն չէր եղել: Թվում էր հանրակարգը նրա լանջով է անցնում: Հայացքս իրականացված երազիս, խորհում էի Իսֆահանի համալսարանում թողած ընկերներիս մասին, միջոցը թույլ չէր տալիս բղավելու, հրճվան-քիս ձայնը հասցնելու նամակներիս սպասող ընկեր-ներիս, ուզում էի գոռալ՝ հեյ, մարդիկ, ես երջանիկ եմ, ես սուրում եմ Արարատի լանջերով, ես դառնում եմ Երևանի Պետական Համալսարանի ուսանող...

* * *

Կարմիր, հաստափոր գիրք էր ՍՄԿԿ պատմության դասագիրքը: Բառակույտ, հայերենի այլանդակված

բառապաշարով՝ «Հին ու նոր կտակարաններով» սատանայաչունչ, որը սկսում էր ՍՄԿԿ-ի Ծննդոցից ու ավարտվում «մարգարեություններով», պլենումներ, համագումարներ, առաջնորդների ճառերից մեջբերումներ, տարեթվեր, որոշումներ, պլաններ, անհեթեթություններ, մի բառով՝ աղբակույտ...

«Արա, քննությունը հանձնելուց մի քանի ընդհատ ոչինչ չենք հիշում», - խոստովանում էին ուսանողները, իսկ ես կարդում ու չէի կարողանում յուրացնել, որովհետև ինձ համար հասկանալու բան չկար:

Ծանոթացա դասախոսի հետ: Տարիքն առած, կյանքն ապրած, աշխարհից, գուցե մասնագիտությունից դժգոհ, մոայլ, պլենումների ու առաջնորդների ճառերի տակ կքած, անընդմեջ խորխը կուլ տվող մարդ էր: Խոսելիս, ոչ թե խոսակցին, այլ հեռուն էր նայում՝ գուցե կոմունիզմի ճանապարհին, կամ գալստին: «Ի՞նչ ա, ի՞նչ ես ուզում», - մի օր բարևիս պատասխանեց նա: Բացատրեցի: «Սովորիր, արի», - սկսեց ծամել թուքը, հետո խորխը կուլ տվեց ու մտավ իր գրասենյակը:

Համալսարանում արդեն ընկերներ ունեի: Օգնում էին, ուղղություններ տալիս, բոլորն էլ համոզված էին, որ. «Միայն փողով կա հարցին փրկություն»: Ութ քննություններիցս երկուսն արդեն ծանոթներով, բայց ոչ փողով, հանձնել էի: Ընդհանուր առմամբ

դասախոսները բարյացակամ էին, ըմբռնումով էին մոտենում, տեղացիի վրա տարածված խստությունն ինձ վրա այդքան էլ չէր կիրառվում, գիտեի, նույնիսկ համոզված էի, որ ելք կգտնեմ, բայց այդ տեսակի մարդուն ինչ-որ խնդիրով դիմելը հերոսություն էր պահանջում:

Մի օր, արիաբար մտա գրասենյակ ու ուղղակի հարցր զրի այսպես:

- Եկել եմ սովորելու, առարկան չեմ հասկանում, մի առարկայի համար...

- Որ դու չես հասկանում, ո՞վ քանի մեղավոր: Երբ կհասկանաս, էն վախտ էլ կգաս...

1971-72 ուսումնական տարեշրջանը սկսվել էր: Ինձ թույլատրել էին մասնակցել դասընթացներին, երեք ամիս էլ ժամանակ էին տվել ՍՄԿԿ պատմությունը հանձնելու համար: Պարապում էի: Ահավոր ծանր էին դասերս: Հայերենի վատ իմացություն, նոր միջավայր, լեկցիաների գրառումներ, այնպիսի ճնշման տակ էի, որ երբեմն ստամոքսիս մեջ, ճիշտ պորտիս տակ, սուր ծակոցներից ծնկի էի գալիս:

Իմ և ընկերներիս խոսակցությունների հիմնական թեման ՍՄԿԿ-ն էր, միջոց ու ելք էինք փնտրում էր ապուշ վիճակից դուրս գալու համար:

Մի օր էլ, արևելագիտություն ֆակուլտետի մի դասախոս, իմանալով որ Իրանից նոր եմ եկել, մոտեցավ ինձ ու ինչ-որ գրականություն խնդրեց, որը

պետք է բերվեր Իրանից: Խոստացա Հարազատներին միջոցով բերել տալ: Մտերմացանք, շատ կարճ ժամանակում, երբեմն ուրիշներին հասկանալի չղառնալու համար, սկսեցինք միմյանց հետ խոսել նաև պարսկերեն: Հաճելի հնչերանգով պարսկերեն էր խոսում: Նա էլ իր հերթին խոստացավ ՍՄԿԿ-ի քննություն հարցերը լուծել: Ճակատագրական որոշում էր: Դասախոսի համար նվեր ուզեց: Տվեցի: Երկու շաբաթ անց նրա թելադրանքով գնացի ՍՄԿԿ պատմություն բաժնի գրասենյակ:

- Բարև ձեզ, կարելի՞ է:

- Մտե՛ք, մտե՛ք, արի, արի, նստի՛ր, արի տեսնեն ի՞նչ ես ուզում, տղա ջան, ասացիր անունդ ի՞նչ է,- առանց թուրք ծամելու և խորխ կուլ տալու հարցրեց նա ու ձեռքով ցույց տվեց աթոռը:

- Խորեն Քեչիչյան:

- Հա, մոռացա, ինչի՞ համար էիր դիմել:

- ՍՄԿԿ-ի...

- Այ տղա, խի՞ չէիր ասում, որ ընկեր Մելիքյանի բարեկամն ես:

- Չգիտեմ:

- Բեր, բեր, զաչոտնիկդ տուր, գնա սովորիր: Բա հայրենիք ես եկել, պիտի սովորես, բա՛ ոնց, էսքան տարի օտարություն մեջ...

Քննազրբույկս տվի: Ինչ-որ բան գրեց ու վերադարձրեց:

- Նայիր, հա՛, որևէ բանի պետք եղավ՝ մոտս արի, չամաչես, հա...

Սովետական Միություն Կուսակցություն Պատմություն քննությունը «հանձնելուց» հետո ես դարձա Երևանի Պետական Համալսարանի բանասիրական բաժնի երկրորդ կուրսի լիիրավ ուսանող:

Ամբողջ հոգիս հրավառություն մէջ էր: Տունդարձին՝ համալսարանից մինչև ձկան խանութ, մինչև հանրակառքի կանգառը ոտքով քայլեցի ու առանց ամաչելու հեկեկացի: Երևանը ինձ էին տվել: Ոտնահետքերով մայթերի վրա կենսագրությունս էի գրում, ամենաերջանիկ մարդու կենսագրությունը:

Այո, գրվել էր ամենաերջանիկ հայրենադարձի ճակատագիրն ու հաղթական տուն էր վերադառնում...

ԲԱՆԿՈՐ ՈՒՍԱՆՈՂ

Դասերս չատ, միաժամանակ ծանր էին: Եռանդով էի պարապում, բայց հնարավոր չէր ուզածս արդյունքին հասնել, գուգահեռաբար աշխատում էի: Աշխատանքի համար դիմել էի համապատասխան մարմինների: Մասնագիտություն չունեի, ուսանողիս կարգավիճակը թույլ չէր տալիս աշխատելու:

Մեր բակում հինգ հարկանի բնակելի շենք էին

կառուցում: Փորձեցի մոտենալ պրարաբին, գուցե՞ աշխատա՞նք տա.

- Ուսանող եմ, ժամը երկուսին է դասերս սկսում, կարող եմ մինչև տասներկուսը ձեզ մոտ աշխատել:

- Ձէ, մեր մոտ տենց բան չկա, ցավդ տանեմ, որ բռնեն, կնիկս կք...նեն:

- Բայց ո՞վ պիտի իմանա, որ կես օր եմ աշխատում:

- Այ ցավդ տանեմ, դու խոմ շառ չե՞ս...,- ասաց նա, հետո գոռաց բանվորի վրա,- այ սվոլիչ, պանելի տակից էն յան, չե՞ս տենում կոանովչիկը էչի մեկն ա:

- Դու էլ գրի մի դրույք՝ կեսը ինձ տուր, կեսն էլ...

- Արա, քեզ ասում եմ գնա էլի, էս ո՞վ ա: Արա, իսկականից սրանք շառ են, արա...

Նվարդի՝ հետագա կնոջն հետ, արդեն սեր էինք արտահայտվել: Միասին, նույն օրը, նույն գնացքով էինք հայրենադարձվել: Նրա հայրը հասցրել էր ծանոթանալ ու մտերիմ կապեր հաստատել հարևաններից ոմանց, հատկապես շինարարության վրա աշխատողների հետ: Պատմեցի եղելությունը: Նա նույն իսկ օրը շենքի պրարապի հետ խոսեց ու լեզու գտավ:

Դարձա շինարար-բանվոր: Մինչև ժամը տասներկուսը աշխատում էի, հետո հասցնում էի ժամը երկուսին լինել համալսարանում: Էջմիածին-Երևան հանրակառքը կես ժամում տեղ էր հասնում: Ժամանակս հիմնականում վատնվում էր հանրակառքի

սպասելուն ու երևանի մի ծայրից մյուսը հասնելուն: Հաճախ հոգնած էի դասի նստում, քնում էի, չէի հասցնում դասախոսությունները գրի առնել, մինչդեռ ինձ ժամանակ էր պետք համակուրսեցիներիս մակարդակին հասնելու համար:

Ընտանիքին հաց էր պետք, ինձ՝ ժամանակ: Ոչ առաջինը կար, ոչ երկրորդը:

Ծանր ու դաժան աշխատանքի հետևանքով սրացավ Իրանից ժառանգությունն բերած ռազիկուլիտ հիվանդությունս, բայց ես շարունակում էի աշխատանքի գնալ, ծոված մեջքով, տուֆ քար էի կրում ու պատշար վարպետների հայհոյախառն հրամանները կատարում:

Առաջին աշխատավարձս ստացա տասնհինգ օր հետո, իսկ երկրորդ աշխատավարձս ստանալուն պես պրարապը կանգնեց գլխիս ու աչքով արեց: Գնացինք մի անկյուն, դատարկ ձեռքը մեկնեց, լիքը՝ ետ քաշեց...

Այդպես էինք պայմանավորվել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ցիլինդր գլխարկը գլխիս, վեղորոյի մեջ ցեմենտ էի լցնում, մեկը կանչեց.

- Արա, Խորեն, հլա արի, քաղսովետի նախագահը կանչում ա:

- Ո՞վ,- սիրտս դող ընկավ՝ «հաստատ մատնել են», - մտածեցի ես ու լապատկան ձեռքիցս գցեցի:

- Արա, քաղսովետի նախագահն ա, արի, արա:

Կիսակառույցի երրորդ հարկից իջա: Իրոք, քաղսովետի նախագահը ինչ-որ մարդկանց հետ զրուցում էր: Մոտեցա, բարևեցի:

- Այ տղա, էս ի՞նչ ես անում,- մտերմիկ հարցրեց նա:

- Բանվորություն:

- Մեր պոլիտբյուրոյի անդամների գլխարկն ես դրել, էս բանվորի գլխարկ չի, այ տղա: Դու, ուսանող չե՞ս:

- Այո:

- Ի՞նչ ա, ուրիշ աշխատանք չկա՞:

- Տաս տեղ եմ դիմել, աշխատանք չեն տալիս, ստիպված եմ:

- Վաղը կգաս ինձ մոտ:

Հաջորդ օրը գնացի: Կանչեց ժողկրթբաժնի վարիչին, կարգադրեց ինձ աշխատանքով ապահովել: Ժողկրթբաժնի վարիչը քթի տակ մրթմրթաց: Երևի իրավունք ուներ: Իրանում, մեկ-երկու տարվա ուսուցչական փորձով ես էլ էի վախենում մտնել հայրենի դպրոցներում դասավանդելու...

Ինձ գործուղեցին մի դպրոց, չաբաթը ութ ժամ,

փոխարինելու ֆիզարձակուրդ գնացած մի ուսուցչուհու: «Ֆիզարձակուրդ» բառն անգամ անծանոթ էր ինձ: Ամբողջ մարմնով դողում էի, վա՞խ էր, թե՞ հուզմունք, չէի հասկանում, երբեմն աչքերս խոնավանում էին, հավատս չէր գալիս՝ հայրենի հողի վրա, հայոց դպրոցի օրինավոր ուսուցիչ: Նորից մտաբերում էի ընկերներս: Ամեն մի նոր հաջողության ժամանակ, նրանց էի հիշում: Ուզում էի մի նամակով իմ բոլոր, այդքան սիրված ու հարգված ուսուցիչ-ուսուցչուհիների, հատկապես մեր դպրոցների սրբացած տեսուչներին հայտնել իմ երանելի վիճակի մասին: Ուզում էի նրանց պատմել, որ առաջին անգամ ոտք եմ դրել մի այնպիսի օջախ, որը մեզ մոտ առնվազն սրբավայր էր համարվում, իսկ նրան ծառայողները՝ օրինակելի մարդիկ կամ առաքյալներ:

Ծանոթացա դպրոցին, ուսուցիչներին, իսկ դասերից հետո մոտեցա բակում կանգնած տեսուչին: Կոկիկ հագնված, փողկապով, հիսունի շուրջ, կարճահասակ մարդ էր: Շուրջը երեխաներ էին վազվզում: Հանկարծ ձայնը բարձրացրեց.

- Արա, Գևո, հլա մի հստեղ արի:

- Ընկեր Մ. հավես չկա...

- Արա, քեզ ասում եմ հստեղ արի:

- Հա, ի՞նչ ա, ընկեր Մ. չե՞ս տենում, խաղում ենք:

- Գնա մի հատ չաքում բեր, մի քանի հատ էլ մեխ:

- Խի՞, ընկեր Մ.,- հեաց երեխան:

- Ուզում եմ գլխիդ տամ, զնա քեզ ասում եմ:

- Լավ էլի,- ասաց երեխան ու վազեց:

Բարևեցի: Ուզում էի մտերմանալ: Մի քանի նախադասություն փոխանակելուց հետո, հասկացա, որ իմ մասին արդեն տեղեկացված է: Այդ պահին մի գեղադեմ ուսուցչուհի էր անցնում մեր կողքով, դպրոցի շենքին կից շենքն էր մտնում: Բարևեց:

- Ընկեր Քեչիչյան, լավն ա, չէ՞, հայրենադարձ ես, ջահել ես, քեզ կտա, կուզե՞ս ք...լ...

Երկինքը փլվեց գլխիս: Քսաներկուամյա ուսուցչիս երազների սյուններից մեկը ես փլվեց...

* * *

Դասերս ծանր էին, երրորդ դասարանի բոլոր առարկաները անցնում էին հայերենով, մի բան, որ իմ կարողության սահմաններից վեր էր: Մի քանի անգամ հրաժարական ներկայացրի, բայց ապարդյուն... Միայն երեք ամիս հետո ինձ փոխարինելու եկավ արտաքինով ոչ այնքան հաճելի տարեց մի կին: Համոզված էի, որ դիրեկտորին այս փաստը այնքան էլ հաճելի պիտի չլիներ...

ԿՈՒՅՐ ԱՂԻՔ

Բարեկեն ընկերս, որը իր խենթություններով ու

տարօրինակ վարքագծերով ընկերական շրջապատում ճանաչված էր, որպես «գիժ», ժպիտը դեմքին, կարճ ձեռքերը լայն բացելով, մտավ մեր տուն, դեռ բարև չասաց՝ սկսեց ծիծաղել:

- Էս, գալի բարի չի երևում: Ի՞նչ «Հերոսություն» ես արել:

- Հերոսություն չէի ասի, բայց ուզում եմ մի բան անել:

- Արա...

- Էսօր, պիտի ինձ բանակ տանեին:

- Գիտեմ, ինչի՞ չես ներկայացել:

- Չուզեցի:

- Ի՞նչ ա, քո ուզելով ա:

- Բա ի՞նչ ա...

- Լավ, նստիր: Ի՞նչ Հերոսություն ես արել:

- Չեմ արել, ուզում եմ անել:

- Գիտե՞ս, որ դրա համար դատ ա հասնում...

- Գիտեմ:

- Գլուխ մի տար: Սուրճ կխմե՞ս:

- Հա, քույրդ ո՞ր ա:

- Ուր որ ա, կերևա, ինչի՞:

- Բան պիտի հարցնեմ: Նոր է վիրահատվել, ուզում եմ իմանալ կույր աղիքի ցավերը ինչպես են:

Սուրճը դրեցի սեղանին ու մինչև քրոջս գալը բացատրեցի՝ ոտքի թեթևակի ցավ, մկանների ու ջղերի ձգվածություն, որովայնի աջ կողմի ցավ,

սրտխառնուք, գունաթափություն, աջ կողքին տաք բան դնելու դեպքում ցավի սաստկացում, սառի դեպքում՝ մեղմացում: Ստուգման ժամանակ, սեղմելիս ցավ չի լինում, ձեռքը միանգամից պոկելիս՝ սուր ցավ է առաջանում...

- Լավ, սիգարետ ունե՞ս:

- Բայց դու չէիր ծխում...

- Հիմա ուզում եմ ծխել: Լավ լսիր, խոսքը իմ ու քո մեջ, այնքան եմ ծխում մինչև վատանում եմ, փորձն ունեմ, սոված ժամանակ մի քանի հատ որ ծխում եմ, սիրտս խառնում է, գլխապտույտ եմ ստանում ու գույնս դառնում է սպիտակ գաջ: Էդ ժամանակ շտապ օգնություն ես կանչում:

- Հետո՞:

- Ոչինչ, կույր աղիքի ցավերով կտեղափոխվեմ հիվանդանոց...

- Հետո՞,- թերահավատությունդ ու կատակի վերածելով նորից կրկնում եմ հարցս:

- Արա, լուրջ եմ ասում, վերցրու էս յոթանասուն ռուբլին, կույր աղիքի «սակը» կարծեմ էսքան է, դու ես ասել: Վերցրու, երեսուն էլ ավել եմ տալիս, բժշկին կտաս:

- Հա, Անահիտի համար էլ էդքան ենք վճարել:

- Դե, բեր, սիգարետ տուր, ժամանակ չկա:

Սկսեցի հավատալ, սիգարետ տվի, հենց խոհանոցի մեջ նստած սկսեց մեկը մյուսի հետևից կպցնել

ու ծուխը ազա՛հօրեն ներքաչել թոքերը:

Չնայած ամեն ինչ սպասելի էր նրանից, բայց տասնհինգ-քսան ըոպե հետո, զգացի, որ խսկապես այս տղան վատ է զգում, գույն չմնաց վրան, ու սկսեց թեթևակի դողալ:

- Կանչիր, վատ եմ, սիրտս սկսեց խառնել, կանչիր,- թախանձեց նա ու ինձ դրեց անել վիճակում:

- Բայց...

- Էլ ինչ բայց, ասում եմ կանչիր էլի...

- Բա ձերոնք...

- Վեր կաց, զանգիր շտապ օգնություն, ես վատ եմ զգում, բացի դա, անելիքներ ունեմ, բանակ են տանում, չեմ ուզում գնալ, արա դու խոմ դերիլ չես...

Ես էլ, հեռախոսը վերցրի ու զանգ տվի: Տաստասնհինգ ըոպեից հասան: Ստուգեցին, «հիվանդի» ցավերն ու ցուցմունքները նրանց համոզեցին փոխադրել հիվանդանոց: Բուժքույրերից մեկը ասաց, որ կույր աղիքի նշաններ են:

Հիվանդանոցում ես ներկայացա, որպես հիվանդի ամենամոտիկ հարազատ: Հանդիպեցի օրվա հերթապահ բժշկին, թեթև խորհրդակցությունից հետո խնդրեցի ոչինչ չխնայել, անել ամենալավն ու բռանա գումարը խոթեցի գրպանը:

Միայնակ սպասում էի միջանցքում: «Հիվանդը» վիրահատման սենյակում էր, բժիշկները «փրկում» էին նրան, ըստ իրենց՝ մահից, բայց ըստ ինձ՝ բանա-

կից: Մի ժամ էլ չտեսց: Քույրերից մեկը դուրս եկավ, վազեցի ընդառաջ: Հարցիս չպատասխանեց: Դուրս եկավ բժիշկը: Չխոսեց, հասկացրեց հետևել իրեն: Հետևեցի: Մտանք սենյակ...

- Հիվանդը քո ի՞նչն ա:

- Ընկերս:

- Որտե՞ղ է ապրում:

- Հրազդան:

- Քանի՞ տարի ա ճանաչում ես,- քննիչի պես հարցրեց նա ու վառեց սիգարետը:

- Տասնհինգ, մանկության ընկերներ ենք:

- Մինչև հիմա ցավեր ունեցե՞լ է...

- Չգիտեմ:

- Վիրահատությունը հաջող էր, ուշացնեինք՝ հավանորեն պայթեր, ժամանակին հասցրել եք: Առավելագույնս երկու շաբաթից դուրս կգրենք:

Խուլ ժպիտը դեմքիս, ծիծաղս մի կերպ զսպելով դուրս եկա:

Տանը ամեն ինչ իմացան: Այնքան էլ չզարմացան, Բարկենից ամեն ինչ սպասելի էր:

Նույն օրը, ժամը չորսին, մեր տուն խուժեցին հինգ-վեց զինվորական, Հրազդանի ու Էջմիածնի զին բաժնից սպաներ ու լեյտենանտներ, նրանցից մեկը կատաղած էր, առանց թույլտվություն ու հարցումների մտավ սենյակները, ստուգեց, հետո վրա բերեց:

- Արա դու ո՞վ ես,- դիմեց ինձ:

- Խորենը, էս մեր տունն ա, ի՞նչ ա եղել:
- Բարկենը ու՞ր ա:
- Հիվանդանոց:
- Ի՞նչ,- բերանը լցվեց փրփուրով:
- Հիվանդ էր, շտապ օգնությունը եկավ տարավ:
- Ո՞ր հիվանդանոցը:
- Էստեղ, էջմիածնի:

Նրանց հեռանալը փախուստի տպավորություն թողեց: Ես էլ գնացի հիվանդանոց: Իրարանցումը այնքան մեծ էր, որ անգամ հիվանդներն էին դուրս եկել: Զինվորականներ, բուժքույրեր, բժիշկներ...

Բանը նրանում էր, որ քաղաքացիական հանրային հիվանդանոցները իրավունք չունեին զինակոչիկ քաղաքացուն, անգամ ամենավատ վիճակում, ընդունել հիվանդանոց, ստիպված լինելու պարագային անմիջապես պիտի տեղյակ պահեին զինվորական հիվանդանոցի համապատասխան մարմիններին, կամ տեղի զինկոմին:

«Հիվանդանալու» համար Բարկենին սպառնացին դատի տալ: Ինձ ևս սպառնացին, որպես հանցագործություն մասնակից:

Բարկենի զինծառայությունը հետաձգվեց վեց ամսով: Ոչ մեկս չդատվեցինք: Բայց թե ինչ եղավ վիրահատող բժիշկի հետ, այդպես էլ չիմացա: Միայն մի բան է միշտ ականջիս հնչում. բժշկի խոսքը. «Բայց,

դուք պարսկահայերդ էլ հղքան միամիտ չեք, որ կարծում էի»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՍԿԱՆԵՐԻ ՀԵՏ

Մարդիկ կային, որոնք սփյուռքահայի համար ապրելու և գոյատևելու ավելի մեծ ապավեն էին, քան հրեաձին սրբերը: Գուցեև նրանց համար էինք հայրենիք գնում, հայրենի հողին ոտք դնելուն պես ամենուրեք, ամեն քայլափոխին, հայացքով նրանց էինք որոնում:

* * *

Դուռը բացողը վարպետի կինն էր:

- Վարպետը տա՞նն է,- անհամարձակ հարցրի ես:
- Հա, ներս արեք:

Երեխաների մի ստվար խումբ շրջապատեց մեզ: Շփոթի էինք մատնվել, վարպետի հայտնվելով քրոջս դեմքը մի անանուն գույն ստացավ, աչքերը խոնավացան, այն է, ուզում էր փարվել, բայց վարպետը շրջվեց, քույրս տեղում սկսեց դողալ:

- Եկեք, եկեք, ներս եկեք,- վարպետը ներս հրավիրեց ու ինքն անցավ առաջ:

Ընկերս՝ Բարկենը, հակառակ իր կարճ ոտքերին, համարձակ ու լայն քայլերով, մուտքը ազատելու

նպատակով, իրեն գտավ վարպետի հյուրասենյակում:

Երեխաներին գոհացնելուց հետո տեղ գրավեցինք նստարաններին: Այնտեղ էր նաև Թիֆլիսից եկած մի կին՝ գանգրահեր դստեր հետ: Ծանոթացանք, անունները չեմ հիշում: Պատեհ առիթ գտնելով աղջնակը արտասանեց, վարպետը համբուրեց նրա ճակատը:

Որոշեցի ասմունքող դառնալ:

Զգիտեմ, ապշած, թե՞ հիացած, բայց համակ ուշադրությունամբ լսում էինք:

- Որտեղի՞ց եք,- հարցրեց վարպետը:

- Պարսկաստանից,- աչակերտի պես պատասխանեցի ես:

- Ե՞րբ եք եկել:

- Մեկ տարի, մի քանի ամիս ա:

- Հիմնակա՞ն:

- Այո:

- Լավ եք արել, շատ լավ եք արել: Բոլորն էլ պիտի գան, պիտի հավաքվենք, պիտի բռունցք դառնանք (ցույց տվեց բռունցքը), անունդ ի՞նչ է:

- Խորեն, քրոջս անունն էլ Անահիտ, Բաբկենն էլ ընկերս է:

- Լավ ա, երեքիդ անունն էլ հայկական ա, ազգանունդ ի՞նչ ա:

- Քեչիչյան:

- Նշանակում ա Տերտերյան, փոխի՛ր, գտիր, թե՛

քեզ, թե՛ ազգանունդ, հայրենիքը դրա համար ա:

Զրույցի ընթացքում վարպետին նվիրեցինք Թեհ-րանում հրատարակված «Րաֆֆի» օրացույցն ու վարպետի հեղինակած «Հայոց դանթեականը»:

- Ապրե՛ք, շատ ապրեք, ես դեռ սրա ամբողջական հրատարակությունը չեմ տեսել, ուր էլ որ գնում եք, այս գիրքը ձեզ հետ տարեք, լավ գիրք է, լավ եմ գրել, չեմ հիշում վերջին անգամ երբ եմ կարդացել, բայց լավ եմ գրել, հավանում եմ: Ուրախ եմ, որ դուք էլ եք կարդում, ամեն հայ պիտի կարդա, սա և սրա նման գրքերը պիտի կարդա...

Լուսանկարվեցինք: Առաջարկեց լուսանկարվել իր Աստծո՝ և որդու՝ մոր և իր լուսանկարի հետ: Լուսանկարվեցինք:

- Պարսկաստանում հարազատներ ունե՞ք,- զրույցը շարունակեց վարպետը:

- Շատ, նաև եղբայրս...

- Ինչո՞վ է զբաղված եղբայրդ:

- Հայոց լեզվի ու գրականությունից ուսուցիչ է:

- Դա, շատ լավ է, Սալմաստում, Թավրիզում, Թաղեի վանքում, Տղմուտի ավին եղե՞լ է:

- Այո, նա շատ լավ է ճանաչում այդ չրջանը:

- Դե որ այդպես է, գրիր, թող Տղմուտի ավին գտնի վարդան Մամիկոնյանի գերեզմանը, լուսանկարի և ուղարկի: Դա հրաշալի բան կլինի, դա կլինի սրբապատկեր: Ինձ չեն թողնում գնամ, բայց որ գնամ էդ

չըջանը չեմ մոռանա: Գրիր, թող հրավեր ուղարկեն, ուզում եմ սփյուռքի հետ հանդիպել, սփյուռքի մասին շատ եմ երգել, ուզում եմ երգս տեսնեմ:

Այնպես եղավ, որ ձայնը թավ երանգ ստացավ ու հարցերի տարափ թափվեց գլխիս. «Ինչո՞վ ես զբաղված, որտե՞ղ ես սովորել, Նոր Զուղան կա՞, հայկական դպրոց կա՞, հայություն կա՞, չե՞ն ուզում գալ, ի՞նչ են մտածում, հայերեն կարդո՞ւմ են, Հայաստանի մասին գիտե՞ն, Հայաստանից լրագրեր ստանու՞մ են, լա՞վ են ապրում, Արևմտահայաստանի մասին ի՞նչ են մտածում...»: Հետո մոնչաց. «Պայքար կա՞, ոգի կա՞, նոր սերունդ կա՞, հույս, հույս կա՞.....»:

Առանց պատասխանի սպասելու, նորից անցավ Դանթեականին, ու մեզ առաջարկեց օգտվել դույլով լիքը հայկական ծիրանից ու բոլորիս բաժանեց դանակ ու պատառաքաղ:

Մի քանի ամիս հետո Իրանից նամակ ստացա:

Հովհաննես Շիրազի հետ լուսանկարս Թեհրանում ու Իսֆահանի հայաչատ թաղերում փոթորիկի մեծ ալիք էր բարձրացրել:

* * *

Մեր հաջորդ հանդիպմանը, վարպետն ասաց. «Ինչ-որ բարի ու խելացի մարդիկ, տանից «գողացել» են «Հայոց դանթեականը»:

ՄԵԾ ԳՈՒՇԱԿԸ

Ես էլ չգիտեի ինչ ուղղագրությունը էի գրում: Երկու տարի էր, ինչ Հայաստանում էի, վարժված էի դասականին, փորձում էի անցնել նոր ուղղագրության:

- Խորեն Քեչիչյան,- թելադրության թերթիկը ձեռքին կանչեց դասախոսս:

- Ես եմ:

- Որտեղի՞ց ես:

- Պարսկաստանից:

- Հա՞յ ես:

- Այո:

- Էս ի՞նչ եմ հարցնում,- ինքն իրեն հարցրեց նա ու շարունակեց,- ես չեմ հասկանում, էս ինչ որ էստեղ կա, այսինքը էսպես, որ դու ես գրում, հայերեն չի, կամ նորը սովորիր, կամ պահիր հինը... Ձէ, խորհուրդ կտամ նորը սովորել, անցիր նորին, հետո, երբ կվերադառնաս, արդեն քո գործն է:

- Ես հայրենադարձվել եմ, սիյուռքահայ ուսանող չեմ:

- Դա, ոչ մի նշանակություն չունի, կավարտես, որ հնար, առիթ ու պայման լինի... Միևնույն է, գնալու ես:

Վերջին արտահայտությունն այնպիսի մի խորհրդավորությունը ու համոզվածությունը ասաց, որ մարմնովս սարսուռ անցավ:

ՓԱՆՈՒՄՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Համալսարանում մասնակցում էի զինվորական դասընթացներին, բայց բան չէի հասկանում: Դասավանդումները ուսերենով էին, իսկ ես՝ ուսերենից բոբիկ էի...

Համալսարանը չբավարարվելով ներկայացրած փաստաթղթերից, ինձանից պահանջեցին անձնագիր:

Անձնագիր չունեի, այսինքն ունեի, բայց...

Ներգաղթ Կոմիտեն մեր ընտանիքի բոլոր փաստաթղթերի ուսերեն թարգմանությունները, որը հանձնել էինք Իրանում՝ սովետական հյուպատոսությանը, կորցրել էր: Այդ մասին իմանալով, քիչ թե շատ փորձված հայրենակիցներս անմիջապես հուշեցին, որ Թեհրանից պահանջեմ կեղծ ծննդական ու տարիքս մեծացնելով խուսափեմ զինծառայությունից:

Հանճարեղ այս միտքը օգտագործեցի: Թեհրանից ստացա նոր ծննդական ու ներկայացրեցի Երևանի ԶԱԳՄԻ, (մինչև հիմա էլ չգիտեմ ի՞նչ է նշանակում այս հապավումը) գրասենյակ: Տարիքս ու ծննդականս չէին համապատասխանում: Քսաներկու տարեկան էի, ներկայանում էի քսանյոթ տարեկանի ծննդականով ու պահանջում անձնագիր:

Համալսարանի վայեննի կաֆեդրայի խիստ պահանջով, անձնագիր ներկայացնելու ժամկետ էր սահմանվել, հակառակ պարագայում, դուրս էի մնալու համալսարանից:

Վեց ամիս շարունակ, ամեն օր մտնում էի ԶԱԳՍ, ժամեր շարունակ նստում ու անձնագիր պահանջում: Բոլորն էլ հոգնել, ձանձրացել, կասեի զզվել էին ինձանից:

Մի օր ԶԱԳՍԻ պետը ներս կանչեց.

- Ի՞նչ ես ուզում, այ տղա, ուզածդ ի՞նչ ա:

- Անձնագիր:

- Չե՞ս ուզում ծառայել:

- Ո՞վ է ուզում:

- Գրիր:

- Ի՞նչ:

- Ինչ որ կասեմ:

Նստեցի, նա թելադրեց, ես՝ գրեցի:

- Գնա, էլ չգաս հստեղ:

Երեք օր անց էջմիածնի ԶԱԳՍԻ բաժանմունքից կանչեցին.

Վարիչը ինձ շատ էր սիրում, ասում էր. «նորեկ-ներին միակն ես, որ ուսանող տարիներից, չենքի վրա բանվորութուն ես արել»:

Բարևեցի: Ժպտաց.

- Հաջողեցրիր, հա՞:

- Ի՞նչը:

- Բանակից փախար, հա՞, ուրախ եմ, բայց վախե-
նում եմ այս առաջիկա մայիսին տանեն:

- Ո՞ւր:

- Բանակ:

- Բայց 1944 թվի ծնունդ եմ:

- Հա, ամիսը նշված չի, հիմի որ պասպորտդ գրեն,
մայիսին կքչեն:

- Ես հունվար տասներկուսի ծնունդ եմ,- չտապեցի
ուղղել սխալս:

- Ես էլ հավատացի, հա՞:

- Ի՞նչ կա չհավատալու,- հիսուն ուրբի զցեցի դա-
րակը:

- Հավատում եմ, հավատում, դու ազնիվ տղա ես,
նստիր, նստիր, հիմա ծննդականդ կգրեմ ու միասին
կգնանք պասպորտ սեղան:

Ծննդյան վկայականս գրվեց, գնացինք ոստիկա-
նատան շենքում գտնվող անձնագրային բաժին: Եր-
կար չտեսեց, անձնագիրս կար, բայց կնքողը՝ չկար...
Թե ով պիտի կնքեր, ես չգիտեի, բայց ասաց՝ կփե-
չատենք, կտանք:

Գնացի հաջորդ օրը: Պատրաստ չէր: Ձե՛ր կնքվել:

Երկու օր ես սպասեցի: Ապարդյուն:

ԶԱԳՍ-ի վարիչի մոտ համարձակ էի ու նրա
համար վստահելի անձ: Դիմեցի նրան:

- Այ տղա, դու էսքան խամ չէիր, բանակից ես
ազատվում, մարդիկ հազարներ են ծախսում, կենտ-

կոմի անդամներ են մեյդան գցում... «օրենք» կա, բան կա, մի վերբերմունք ցույց տուր, կտան էլի...

- Ինչքա՞ն:

- Ես չատ գիտեմ, այ տղա, մի բան զգի առաջներն էլի:

- Ես վախենում եմ... Որ քեզ տամ, դու...

- Տուր, տուր, ես սաղին գիտեմ...

Հաջորդ օրը մի կոկիկ գումար տվի նրան, թե այդ կոկիկից ինչ մնաց իրեն չգիտեմ, բայց անձնագիրս կնքվեց, կնքամայր ունենալով ԶԱԳՍԻ վարիչին:

* * *

Անձնագիրը ձեռքիս մտա վայենկոմատ: Ինձ ասացին, որ պիտի մոտենամ «էն» մարդուն: Ազգանունը Սար-ով էր սկսվում ու բեկով վերջանում: Սարի նման բեկ մարդ էր, ամբողջ շրջանի նորածիններից սկսած մինչև բանակում ծառայած ու վերադարձած արուներին «ծնողի» պես գիտեր:

Մոտեցա: Անձնագիրս հանձնեցի:

- Ե՞րբ ես հայրենադարձվել:

- Երկուս ու կես տարի է:

- Ի՞նչ,- այնպես զարմացավ, կարծես ինչ-որ համեղ պատառ ձեռքից թոցրեցին, կիսով չափ գրական հայերենը բարբառային երանգավորում ստացավ,- էրկու տարուց ավել ա էկել ես ու չես ներկայացել, հա՞, արա դու ո՞վ ես, որ իմ ձեռից փախչես, ցույց կտամ քեզ, թե որ քեզ ծակը չկոխեմ,- անձնագիրս

վերցրեց ու գնաց:

Երկու ժամից ավելի սպասեցի: Չկար: Հարցերիս պատասխանը մեկն էր՝ «տեղում չի...»:

Այդ օրը զինծառայությունից բաժնի պետի կինը, ընկերուհուս մոտ մազերը հարդարելու ժամադրություն ուներ:

Նրան պատմեցինք եղելությունը: Նա խոստացավ միջամտել ու հորդորեց հաջորդ օրը գնալ իր անունից դիմել ամուսնուն:

Դիմեցի: Զինվորական հագուստով, պատկառանք ներչնչող մարդ էր: Այդքան մեղմ ու բարեկիրթ զինվորականի դեռ չէի հանդիպել: Համբերատարությունս լսեց, կանչեց ինչ-որ մեկին: Ռուսերենով մի քանի կարգադրություններ արեց, իսկ ինձ հրավիրեց դրսում սպասել, մինչև ներս կանչելը:

Կանչեցին, մերկացրին, ոտքից գլուխ ստուգեցին, ապա ողարկեցին սար-ով սկսվող ու բեկ-ով ավարտվող ազգանուն կրող զինվորականի մոտ: Առանց ղեմքիս նայելու, անձնագիրս չպրտեց առաջ: Վերցրեցի: Ես դարձա զինծառայությունից ազատագրված, սովետական միություն լիիրավ քաղաքացի: Չեմ հիշում, ուրա՞խ էի, թե՛ ոչ, բայց թոչկոտելով էի տուն շտապում, որովհետև այլևս համալսարանից հանելու հարց չէր լինելու և զինվորական ծառայություն չէի գնալու...

ՋՈՆԹԻԿԸ

Ջգիտեմ ինչու՞ Թեհրանում վերարկու չէի հագնում, կա՛մ սովորություն չունեինք, կա՛մ պարզապես գնելու կարողություն չկար: Որ ասեմ, այդքան էլ ցուրտ չէր, սուտ կլիների, լավ էլ ցուրտ էր, բայց չեմ հասկանում, ինչու՞...

Հայաստան գնացինք տաք շորերով, անձրևանոցներով ու գոնթիկներով:

* * *

Այդ օրը ահավոր ցուրտ ու անձրևոտ օր էր: Տաք էի հագնվել, հագել էի նաև սև անձրևանոցս ու հովանոցը գլխիս մոտենում էի համալսարանի շենքին: Տարօրինակ բան նկատեցի, աջից-ձախից զարմանքով ինձ են նայում, ոմանք էլ թեթև ժպտում էին: Համակուրսեցիներս ևս ինձ ընդունեցին քրքիջով.

- Արա, Բազյա՞նն ես դառել:

- Ի՞նչ Բազյան:

- Մեր Բազյանը, արա, Երևանում միակ տղամարդն աս, որ գոնթիկ աս բռնում:

- Արա, Խորեն, չաքա՞ր ես, վախենում ես հալչես,- վրա բերեց մեկ ուրիշը:

Այս ամենից հետո ուշադրություն դարձրի, իսկապես, միայն աղջիկների ու կանանց մոտ գոնթիկ

տեսա, մի պահ վատ զգացի, մի քանի օր էլ ամաչելով օգտագործեցի, հետո դարձա Երևանի երկրորդ զոն-
թիկավոր տղամարդը:

ՌՈՒՍԱՅ ԼԵՋՈՒՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱԹԱՆԻՇ

Արտասահմանյան գրականություն ժամն էր, դասա-
խոսը ավելի քան հարյուր անգամ լսարանի լայնքը
կտրել գնացելեկել ու դեռ բռռերը երկարաձգելով
ծոր էր տալիս, որպեսզի ուսանողները հասցնեն
սղագրել: Կարդում էր, տարիների փորձից ելնելով,
ավելի չուտ արտասանում էր, իսկ ուսանողները,
անգիր անելու նպատակով, գլխիկոր սղագրում էին:

Չնայած դասախոսի դանդաղկոտությունը, գուցեև
ալարկոտությունը, ես դեռ չէի հասցնում այնպես,
ինչպես պետքն էր, գրի առնել դասախոսի երկարա-
չունչ «երգեցողությունը», որը գարնան եղանակ-
ներին ավելի շատ օրօրոցայինի էր նման:

Այդպիսի օրերից մեկն էր: Դասախոսը ավարտեց
«երգեցողությունը», «ննջարան»ը արթնացավ: Մի
քանի ալարկոտ հարցերին հակիրճ պատասխանելուց
հետո, նա պարտադիր կարդացվելիք գրականության
ցանկ թելադրելով շեչտեց՝ «Առանց կարդալու որևէ

ուսանող չփորձի մտնել քննասենյակ»:

Ձեռք բարձրացրի, խոսելու թույլտվություն ստացա.

- Ես ոուսերեն չգիտեմ, իսկ հանձնարարած գրականություն, համարյա, ութսուն տոկոսը ոուսերենով է...

- Չգիտեմ ինչու, որոշ մարդիկ, համարձակորեն իրենց անգրագիտությունը մարդկանց երեսով են տալիս,- պատասխանեց գրագետ դասախոսս ու անցավ մեկ ուրիշի հարցին:

Այդ առարկայի քննությունը մտա նախապես մարդ «տեսնելուց» հետո, միայն... կոպիտ ասաց գտա միջնորդին ու փող փոխանցեցի:

«ԱԶԳԻ ՀԱՄԸ»

Ռաֆայել Իշխանյանը ուսանողություն սիրված դասախոսներից էր: Ստացել էր «Հայրենամոլ»-ի պատվաբեր պիտակը: Մեր՝ հայոց լեզվի, բարդ ու միաժամանակ հարուստ քերականության յոթ, վեց և հինգ հոլովների հարցը մեծ վեճի առիթ էր ստեղծել քերականագետների, հատկապես Իշխանյանի, Ասատրյանի, Գ. Սևակի, Աղայանի ու մի շարք այլ մասնագետների միջև վեճը խորացել, օձիքներ էին

պատովել... Համալսարանի միջանցքներում հակա-
ուակորդները միմյանց չէին բարևում, տարբեր
ուղղութիւններով էին ձեմում: Ուսանողները
քննութիւնների ժամանակ անպայման պետք է
սերտեին այն դասախոսի կարծիքը, որի մոտ
քննութիւն էին հանձնում, իսկ Իշխանյանը միայն մի
բանի վրա էր ուշադրութիւն դարձնում՝ քննութիւն
ժամանակ չօգտագործել օտարամուտ որևէ բառ, եթե
հայերենում կա նրա համարժեքը: «Բանասիրականի
ուսանողները մեր ազգի աղն են, իսկ եթե այդ աղն էլ
հոտի, ի՞նչ կմնա՝ անհամ ազգ»: Այսպես էր խորհում
Իշխանյանը և ուսանողներին ստիպում խոսել մաքուր
հայերենով:

Քննասենյակում, ես իմ տոմսի վրա էի աշխատում,
մի ականջս էլ մեր լավագույն ուսանողներից մեկի
պատասխաններն էր որսում, երբ Իշխանյանը ընդ-
հատեց նրա խոսքը և պահանջեց քննազրբույկը:

- «Կոնկրետ» բառի հայերենը ի՞նչ է, - հարցրեց
Իշխանյանը:

- «Որոշակի»:

- Դե, կգնաս, երբ կենցաղիդ ու խոսակցական
լեզվիդ մեջ, «կոնկրետ»ը կզիջի «որոշակի»ին, կգաս
քննութիւն:

ՑԱԿԻ ԲԱՐԻՔՆԵՐԸ ԿԱՍ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԴԱՐՁԱ «ՄԻՋՆՈՐԴ ՏԵՐ ՊԱՊԱ»

Ինչպես բոլոր ընկերներս, ես էլ մեծ սեր ունեի ֆուտբոլի նկատմամբ: Դարպասապահ էի խաղում: Մրցումներից մեկի ժամանակ, գեղեցիկ թռիչքով օդում որսացի հակառակորդի հարվածած զնդակը, դեռ օդի մեջ էի, ինչ-որ մեկի ծնկի հարվածը մեջքիս՝ ինձ տապալեց գետին:

Հարվածը եղավ ճակատագրային: Տասնվեց տարեկանից ցավը դարձավ կյանքիս անբաժանելի մասը: Համարյա հաշմանդամ դարձած էի հայրենադարձվել, հաճախ էի տաս, քսան օրով զամվում մահճակալին, անգամ ծիծաղս անտանելի ցավերի պատճառ էր դառնում:

Ախտորոշել էին, Պարսկաստանում մեջքացավ էին ասում, Հայաստանում՝ ուղիկուլիտ, Ամերիկայում՝ դիսկ:

Այս Ռադիկուլիտը ինձ համար նաև ունեցավ բախտորոշ մի այլ նշանակութուն: Հաճախ էի դիմում բժիշկներին, ոչ այն պատճառով, որ բուժվեմ, արդեն ինձ համոզել էին, որ դրան բուժում չկա, կա ժամանակավոր բարելավում: Տասնչորս տարի ինձ ուղեկ-

ցող այս հիվանդությունը անճարակ հայրենադարձիս համար դարձավ նաև միակ ծանոթը, որը ուսանողիս ամենադժվարին պահերին առաջինն էր հասնում օգնություն:

Հայերենիս ոչ բավարար մակարդակը ինձ մեխել էր նստարանին, սովորական ուսանողներից երեք չորս անգամ ավելի էի աշխատում, ելք չկար, բայց ուսման առաջին երկու տարիներին, որոչ առարկաների քննություններին չէի հասցնում պատրաստված ներկայանալ, ահա այստեղ էր, որ ինձ ուղեկցող ռադիկուլիտը օգնության ձեռք էր մեկնում: Հրաշալի գիտեի ցավից առաջացող տառապանքների մասին, գիտեի, թե ինչպես պիտի քայլել, քայլելիս ձեռքը ուր դնել, ինչպես նստել, ինչպես կանգնել, պառկել, հառաչել, անգամ բոռալ...

Քննությունների ժամանակ «հաճախ» էր ցավերը սաստկանում, դիմում էի բժշկիս ու այնպես էի ձևացնում, իբր ոտքի կանգնել անգամ չեմ կարող, վկայում էին ինձ այնտեղ հասցրած ուղեկցողներս ու «բույքետին» էի խնդրում, որպեսզի դասերից բացակայելու հարգելի պատճառ ունենամ: Այսինքը որոշակի առարկայի քննությունը չներկայանալու և հետաձգելու հարգելի պատճառ ունենամ:

Բժիշկները ևս ոչ պակաս մեզանից՝ խելացի էին: Նրանք շատ լավ էին հասկանում, թե որոչ ուսանողների մոտ հիվանդություններ հայտնաբերվում,

կամ ինձ պես հիվանդների մոտ ցավերը սաստկանում են հատկապես քննությունների ժամանակ: Այնպես, որ այդքան էլ հեշտ չէր «բյուլետին» պոկելը:

Այդ հարցում ինձ հաճախ օգնության էր հասնում ընկերուհուս այս կամ այն հաճախորդը: Նրանք էին բժշկի հետ գործ բռնողները, նրանց պետք էր միայն անուն, ազգանուն և յուրաքանչյուր օրվա բյուլետինի համար որոշակի գումար: Իհարկե այդ գումարի չափը կախում ուներ նրանից, որ տվյալ անձը երբևէ այդ բժիշկի մոտ եղել է, թե՞ ոչ, պոլիկլինիկայում, կամ հիվանդանոցում «գործ» ունի՞, թե՞ ոչ...

Ես, թե քանի անգամ օգտվեցի այդ առիթից չեմ հիշում, բայց ուրախ էի, որ այդ ճանապարհով, ծանոթացա ու հետագայում նաև ընկերացա որոշ բժիկների հետ, որոնք լիովին վստահեցին ինձ ու կամացկամաց, ես նրանց համար դաձա ժամանակի «Միջնորդ տեր պապա»:

«ԱՊՈՒՇ»

Չորրորդ կուրսի ուսանող էի, երբ մեր դեկան Մկրյանը կանչեց իր գրասենյակը: Թիկնեղ, բարձրահասակ, դանդաղաչարժ ու բարալիկ, կասեի՝ կանացի, ձայնով դոկտոր-պրոֆեսոր էր.

- Կարծեմ դու Իրանից ես, չէ՞:

- Այո, ընկեր Մկրյան:

- Պարսկերեն գիտե՞ս:

- Այո, ընկեր Մկրյան:

Քաղցրահամ զգացում պատեց ամբողջ մարմինս:

- Չնայած շուտ է, հինգերորդ կուրսում են դիպլոմային աշխատանքի թեմա տալիս, բայց ուզում եմ մի հետաքրքիր թեմա առաջարկել:

- Սիրով, եթե կարողանամ, ինչու ոչ:

- Ուզում եմ գրես հայ միջնադարյան գրականության մասին, այսինքը օտար այն բառերի մասին, որոնք մուտք են գործել հայ աշխարհիկ գրականության մեջ: Քեզ կօգնեմ, գրականություն քիչ կա, բայց կաշխատեմ եղածի չափ գտնել, մեծ ու ժամանակ խլող գործ է, բայց կարևոր է, շատ կարևոր, չուսումնասիրված թեմա է...

Համաձայնվեցի: Չորրորդ կուրսից սկսեցի աշխատել ավարտական թեզիս վրա: Ստիպված սկսեցի ընթերցել Պարսից ու հայ միջնադարյան աշխարհիկ քնարերգության ծով գրականությունը և...

Մկրյանը, որը նաև իմ դիպլոմայինի ղեկավարն էր, հայ իրականության մեջ հայտնի էր, որպես միջնադարյան գրականության մասնագետ ու Ֆրրիկի «Գանգատի» մեկնաբանողը, որով մեր ժողովուրդը հպարտանում էր, որպես Աստծո դեմ ըմբոստացած աշխարհի առաջին մտածողն ու բանաստեղծը:

Իմ պրպտումներով գտա, կամ եկա այն եզրակացության, որ Հայ քնարերգու Ֆրիկը ոչ թե «Գանգատի» հեղինակն է, այլ ոմն պարսիկ բանաստեղծի ստեղծագործության թարգմանիչը:

Ուսումնասիրությունս Հանձնեցի ղեկավարիս՝ Մկրյանին: Հաջորդ իսկ օրը կանչեց: Աշխատանքս կիսով չափ չպրտեց առաջս .

- Ապուշ, կհանես, Ֆրիկի բաժինը կվերանայես: Երբ համալսարանը կավարտես, էն ժամանակ ինչ կուզես արա:

Հասկանալի էր: Ֆրիկի մասը մնաց, հարցին մոտեցա ղեկավարիս սրտով: Դիպլոմս պաշտպանեցի գերազանց գնահատականով: Մկրյանի սրտառուչ ղեկույցը իմ աշխատանքի մասին արտասուք բերեց աչքերիս:

Հաղաթահարել էի բազում ղժվարություններ ու խոչընդոտներ, փառքով ավարտեցի համալսարանը, որը և իմաստավորեց հոգևոր կյանքս:

Օ, ԱՅԴ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԴԵՍՔԸ...

Հորաքրոջս տղան՝ Մանվելը, տաս տարի ինձանից մեծ, բայց հրաշալի ընկեր ու բարեկամ, նաև քայլող հանրագիտարան էր: Հրավիրեց Արամ Խաչատրյանի

ծննդյան յոթանասուն ամյակին նվիրված հեղինակային համերգին: Հավատա չէր գալիս, իմ իսկ սեփական աչքերով պիտի տեսնեի դարի հսկային ու ըմբոշխնեի նրա երաժշտությունը, որը պետք է հնչեր կոմպոզիտորի հեղինակային համերգի ընթացքում:

Եկավ օրը: Օպերայի թատրոնի միջանցքներում ծանոթ մարդկանց էինք հանդիպում, երաժիշտներ, գրողներ, կառավարական դեմքեր... Եվ իրենց առանձնացված տեղերում նստած կենտկոմի քարտուղարներ...

Հսկան, իր թավ հոնքերով, փայլուն ու խոսուն աչքերով, ամուր, վստահ ու առնական քայլերով հայտնըվեց բեմում: Ամբողջ դահլիճը ոտքի ելավ...

Կախարդական ճիպոտը անցավ գործի: Դահլիճը հիպնոսացվեց:

Հայտարարվեց ընդմիջում:

- «Արի գնանք տեսնենք իրան ուր են տանելու», - ասաց Մանվելն ու դուրս եկանք միջանցք:

Ինչ-որ անկյունում իրարանցում կար, մոտեցանք, մարդիկ խոնվել էին դռան մոտ, տասնհինգ-քսան պիոներներ միջանցքում կանգնած կարգադրություն էին սպասում: Երկու կին պիոներական վզկապներով նրանց առաջնորդեցին ներս, բախտի բերմամբ մենք էլ կարողացանք սողոսկել ու սպասեցինք ինչ-որ արարողության: Պիոներները վարպետի վիզը զարդարեցին կարմիր վզկապով ու խմբվեցին լուսա-

նկարվելու համար: Մանվելը պատեհ առիթից օգտվելով, մոտեցավ լուսանկարչին և խնդրեց մեզ ևս վարպետի հետ լուսանկարի: Առիթը բաց չթողնելու համար սկսեցինք մոտենալ վարպետին, քաշվեցինք նրա հետևը, ինչ-որ բան էր ստորագրում, նեղվածք էր, ամբողջ մարմինը ջրի մեջ էր, սրբիչ խնդրեց, բերեցին, ջուր, գովացուցիչ... մենք դեռ մեզ տեղ էինք անում ու աչքով, հոնքով լուսանկարչին խնդրում, որ շտապի, առիթը բաց չթողնի հանկարծ:

Մեկ էլ վարպետը ետ դառավ, հայացքը ընկավ մեզ, ուչաթափվելու աստիճան սարսափեցի...

- Դուք որտեղի՞ց եք,- հայերենով հարցրեց վարպետը:

- Իրանից,- թուխ աչքերը արագ թարթելով, ժպիտը դեմքին պատասխանեց Մանվելը:

- Երևում է, տեղացիներն էսքան երես առած չեն լինում,- ասաց վարպետն ու շարունակեց իր ստորագրությունները:

Վարպետի հայերենը տաօրինակ էր, իսկ մենք համարյա փախանք: Բայց մինչ այսօր դեռ այդպիսի պատկառելի, միաժամանակ պայծառ դեմք, գոնե ինձ չի հանդիպել և ոչ մի լուսանկար այնքան չի տպավորվել իմ սրտում, որքան նրա լուսաշող դեմքի պայծառափայլ արտահայտությունը:

ՏԻԵՉԵՐՔԻ ՅԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՐԿԻՐ, ԿԱՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Եղբայրս Իրանի Իսֆահան-Թեհրան մայրուղու վրա վթարի էր ենթարկվել ու զոհվել: Գուժը հասավ մեզ: Սահմանակից երկիր, օդային մեկ ժամ, երեսուն րոպե ճանապարհ, բայց սովետական քաղաքացու, մասնավորապես հայրենադարձի համար «անհաս ճամփա»:

Կապի ոչ մի միջոց:

Խորհուրդ տվեցին, ընտանիքին վշտակցելու համար գնալ Բաքու կամ Մոսկվա՝ զանգահարելու: Այսինքն հազարավոր կիլոմետր կտրել, որպեսզի խոսելիս հանկարծ ձայնդ «սահման չխախտի»:

Ոչ Բաքու, ոչ էլ Մոսկվա գնալու հնարավորություն ունեի: Եղբորս ընտանիքի հետ արագ հաղորդակցման միակ միջոցը հեռագիրն էր, մի կապ, որը հիչեցնում էր առաջին համաշխարհային պատերազմն ու բարեբախտաբար պահպանվել էր իր աժ-ժմեկանությունը մինչև աստեղային պատերազմները՝ քսաներորդ դարի ավարտը:

Սովետական Միության զարգացած տեխնիկայի միջոցները չէին ծառայում ժողովրդի կենցաղային բարեկեցությունը, և դա արժանապատվության հարց չէր: Երևույթներ էին, որոնց անդրադառնալու համար

կրեբեմ ընդամենը երկու օրինակ.

Հավն իր թևով, օձն իր պորտով Պարսկաստանից չէր կարող Հայաստան մտնել:

Տարրական դպրոցում հայոց լեզվի ուսուցիչս, միաժամանակ հանգուցյալ եղբորս ամենամտերիմ ընկերը, Իրանից Բեյրութ, Բեյրութից հայրենիք էր ժամանել: Իջևանել էր Անի հյուրանոցում, տեղեկանալուն պես շտապեցինք նրան հանդիպելու:

Անի հյուրանոցում ծառայողների հազարավոր խուզարկու հայացքների տակ սողոսկեցինք վեցերորդ հարկ: Հարկաբաժնի սպասարկողները մոայլադեմ հայացքներով ուղեկցեցին մեզ՝ մինչև փնտրված սենյակը:

Մեր մուտքը անակնկալի բերեց ուսուցչիս, չմոտեցավ, ոտքերը թուլացան, նստեց մահճակալի ծայրին ու առանց մեզ նայելու սկսեց հեկեկալ:

Վերքը թարմ էր: Երկարող լուռությունը խզեց երրորդ, մեզ անծանոթ այցելուն.

- Էս, ի՞նչ պատահեց:

- Կներես,- ասաց ուսուցիչս, մենք մոտիկ բարեկամներ ենք, այսպես էլ է լինում, վերջերս կորցրել ենք մեր եղբորը:

- Ցավում եմ, ինչ արած, կյանք է: Քանի՞ տարեկան էր:

- Երեսունմեկ,- պատասխանեց ուսուցիչս:

Մինչ նրանք շարունակեցին իրենց զրույցը ես

աչքերս էի սրբում, երբեմն էլ ցածրաձայն հեկեկում էի: Նրանց հարցերին պատասխանում էի միայն գլխի դրական կամ բացասական շարժումներով:

Կես ժամ տևեց մեր հանդիպումը: Ուսուցիչս կնոջս համար շատ մողայիկ, ժամանակին «պլատֆորմ» կոչվող կոշիկներ, իսկ ինձ համար մի վերնաշապիկ էր բերել: Շնորհակալություններ ընդունեցինք ու նորից հանդիպելու պայմանով հրաժեշտ տվեցինք:

Ներքևում, չքամուտքի մոտ երկու «ուղղիչներ» մոտեցան մեզ ու հեռուները նայելով հարցրեցին.

- էս ու՞մ մոտ էիք...

- Հարազատի,- անտրամադիր պատասխանեցի ես,- ինչու՞:

- էդ, ի՞նչ է տոպրակի մեջ:

- Ինչու՞:

- էդ, ի՞նչ է տոպրակի մեջ,- հարցը կրկնեց մյուս ուղղիչը:

- Կոշիկ, կոշիկ ու մի վերնաշապիկ,- քիչ, թե չատ, գլխի ընկնելով, թե բանը ինչու՞մն է, պատասխանեցի ես:

- Ի՞նչ եք վճարել:

- Նվեր ա:

- Չե՞ք ուզում վաճառել:

- Ասացի՛ նվեր ա:

- Արա, ու՞մ ես էջի տեղ դրել, հլա ետ դառ գնանք հյուրանոց:

- Ինչու՞:
- Պարզելու:
- Ի՞նչը:

Ամեն ինչ հասկանալի էր, երկրի անվտանգության աշխատակիցները պարտականություն էին կատարում, ապահովում էին Սովետական Միության քաղաքացու հանգիստը, անում էին այն, ինչ Բուշը պիտի սկսեր Սեպտեմբերի 11-ին: Սովետը, այդ պատերազմը սկսել էր դեռևս 20-ական թվականներին, միայն այն տարբերությունը, որ նրանք ահաբեկիչներին փնտրում էին ոչ թե արտասահմանցիների կամ մուսուլմանների մեջ, այլ իրենց իսկ «հարազատ» անհավատ քաղաքացիների մեջ:

Հյուրանոցում, մի առանձնասենյակի մեջ քսան ըոպե լուսանքների ու բարոյական կտտանքներից ու հարցաքննությունից հետո միայն, շատ արհամարհական ձևով, «բախտավորներիս» «ազատ» թողեցին:

* * *

Հրապարակի վրա քայլում էի, դեմս դուրս եկավ Իսֆահանի համալսարանի դասախոսս՝ պրոֆեսոր, հոգեբան պարոն Բալայանը: Նա հրավիրվել էր Մոսկվա գիտաժողովի, առիթից օգտվելով մի քանի օրով այցելել էր հայրենիք:

Մեր հանդիպումն այնքան անակնկալ էր, որ ակա-

մայից գրկախառնվեցինք: Ամեն ինչ կարճ տևեց, ինքը կաշկանդված էր, շուրջը ինչ-որ մարդիկ էին վխտում, նրա իսկ խորհրդով հեռացա:

Լենինի հուշարձանի ճիշտ ետևում, անվտանգության կոմիտեի տղերքը՝ «ուղղիչները» հարձակվեցին վրաս ու սկսվեց հարցերի տարափը...

ԱՌԱՋԻՆ ԵԼՈՒՅԹՍ՝ ՈՒՂԻՈՅՈՎ

«Երևանն է խոսում» սփյուռքահայերի համար տրվող հաղորդաչարի դերը մեծ էր սփյուռքահայության մշակութային ու հասարակական կյանքի ոլորտներում: Միայն թողարկվող երգերը բավական էին գիշերները հարազատներին կողք-կողքի հավաքել և հայրենիքի ձայնը միասին ըմբոշխնելու համար: Իսկ քարոզչությունն այն թույնն էր, որը ձակատ էր բացում եղբայրների, հարևանների ու տարբեր գաղափարներով երազախաբ լինող խմբակների մեջ:

* * *

Մի օր մեր դուռը թակեցին, երկու անձանոթներ՝ մի աղջիկ, մի տղա, ներկայացան որպես «Երևանն է խոսում» հաղորդաչարի թղթակիցներ: Առաջարկեցին ելույթ ունենալ ռադիոյով, ողջույնի խոսք հղել

Իրանում ապրող մեր հայրենակիցներին ու հարազատներին: Համաձայնեցինք: Հարցերը երկարեցին, պատասխանները ստացան ու պայմանավորվեցինք որոշակի օր ու ժամ հանդիպելու և ձայնագրվելու համար:

Եկավ օրը, եկավ ժամը, եկան նաև թղթակիցները՝ ձայնագրման գործիքներով: Մեզ տվեցին ինչ-որ թերթիկներ ու որոշակի ժամանակ՝ անգիր անելու, կամ գոնե բովանդակությունը յուրացնելու համար:

Այդպես էր կարգը, սովետական քաղաքացուն չանհանգստացնելու, ժամանակը չվատնելու համար մտածելու առիթ չէին տալիս: Մտածելու համար ընտրյալներ կային, որի համար էլ աշխատավարձ էին ստանում: Իմ և յուրայիններիս փոխարեն մտածել էին ինչ-որ անուղեղներ ու ցանկանում էին մենք նրանց խորհածը վերագրենք մեզ ու փոխանցենք մեր հարազատներին:

Այն հարցին, թե ի՞նչ է, մենք չե՞նք կարող երկու բառ խոսել, կամ մեր ուղածը ասել, պատասխանեցին. «Կարող է սխալ բաներ ասեք, իսկ մենք ճիշտն ենք գրել»:

Սովետական ժուռնալիստը աշխատավարձ էր ստանում «ոչխար» քաղաքացու փոխարեն մտածելու համար: Զարմանալին այն էր, որ այդ բարձրագույնավարտը իրեն ոչ միայն լավ էր զգում, այլ այդ գավեշտը դիտում էր, որպես բնականոն երևույթ ու երջանիկ ապրում էր:

ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ԿԱՇԱՌՔԸ

Հորաքրոջս տղաներից մեկը, Փիղիկապես մի քիչ թույլ մարդ էր, Հրազդանի բնակլիմայական պայմաններին, հատկապես ձմեռվա սաստիկ ցրտերին՝ չէր դիմանում, Չնայած դրան, էջմիածնի, վեհարանի տպարանում նրան աշխատանք էին խոստացել: Ավելի քան քսան տարի փորձառություն ունեցող, տարբեր լեզուների իմացությունը այդ մասնագետի խիստ կարիքն էր զգում ժամանակի լավագույն տպարաններից մեկը՝ էջմիածնի տպարանը:

Մասնագետը սկսեց ուղիներ փնտրել փոխադրովելու համար էջմիածին քաղաք: Միակ հնարավոր միջոցը բնակարանի փոխանակումն էր:

Ես մարդ գտա: Մեր կից մուտքում ապրում էր միայնակ, հաշմանդամ մի ուս տղամարդ: Համաձայնություն եկանք: Վճարեցինք երկու հազար ութլի ու փոխանակման բոլոր թղթերը ձևակերպելուց հետո, դիմեցինք տեղի տնային կառավարչությունը՝ բնակարանի մուտքի իրավունքը՝ օրդերը ստանալու:

Վարիչը, արտաքինից բավականին կիրթ, համեստ, չափված-ձևված, մոտ քառասուն տարեկան մարդ էր երևում: Նրա հետ գործ բռնողը ես էի:

«Գնա, չորս օր հետո կգաս», - մի օր ասաց նա ու գրասենյակից դուրս եկավ:

Չորս օր հետո գնացի, նստեցի, սպասեցի: Մեկ, երկու ժամ.... չկար ու չկար: «Երևան է գնացել, եսիմ, բան չի ասել, շատ գիտեմ, թե երբ ա գալու, նստիր, սպասիր էլի», - սա էր «Ե՞րբ է գալու » հարցիս պատասխանը:

Հաջորդ օրը նորից գնացի: Դրան հաջորդած օրը նորից այնտեղ էի...

Մի օր բռնեցի: Վախը, թե՞ ամոթխածությունը հաղթահարելով մոտեցա.

- Ընկեր Բալայան, բոլոր գործերը վերջացել ա, միայն ձեր օրդերին ենք սպասում, էդ մարդը բանալի չունի, Հրազդանի բնակարանը արդեն հանձնել ա:

- Այ, տղա, էդ ո՞նց ես խոսում, ոնց որ քեզ պարտք եմ, էլ բան ու գործ չունե՞մ, ի՞նչ ա: Գնա, գնա սպասիր... Արա, էս պարսկահայերդ կամ միամիտ եք, կամ...

- Ընկեր Բալայան, ընկեր Մանուկյանն է հեռախոսի վրա, քեզ ա սպասում,- չենքի ներսից լսվեց մի կանաչի ձայն ու վարիչը խոսքը կիսատ ներս մտավ:

Սպասեցի: Կես ժամ հետո նորից մտա.

- Կարո՞ղ եմ ընկեր Բալայանին տեսնել,- հարցրի քարտուղարուհուն:

- Տեղում չի,- վրա բերեց նա:

- Քիչ առաջ միասին եկանք...

- Որ ասում եմ տեղում չի, նշանակում է տեղում չի, տեղում էլ որ լինի, դա նշանակում է տեղում չի, հիմի

Հասկցա՞ր:

- Ներս մտավ ու ինձ բան չասեց:

- Ի՞նչի, քեզնից պիտի իրավունք հարցնեն նոր ներս մտներ, էս ինչ բան ա...

- Բայց շատ կարևոր ա, մարդիկ փողոցում են մնացել, սրա-նրա տուն...

- Խի՞ են մնացել փողոցում, թող տուն գնան, Բալայանը խանգարու՞մ ա:

- Չէ, ինքը խոստացավ էսօր...

- Այ տղա, որ տեղում չի, ես ի՞նչ անեմ, շատ էլ որ խոստացավ, հետո ի՞նչ...

- Լաուրա, թող սպասի, ես հիմա կվերջացնեմ,- առանձնասենյակից լավեց վարիչի ձայնը:

- Դե, սպասիր, եկավ,- առանց աչքերիս նայելու ասաց քարտուղարուհին ու մտավ ինչ-որ սենյակ:

Տասնհինգ-քսան բոլոր անց ընկեր Բալայանը դուրս եկավ, մտավ թեև ու քարչ տալու պես, տարավ դուրս.

- Այ տղա, քեզանից մեծը չունե՞ք, խելքը գլխին մարդ չունե՞ք: Կարգ կա, կանոն կա, հո հենց էսպես չի լինի, հլա գնա հին էկաժների հետ խոսա, նրանք քեզ կհասկացնեն, գնա, գնա, երեք օրից կգաս:

Ամեն ինչ պարզվեց: Երեք օր հետո երեք հազար ուրլի գրպանս դրած գնացի տնային կառավար-չություն: Այդ օրերին երեք հազարը իմ չորս տարվա եկամուտն էր: Մեծ գումար էր: Շատ մեծ գումար:

Ուսանող էի և ստանում էի ամսական երեսունհինգ ռուբլի: Դա հազիվ ավտորուսի տոմս էր... Ճիշտ է գումարը իմը չէր, բայց ինձ համար մեծ գումար էր:

Ընթացքում դողում էի, վախենում, ամաչում էի... Ապրածս կյանքի մեջ նման մեծ կաշառք չէի տվել: Սովոր չէի: Նոր էի կյանք մտնում, չէի պատկերացնում, ինչպես պիտի այդ երեք կապոցները գրպանիցս հանեմ ու նրան տամ... Իսկ նա ինչպե՞ս է վերցնելու: Գուցե թակարդ է... բա որ մեկը տեսնի ու մատնի...

Հիմնարկից դուրս եկավ, նստեցրեց Մոսկվիչն ու քչեց: Ֆրտահար բարդու պես դողում էի: Ինչ-որ շենքի մոտ իջավ, ասաց միասին բարձրանանք: Հինգ հարկանի շենք էր, աստիճաններին մարդ չկար, բարձրացանք մինչև հինգերորդ հարկ: Ասաց. «Սխալ շենք ենք մտել»:

Քչեց մի ուրիշ շենք: Նորից բարձրացանք: Իջանք:

Մեքենան ուղղվեց դեպի գերեզմանատուն տանող ճանապարհը, այնտեղից թեքվեց դեպի Հոփսիմեն եկեղեցին ու միանգամից արգելակեց.

- Արա, դու հո խելառ չե՞ս: Բերե՞լ ես:

- Այո, - ասացի ես ու չոված աչքերով նայեցի նրան:

- Դե գցիր էդ բարդաչոկը ու շուտ իջիր, կյանքս գնաց, արա:

Վախեցած, հանցագործի պես գրպանիցս հանեցի կապոցներն ու գցեցի առջևս բացված դարակի մեջ:

- Դե, հիմի իջիր, գնա եկեղեցի, սիրուն եկեղեցի ա, մեր լավագույն հուշարձաններից ա, միջնադարյան կոթող, սուրբ Հովհաննեսն ա կառուցել, ինքն էլ մեջը թաղված ա, կնայես, մի հատ կաղոթես, Աստծուն էլ շնորհակալություն կհայտնես, որ գործերդ հաջող են գնում, էգուց էլ կգաս օրդերը կստանաս, գնա, գնա, դեռ ջահել ես, առջևում կյանք կա, պիտի վարժվես, պիտի սովորես...

ՄԵՂՐԱՄԻՍ

1973 թվականին ամուսնացա:

Հավատացյալ չեմ, բայց ծեսը եղավ աշխարհում ինձ համար ամենագեղեցիկ՝ Հովհաննես եկեղեցում:

Ավանդույթ է...

Մեծ քեֆ, խրախճանք չարինք: Քսան-երեսուն հոգով մեզ ճանապարհեցին Լենինգրադ: Ռուսերենի սահմանափակ բառապաշար, բայց երկար մազեր ու փոքրիկ մորուք ունեի: Ես էլ, կինս էլ հագնված էինք ամենավերջին մոդայով, երկուսիս հագուստներն էլ ստացել էինք արտասահմանից ու մեր քաղաքի համար քիչ թե շատ տարօրինակ էր: Եվրոպայից ժամանած զբոսաչրջիկների պես, մենք էլ ունեինք կինոխցիկ, լուսանկարչական սարք ու արտասահմանյան

ճամպրուկներ: Գիշերվա ժամը երկուսին վայրէջք կատարեցինք Լենինգրադում: Օդանավակայանում տաքսու վարորդին մեկնելով հասցեն, ասացինք՝ «Լենինգրադ հյուրանոց»:

Տաքսին հյուրանոցի առաջ կանգնելուն պես, մի քանի հոգի մոտեցան, բացեցին դուռը, օգնեցին, իրերը ներս տարանք: Հրաշալի հյուրանոց էր: Շքեղ չքամուտքը ապշեցրեց մեզ: Մինչև ընդունարան սիրալիր ուղեկցելը մեզ զարմանք պատճառեց, չփոթվել էինք: Հոգնած էինք, կինս նստեց չքեղ բազմոցին, իսկ ես անձնագրերը վերցրի ու մոտեցա գրանցման սեղանին: Սլացիկ ու գեղադեմ աշխատակցուհին սիրալիր ժպտաց ու ինչ-որ թղթեր մեկնեց, խնդրեց լրացնել: Անգլերեն ու ֆրանսերեն էին: Կիսատպոատ լրացրի անգլերենն ու վերադարձրի: Շնորհակալություն հայտնեց: Անձնագիր պահանջեց: Մեկնեցի: Դեռ չվերցրած փոխվեց դեմքի արտահայտությունը: Առանց շնորհակալության դանդաղեցված շարժապատկեր հիշեցնող արագությամբ վերցրեց, ու հարցրեց՝ դուք ուղեգիր ունե՞ք:

Ո՛չ, - ասացի ես:

Լռեց:

Մի քանի րոպե բացակայելուց հետո վերադարձավ, թթված դեմքով ասաց.

Գնա, նստիր:

Նստեցի: Հետո մոտեցան երկու ոստիկան, վերա-

դարձրին մեր անձնագրերը, նրանցից մեկը բռնեց իմ կզակից, մյուսը՝ կնոջս թևից, փորձեցին Հյուրանոցից դուրս չպրտել: Հյուրանոց, որտեղ վխտում էին աֆրիկացիներ, աֆղաններ, բանգլադեշցիներ, ֆրանսիացիներ, հնդիկներ, անգլիացիներ և այլք: Սովետական քաղաքացիներին, հանձինս մեզ՝ նորապսակներին, որպես «անպետք իր» դուրս էին վռնդում... ոչ թե ցարական պալատից, այլ սովետական Հյուրանոցից, միայն սովետական քաղաքացի լինելու մեղքիդ համար: Մենք ի սկզբանե էինք դատապարտված...

Կիսատ-պոատ ոռսերենով, հայերենով, պարսկերենով ու վատ անգլերենով հասկացրի, որ թույլ տան մինչև լույսը բացվելը նստենք սպասասրահում, որ գիչերվա կեսին փողոց չհանեն, շատ համառեցի, հաջողեցի... Մեկ-երկու ժամ հետո, երբ ամեն ինչ խաղաղ էր, ընդունելության բաժնում տեղի ունեցավ հերթափոխություն: Առիթից օգտվեցի, ճամպրուկի միջից հայկական կոնյակ հանելով կոկիկ գումարով մոտեցա հերթափոխ միջահասակ տղային ու մի քանի ժամվա համար տեղ խնդրեցի... Ամեն ինչ լավ ստացվեց...

Երրորդ օրը, մենք «անպետք իրերս», այդուհանդերձ դուրս չպրտվեցինք...

Վիրավորված արժանապատվություններ, դառնացած սրտով, Նևայի ափին, ճամպրուկների վրա

նստած, կնոջս արտասովախառն աչքերի լուռ համա-
ձայնությամբ, պատեհ առիթ լինելու դեպքում վերա-
դառնալու հույսով, որոշեցինք լքել չքնաղ Լենին-
գրադը:

* * *

Գնացքով մեկնեցինք Մոսկվա: Կես օր շարունակ
Հյուրանոցից՝ Հյուրանոց էինք գնում: Ոչ թե տեղ
չկար, այլ ուղեգիր չունեինք: Մութն ընկել էր: Մութ-
լատիպ մի Հյուրանոցում հանդիպեցինք հայերի:
Լուսատուներ թվացին, նրանց երաշխավորությամբ,
մի կոկիկ գումար դրեցինք անձնագրի մեջ ու մոտե-
ցանք ընդունման սեղանին: Առանց խոսելու մեր
անձնագրերը մեկնեցի աշխատակցուհուն: Անձնա-
գրերը բացեց, գումարը դրեց դարակն ու ասաց՝
սպասիր: Մի քանի րոպե հետո կանչեց: Ամեն ինչ
կարգին էր:

Ահավոր հոգնած էինք: Սոված էինք, առանց բան
ուտելու լողացանք ու պառկեցինք:

Առավոտյան, լույսը չբացված, սուր ցավերից
արթնացա: Փորձեցի դիմանալ: Գալարվում էի,
ստիպված արթնացրի կնոջս: Ոչինչ չէինք կարող
անել: Ելք չգտանք: Կինս սենյակից դուրս ելավ,
վերադարձավ ինչ-որ մեկի հետ: «Ցավ, ցավ, չատ
ցավ» ցույց տվեցի կողքս ու սկսեցի գալարվել:

Հյուրանոցի աշխատակցուհին հասկացրեց. «Որ
համբերենք, հիմա բժիշկ կկանչի»:

Երկար չտևեց, մի տղամարդ ու մի կին ներս մտան: Հասկացանք, որ շտապ օգնությունից են: Թեթև քննելուց հետո մեզ համոզեցին իրենց հետ գնալ հիվանդանոց: Ելք չունեինք: Համաձայնվեցինք:

Հիվանդանոցում սկսվեց քննությունները: Գործընթացից ոչինչ չէինք հասկանում: Ինձ պալատից առանձնացրին: Հետո ցավերիս հետ տարան մի նկուղ, բետոնապատ մի սենյակ, հետո հասկացրին, որ պիտի մերկանամ: Հանվեցի, սպասեցի: Տաք ջրով, Փրչայով, օձառով ու ածելիով մի կին, մոտեցավ ինձ, հասկացրեց, որ պիտի ածելիի, որ պիտի կույր աղիքս վիրահատեն: Համառեցի, չէի թողնում: «Արմենիա, Արմենիա, գնամ Արմենիա, էնտեղ ապերացի», - պնդում էի ես, իսկ նա՝ իրենն էր ասում: Համոզեց, ածիլեց ու բարձրացրին վեր՝ հիվանդասենյակ, որը «պալատ» էին ասում: Մի քանի բժիշկ ու քույրեր եկան-գնացին, համոզել չէին կարողանում, մինչև հայտնվեց մեկը, որի առաջին հարցը եղավ.

- Ի՞նչ ազգ ես:

- Հայ,- ասացի ես:

- Հա՞յ ես,- հարազատին գտածի պես պայծառացավ ու կցկտուր հայերենով շարունակեց.- ես էլ Հայ, ինձ ասեն դու իրանցի, ես Հայ, դու Հայ, ապերացի անեմ լավ, շատ լավ, չանեմ՝ մեռնես...

- Ցավդ տանեմ բժիշկ ջան, մի բան արա, գնամ Հայաստան, էնտեղ կանեմ էլի,- աղաչական տոնով

վրա բերեցի հարազատիս:

- Ձէ, չէ, սամալյոտի մեջ մեռնես, ապենդիցդ պայտի, սամալյոտի մեջ մեռնես, չի կառելի, ես հայ, դու հայ, մենք ախպեռ, արխային...

* * *

Ուշքի եկա: Միալար կնոջս էի ուզում: Չգիտեի ինչ էր եկել գլխիս: Լեզու չէի հասկանում: Մի հսկա ջրաղացի քարի ծանրություն էր ընկել վրաս, չարժվել չէի կարողանում, անընդմեջ ճչում, բղավում էի՝ կնոջս կանչեք, կնոջս կանչեք: Թե ինչքան տևեց այդ մղձավանջը չիմացա, որովհետև կնոջս տեսնելուն պես աչքերս փակվեցին:

Չորս օր էր հիվանդանոցում էի: Հաջորդող օրվա համար թոխքի տոմս ունեինք: Դուրս չէին գրում: Կույր աղիքի վիրահատման համար տաս-տասնհինգ օր պահում էին, իսկ մենք պիտի թոչեինք: Մեզ՝ նորապսակներին սպասում էին: Ջանգելու համար պիտի գնայինք կենտրոնական նամակատուն, հերթի կանգնեինք...

Մոսկվաբնակ մեր ընկերներից մեկին գտել էինք, այդ օրը հասավ օգնություն: Լեզուներս բացվեց, ամեն ինչ անգամ փող առաջարկեցինք... Ապարդյուն:

Օրվա երկրորդ կեսին հայտնվեց հայ բժիշկը: Ինչքան ես, հազար անգամ ավելին ընկերս, փոձեցինք համոզել դուրս գրել հիվանդանոցից, հաջողե-

ցինք միայն այն ժամանակ, երբ ցույց տվեցինք օղանավի տոմսերը: Բժիշկը վիրակապս բացեց, կարերից մեկը քանդեց և զգուշացրեց, որ ինձ հանգիստ պահեմ, իսկ Հայաստան հասնելուն պես անմիջապես դիմեմ բժշկի:

Խոստացա: Դուրս գրեցին: Երևի թե ցմահ բանտարկության դատապարտված մարդիկ ներում ստանալուց այդպես են ուրախանում...

Ես դուրս էի գրվել:

Տակսին մեզ տարավ ուղիղ հյուրանոց: Որոշեցինք երեկոյան ինչ-որ տեղ միասին ընթրել:

Ռեստորանը լեցուն էր: Տասնմեկն անց էր, օղին չարաչահել էի, կնոջս առաջարկեցի մեղրամսյան մեր տանգոն պարել: Կիսակոր, մի ձեռքս վերքիս, մյուսը՝ կնոջս մեջքին, դանդաղ շարժվում էի, ոտքիս սառը բան ծորաց, իջավ մինչև ծունկս:

Արյուն էր:

Հաջորդ օրը, երեք ժամ թուիչքից հետո նորապսակներիս դիմավորեցին տասնյակ մարդիկ, նրանց միջից միայն մեկը նկատեց կոացած լինելս: Ծնկները ծալվեցին:

Մայրս էր...

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿԱՄ ՆԵՐԴՐՈՒՄ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԵՋ

Հատակին էինք պառկում: Մինչև ամուսնանալը մահճակալի ու զգեստապահարանի համար շատ էինք դռնեղուռ ընկել: Սովետական ապրանքը կնոջս դուր չէր գալիս: Ասենք ու՞մ էր դուր գալիս, որ...

Ասել էին սպասեք: Սպասում էինք: Լեհական ու չեխական ապրանք էին խոստացել: Բախտներս բերեց, շատ չսպասեցինք, ամուսնության չորրորդ ամսին, առաջին անգամ վայելեցինք մեր ննջասենյակը: Լեհական արտադրանքի կահույքը բոլորին դուր էր եկել: Վեց տարի վայելեցինք այդ «հրաչքը»:

Ամերիկա մեկնելու մեր դիմումը ընդունվելուն պես առաջինը վաճառվեց մեր ննջասենյակի կահույքը, մի պայմանով՝ մինչև մեր գնալը օգտագործեինք այն:

Դա առաջին մեծ ու խելացի բիզնեսն էր, ննջարանիս եռակի գին էի վճարել, չուրջ հազար վեց հարյուր ութլի, վեց տարի օգտագործելուց հետո վաճառեցի ավելի քան երկու հազար ութլով:

Սովետական չարտոնված բիզնես՝ սպեկուլացիա, ներդրում չարժական գույքի մեջ:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՎԵՐԸ ԿԱՍ ՊԵՏԱԿԱՆ ՁՈՒ

Համալսարանից տուն վերադառնալիս՝ փորձում էի հերթերը բաց չթողնել: Մայրս ավելի շատ վատառողջ հորս էր նայում, քույրերս քիչ էին լինում Երևանում...

Հերթ էր: Կանգնեցի: Ձու էին ստացել: Պետական գնով ձու: Սովորական հավի, սովորական, սպիտակուցով ու դեղնուցով սպիտակ ձու, որը կարող էիր եռացնել, կեղևից հանել, կամ պարզապես ձվածեղ անել, ոչ մի արտառոց բան...

Կանգնեցի: Ինչքան մոտենում էի վաճառասեղանին, այդքան շատանում էր աղմուկ-աղաղակն ու մարդկանց բողոքը, տրտունջը: Իմացա, որ յուրաքանչյուրին երկու տուփ ձու են տալիս, միայն թե հետն էլ պիտի պարտադիր հինգ կիլոգրամ կարտոֆիլ վերցնես:

Մարդիկ բողոքում էին, ոմանք կարտոֆիլի կարիք չէին զգում, նրանց միայն ձու էր պետք, ուրիշ ոչինչ: Վաճառողին դա չէր հետաքրքրում, նա ավելի շատ կարտոֆիլի պլան էր կատարում քան ձվի: Կարտոֆիլը պիտի վաճառվեր, դրա համար էլ նրան ձու էին տվել:

Հերթն իմն էր: Նայեցի խանութի դռան դեմը,

ասֆալտի վրա թափված ցեխաբլրին, որի մեջ հատ ու կենտ կարտոֆիլ հիշեցնող տձև գնդիկներ էին երևում:

- Երկու տուփ ձու եմ խնդրում,- դիմեցի վաճառողին:

Նա, տաշտ հիշեցնող պլաստմասից մի ինչ-որ աման կշեռքի մի կողմից վերցրեց ու բահով լցրեց ասֆալտին թափված ցեխը: Այն փաթաթեց ստվառաթղթով ու դիմեց ինձ.

- Սետկադ ո՞ր աս:

- Սետկա չունեմ:

- Բա, ո՞նց անեմ:

- Ի՞նչը:

- Կարտոլը:

- Ես կարտոլ չեմ ուզել, ձու եմ ուզել:

- Արա, իսկականից համը հանիք էլի,- ասաց վաճառողը, ցեխով լի լազանը դատարկեց ու շարունակեց,- ձու չկա, ձուն պրծավ, չկա, վերջ, արա ես սրանց հավեսը չունեմ, էս ի՞նչ մարդիկ են, արա, բա էս կարտոլը հետս տու՞ն եմ տանելու...

Հերթի մեջ կանգնածների բողբոջը տեղ չհասավ: Նրանք մնացին, սեփական ձվերով՝ ուրախ, որ գոնե պլան կատարելու համար իրենց չեն ամորձատել:

ՄԱԼՅՈՒՇ

Հերթ էր, այս անգամ մսի հերթ: Պետական միս էին ստացել: Միս էր պետք: Կանգնեցի: Հայտարարեցին, որ երկու կիլոգրամից ավելի չեն տալիս:

Հայրենական պատերազմի հաշմանդամների հերթը առանձին էր: Երեք հաշմանդամի և մեկ սովորական քաղաքացու էին սպասարկում: Հաշմանդամներին նաև երկու կիլոգրամից ավելի էին միս տալիս:

Մեր հերթը տեղից չէր շարժվում: Մեկ ժամի չափ կանգնել ենք, բայց առաջխաղացում չկա: Հանկարծ վաճառողը բղավեց. «Միսը վերջանում ա, տաս հոգուց ավելի մարդ թող չկանգնի: Իզուր մի սպասեք»:

Հերթի մեջ իրարանցում սկսվեց: Մի կին դուրս եկավ, մոտեցավ վաճառասեղանին, մատ թափ տալով վաճառողին ասաց.

- Ոչ մի ինվալիդ, այ, ընկեր, սրանք ինվալիդ չեն, ես եմ ինվալիդը, ես: Սրանց միս չտաս, ես սրանց լավի... Ո՞վ են սրանք: Գնացին, լավ արին, մեղալներով էլ վերադարձան, մինչև հիմա առանց հերթի ապրում են, ապրելն էլ հերթով կլինի՞: Իմ մարդը գնաց, չվերադարձավ, երեք որբ եմ պահել, ինվալիդը ես եմ, չէ որ էս սպեկուլյանտները, սրանք միս պետք չունեն, տանում ծախում կամ հարազատներին են տալիս, ես

սրանց լավի... Էս քարը գլխիդ կտամ, թե սրանց առանց հերթի միս ես տվել...

- Չի կարելի, այ ընկերուհի, անհարմար է, չէ՞...

- Դու մի խոսա, ես քո լավի: Այ, սվուլիչ, ի՞նչն ասանհարմար, երեսուն տարի աս, մարդ չունեմ, սրանք մի ոտով, մի ձեռով, իրանց կնանիքի ծոցից դուրս չեն գալիս, էրեխեքն էլ որը չեն մեծանում, իմ էրեխեքին միս աս պետք, փող չունեմ, չուկայում կրակի գինս աս, ի՞նչն ասամթ:

Միլիցիա էր մոտենում, մարդիկ նորից իրար անցան:

- Այ ընկերուհի, էս ի՞նչ լաչառություն ես դրել,- ասաց միլիցիան ու մոտեցավ բորբոքված կնոջը:

- Չմոտենաս, էս քարը գլխիդ կտամ,- ասաց կատաղած կինն ու կշռաքարը ձեռքն առավ:

- Այ, ընկերուհի, էս քանի՞ անգամ եմ քեզ...

Խոսքը չավարտած կշռաքարը դիպավ միլիցիայի գլխին: Արյունը լվաց նրա երեսը: Մսի փոխարեն ինձ հետ տարա այս տհաճ հուշը...

* * *

Հարազատներս փաթեթներով կտոր էին ուղարկել ու ես մեքենա էի գնել: Աներհայրս խնդրեց գնանք Լենինական միս բերելու:

Չմերժեցի:

Ես էլ էի ծխում, բայց նա սիգարետը սիգարետով էր կպցնում ու զրույցը կամ անցյալի հուշեր էին,

որոնք անընդմեջ կրկնվում էին, կամ էլ հայրենիքում կատարվող տհաճ երևույթներ: Երբեմն նյութը չսկսած ես էի շարունակում: «Շան տղա, դու որտեղից գիտես», - ասում ու շարունակում էր ասելիքը:

Արթիկ չհասած, հեռվում, ճանապարհի վրա կանգնած երկու աղջիկ նկատեցի:

- Վերցնե՞նք, հայրիկ:

- Հայի աղջիկներ են, վեկալ, լավություն կանես:

Վերցրեցի: Ռուս էին: Հայ տղաները Լենինականի տեքստիլից բերել, կշտացել ու հետո գցել էին ճանապարհին:

Աներհայրսս սկսեց պարսկերեն լեզվով զրուցել, նույնիսկ սիգարետ հյուրասիրեց: Չմերժեցին: Հարցրին՝ ի՞նչ լեզվով է խոսում, իմ իմացած ուսերենով ասացի՝ պարսկերեն ու աներհորս զգուշացրի, որ ավելի լավ է հայերեն խոսի, քչից-չատից կհասկանան... Բայց նա մինչև Լենինական հասնելը շարունակեց պարսկերենով բողոքել սովետական կարգերից:

Լենինականում ինչ որ շենքերի հասցե էին տվել: Գտանք ու սպասեցինք: Բնակելի շենքեր էին: Երեկոյան ժամը հինգը կամ վեցն էր: Ուրիշներ էլ կային, սպասում էին:

Սպանդանոցի կողմից մարդիկ էին մոտենում շենքերին:

- Վայ թե սրանք են, - ասաց աներհայրս:

- Ո՞վքեր են:

- Միս բերողները:

- Միսն ու՞ր ա,- զարմացած հարցրի ես:

- Այ բալամ, չես տանում լրիվ ուռած են:

Այդ մարդիկ, լուռ ու մունջ, յուրաքանչյուրը մի մուտք մտավ: Մենք հետևեցինք մեկին, մոտեցանք.

- Ի՞նչ միս ունես, ախպերացու,- հարցրեց աներ-հայրս:

- Մի քիչ ֆիլա, փափուկ միս ու մատ:

- Լրիվ տուր, ինչ ունես տուր,- ասաց աներհայրս ու գրպանից հանեց ցանցը: «Մսավաճառը» չապիկը ետ քաշեց, հատուկ կերպասով մեջքին փաթաթած մսերը հանեց ու միանգամից նիհարեց: Գրպանից էլ մի կշեռք հանեց, որքան միս ուներ՝ մատները, ֆիլեն ու փափուկ մսերն, առանձին-առանձին կշռեց ու ինչ-որ գումար պահանջեց:

Շենքի մուտքերը դատարկվում էին, թմրլիկները նիհարում, իսկ գնորդները բեռնավորվում էին տարբեր տեսակի ու չափերի մսերով:

ՏՂԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿ

Ֆրանսիայից հյուրեր ունեինք, նրանց պատիվ տալու համար հրավիրեցինք «Արմենիա» հյուրանոց: Ընթրեցինք, ոտմանտիկ երաժշտություն էր, ընկերոջս

Փրանսիածին հայ կնոջը հրավիրեցի պարելու, ընկերս էլ հրավիրեց իմ կնոջը: Մեղձ երաժշտություն տակ պարեցինք ու նորից գրավեցինք մեր տեղերը: Շատ չանցած մատուցողը մեր սեղանին մի կոնյակ դրեց ու ցույց տվեց երկու սեղան այն կողմ նստած մի խումբ տղաների: Հեռվից՝ հեռու գլխի շարժումով ու ժպիտներով շնորհակալություն հայտնեցինք:

- Ճանաչում ես,- հարցրեց ընկերս:

- Ձե՛: Մարդ են էլի:

- Վեր կաց, գնանք, սրանք փորձանք են:

- Նստիր, ի՞նչ փորձանք, երևի ծանոթ դուրս գան, թե չէ...

- Սրանց կոնյակը մեզ հարամ կլինի, վեր կացեք,- պնդեց հյուրս, իսկ ես համառեցի:

Հինգ-տաս ըոպե չանցած նրանցից մեկը մոտեցավ մեզ ու թույլտվություն ուզեց պարելու ընկերոջս կնոջ հետ: Ընկերս, ներողամտություն խնդրելով մերժեց, բայց ըստ երևույթին դիմացինը նրան չհասկացավ, կամ չուզեց հասկանալ, բռնեց կնոջ թևից, կինը թևը քաշեց, ամուսինը ոտքի ելավ, կինը նույնպես կանգնեց.

- Տեղդ դարձիր, թե ոչ... ու ֆրանսերենով ինչ-որ խոսքեր ավելացրեց: Ես ու կինս մեր հերթին ոտքի ելանք: Մատուցողը մոտեցավ, ամեն ինչ խաղաղվեց, բայց հեռացողը քթի տակ մրթմոթաց. «Արա, բողի եղածն ինչ ա որ... ես դրա լավի...»:

Ամեն ինչին ըմբռնումով մոտեցանք, կամ պարզապես չուզեցինք թաշխալա սարքել, մարդ են, գյուղացի, անկիրթ, ժամանակի օլիգարխիա, «լավ» տղերք...

Հաջորդ օրը համալսարանում.

Համադասարանցիներով հավաքված զրուցում էինք, ասացի, որ երեկ գիշեր «Արմենիայում» էինք...

- Ո՞վքեր էիք, վրա բերեց ընկերներից մեկը:

- Ես էի, կինս...

- Կի՞նդ,- խոսքս կտրեց նա:

- Հա',- ասացի ես:

- Արա, ռեստորան բողին են տանում...

Ոտքը չավարտած հիշեցի Չարենցի ուղղիչ տան լազգի Բենժամինին. «... կնիկն հի՞նչ ա՛՝ կնկա խամար բռնեն՝ քալեն Ուղղիչ Տուն: Աշխարք հենքան կնիկ կա... Շնի՛ց շար» ու բռունցքս իջավ ուղիղ դնչին:

ՄԵԿ ՕՐՈՒՄ ՀԻՆԳ ՏԱՐԿԱ ՊՐՈՖՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼ

Համալսարանը ավարտել էի: Օրենք էր, մինչև աշխատանքի անցնելը չրջանավարտներին որոշակի գումար էին տալիս: Հարյուր հիսուն ռուբլու սահմաններում: Բուլոբի հետ ես էլ գնացի ստանալու ինձ

Հասանելիքը:

Հերթս Հասավ.

- Անուն, ազգանուն,- Հարցրեց լուսամուտի մյուս կողմում նստած կինն ու առանց պատասխան ստանալու գլուխը շրջեց ու կանչեց,- աղջի, Մարուս, կոֆեն դրի՞ր:

- Խորեն Քեչիչյան:

- Հարցրի՛ անուն, ազգանուն:

- Ասացի, Խորեն Քեչիչյան:

- Սպասիր,- ասաց ու գնաց:

Սպասեցի:

Վերադարձավ:

- Ասիր Խորեն ինչա՞ն:

- Քեչիչյան:

Սկսեց ինչ-որ թղթեր քրքրել, մի քանի թղթապանակ բացեց, ստուգումը երկարեց: Նորից գնաց, սուրճի բաժակը ձեռքին վերադարձավ:

- Աղջի, Մարուս, էս լեղի ա, չաքար չկա՞, ինչ ա: Ասիր Խորե՞ն,- նորից դիմեց ինձ:

- Այո:

- Չկաս, անունդ չկա:

- Ինչու՞:

- Ես չատ գիտեմ:

- Բա ո՞վ գիտի:

- Որ անունդ չկա, ես ի՞նչ անեմ: Գնա բողոքիր:

- Ո՞ւմ:

- Հորս, ու՞մ, պրոֆմիության նախագահին:
- Ո՞վ է պրոֆմիության նախագահը:
- Այ տղա, համալսարանը ավարտել ես, պրոֆմիության նախագահին չգիտե՞ս:
- Արա էս յան արի, ես կստանամ, միասին կգնանք էլի, ի՞նչ ես յազվա կպել,- ասաց կողքիս կանգնած ընկերս ու ինձ ետ քաշեց:
- Նա ստացավ իր գումարն ու գնացինք:
- Բարև ձեզ,- ասացի պրոֆմիության նախագահին ու պատմեցի եղելությունը:
- Դու պրոֆմիության անդամ չե՞ս եղել,- զարմացած հարցրեց նա:
- Գաղափար անգամ չունեմ:
- Բա, էդ ո՞նց ես ավարտել, այ տղա:
- Հիմա ո՞վ է քեզ փող տվողը, ո՞նց տանք...
- Եսի՞մ:
- Դու կոմերիտական էլ չե՞ս եղել:
- Ոչ:
- Էդ արդեն չեղավ, հարցը շատ է բարդանում, ո՞նց ես պլստացել, դա ուսանողի համար պարտադիր է:
- Ոչ մեկը ինձ բան չի ասել, ես էլ գաղափար չունեի:
- Հայրենադա՞րձ ես:
- Այո:
- Դե, էդ ասա էլի, թե չէ... Արի ետին թվով մի պրոֆմիության տոմս գրեմ, գնա ստացիր, լավ տղա ես երևում, միայն թե հինգ տարվա անդամավճար

պիտի մոծես:

- **Դա ինչքա՞ն է:**

Ինչ-որ գումար ասաց:

- **Չունեմ:**

- **Կստանաս, կունենաս, կբերես: Դիպլոմդ տուր:**

- **Դիպլոմս տվի, ստացա պրոֆմիության անդամատոմսս, կրկին վերադարձա, հայտնվեցի նույն լուսամուտի մոտ, ցույց տվեցի տոմսս, ստացա հասանելիքս ու նորեն վերադարձա նույն մարդու մոտ, շնորհակալությամբ վճարեցի առաջարկված գումարն ու ութսուն ութ ուրբի կանխիկ գումարով հեռացա համալսարանից: Միայն թե այդ մարդը ինձանից գանձեց երեք անգամ ավելին, քան նշված էր գրքույկի մեջ:**

Կարևորն այն էր, որ մի քանի ըոպեով դարձա հինգ տարվա ստաժ ունեցող պրոֆմիության անդամ:

ՏՈՒՐԻՍՏԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Բարեկամիս առաջարկով ու խորհրդով ընտանիքներով մեկնեցինք Սև ծով հանգստանալու: Գնացքով ճամփորդելը մեծ հաճույք էր: Բան ու գործ չունեինք, օրերը որքան չատ էին ձգվում, այնքան չատ էինք խմում: Գազրայում իջանք, տաքսիով մեկնեցինք Պիցունդա: Հրաշալի բնությունն ու փողոցների

մաքրությունը, հատկապես ավտորուսների կանգառների յուրահատուկ ձևավորումը տպավորիչ էին և ուշադրություն էին գրավում: Ծովափնյա փոքրիկ այդ քաղաքում սկսեցինք սենյակ որոնել: Տները դռանը մոտենում, վարձով սենյակ էինք հարցնում: Հաջողեցինք: Երկու սենյակ գտանք, տեղավորվեցինք:

Պիցցունդայի պանսիոնատի մասին շատ էինք լսել: Նաև գիտեինք, որ այնտեղ մուտք գործելն ավելի դժվար է, քան Բեռլինի պարիսպը ճեղքելը: Հաջորդ օրը, երկու արկածախնդիր ընկերներ, նստեցինք տաքսի ու ուղևորվեցինք դեպի պանսիոնատ: Պանսիոնատը Ստայլինի, Խրուչչովի ու մյուս մեծամեծների հանգստյան վայրն էր եղել, հետո վերածվել էր տուրիստական բազայի:

Մոտեցանք մուտքին: Միլիցիա հիշեցնող հագուկապով պահակը մի քանի քայլ առաջ գալով, առանց բարևի վրա բերեց.

- Ձի կարելի:

- Նո ոռսկի,- պատասխանեց ընկերս:

- Դակումենտ, դակումենտ...

- Հանի, այ տղա, ցույց տուր,- պարսկերենով ասաց ընկերս ու գրպանից հանեց Պարսկաստանի իր վարորդական իրավունքը, իսկ ես, նախապես պատրաստած, հեծանիվ վարելու և Իրանի ուսանողական տոմս:

Պահակը ձեռքն առավ, պարսկերեն գրերից բան չհասկանալով, ապուչի պես նայեց մեզ ու փաստաթղթերը վերադարձնելով ասաց. պաժալստա:

Ներս մտանք: Ահ ու վախով չըջեցինք գեղեցիկ պլյաժները, տեսանք թենիսի, վոլեյբոլի, պինգ-պոնգի ու մյուս մարզաձևերի համար հատկացված հիանալի վայրեր ու հարմարանքներ: Մտանք բար, ռեստորան, որքան ծակուծուկ կար ստուգեցինք: Հիանալի հանգստյան վայր էր, ամեն ինչ արված էր տուրիստներին «էջացնելու» համար... անգամ ծովափն էր տարբեր, հովանոցներն էին ուրիշ... Մենք հաղորդակցվում էինք պարսկերեն և դիտավորյալ մի քիչ բարձր էինք խոսում:

Հանկարծ ընկերոջս աչքն ընկավ եռանիվ մի մոտոցիկլետի, որի վրա գարեջուր էր բարձած: Գիտեինք, որ այդտեղ նաև չեխական ընտիր գարեջուր են մատուցում: Եռանիվ մոտոցիկլետին կանգնեցրեց ընկրս ու ջարդված ուսերենով հասկացրեց, որ մի քանի արկղ գարեջուր է պետք ու տասը ուրբի դրեց բռան մեջ:

Կապույտ աչքերը փայլատակեցին: Մեզ հասկացրեց, որ դրսում սպասենք ու հարցրեց՝ քա՞նի հատ:
- Չիտիրի յաչիկ, սկուլկա: (Չորս արկղ, ինչքա՞ն)

Կապուտաչն ինչ-որ գումար ասաց, տվեցինք ու պանսիոնատից դուրս եկանք, հարյուր մետրի վրա սպասեցինք:

Ձուշացավ: Ձորս արկղ չեխական գարեջուրը դրեց մայթին ու ծկեց:

ՁԵՆԱԿԱՆ ԳԱՐԵՋՈՒՐ... այլևս մեզ ոչինչ չէր պակասում, մոռացած սովետական մեր քաղաքացիությունը, վայելում էինք տուրիստի կարգավիճակն ու ուսերենի չիմացություն, պարսկերեն լեզվի ու հեծանիվ վարելու իրավունքով ազատ ել ու մուտ էինք անում այդ գողտրիկ «դրախտավայրը», որը արգելված էր սովետական անաստված քաղաքացու համար:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Համալսարանի ավարտական տարին դիմել էի Մատենադարանի դիրեկտորի տեղակալ՝ Բաբկեն Ձուքասզյանին, օգնություն խնդրանքով, որևէ տեղ կրթությունն շարունակելու համար: Բարձրագույնով բավարարվել չէի ուզում, ուզում էի կիրառել իմացածս պարսկերեն լեզվիս իմացությունը: Նա խորհուրդ տվեց Մատենադարանում որևէ թեմայի վրա աշխատել, մինչև տեղ բացվի:

Թեման հետազայում առաջարկեց ինքը՝ «Պարսից գրականությունը հայ պարբերականներում»: Որոշվեց ուսումնասիրել հայ պարբերականների պատմությունն ու այնտեղ տեղ գտած պարսից գրականու-

Թյան նմուշները:

Ամեն օր, ժամեր շարունակ մատենադարանում նստած Հին պարբերականներ էի քրքրում: «Ազդարարը» դարձել էր ձեռքիս գիրքը: Բանն հասավ այնտեղ, որ պիտի ծանոթանայի այնպիսի պարբերականների, որոնք դաշնակցական էին, հակասովետական ու խիստ վտանգավոր սովետական քաղաքացու համար (այդ տարիներին դեռ «Արմենիկումի» գյուտը արված չէր): Եվ առավել շատ ինձ հետաքրքրում էր Իրանում լույս տեսնող սպիղով (էյդոլով) վարակված «Ալիք» օրաթերթը:

«Ձի կարելի», - ամենուր լինում էր պատասխանս: Ինձանից պահանջում էին երկու կուսակցականի երաշխավորագիր ու մի գիտնականի տրված բնութագիր: «Ալիք»-ով հասակ առած անձիս չէին վստահում հանդիպել վաղեմի «վիրուսիս»:

Աշխատությունս ավարտեցի՝ հիսուն տարի ընդգրկող հայ պարբերականի պատմության շրջանակներում: Չուքասոյանի խորհրդով աշխատությունս հրատարակելու համար այն հանձնեցի «Լրաբեր»-ին: Ամիսներ անց ասացին, որ հոգվածս կորել է: Նորից տվեցի: Նորից անցան ամիսներ, նորից այն «կորավ»... Տարօրինակ հոգված էր միշտ դարակից դուրս էր թռչում, թե ու՞ր էր գնում, այդպես էլ ժամանակի սովետական գիտությունն ու տեխնիկան չկարողացան պարզել...

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Քրոջս համալսարան ընդունվելու փորձերը ձախողեցրին:

Քույրս աշխատանք էր փնտրում: Փորձում էր աշխատանք գտնել այնպիսի բնագավառում, որպեսզի հետագայում օգտակար լինի իր նախասիրած մասնագիտություն մեջ հմտանալու համար: Բոլոր դռները փակ էին: Յուրաքանչյուր դուռ ուներ իր «բանալին», իսկ թե ում մոտ էր գտնվում այդ բանալին՝ գաղտնիք էր: Բանալին փող արժեր, այդ բանալու տերը այնքան էլ հեշտ կամ էժան չէր գնահատում այն:

Երկար ու ձիգ պրպտումներից հետո կարողացանք գտնել «բանալին» կրող անձին, ապա նրա մտերիմ մարդկանց, այդ ընթացքում սրանցից էլ ընտրեցինք ամենահուսալիին ու վստահելիին, տեղի ունեցան «Բանակցություններ», «քննվեց» քրոջս լեզվի իմացությունն ու ընդհանուր գիտելիքները, եկան այն եզրակացություն, որ «մտածելու տեղիք է տալիս, ժամանակ է պետք»: Հասկանալի էր: Ծանոթի միջոցով ուղարկեցինք ինչ-որ գումար, որպեսզի «բանալի» կրողը շատ չմտածի: Այդպես էլ եղավ: Բանալիի կրողը չծանրաբեռնեց միտքը, չհոգնեցրեց իրեն: Պառկեց մուշ-մուշ քնեց, իսկ քույրս աշխատանքի

անցավ թաց ու խոնավ նկուղում գտնվող էջմիածնի Գավառագիտական Թանգարանում, որտեղ քայքայվող ցուցանմուշների հետ սկսվեց քայքայվել նաև ինքը...

Այդպես էլ Թանգարանի ղրեկտորը չիմացավ թե ինչպես և ում չնորհիվ Թանգարան մտավ քույրս:

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՍ

Համալսարանն ավարտել, աշխատանք էի փնտրում, ինչ դուռ ասես չէի թակում, ամեն միջոցի դիմում էի, չէր ստացվում: Երկար բողոքներից հետո մի օր ժողկրթբաժնից կանչեցին, կես դրույքով աշխատանք առաջարկեցին թիվ 2 դպրոցում:

Համաձայնվեցի:

Դպրոցում մի քանի ուսուցիչներ, ինչպես որ սպասվում էր, ջերմ չընդունեցին ինձ: Նրանց ժամերի հաշվին էին ինձ դասաժամ տրամադրել: Իրավունք ունեին:

Նախքան դասարան մտնելս, տեսուչը զգուշացրեց, որ դասարանը մի քիչ տարօրինակ է, պետք է դիմանամ, սովորող չեն, դպրոց են բերվում փողոցները չընկնելու համար, կավարտեն, բանակ կգնան, մարդ կդառանան: Սովորելու վրա էլ այնքան ուշադրություն պետք չէ դարձնել: Միևնույն է, արդյունքը

մեծ չի լինի:

Մտա դասարան: Սրտիս զարկերի ուրթմը խանգարվեց: Հուզված բարևեցի, աշակերտները չփոթմունքս զգացին: Առիթը չէին կարող բաց թողել: Դասարանս ավելի շատ շուկա էր հիշեցնում, ինչքան ասես, որ չէին չպրտում միմյանց համար: Անակնկալի էի սպասում...

- Բարև ձեզ,- ասացի ես, բայց արձագանք չեղավ: Բարև ձեզ,- կրկնեցի: Մի քանի հոգի արձագանքեցին բարևիս:

- Երեխաներ, ես ձեր հայոց լեզվի և գրականության ուսուցիչն եմ: Հույսով եմ, միասին կարող ենք աշխատել ու լավ արդյունքի հասնել: Անունս՝ Խորեն է, Քեչիչյան: Ապրում եմ դպրոցից ոչ շատ հեռու: Կարծում եմ դասերից հետո նաև լավ ընկերներ կլինենք:

Զգում էի լսող չկա, ինձ բանի տեղ դնող չկա: Զորս հոգանոց նստարանների վրա գույգերով էին նստած: Միմյանց հետ զրուցում, ծիծաղում, սեղանների վրայով քայլում էին... Ասես զբոսայգում լինեին:

Երաժշտության ձայն լսեցի: Դասարանի խորքից էր: Քայլեցի դեպի ձայնը, երաժշտությունը դադարեց: Վերադարձա՝ մեղեդին վերսկսվեց: Շփոթված նստեցի: Դասարանը տակնուվրա էր լինում, չենքը փլվում էր ճիշտ իմ գլխին:

- Երեխաներ,- փորձեցի շարունակել կիսատ

Թողած խոսքս, ձայնս խլացավ դասարանի ծիծաղի տակ:

Առաջին նստարանին նստած զույգը բավականին աշխույժ ու եռանդուն էր: Ծիծաղելիս անգամ ոտքերն էին խփում գետնին, տղան բռունցքներով սեղանին թմբուկ էր նվագում, իսկ դասարանի խորքից մերթ ընդ մերթ լսվում էր արդեն ծանոթ երաժշտությունը:

- Անունդ ի՞նչ է,- դիմեցի առաջին շարքում նստած աշխույժ տղային:

- Ի՞մ,- պատասխանեց ու հարցական նայեց դասարանին:

- Այո, քո:

- Իմը, չգիտեմ, ընկեր...

- Քեչիչյան:

- Իմը չգիտեմ, ընկեր Քեչիչյան, բայց այ նրանը՝ Ռուբիկ ա,- մատնացույց արեց մեկին ու ամբողջ դասարանը դարձավ քրքիջ:

- Դուրս արի:

- Ե՛ս, ընկեր Քեչիչյան, թե՞ Ռուբիկը:

Դասարանը պոռթկաց, բայց նաև ինչ-որ տեղ լարվածություն զգաց:

- Դու, հա՛, դու, դուրս արի:

- Խի՞, ի՞նչ ա էլե, որ...

- Դուրս արի, քեզ ասում եմ,- մոտեցա նրան:

- Լավ էլի, ընկեր Քեչիչյան, հավես չկա:

Բռնեցի օձիքից, փալասի պես բարձրացրի ու քարչ

տվի գրատախտակի մոտ: Դասարանում քար լուծ-
թյուն տիրեց:

- Անունդ ի՞նչ է:

- Ի՞մ, ընկեր Քեչիչյան:

Հարցին պատասխանեցի Փիզիկական Հարձա-
կումով, փորձեց խույս տալ, աքացիս ուղիղ դիպավ
հետույքին ու երեսով գնաց դեպի դուռը, մոտեցա,
դուռը բացեցի, երկրորդ հարվածով դուրս չպրտեցի
ու դուռը շրխկացրի:

Լսվող երաշտաթուփյունը մարեց, դասարանը
համբացավ: Մի քանի վայրկյան հետո իր անունը
մոռացած երիտասարդը դուռը վայրենաբար բացեց.

- Ընկեր Քեչիչյան, թե որ դանակը փորդ չկոխեմ,
բոզի տղա եմ, ես քո լավի...

* * *

Հաջորդ օրը իմացա, որ անանուն տղան սիրահար-
ված է իր կողքի աղջկան ու դպրոցի տուգներից է:

Արժանապատվության հարց էր: Ամբողջ դասա-
րանն էր լարվել:

Խուլ ու համր դասարանս սկսեց լսել ու երբեմն էլ
պատասխանել հարցերիս:

Պայմանավորվեցինք օրը տասնհինգ րոպե դաս անել,
ապա անցնել զրույցի, արժարձել հետաքրքիր թեմա-
ներ, խոստացա կազմակերպել երեկոներ, որտեղ
կարելի կլինեք երաժշտություն լսել, ուտել, խմել,

պարել... Երկար մազեր ու մորուք ունեի, դասարանի տղաներին ևս չարգելեցի հետևելու իմ օրինակին, պայմանով, որ առնվազն շաբաթը երկու-երեք անգամ լողանան:

Դասարանի հետ ընկերացանք:

Ամեն ինչ գնում էր իր հունով, բայց ես ամեն օր, մինչև դպրոց հասնելս, հաղար անգամ մեռնում ու հառնում էի: Յուրաքանչյուր վաղը կամ արագ քայլք ինձ այնպես էր թվում, որ հարձակվում են ինձ վրա: Ոչ մեկի հետ չկիսվեցի, ամեն օր սպասում էի ինչ-որ «արդարադատություն» կամ դպրոցի ղիրեկտորի կանչին: Գիտեի, որ դպրոցներում աշակերտների վրա ֆիզիկական ուժ գործածելն արգելված է ու խիստ պատիժ է սահմանված: Բայց ամեն ինչ կատարվել էր անկախ իմ կամքից:

Մեկ շաբաթ անց, անանուն տղայի ընկերներից մեկը մոտեցավ ու ինձ խնդրեց թույլ տալ նրան դասերին մասնակցել: Ներքին ուրախությունս զսպեցի ու թույլատրեցի:

Եկավ, ծանոթացանք: Անունն ասաց՝ Սաչիկ:

* * *

Երկու ամիս անց ղիրեկտորը կանչեց.

- Ընկեր Քեչիչյան, դասարանդ էդ ի՞նչ վիճակի ա: Երեխաները բոլորը հիպի են դառնում, երկար մազեր, վեջերներ, ինչ-որ տեսրեր են երևան եկել, սիրային...

- Իսկ մինչև այդ ի՞նչ էր, կամ կարծում եք էդ տես-
րերը չկայի՞ն:

- Համենայնդեպս, մեզ մոտ...

* * *

Դասարանը ձեռքիցս առան: Վերջին դասին
աչակերտներս տոնական էին հագնվել, փոքրիկ սե-
ղան էին բացել... Ինձ ճանապարհեցին առաջին
ժամին հնչած երաժշտությամբ ու արտասովախառն
աչքերով:

Այդ օրը միայն Սաչան ներկա չէր:

Թե ինչու, չգիտեմ ...

ԽԱՇՎՊԱՏԻԿ

Վեցերորդ դասարանում հիանալի աչակերտներ
ունեի: Սովորող ու պարտաճանաչ, համով հոտով
երեխաներ էին: Իհարկե, այնտեղ կային նաև միջակ
ու մի քանի ոչ բավարար սովորողներ, որոնց ծնող-
ներին հաճախ էի դպրոց կանչում: Ոմանց պարա-
զայում ջանքերս մնացին անարդյունք: Տարեվերջին
նրանց նիշը անբավարար էր, մի բան, որ, թույլ չէր
տալիս նրանց փոխադրվել բարձր դասարան:

Արդյունքի մասին իմանալով՝ երեխաների ծնող-
ները շտապեցին դպրոց, հանդիպումներ ունեցան

դիրեկտորի, դասղեկի և ինչու ոչ՝ ինձ հետ: Նրանց ուղածը մեծ բան չէր, 2-ը դարձնել 3, չխաղալ երեխաների ճակատագրի հետ: Իմ որոշումն անբեկանելի էր, ոչ դիրեկտորը, ոչ դասղեկը, ոչ ժողկրթբաժնից ուղարկված խնդրանքներն ու պահանջները չէին ազդում ինձ վրա:

Եղան նաև ոչ շատ խիստ սպառնալիքներ, որը այնքան էլ լուրջ չընդունեցի:

Ամառը մոտենում էր, խաչի սեզոնը ավարտվում, բայց դպրոցի դիրեկտորն ինձ անակնկալի բերեց. «Ընկեր Քեչիչյան, չաբաթ առավոտ հրավիրված ես խաչի, առավոտյան ժամը յոթին դպրոցի դեմը կսպասեմ»: Ասաց և առանց մերժում կամ համաձայնություն ստանալու, հեռացավ:

Առաջին անգամ էի նման հրավեր ստանում, չգիտեի որտեղ, ում տուն, ինչի համար, ինչ առիթով, բայց ուրախ էի ոչ թե խաչի, այլ երևույթի համար: Ինձ լավ զգացի, ես էլ որպես դպրոցի ընտանիքի լիիրավ անդամ պատիվ ունեի դիրեկտորիս կողմից հրավիրվելու ավանդական կերուխումի:

Եկավ չաբաթ օրը:

Բնակելի անծանոթ շենքի, անծանոթ մուտքը ինձ ստիպեց դիրեկտորիս դիմել.

- Էս ու՞մ տուն ենք գնում:

- Ի՞նչ նշանակություն ունի, իմ հյուրն ես և վերջ:

Ութ-տաս հոգի սեղանի շուրջ նստած՝ մեզ էին

սպասում: Տեղից կանգնեցին բավարար թվանշան չստացած աշակերտիս հայր ծնողն ու նրա կողքին տեղ գրաված միջահասակ մի տղամարդ: Մեզ հրավիրեցին սեղանի մոտ:

Ամեն ինչ պարզ էր:

Սեղանի շուրջ տղամարդիկ էին: Մի քանի կին միայն սպասարկում էին:

Մենդավայրումս, իհարկե, խաչ կերել էի, բայց ոչ այսպիսի ծիսական կարգով: Չոր լավաչ՝ փրթելու համար, փափուկ լավաչ՝ փրթած խաչը ծածկելու համար, սառը օղի, սխտոր, սպիտակ բոդկ, թարմ կանաչի, կաղամբի թթու, ջերմուկ և իհարկե՝ կենացներ, շարունակ կենացներ...

Ես, ընդհանրապես, հատկապես առավոտյան, քիչ եմ ուտում, սովոր չէի: Խորը ափսես լցվեց խաչով: Թեթև փրթեցի ու առանց սխտորի սկսեցի գդալով ուտել: Առաջին դիտողությունս ստացա կողքիս նստած դիրեկտորիցս.

- Ընկեր Քեչիչյան, բա եղա՞վ: Խաչը գդալով են ուտում:

- Սովոր չեմ, չփոթվեցի ես, այնինչ, մենք ևս պարսկական արգուշտը ձեռքով էինք ուտում, պատասխանս այնքան էլ չարդարացրեց ինձ:

- Նորեկ ա, ջահել ա, մեր աղաթներին սովոր չի, - ասաց տանտերն ու շարունակեց, - դե, բարիլուսներդ բարի լինի, ընկեր Քեչիչյան, մեր տուն բարով ես եկել,

Հալալ աքեզ, Հայրենիք ես եկել, սովորել ես ու հիմի էլ մեր երեխաներին ես սովորեցնում, լավ, թե՛ վատ, երեխա են, էսօր չէ, գուցե վաղը, կսովորեն, կյանք կմտնեն, էնպես որ դու էլ էդքան խիստ մի եղիր, երևի մեր երկրին շատ ծանոթ չես, դու էլ կհարմարվես, առջևում դեռ անելիքներ կան, մարդ ենք, մենք էլ շրջապատ ունենք, աշխարհը շատ է փոքրացել, ամեն քայլափոխի մարդիկ հանդիպում են միմյանց, հաց են կտրում, ձեռքը՝ ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես, բա մենք որ նույն քաղաքից ենք՝ իրար չհասկանանք, ցավդ տանեմ, էն հեռավոր քաղաքաներում ապրողներից ի՞նչ սպասենք: Քո կենացը, ցավդ տանեմ, բարիլույսդ բարի լինի, ախպեր ջան:

Հետո «ելույթ» ունեցավ դիրեկտորս, ապա մեկիկ-մեկիկ խոսք առան ներկաները, յուրաքանչյուրն իր հերթին մեծ գովեստով խոսեց իմ «տաղանդի», «գիտելիքների», «մարդկային արժանիքների»... մասին:

Այդ օրն, ինձ մեծարելու համար կազմակերպված ամենահրաշալի ու անթերի միջոցառումն էր, որը երբեք չէր կրկնվելու: Չեմ հիշում օրն ինչպիսի ավարտ ունեցավ: Ինձ տուն էին բերել, սովորականից շատ ավելի երկար եմ քնել: Մինչև օրս էլ, թվում է, թե երազում եմ անբավարար զնահատականը դարձրել բավարար:

Ես էլ եմ այսօր խաչը ուտում առավոտյան լուսա-

բացին, սեղանի շուրջ հավաքված ընկերներով ու բարեկամներով: Ես էլ եմ այսօր խաչը բրդում չոր հացով, փափուկ լավաչով ծածկում, օղիով բարի լույսը բարի անում, ինչ վատ է որ... Նույնիսկ ամերիկացի հարևաններիս ու ծանոթներիս եմ հրավիրում ու հպարտանում խաչ ուտելու մեր ավանդական ծեսով...

ՋԱԿԵՏ

«Ոչ մի բայց...»:

Հայրենի հողին ոտք դնելուն պես հոգիս հպարտությամբ լցվեց: Հողը ոտքիս տակ ամրացավ և սփյուռքածին երիտասարդիս ձգեց, խառնեց իր հետ՝ կապեց արմատներին, նոր շունչ ու նոր արյուն ներարկեց: Ես ինձ իրավունք վեհապահեցի ջարդելու պանդխտությանս ցուպը: Ուղիղ կեցվածք ընդունեցի, գլուխս՝ վեր, բաց ճակատով տեսա լուսավոր հորիզոնը...

«Ես եմ այս հողի տերը,- ասացի ինքս ինձ,- ես իմ տանն եմ, այս հողը մշակել է իմ պապը, այս ծառը տնկել է իմ պապը, այս պատը շարել է իմ պապը, այս վանքում աղոթել է իմ պապը: Այս սարը վկա է, որ այս ծառը տնկել է պապս, այս պատը շարել է պապս և

պապս աղոթել է այս վանքում... Պապս չկա, սարը կա: Սարը վկա է, իսկ ես ժառանգն եմ այս հողի, ծառի, վանքի ու վկա՝ Արարատի»:

Այսպես ապրեցի, ավարտեցի համալսարանն ու ոտք դրեցի կյանքի նոր շեմին...

* * *

Փոխադրվել էի նոր դպրոց:

- Մինչև արտաքինը չփոխես, թույլ չեմ տա դասարան մտնես, ձե՛զ պահեք էդ բարքերը, մեզ մոտ դրանք չի կարելի,- առանց դեմքիս նայելու ասաց դպրոցի ղերեկտորն ու ցուցամատով ցույց տվեց դուռը:

- Բայց...

- Ոչ մի բայց...

* * *

Շրջսովետի երկրորդ քարտուղարի սպասասրահում նստած էի, ոտքի կանգնեցի, փողկապս շտկեցի, ձեռքս թեթևակի հպեցի մազերիս, զզուշությամբ թակեցի քարտուղարի դուռը, պատասխան չստանալով հանդերձ ներս մտա:

- Կարելի՞ է:

- Մտե՛ք:

- Բարև ձեզ:

- Նստե՛ք:

Նստեցի:

- Ինձ կանչել եք, ընկեր Ջարգարյան,- Լուսթյունը խղեցի ես:

- Նստի՛ր,- կտրուկ ընդհատեց քարտուղարն ու հայացքը ձեռքի թերթիկին՝ հարցրեց,- Ի՞նչ է պատահել:

- Ոչինչ,- պատասխանեցի ես:

- Ինչպե՞ս, թե՛ ոչինչ,- ձայնին խորհրդավորություն տալով հարցրեց քարտուղարը:

- Չի ընդունում:

- Ի՞նչը, այդ վիճա՞կը: Չե՞ք կարծում, որ անհարմար է, վերջապես ե՞րբ պիտի հասկանաք, թե որտեղ եք ապրում, չի կարելի չէ...

- Ի՞նչը չի կարելի, ի՞նչն է անհարմար:

- Ի՞նչ ես միամիտ ձևանում, չի-կա-րե-լի, երեխաները ի՞նչ պիտի սովորեն, մեր մատաղ սերունդին մի՛ փչացրեք...

- Չեմ հասկանում, ընկեր Ջա...

- Չեմ հասկանում, չեմ հասկանում, ի՞նչ կա չհասկանալու, հիպի ես դարձել և ուզում ես սերունդ դաստիարակել... Քանի՞ տարեկան ես, որ մորուքի ես կարոտել: Մեզ մոտ ընդունված չէ, չի կարելի, հասկանու՞մ ես, չի կարելի, մեզ մոտ արգելված է, հասկանու՞մ ես... Կզնաս մորուքդ կսափրես, մարդու տեսք կստանաս, հետո...

Քարտուղարը կատաղած էր, իսկ ես՝ հայացքս

պատին կախված Մարքսի, Էնգելսի և Լենինի լուսա-
նկարներին՝ ընդհատեցի նրան.

- Ընկեր Ջարգարյան...

- Ի՞նչ ա, ուզում ես ասել...

- Ոչ, ընկեր...

- Հա՞, մտավորակա՞ն ես ձևանում

- Ոչ, պարզապես...

- Պարզապես, մարզապես չեմ հասկանում, պար-
զապես էդ ձեր արտասահմանյան վարքն ու բարքը
մեզ մոտ չի անցնում, գնա և խելքդ գլուխդ հավաքիր:

- Իմ խելքը գլուխս է, ընկեր Ջարգարյան:

- Դե, որ էդպես է, գնա էդ խելքովդ էլ ապրիր:

- Բայց չէ որ, նրանք էլ...:

- Հլա, մի սրան տես, դու՛րս, այստեղից:

Դուրս եկա, իսկ քարտուղարը ինքը իրեն փնթփն-
թաց. «Բեր, բնակարան տուր, թոչակ տուր, ձրի
բժշկություն, կրթություն, հետո էլ»...

«Անհարմար է, չէ՞, այ ընկեր Ինչու՞ ես ընկեր
Ջարգարյանին անհանգստացնում», - սպասասրա-
հում միջամտեց մի պաշտոնյա ու ձեռքի հայելին
սեղանին թաքցնելով՝ մտավ քարտուղարի մոտ: Ես
վերցրեցի հայելին, ուշադիր տնտղեցի դեմքս, փոքրիկ
մորուքս, ծիծաղ առաջացրեց, վազքով իջա աստի-
ճաններից:

Փողոցում ծիծաղս փոխարինվեց արհամարհանքի,
թեթև ժպտացի:

* * *

Վեց ամիս էր, ինչ աշխատանք էի փնտրում ու երբեմն-երբեմն կրկնում համոզում դարձած իմ խոսքերը. «Ես իմ հողի տերն եմ, ես իմ տանն եմ, այս հողը մշակել է իմ պապը, այս հողը շաղախված է իմ պապի քրտինքով, այս ծառը տնկել է իմ պապը, այս ծառի տակ թաղվել է իմ պապը, այս պատը շարել է իմ պապը, այս հողը շաղվել է պապիս արյունով, այս վանքում աղոթել ու երգել է իմ պապը, ես լսում եմ պապիս ձայնը, սարը վկա է, պապս չկա, վկա է այս սարը՝ ես ժառանգն եմ այս հողի, ծառի վանքի ու վկա՝ Արարատի»:

Ինձ կանչեցին:

Դուռը թակեցի: Զայն չկար, պատասխան չեղավ: Երևի չլսեցին: Դուռը թակելու դուռ չէր, կաշվե բարձիկով ծածկված էր այնպես, որ ներսի ձայնը չլսվի, բնականաբար, ներսում դրսի աղմուկը ևս չէր լսվում: Դուռը բացեցի, ներս մտա, բարևեցի:

- Նստի՛ր:

- Ինձ կանչե՞լ եք...

- Ասացի՛ նստի՛ր:

Նստեցի: Այս անգամ փափուկ բազմոցը ավելի հարմար թվաց, ավելի աչալուրջ էի դարձել: Քարտուղարը դարակից հանեց մի թղթապանակ ու դիմեց

ինձ:

- Դիմումդ ինձ մոտ է, հարցը քննարկել ենք, չըջանային կուլտուրայի բաժնի վարիչի լավ բնութագիրը հիմք ընդունելով, որոշեցինք քեզ ընդառաջել: Չնայած կուլտուրայի տան դիրեկտորի համար ես դիմել, բայց մենք նպատակահարմար գտանք քեզ նշանակել նույն կուլտուրայի տան գեղարվեստական բաժնի վարիչ: Դիրեկտոր նշանակել ենք ընկեր Բեգլարյանին: Կարծում եմ, կարող եք միասին աշխատել, գիտեմ, որ ընկերներ եք, ճանաչում եք իրար...

- Այո, բայց նա դեռ չի ավարտել, հեռակայում է, իսկ դուք բարձրագույն կրթությունը էիք նախատեսել այդ տեղը:

- Նույն համառոն ես երևում, քո ի՞նչ գործն է, քո ինչն գործն է, թե ինչ էինք նախատեսել, գնա աշխատիր և չմոռանաս, որտեղ ես ապրում: Կուլտուրայի տունը հասարակական վայր է, ինքնագլուխ բաներ չանես, կամայական արարքների չդիմես, յուրաքանչյուր քայլիդ համար պատասխանատու ես, հարցըրու, թույլտվություն վերցրու՝ նոր... Պարսկաստանի գաղափարներդ ու հայացքներդ էլ քեզ պահիր, մոռացիր անցյալդ, խեղդ գլուխդ հավաքիր ու աշխատիր...

«Ընդունեցի», բայց ոչ անցյալս մոռանալու պայմանով:

«Մշակույթի» տուն կոչվածը՝ հին շենք էր, նախասովետական շրջանի կառույց, ժամանակին Գևորգյան ճեմարանի համար ծառայել էր որպես հանրակացարան: Իսկ այժմ էջմիածին քաղաքային կուլտուրայի տունն է:

Ավերված շենքը իր ճոճվող աստիճաններով, պոկված մանրահատակներով, խոնավ ու մութ սրահով, ոչնչով չէր զարմացնում ինձ, տարօրինակը ինձ համար այն էր, որ պիտի հանդիպեի դիրեկտորին՝ Բեգլարյանին, որը քաղաքի գլխավոր ճարտարապետի որդին էր ու իմ կրտսեր ընկերներից մեկը:

Հանդիպումը տեղի ունեցավ: Ես նրան դիմեցի ընդունված կարգով՝ անվանը պաշտոնական «ընկերը» կցելով: Նա կարմրեց ու ականայից գրաված աթոռը զիջեց ինձ:

- Գիտե՞ս ինչ, ցավդ տանեմ, մենք ընկերներ ենք, վերադաս, ստորադաս չկա, դիրեկտոր-միրեկտոր չեմ հասկանում, կաշխատենք որպես ընկերներ:

Այդպես էլ եղավ: Մնացինք ընկերներ: Երևույթը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև երկուսս էլ միմյանց «արա»ով դիմեցինք: Մի օր էլ դիրեկտորս դիմեց ինձ. «Արա, մարդավարի հայերենն էլ չեմ խոսում, էս ժողովներին գնում, խայտառակ եմ լինում, հլա մի քանի անգամ դու գնա, տենանք ոնց ա ըլում»:

Համաձայնվեցի: Սրա համար ուրախ էին նաև դիրեկտոր նշանակողները:

Բայց այս զավեշտին փոխարինելու եկավ մի այլ զավեշտ:

- Արա, բա ո՞նց կլինի,- դիմեցի դիրեկտորին,- զուգարանի հարցը ո՞նց ենք լուծելու:

- Հեչ, ասել եմ, պիտի գան սարքեն,- վստահ պատասխանեց դիրեկտորն ու նարդու զառերը խաղացրերեց բռան մեջ:

- Ես քեզ հետ գրագ կգամ՝ երկու չիչ օղի, եթե երկու ամսվա ընթացքում զուգարանը կարգի բերիր՝ ես եմ կրվում, թե ոչ՝ դու:

- Արա, դու խոսմ ցնդած չե՞ս: Փորձերը դադարել են, վաղը-մյուս օրը կարգի կբերենք:

Հինգերորդ օրը ստիպված զուգարանի դուռը մեխեցինք:

Ծրջանային կուլտուրայի բաժնի վարիչը ամեն օր գալիս, նստում էր դիրեկտորի աթոռին, հեռախոսը վերցնում ու ելք էր փնտրում: Ըստ երևույթին, քաղաքում չկար զուգարանի խողովակների խցանում բացող ձեռնարկույթյուն: Հեռախոսային բազմաժանր խոսակցույթյուններն էին, երբեմն ժամեր էին տևում: Ամեն ինչի մասին խոսվում էր, բացի զուգարանից, որն արդեն կուլտուրայի տան համար կենսական խնդիր էր: Վարիչը շենքից դուրս էր գալիս այն ժամանակ, երբ զուգարանի պահանջ էր զգում. «Արա, երկու ջահել եք, մի զուգարանը ի՞նչ ա, որ չեք կարում կարգի բերել, ամբողջ օրս հստեղ կորավ»,-

դժգոհում էր վարիչն ու հեռանում:

Տնային կառավարչությունյան վերանորոգման բաժնի աշխատակիցները մի քանի անգամ եկել, մատը՝ մատին չէին խփել. «Ի՞նչ է, օրը չորս ուրլի փող են տալիս, պիտի գանք ձեր քաքը մաքրե՞նք», - ասել էին նրանք ու հեռացել:

Ելք չկար: Զուգարանը լցված էր քաքով: Կուլտուրայի տունը քաքն էր զբաղեցրել: Բաժնի վարիչը անճարակ էր, ես ու դիրեկտորս՝ նրա ստորադասներն առավել ևս: Հարցը քաղաքի ամենաբարդ ու հրատապ հարցերից մեկն էր: Ես, դիրեկտորը, բաժնի վարիչը, քաղսովետը, չրջսովետը, բոլորս-բոլորս բան ու գործ թողած ընկել էինք կուլտուրայի տան քաքը մաքրելու հետևից:

Կուլտուրայի տունը դադարել էր գործել: Միայն աշխատողներն էին մնացել տեղում: Քաղսովետի հատուկ նիստով որոշում կայացվեց, որպեսզի մեր հիմնարկությունը օգտվի նախկին Գևորգյան ճեմարանի (արդեն Կոմիտասի անվան թանգարան) զուգարանից:

«Ի՞նչ է, Կոմիտասի տունը ձեզ համար զուգարա՞ն է», - տրտնջում էին թանգարանի աշխատողներն ու երբեմն էլ ծաղրում. «Հողեմ ձեր նման ղեկավարների գլուխը: Աղջի, մի զուգարանի ծակն ինչ ա, որ չեն կարում բացեն, հետո էլ գլուխ են գովում, թե՛ տղամարդ ենք... Հլա մի էս ծակ բացողներիս նայեք...»:

Երիտասարդ ղեկավարներինս վերջին դիմումը հղված էր շրջսովետի առաջին քարտուղարին, այնտեղ հարցը այնպես էինք դրել, որ եթե մի քանի օր ևս այսպես չարունակվի՝ դիմելու ենք կուլտուրայի մինիստրություն:

Մի օր սովորական օրերի պես նստած օրաթերթերն էի նայում, երբ հնչեց հեռախոսի զանգը.

- Ո՞վ է խոսում:
- Մալխասյանն է:
- Ի՞նչ Մալխասյան:
- Քաղսովետի նախագահը:
- Վայ, ընկեր Մալխասյան, բարև ձեզ...
- Բարև, տուր դիրեկտորին:
- Տեղում չի, ընկեր Մալխասյան, գուգարանի հարցով դուրս եկավ:

- Ի՞նչ է, ի՞նչ եք ամբողջ աշխարհը խառնել, տեղում եղեք, հիմա գալիս եմ:

Անմիջապես զանգեցի դիրեկտորի տուն, նրան տեղյակ պահեցի, զանգահարեցի վարիչին, տեղում չէր, հավաքարար՝ ընկեր Մարգոյին մի քանի կարգադրություններ անելուց հետո կարգի բերեցի գրասենյակը:

Զանգը նորից հնչեց: Այս անգամ բաժնի վարիչն էր:

- Բարև ձեզ...
- Տերտերյանն է, ի՞նչ կա, թե որ գուգարանի հար-

ցով ա, զահլա չունեմ...

- Նախագահն ա գալիս, ընկեր Տերտերյան: Նույն հարցով է գալիս, զուգարանի հարցով:

- Գժվե՞լ ես, ինչ ա...

- Ինքը զանգ տվեց, ուր որ է կգա:

- Լավ գալիս եմ:

Երեք ժամ էր, բաժնի վարիչ, դիրեկտոր ու գեղ-մասվար սպասում էինք: Հանկարծ փայտյա ճոճվող աստիճաններից ձայներ լսվեցին: Մի քանի հոգու ուղեկցությամբ քաղսովետի նախագահը ներս մտավ: Բոլորս ոտքի ելանք, բաժնի վարիչը մոտեցավ, տեղը զիջեց նրան...

- Սաղ քաղաքն ու հանրապետությունը խառնել եք, ի՞նչ ա պատահել, մի զուգարանի ծակն ի՞նչ է, որ չեք կարում բացել:

- Ես ի՞նչ անեմ, ընկեր Մալխասյան, համապատասխան...

- Ի՞նչ պիտի անես, զուգարանը կարգի բեր, զուգարանը,- ձայնը բարձրացրեց նախագահն ու շարունակեց,- ու՞ր է, որտե՞ղ է, մի ցույց տուր տես-նեմ:

- Ի՞նչը:

- Զուգարանը, ինչը...

- Բայց...

- Բայց ի՞նչ, այ տղա:

- Դուռը մեխել ենք, ընկեր Մալխասյան:

- Բացե՛ք, բացե՛ք տեսնեմ ինչ է եղել:

- Բայց, ընկեր Մալխասյան,- անհամարձակ միջամրտեցի ես,- անհարմար է...

- Անհարմարը էս վիճակն ա, անճարակներ: Մենք էլ մեծ հույսեր էինք կապում ձեզ հետ. «Երիտասարդ են, նոր ուժ, թարմ միտք, ժամանակակից, կաշխատեն... Բացե՛ք, բացե՛ք»:

Բաժնի վարիչի կարգադրությունը ընկեր Մարգոն մի ուրազ բերեց, բոլոր ներկաները ըստ կարգի տեղավորվեցին նեղ միջանցքում ու տեղի ունեցավ խորհրդավոր գուգարանի բացումը: Դիրեկտորը ուրազը ձեռքին մոտեցավ դռանը: Անհամարձակ մեկ՝ նախագահին, մեկ դռանը նայելով, մեկը մյուսի հետևից դուրս քաշեց մեխերը: Բոլորը լուռ, քարացած սպասում էին, թվում էր թե ինչ-որ հրաշք է տեղի ունենալու: Դիրեկտորը ուրազը հանձնեց Մարգոյին և չհամարձակվելով բացել դուռը նախագահին հասկացրեց, որ մեխերը հանված են, ոչ մի արգելք չկա...

Նախագահը շտապ առաջ անցավ, բացեց դուռը և վճռական քայլը դեռ գետին չդրած, այլայլված դեմքով ետ քաշվեց...

Ոմանց համբերությունը հատած, նստել էին հատակին ու իրենց քաղաքակրթության դրոշմն էին դրել այնտեղ: Չնայած արտադրանքը չորացած էր, այնուամենայնիվ գարշահոտությունը, իչամեղուններն ու ճանճերը խուժեցին միջանցք:

Քիթը բռնած նախագահը փախուստ տվեց: Նրան հետևեցին ուղեկցողները:

Հաջորդ օրը բաժնի վարիչը կանչեց հավաքարար ընկեր Մարգոյին ու աշխատանքից ազատման հրաման տվեց: «Կադրերի կրճատում կա, կաշխատե՞մ վերականգնել, առայժմ գնա տուն», - հուսադրել էր վարիչը:

Ընկեր Մարգոն, ազնիվ ու բարի տատիկ էր, երեք որբի տեր: Հավաքարարութունը նրա երկրորդ աշխատատանքն էր, ազատման հրամանը նրա վրա չատ ծանր նստեց...

Մի օր էլ կատարվեց իրական հրաչքը: Հայտնվեցին օրական չորս ուուրլի աշխատավարձ ստացող մասնագետներ և բացվեց «կուլտուրայի տան դուռը»:

Աշխատավարձի օր էր: Իմ անվան դիմաց ստորագրելիս տեսա, որ ընկեր Մարգոյի անվան կողքին ևս ստորագրութուն կա... Ինչ-որ մեկը ստացել էր Մարգոյի հասանելիք յոթանասուն ոուրլի աշխատավարձը:

Բաժնի վարիչը ինձ կանչեց: Պաշտոնական մի քանի խոսքից հետո՝ անցավ մտերմիկ զրույցի, ապա ինձ մեկնեց հիսուն ոուրլի.

- Վերցրու, քսանհինգը կտաս Բորոյին: Ասացի՝ չէ՞, մինչև ամսվա վերջը կվերադարձնեմ... Հա, չճողանամ ասել. գանգ տվեք ընկեր Մարգոյին, թող

վերադառնա աշխատանքի, լավ կլին է, երեք որբ է պահում, հաստիքը մի կերպ վերականգնեցի:

«Իսկ մնացած քսան ուրլի՞ն»- ինքս հարցրեցի ինձ ու գնացի կուլտուրայի տուն, որպեսզի գրեմ աշխատանքային տարեկան զեկույցը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԵՐԲ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵՑԻ ՀԱՅՅՈՅԵԼ

Մանկության և պատանեկության տարիներս անց են կացել խաղաղ, չեմ հիշում ինչ-որ առիթով ծեծկոտուքի մասնակցած լինեմ: Կոպիտ ու վտանգավոր խաղերից խուսափել եմ: Միշտ դիտողի դերում եմ եղել: Հայհոյելը մեր ընտանիքում սրբապղծություն էր: Անգամ մտքում չեմ հայհոյել, ամաչել եմ, մինչև...

Աշխատում էի էջմիածնի կուլտուրայի տանը:

Ֆուտբոլի խաղերը դիտելիս դիրեկտորը ինձ ուղարկում էր տուն: «Արա, առանց քֆուրի չենք կարում խաղը նայել, գնա տուն էլի», - մի օր ծիծաղելով ասաց նա ու հասկացա, որ լուրջ է ասում: Իմ զսպվածությունը նրանց խանգարում էր, նրանք իրենց հանգիստ ու ազատ չէին զգում: Հետո զգացի, որ ուզում եմ նմանվել նրանց, հոյակապ տղերք էին,

հրաշալի մարդիկ, բայց հայհոյում էին: Փորձերս սկսվեց ուսերենով, այն պատճառով, որ բառի իմաստը խորովթյամբ չէի ընկալում: Օրինակ, մի օր երբ խաղի հաշվի վրա գրազ էինք եկել, «Արարատը» վերջին գույր խփելուն պես վրա բերի. «Բորոն պիղղեց» (Բորոն տնօրենս էր):

Ինձ համար այդ բառը «քաշվեց»-ի իմաստ ունէր, բայց տղերքի վրա հալ ու հարաքաթ չկար, ծիծաղից թուլացել էին, իսկ ես ապուշ կտրած նայում էի...

ՏՈՆԱԾԱՌ ԶԱՆ ՏՈՆԱԾԱՌ

Էջմիածնի կուլտուրայի տունը, այսինքը՝ մշակույթի տունը ստանձնել էր Ամանորին քաղաքային հրապարակում տոնաճառ դնելու պարտավորությունն ու երեխաների համար տոնական մթնոլորտ ստեղծելու երեկոյի կազմակերպումը, որտեղ Ձմեռ պապիկը պիտի բաժաներ մրգերով ու անուշեղեններով լեցուն փոքրիկ տոպրակներ: Ամբողջ պատասխանատվությունը կուլտուրայի տան գեղմասվարի, այսինքն ինձ վրա էր: Պայմանավորվածության համաձայն, պետք է ստանայի հինգ սնդուկ կոնֆետ, հինգ սնդուկ չորացած միրգ և այդքան էլ երեխաներին ուրախացնող զանազան խաղալիքներ: Իսկ հրապարակում տեղադրվող տոնաճառի զարդերի հաշվարկներն արվել էր կուլտուրայի շրջանային բաժնի վարիչի գրասենյակում և ինձ հավաս-

տիացրել էին, որ բավարար զարդեր կստանամ.....

Սոստացած օրից մի քիչ ուշացումով, յուրաքանչ-յուր ապրանքից, հինգի փոխարեն ստացա երկուսական սնդուկ չիր ու չամիչ, կոնֆետ ու...

Պարզվեց, որ երեխաների համար նախատեսված հինգական սնդուկից երեքականը ուղարկվել է շրջսովետի և քաղսովետի պատասխանատու աշխատողներին, իսկ թե ինչպե՞ս էր բաժանվել այդ ամենը և ջոջերն ինչպիսի բավականություն էին ստացել, երեխաների բաժին ուրախությունն իրենց հետ տուն տանելով, ինձ ևս չհետաքրքրեց, քանի որ հաջորդ օրն իսկ տեղի ունեցավ ավելի հետաքրքիր մի ֆոկոս: Հրապարակի հսկա տոնածառը զարդարելու համար, կուլտուրայի տուն բերվեց մի քանի արկղ խաղալիք: Ներկաների հետ հաշվարկեցինք խաղալիքների քանակն ու ծառի մեծությունը, եկանք այն եզրակացություն, որ այդ զարդերը կծածկեն տոնածառի միայն մեկ ութերորդ հատվածը:

Ես հրաժարվեցի իմ պարտավորություններից ու պատասխանատվություններից: Տոնական միջոցառման ու տոնածառի զարդարման բոլոր պարտավորություններս փոխանցեցի դիրեկտորին: Նրան ստիպեցին հանձն առնել, և որոշում կայացվեց տոնածառը զարդարել գիշերով ու հաջորդ օրը միլիցիա կանչել ու հայտնել կենտրոնական հրապարակի նոր տարվա տոնածառի զարդերը գողացված լինելու մասին:

ՄՏՈՒԳՈՒՄ

Կուլտուրայի տան վարիչը, հեռախոսով աչքալուսանքի պես մի բան ասաց դիրեկտորիս, վերջինս կես լուրջ, կես կատակ հաղորդեց, որ Մոսկվայից ինչ-որ աղջիկ է գալիս մեր կուլտուրայի տները ստուգելու համար: Ես չէի հասկանում, մեր ի՞նչը ստուգելու և ինչու՞ հատկապես Մոսկվայից: Բանի տեղ չգրեցի: Մի օր էլ միմյանց ականջներին փսփսացին, կուահեցի՝ ժամանել է:

Նորից ես բանի տեղ չգրեցի, նախ որ չգիտեի ի՞նչ պիտի ստուգի, ապա ուսերենս այնքան տկար էր, որ չէի կարող նրա հետ հաղորդակցվել: Բոլոր պարտականությունները ստանձնել էր դիրեկտորը, որն այդքան էլ վատ չէր զգում նման հանձնարարությունից:

Գեղաղեմ, երեսուն-երեսունհինգ տարեկան կին էր գործուղվածը: Դիրեկտորս նրան հրավիրել էր ճաշի, ես էլ էի հրավիրված, այնտեղ էր նաև կուլտուրայի շրջանային բաժնի վարիչը: Ավելի շատ խմեցինք, քան կերանք: Հարյուր տարվա ծանոթների պես բաժանվեցինք: Նրան հանձնեցինք տաքսու վարորդին, իսկ մենք, մի քանի շիշ ոգելից խմիչքով, հացով, պանիրով ու Արարատյան դաշտի անմահական լոլիկներով ուղղվեցինք դեպի կուլտուրայի տուն, մեր քեֆը

չարունակելու:

Այդ կնոջ հետ այլևս չհանդիպեցի: Մեկ շաբաթ հետո միայն, դիրեկտորս բարձր տրամադրությամբ ասաց.

- Գերազանց զեկույց է գրել էդ բողը:
- Բայց չեկավ, ոչինչ չստուգեց:
- Սաղ քաղաքը ք...ց, էլ խի պիտի գար, ով էլ լիներ գերազանց գնահատական կտար...

ՅՈՒՆԿՈՒԴՅԱՆ ՄԱՅԹ

Հիշեմ մի հետաքրքիր դեպք: Ինդիրա Գանդին ժամանել էր Հայաստան: Էջմիածնում, կաթողիկոսին հանդիպելուց հետո շրջանային կուլտուրայի տանը պիտի ներկա լիներ ինչ-որ միջոցառման: Քաղաքի ղեկավարության համար անակնկալ այս երևույթը իրարանցում առաջացրեց ամբողջ շրջկենտրոնում: Քաղաքապետարանն ու մշակույթի բաժանմունքը դարձել էր Չարլզ չափլինյան արագացված կինոնկար: Ոչ ոք իր անելիքը չէր իմանում, բոլորը ծխախոտները բերաններին միայն հրամայում էին, քաղաքը լցվել էր հրամանատարներով: Ամեն ինչ պիտի արվեր հինգ-վեց ժամվա ընթացքում:

Մայթից մինչև մշակույթի տան մուտքի երկու կողմերի ծաղկանոցները լցված էին չորացած գազոններով, այնտեղ կարելի էր գտնել նաև ոգելից խմիչքների ջարդված շշեր, թղթի պատառիկներ և նման բաներ...

Աշխատանքը սկսվել էր: Սիգարետը՝ սիգարետով վառող ղեկավարների արագ շարժումների հսկողությամբ ու տեղի-անտեղի բղավոցների տակ, տատանահինգ կին ծաղկանոցից արմատախիլ էին անում չորացած խոտերն ու աղբ էին հավաքում: Չոր ծաղկանոցը ջրելուց հետո թվաց թե աշխատանքը ավարտվել է, բայց՝ ոչ: Հոնդյունով մայթ բարձրացավ մի հին բեռնատար, թափքից թարմ ծաղիկներով ծաղկամանները իջեցրին ու կանանց հրամայեցին տնկել ծաղկանոցում: Հրամանը կատարված էր, ղեկավարները հաճույքով ու սիրալիրությամբ էին սիգարետներ փոխանցում միմյանց: Ծաղկանոցը նորից ջրվեց: Խայտաբղետ ծաղիկները գլուխները բարձր, մեծ հպարտությամբ սպասեցին արտասահմանցի պաշտոնյային:

Քիչ անց մայթ բարձրացան նաև երկու ասֆալտատար մեքենա ու իրենց թափքերի տաք ասֆալտը բեռնաթափեցին, քարուքանդ չքամուտքի առաջ: Մի քանի սևացած ու խանձված բանվորներ, նորից սիգարետները բերաններին, սկսեցին փոել ասֆալտն ու ծանրաքարչ գլանիկներով հարթեցնել այն:

Գործն ավարտված էր: Տաք ասֆալտը դեռ շնչում էր, նրա ջերմությունը շնչում էին նաև նորատունկ, թարմ ծաղիկները:

Երեք ժամ հետո ժամանեց բարձրաստիճան հնդկուհի հյուրը: Ծաղիկները ըստ պատշաճի գլուխ էին խոնարհել, իսկ տաք ասֆալտի վրա իր ոտնահետքերը, որպես հիշատակ դրոշմում էր «գերասանուհին»:

Հյուրը գնաց, ծաղիկները մնացին գլխիկոր, իսկ ասֆալտը մի քանի օր հետո սկսեց պոկվել հողից ու հետը տանել «գերասանուհու» ոտնահետքերը:

ԱՌԱՋԻՆ ՀՈՂՎԱԾՍ ԷԶՄԻԱԾՆԻ «ԿՈՍՈՒՆԻԶՄԻ ՈՒՂԻՈՎ» ՈՒՄ

Էջմիածնում լույս էր տեսնում «Կոմունիզմի ուղիով» չաբաթաթերթ, թե՛ երկչաբաթաթերթ, չեմ հիշում, որտեղ աշխատակցում էին չուրջ վեց բարձրագույնավարտ մասնագետներ: Հեղինակային հոդվածներն ու տարածաչրջանի ու քաղաքի որոշ արտադրամասերի պլանների կատարման ու գերակատարման մասին գովերգներ էին, տարբեր բնույթի ձեռնարկությունների հաջողությունների կամ, հազվադեպ, նաև բացթողումների անդրադարձներ ու

թխած, սարքած, անծանոթ անունների ստորագրու-
թյամբ նամակներ: Թերթի ութսուն տոկոսից ավելին
արտատպումներ էին հանրապետության տարբեր
օրաթերթերից ու ուսսալեզու «Պրավդայից» արված
թարգմանություններ:

Ինչու՞ ասացի թխած, սարքած, անծանոթ անուն-
ների ստորագրությամբ նամակներ:

Մի օր, թերթի խմբագրից, որի հետ ծանոթ էինք,
հեռախոսազանգ ստացա, շնորհավորեց հոգված-
նամակս ու հայտնեց, որ տասնվեց ութըլի ստանալիք
հոնորար ունեմ: Որքան հիշում էի, ես որևէ թերթի
հոգված չէի տվել, ոչ էլ նամակ էի գրել:

Ստացա համարը:

Մ, Աստված իմ: Խենթանալ կարելի էր: Իմ ստորա-
գրությամբ մի այնպիսի քծնանք, սուտ ու պոռնկա-
բարո նամակ էր գրված, որը վայել էր միայն կեղծ
կուսակցականի գրչին:

Դա, խմբագիրը բացատրեց նրանով, որ ամեն ինչ
արվել է իմ շահերի համար, ես հո՞ մինչև կյանքիս
վերջը չպիտի մնայի կուլտուրայի տանը: Առաջխա-
ղացում էր պետք, դա հեռանկարյին այն խաղերից էր,
որը պետք էր խաղացվեր ճիշտ ժամանակին:

«Բարեկամս» տեսնելով իմ վրդովմունքը, վրա
բերեց. «Արա, ես էլ քառասունվեց թվականի հայրե-
նադարձ եմ, մինչև էսպիսի բաներ չանես, չես ապրի,
հայրենադարձներին պաշտոն չեն տալիս, յոթը

սերունդ դեռ վստահելի չես, խելքդ գլուխդ հավաքիր»:

Հոնորարս յուրացվեց, թե ու՞մ կողմից չհասկացա, բայց ես իմ շրջապատում դիտվեցի անվստահելի, կասկածելի մարդ: Այս թակարդից ազատվելը շատ թանկ նստեց վրաս:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՇԽԱՐՀ

Ազատ ժամերս քամուն չտալու և ձանձրույթս փարատելու նպատակով, սկսեցի վերանայել ուսանողական տարիներիս կատարած իրանական ժամանակակից գրականությունից մի քանի նմուշների թարգմանությունները: Հատկապես մի քանիսի վրա երկար ու լուրջ աշխատեցի, յետոյ արդյունքի հասնելու նպատակով որոշեցի հանձնել տպագրություն:

Գրողների միություն չենք մտնելն իսկ պատիվ էր բերում մարդու: Այդ հաստատությունն էին մտել ու մտնում էին Չարենցը, Բակունցը, Մահարին, Իսահակյանը, Դեմիրճյանը, Զարյանը, Շիրազը, Սևակը, Սահյանն ու...

Ես համարձակվում եմ ներս մտնել միություն չենք ու ինչ որ գրություններ ներկայացնել այդ հաստատության համապատասխան՝ թարգմանչական բաժ-

նին:

Աչքերով դեմքեր եմ որսում, յուրաքանչյուր ծանոթ դեմք տիտան է թվում, ակնածանքով բարևում եմ, պատասխանում են, սխալ սենյակ եմ մտնում, ներողամտություններ դուրս եմ գալիս: Ինձ թվում է, թե ընդհանրապես սխալ չենք եմ մտել: Շփոթվում եմ, չենքից դուրս գալու որոշումս դեռ չարած աչքս ընկնում է մի դռան վրա փակցված գրություն: Գտա: Վճռակա-նորեն ներս մտա:

Երկու գրասեղան, երկու ծխող տղամարդ, գրամեքենա, թղթեր, սուրճի գավաթներ ու երկու հարցական հայացք.

- Բարև ձեզ:

Երկու պատասխան.

- Բարև:

- Ես թարգմանություններ եմ բերել, ուզում եմ տպագրել, չգիտեմ...

Նրանցից մեկը ձեռքը երկարեց: Թղթապանակս հանձնեցի նրան, բացեց, թերթիկները հաշվելու պես նայեց, փակեց:

- Խորեն Քեչիչյան, հա՞:

- Այո:

- Մեր Քեչիչյանի հետ կապ ունե՞ս:

- Չեմ կարծում:

- Գիտե՞ս ում նկատի ունեմ:

- Այո, արձակագիր...

- Պարսկերենից ես թարգմանել, հա՞:

- Այո:

- Հեչ տպագրվե՞լ ես:

- Ոչ:

- Լավ, թող մնա, կնայեմ, մեկ-երկու շաբաթից անցիր:

Երեք, թէ չորս շաբաթ հետո գնացի: Ի՞նչ պիտի ասեր, իսկապես իմ արածը ճիշտ էր: Ես արժանի՞ էի Գրական թերթում տպագրվելու, իմ արած թարգմանությունը ինչ-որ արժեք իրենից ներկայացնու՞մ էր... Այսպիսի մտորումներով մտա չենք ու սրտատրոփ, այս անգամ առանց աջ ու ձախ նայելու բարձրացա աստիճանները:

Դուռը թակեցի:

- Մտեք:

Մտա: Բարևեցի: Երեքն էին, երկու պատասխան ստացա:

- Աբիգ ջան, այ, սրա մասին էի ասում, մի լավ թարգմանություն է բերել...

Ականջներիս, հետո էլ աչքերիս չհավատացի, Աբիգ Ավագյանն էր, ժամանակի լավագույն արձակագիրներից մեկը, որը երիտասարդ տարիներին ընկերություն էր արել Սաղեղ Հեղայաթի...

- Հա, ասիր, Սաղեղ Չուբաք, լավ ընտրություն է արել..., - հիշեց նա ու խոսքը ուղղեց ինձ, - ե՞րբ եք

եկել:

- Վաթսուն իննին:

- Որտե՞ղ ես սովորել:

- Բանասիրականում:

- Լավ, գործդ վերջացրիր, կգաս ինձ մոտ, կսպասեմ...

Վերջին նախադասությունից զգացի, որ թեթև գինովցած է:

- Խորեն Քեչիչյան,- գործերս ձեռքին կրկնեց արդեն ինձ ծանոթն ու ավելացրեց,- էս հեղինակը ուսերենով տպագրվե՞լ է:

- Չգիտեմ:

- Կարո՞ղ ես պարզել:

- Կարծում եմ, կարող եմ, բայց ինքը ողջ չի...

- Դա նշանակություն չունի: Գտիր, եթե ուսերենով տպագրված չի, աշխատիր այնպիսի հեղինակների թարգմանել, որ տպագրված լինի:

- Ինչու՞:

- Հետո կխոսենք, հիմա ես շտապում եմ, պիտի դուրս գամ,- գործս տվեց ձեռքս ու դուրս եկավ:

Ես շտապեցի Աբիգ Ավագյանի մոտ:

Սենյակում մենակ էր: Նստելու առաջարկ արեց: Նստեցի: Դարակից մի բաժակ հանեց, կիսով չափ լցրեց հայկական կոնյակով ու կամաց սահեցրեց դեպի ինձ.

- Վերցրու, խմիր, հաջողություններիդ կենացը,

դժվար տպագրեն, բայց աշխատիր, շատ աշխատիր ու համառիր...

- Շնորհակալ եմ,- վերցրեցի բաժակն ու կում արի:

- Իրանից գրականություն ստանում ես:

- Քիչ, վերջերս մի վեպ եմ ստացել...

- Ի՞նչ, պարսիկները վեպ չունեն...

- Հա, գիտեմ, վիպագրությունը նրանց մոտ թույլ է, բայց սա հետաքրքիր գործ է:

- Բեր կարդամ, ինձ հետաքրքրում է, նրանց վեպը ինձ հետաքրքրում է: Արի մի խորհուրդ տամ, մանկական գործ թարգմանիր, մի լավ գործ կա՝ «Փոքրիկ սև ձկնիկը», կարծեմ մրցանակ է շահել, փորձիր թարգմանել, մի փոքրիկ գիրք կլինի, կարծում եմ ուսերեն էլ է թարգմանվել, Չեխոսլովակիայում ոսկե մեդալի է արժանացել, հրաշալի գործ է, հակակապիտալիստական, հակադաշնակցական, պրոկոմունիստական գործ է, թարգմանես, կտպեն, այ, էդպիսի բաներ թարգմանի, որ սիրեն ու հրատարակչի համար գլխացավանք չլինի: Կոնյակդ խմիր,- խոսքը կտրեց ու բաժակս թարմացրեց:

- Այդ գործին ծանոթ եմ, առանձին գրքույկով տպագրված ունեմ, գունազարդ, հրաշալի գիրք է:

- Դե, ավելի լավ, բայց ավելի լավ, եթե բաժակդ խմես, թե ոչ էս գրոց-բրոցների աշխարհի դուռը շատ լուրջ մարդկանց համար փակ է: Քեզ ազատ զգա, երբ կուզես արի, ինչ հարցով կուզես մոտեցիր, կաշ-

խատեմ օգնել...

Մինչև իմ հանդիպումը Աբիգի հետ, գիտեի, որ նա ժամանակին եղել է օղաչու, դեռ երիտասարդ հասակից սեր է ցուցաբերել գրականությունը, ստեղծագործել ու շփվել է աշխարհի տարբեր մակարդակի գրողների հետ... նաև գիտեի, որ նրա միակ փրկությունն ու լավագույն ընկերը ոգելիցն էր:

Պարսից վեպն ու նրա առաջարկած մանկական գործի թարգմանությունը ձեռքիս մտա Աբիգի սենյակը: Հարազատ բարեկամին ընդունելու պես խանդավառվեց ու ձեռքը մեկնեց: Զեռքս երկարելու փոխարեն նրան տվեցի հաստափոր մի վեպ: Վերցրեց, թեթև հայացք գցեց ու մի բաժակ կոնյակ առաջարկեց: Մերժեցի, անմիջապես փոշմանեցի, նա էլ չստիպեց:

- Նոր թարգմանությունս եմ բերել, քո առաջարկած գործի թարգմանությունը:

- Տուր տեսնեմ:

Զեռքն առավ, մի քանի տող կարդաց ու վերկացավ:

- Վեր կաց, գնանք:

Թարգմանությունս ու վեպը ձեռքն առավ ու դուրս ելանք միջանցք: Հակառակ շտապ դուրս գալուն, դանդաղ քայլեց, բոլորը բարևում էին, ես ինձ լավ էի զգում:

- Էդ ի՞նչ հաստափոր է ձեռքիդ, Աբիգ,- հարցրեց մեկը:

- Լենին, հազար ութհարյուր վաթսունհինգերորդ հատորը, թե որ ուզես, արի տար կարդա,- պատասխանեց անցորդին ու նայեց ինձ,- ժպտում ես հա՞...

Մարքս է, Մարքս,- առանց հարց ստանալու պատասխանեց մի ուրիշի ու մտանք ընկերոջ գրասենյակը.

- Էս գործին ես հավանություն եմ տալիս, կարդա ու մի բան արա, նոր է ասպարեզ մտնում տղան, մեր տղեն ա, կարգին մարդ ա, թե չէ...

- Նստեք, Աբիգ ջան, նստեք,- ասաց նա ու վերցրեց սեղանի վրա դրած Աբիգի թղթերն ու առանց հարցնելու երեք բաժակ դրեց սեղանին, դարակից հանեց հայկական կոնյակն ու լցրեց:

- Ես չնորհակալ եմ, չեմ խմում:

- Կխմես, լավ տղա ես, խմիր, որ գործերդ լավ գնա, թե չէ...

- Սրա ուսերենը կա՞,- թերթիկները ձեռքն առած հարցրեց ընկեր Ու-յանը:

- Այո,- եղավ կարճ պատասխանս:

- Հա, կա,- հաստատեց Աբիգը:

- Նայե՛մ, եթե հարմար եղավ, կգրես, որ թարգմանել ես ուսերենից:

- Ինչու՞:

Աբիգը խորհրդավոր քմծիծաղ տվեց:

- Մեզ բնագրից թարգմանել չեն թույլատրում, իհարկե, բացառություններ լինում են: Աբիգը գիտի, ինչի, չի՞ ասել:

- Աբիգը շատ բան գիտի...,- ընդհատեց Աբիգը:

- Բայց ես կարգին ոուսերեն չգիտեմ, ամոթ է:

- Լաւ, մի բան կանենք, բաժակդ վերցրու,- ասաց Աբիգը, վերցրեց բաժակը, մոտեցրեց շրթերին ու առանց խմելու դուրս եկավ:

Միջանցքում լուռ էր: Սենյակ չմտավ: Դուրս եկանք փողոց: Չէր խոսում: Քայլեցինք մինչև օպերա, վերդարձանք շենք:

- Բարձրացիր,- կիսահրամայական ասաց նա:

Բարձրացանք: Սենյակում բաժակները լցրեց, գլխի շարժումով հասկացրեց վերցնեմ: Վերցրեցի:

- Չես տպագրվի, արա, չես տպագրվի, Մարքս, թարգմանիր, Լենին ու Էնգելս թարգմանիր, ես սրանց... կենացդ...

Աբիգը «ճիշտ չէր», տասնհինգ տարի հետո տպագրվեցի Լոս Անջելեսում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսանողական տարիներիս որևէ ընտրությունների չեմ մասնակցել, ոչ էլ ինչ-որ մարմինների

կողմից պարտադրվում էր, իսկ ամբողջ դրույքով աշխատանքի անցնելուց հետո սկսվեց այն քարոզը, ինչ համարվում էր քաղաքացիական պարտք: Անհրաժեշտ էր մասնակցել սովետական «ազատ», «արդար» ընտրություններին: Չմասնակցելու պարագային քաղաքացին զրկվում էր տասներեքերորդ աշխատավարձից ու եթե պաշտոնյա էր՝ պաշտոնի բարձրացում չէր ստանում ու հայտնվում էր սև ցուցակում, որպես Սովետական Միության դավաճան, Սովետական Միության համար անվստահելի անձ:

Երկու թեկնածուի անուն կար ցուցակում՝ երկու տեղի համար, երկուսին էլ պարտադիր պիտի ձայն տայինք, թե այդ երկու թեկնածուները ում դեմ էին պայքարում չգիտեինք, գուցե և չկար, բայց մեր պարտքն էր մոտենալ քվեատուփին, ցույց տալ անձնագիրը, վերցնել երկու քվեաթերթիկ ու նետել քվեատուփի մեջ: Երևույթն այնքան զավեշտական, անհեթեթ ու ծիծաղելի էր, որ կարելի էր ցուցադրել աշխարհի ցանկացած կրկեսում: Իսկ ես չկարողացա մասնակցել կրկեսային այդ խաղին ու տարեվերջին ոչ միայն չստացա տասներեքերորդ աշխատավարձս, այլև արժանացա կասկածահարույց սպառնալիքների...

Իհարկե, ընտրություններից հետո ռազիո և հեռուստահաղորդումներ եղան ու տպագրվեցին հոդվածներ այն մասին, որ Սովետական Միության

քվեարկող քաղաքացիների իննիսուն տոկոսից ավելին, տոնական բարձր տրամադրություններ մասնակցել է քվեարկությունն ու ազատ կամքն է դրսևորել իր նախասիրած թեկնածուի նկատմամբ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամն էի ներկա գտնվում ժողովրդական դատարանում: Մեր ընկերներից մեկի դատն էր:

Հարցը այսպիսին էր:

1973 թվականի Հայաստանի ֆուտբոլի «Արարատ» թիմի խաղացողներից մեկը, զգալի չափով արծաթ, բարեկամիս միջնորդություններ վաճառել էր ոմն անվանի քանդակագործի: Գործարքը բացվել էր, կողմերը կանչվել էին ժողովրդական դատարան:

Դահլիճը ցուրտ էր: Բոլորը վերարկուներով էին: Դատավոր, դատախազ, դատապաշտպան, հայցվոր, մեղադրյալ, բոլորը, բացի միլիցիոններից, հասարակ քաղաքացիական հագուստներով էին:

Դատարանը բացված հայտարարվեց: Կամաց-կամաց սկսեցինք ջոկել, թէ որն է դատավորը, որը դատախազը, դատապաշտպաններն ու մեղադրյալները:

Քանդակագործ-արվեստագետի դատապաշտպանի մի կարճ ելույթից հետո դատախազը ոտքի կանգնեց ու շատ հանդիսավոր, չոր ու խիստ դիմեց՝ չգիտես, թէ ում.

«Արվեստագետ է ձևանում, քանդակագործ, մտավորական... Ի՞նչ մտավորական, սովետական մտավորականը իր կեցվածքով, կենսաձևով, հասարակության մեջ իր եսի դրսեորումով, քիչ թե չատ պիտի տարբերվի հասարակ ու չարքաչ այն բանվորից, որի քրտինքով է զարգացրել իր մտավոր կարողությունները: Ու՞ր է մտավորական, քանդակագործ ու նկարիչ ձևացող այս մեղադրյալի խիղճն ու ամոթը: Ի՞նչ է, նա չգիտի՞, որ մեր կարգերում առևտուրը, հատկապես, վալյուտայի առևտուրը չի թույլատրվում: Պաշտպանվում է, իբր Սովետական Հայաստանի հանրագիտարանում իր մասին գրություն կա, որ ինքը ազնիվ է, որ արժաթը գնել է լոկ ստեղծագործելու, արվեստի գործ ստեղծելու նպատակով: Մարդ է զարմացնում: Եթե մեր պետությունը քեզ արժանացրել է այն փառքին, որ տեղ գրավես մեր մեծ հանրագիտարանում, ինչպե՞ս ես հանդգնում սովետական քաղաքացու, այն էլ մտավորական ու արվեստագետ քաղաքացու պատիվը այսպես արատավորել: Սովետական կարգերն ամեն ինչ անում են, որպեսի իր գիտնական, արվեստագետ, գրող ու երաժիշտ մտավորական քաղաքացին ոչ թե

զբաղվի առևտրով, այլ իր գիտելիքներն ու շնորհքը ի նպաստ դնի բանվոր դասակարգի գիտությունն ու էսթետիկայի զարգացման գործին: Մինչդեռ մեղադրյալն օգտվելով առիթից, ժողովրդի հաշվին ձեռք բերած իր կրթությունն ու արվեստը օգտագործում է ի չարս հասարակության, առևտրին ու կապիտալիստական բարքեր սերմանում սոցիալիստական կարգեր հաստատած մեր աշխատավոր դասակարգի մոտ»:

Համարյա մի այսպիսի անհեթեթություն:

Հերթը հասավ բարեկամիս: Նա արհեստավոր տղա էր, կահույք էր վերանորոգում, սիրում էր փայտի վրա քանդակներ անել, հին իրերի նկատմամբ սեր ուներ: Դատախազը հաշվի առնելով նրա հայրենադարձ լինելու, գուցէ նաև երկրի օրենքներին անտեղյակ լինելուն, ավելի մեղմ վերաբերմունք ցուցաբերեց:

Երրորդը Ֆուտբոլիստն էր, իսկական սպեկուլյանտը, որը արծաթի տերն էր: Դատախազը խոսեց շատ կարճ, իսկ դատապաշտպանը շատ խորհրդավոր շեշտադրությամբ սկսեց մի հրաշալի ելույթ. « ինչպես գիտեք, 1973 թվին, մեր «Արարատ» ֆուտբոլի թիմը դարձավ Սովետական Միության չեմպիոնն ու միաժամանակ գավաթակիր: Դրա ամենափայլուն ներկայացուցիչներից մեկը այսօր նստած է մեղադրյալի աթոռին, մի հանգամանք, որը ոչ միայն

նրան, այլ մեզ ևս պատիվ չի բերում: Ինչպես կարող ենք հավատալ, որ ամբողջ Սովետական Միության տարածքում ու անգամ նրա սահմաններից դուրս ճանաչում գտած այսպիսի սպորտսմենը, ինչ-որ չնչին գումարի համար կարող էր զբաղվել այնպիսի գործով, որը մեր երկրում համարվում է սպեկուլյացիա: Այս հրաշալի մարզիկի անունը Սովետական հանրագիտարանում իր պատվավոր տեղն ունի ու պատիվ է բերում սովետական յուրաքանչյուր քաղաքացու: Նրա ազատագրկումը ոչ միայն կխաթարի մեր սիրելի «Արարատ» թիմի վարկը, այլև անպատվաբեր կլինի սովետական ցանկացած քաղաքացու համար: Նրա ազատագրկումով երբեք չենք կարող նրա անունը ջնջել Սովետական հանրագիտարաններից: Նա մեզ փառք ու պատիվ է բերել ու մենք պարտավոր ենք նրա նկատմամբ լինել ազնիվ ու բարեխիղճ, իսկ ես անձամբ սովետական ժողովրդական արդար դատարանից պահանջում եմ, որ հարցին մոտենա...

Կարծում եմ, երկարացնելն ավելորդ է: Ֆուտբոլիստը ճանաչվեց անմեղ, ազատ արձակվեց, իսկ արվեստագետ մտավորականը, իր արհեստավոր ընկերոջ հետ, դատապարտվեցին հինգ տարվա ազատագրկման:

ԱՆՊԱՇՏՈՆ ՉԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Մի ազգական ունենք, որ դեռ Թեհրանում հաճախ էի հանդիպում մեր տանը: Հորս մոտիկ ընկերներից էր համարվում, մեր լավ բարեկամը: Հաղթանդամ, բարձր հասակ, ժպիտը միշտ դեմքին, գեղազեմ, հարուստ, գործունյա, հայրենասեր ու Հայաստանով ապրող միջին տարիքի մարդ էր: Անունը՝ Սիրաք, որին դիմում էինք Սիրաք ափի-ով:

Մեզանից մեկ տարի շուտ էր հայրենադարձվել: Իրանում, որպես նորարարի, հյուպատոսությունը նրան խոստացել էր Հայաստանում կահույքի մի հսկա գործարան... Ինքը՝ Սիրաք ափին, այդպիսի գործարանի տեր էր, իսկ Թե Ի՞նչի դիմաց էին այդպիսի անլուրջ խոստումներ տվել բոլորիս պիտի հայտնի լինի:

Հայաստանում մեր առաջին հանդիպումը եղավ հենց մեր տանը: Նրան բնակեցրել էին Աբովյան քաղաքում: Դեռ Թեհրանում լսել էինք հայրենիքում նրա ձեռք բերած համբավի մասին, որպես միլիոնատեր, բարի խղճի տեր ու ձեռնբաց մարդ: Տակսիով էր եկել մեզ հանդիպելու: Ասում էր. «Մի տարի է փնտրում եմ, հարմար մեքենա չեմ գտնում»: «21 Վոլգա» էր ուզում, սովետական մարդատար մեքենաչինություն վերջին խոսքը, չկար... Հետո եղավ:

Մի օր էլ իմացանք, որ մեր Սիրաք ափին, Դիլիջանում վրաերթի է ենթարկել մի երեխայի:

Չցանկանալով աղավաղել երևույթներն ու դեպքի հետագա զարգացումները, ցանկանում եմ ձեզ լսելի դարձնել հենց իրեն, գլխավոր հերոսին:

Գնացի իրենց տուն, խնդրեցի չմերժեց և տեղի ունեցավ անպաշտոն այս հարցազրույցը, որը հանձնում եմ ձեր ուշադրությունը:

Վարորդը ես էի, երկու ուղևոր ունեի, մեքենան վարում էի սահմանված արագությունը, հանկարծ ավտոբուսի առջևից մի երեխա դուրս պրծավ ու հարվածի ձայն լսեցի: Աջ քաշեցի, կողքիս ընկերը իջավ, հարձակվեցին վրան ու վայրենաբար ծեծի ենթարկեցին, նրանց թվացել էր, որ վարորդն է: Գտնվեց մեկը, մեզ փախցրեց իրենց տուն, մնացինք մինչև միլիցիայի ժամանելը:

Երեխայի մայրը բարի ու ազնիվ կին էր, չնայած կորցրել էր երեխային, բայց ցուցմունքները ազնիվ էին, խոստովանեց, որ ավտոբուսից իջնելուն պես, երեխան ձեռքից պլստացել, շտապել է տուն: Երեխան դիպչել էր մեքենայի ետին անվաղողին ու...

Մեկ շաբաթ մեզ պահեցին միլիցիայի շենքում: Թե մեր քաղաք Աբովյանում, թե՛ Դիլիջանում կայծակնային արագությունը տարծվել էր լուրը: Մենք էլ, մեր շրջապատի միջոցով դիմում էինք ամեն քայլի, ծանոթի ու անծանոթի, փորձում էինք մարդ գտնել,

որպեսզի չդատվենք կամ պատիժը հասցնել նվազագույնի:

Ամբողջ Դիլիջանը խոսում էր իմ հարստության մասին: Որսորդների համար դարձել էի այն համեղ պատառը, որի համար բերան էին թրջում անգամ միլիցիատան հավաքարարները, իսկ կային նաև մեծ ախորժակի տեր փորձառու գիշատիչներ, որոնք համբերությամբ էին սպասում ու մեծ պատառների ախորժակ էին փայփայում:

Միջներդներ ուղարկվեցին, եղան առաջարկներ: Ես ամեն ինչի պատրաստ էի, միայն չդատվեի այն հողվածով, որով մի տասնյակ տարի պիտի զրկվեի հայրենիքում ազատ ապրելու իրականացած իմ երազանքից:

Առաջարկեցին տասներկու հազար ուրլի գլխավոր քննիչին: Չմերժեցի: Երկու հազար ուրլի գայի պետին: Համաձայնվեցի: Տաս հազար ուրլի դատախազին: Ելք չունեի: Վերջինիս համար իմացա, որ տաս հազար վերցնողը միայն հինգ հազարն է հանձնել: Մի խոսքով եթե չմանրացնեմ, հաշվի չառնեմ տուժողների հետ իմ փոխհարաբերության արդյունքը, որը հետագայում հաստատեց բարեկամական կապ, մինչև առաջին դատոս «ծախսվեց» ավելի քան հիսուն հազար ուրլի, որպեսի դառնամ ազատ կալանավոր, մինչև տեղի ունենա վերջնական դատոս:

Ես իմ իսկ մեքենայով սկսեցի դուրս գալ քաղաք: Մեր քաղաքապետը, որի ախորժակը դեռ մինչև վթարը գրգռված էր ու չէր կարողանում թուքը կուլ տալ, չկարողացավ ինձ տեսնել ազատության մեջ: Գործ հարուցեց Երևանի գլխավոր դատախազությունում: Երեք ամիս հետո Երևանի քննչական վարչությունից ինձ կանչեցին ու կալանքի վերցրին: Դիլիջանից պահանջեցին իմ գործերը, երկուսուկես ամիս անորոշ վիճակում անց կացրի Երևանի բերդում: Դատը տեղափոխեցին Դիլիջան: Այնտեղի դատավորի պահանջած երեք հազար ուրբլին տղաների միջոցով հասցրինք, որպեսզի դատավճիռը կայանա երեք ամիս ազատ աքսորով: Մինչև դատավճիռը պարզ էր, թե ինչ ճանապարհներով, ինչպիսի մեծ ու փոքր գումարներ էին կորզվում:

Դատավճիռը կայացավ: Ինձ ուղարկեցին Կիրովականի բերդ, այնտեղից, նորից զարտուղի ճանապարհներով ու ախպերական կարգով ուղեգիր ստացա Հոկտեմբերյանի ատոմակայանի համար: Հոկտեմբերյանի ատոմակայանում աշխատեցի որպես հյուան և իրավունք վերապահեցի ազատ դուրս գալ, բայց չհեռանալ ինչ-որ սահմանված շառավիղից: Այսպես երկարեց մինչև վեց ամիս: Նորից ինչ-որ ընչաքաղց մարդկանց ախորժակը նորից գրգռվեց: Բողոքարկեցին: Կարողացանք մի քանի որովայն ևս լցնել, բայց նորից բացվեց գործը, իբր թե քիչ են

դատել, դատը եղել է անազնիվ, որ ես իրավանուք չունեմ ազատ ձեմելու, որ ես պիտի լինեմ գաղութում և ոչ թե, որպես ազատ աքսորյալ՝ ատոմակայանում:

Այս անգամ ինձ ուղարկեցին Իջևանի դատարան, որտեղ դատավորը ավելի խղճով գտնվեց, քան սպասում էինք, համաձայնվեց ընդամենը երկու հազար հինգ հարյուր ութլիով երեք ու կես տարով ուղարկել Կիրովականի բերդ, որտեղից էլ ուղարկելու էին գաղութ:

Վերջի վեջո իմ պահանջով գործս մի քանի անգամ վերանայել տալուց հետո, օգնություն հասավ քառասունվեց թվին հայրենադարձված մի բարեկամ, որը աշխատում էր ներքին գործերի մինիստրությունում և բավականին մեծ շրջապատ ու քաչ ուներ: Մեկ անգամ ևս դատեցին և բարեկամիս անմիջական միջնորդությամբ նորից ուղարկեցին ատոմակայան:

Այս անգամ արդեն Հոկտեմբերյանի ատոմակայանում իրավունք ունեի հիսուն կիլոմետր շառավիղով դուրս գալ կայանից, տուն վարձել, ընտանիքիս տեղափոխել մոտիկ վայր, այն պայմանով, որ ամեն շաբաթ ներկայանայի տեղի միլիցիային և զեկուցեի իմ անձնական կյանքի մասին: Իսկ այն, ինչ օրենքով չէր թույլատրվում դատապարտյալիս, այդ օրենքը կարողանում էինք սրբագրել ոչ թե կախարդական ճիպտտով կամ Ալլադինի լամպի ջինի օգնությամբ, այլ բթամատի ու ցուցամատի շփումով...

* * *

Այս ամենից հետո, ուրիշ ի՞նչ հարց կարելի էր տալ...

«ԱՅՍՏԵՂԻՑ ԹՈՒՐՔՆ Է ԱՆՑԵԼ»

Աչունը, Հայաստան աշխարհի, և գուցե ողջ Սովետամիության համար, ոչ միայն գեղեցիկ բնություն, այլև ավանդույթ դարձող հրաշալի խաղեր էր պարզեում:

Ուսուցիչ, աշակերտ, արհեստավոր, բանվոր, գիտաշխատող, մարզիկ, վարորդ... Մի խոսքով, ով տեր, այսինքը՝ վերին խավերում ծանոթ ու բարեկամ չուներ, պարտադիր պետք է մասնակցեր այդ խաղին, խաղը կազմակերպվում էր պետական մակարդակով և կոչվում էր ԲԵՐՔԱՀԱՎԱՔ: Խմբակային էր, յուրաքանչյուր խումբ կամ թիմ ուներ իր ավագը, որը սովորաբար վարիչի կամ դիրեկտորի կարգավիճակ ուներ:

Կինս աշխատում էր վարսավիրանոցում: Կարգը այսպես էր. ամեն ամիս անվճար նրան պետք է տրամադրեին որոշակի քանակի օճառ, սրբիչ, սանր, մկրատ, մազի արդուկներ... Մի խոսքով այն ամենն, ինչ անհրաժեշտ է վարսավիրին: Իսկ նա՝ կինս կամ

որևէ վարսավիր, պարտավորվում էր շաբաթը հինգ, թե վեց օր, լավ չեմ հիշում, օրը ութ ժամ աշխատելու, յուրաքանչյուր ամիս որոշակի գումար մուծել պետական բանկ, որից ինչ-որ մասը վերադարձվում էր որպես աշխատավարձ: Վարսավիրանոցում փակցված ծառայությունների գնացուցակն այնքան ցածր էր, որ ամենափորձառու և արագաչարժ վարպետն անգամ, օրը ութ ժամ, առանց հաճախորդի սպասելու իր ողջ կարողությունամբ, դժվար թե պետական պլանը կարողանար կատարել: Փաստորեն, անուղղակի ասվում էր՝ գողացիր, թալանիր, հաճախորդից ավելին գանձիր, թքիր օրենքի վրա, միայն թե բողոքավոր չլինի...

Եվ այդպես էր, դրա համար էլ ոչ մի վարիչ վարպետներին հասանելիք վարսավիրական պիտույք չէր տալիս, կամ տալիս էր ներքին պայմանավորվածությունամբ: Անգամ լինում էր ամիս, որ աշխատավարձի ցուցակում վարպետը իր անվան դիմաց ստորագրում էր, իսկ գումարը ստանում էր վարիչը, չէ՞ որ վերևներում գտնվողները ևս գիտեին դրա մասին ու ակտիվացնում էին պահում:

Տարվա ընթացքում կային օրեր, երբ կինս ստիպված պետք է մասնակցեր պետական խաղերին, այդպիսիք էին Մայիսմեկյան, Հոկտեմբերյան չքերթները... և աշնան բերքահավաքը:

«Օրենք» էր. կամ պիտի մասնակցեիր, որպեսզի

չգրկվեիր գովասանագրերից ու անվճար վարսավիրական պիտույքներից, կամ որևէ ծանոթ բժշկից «հիվանդության» տեղեկանք ներկայացնելի, որը այդ օրերի համար բավականին թանկ էր:

Այդ տարի «խաղը» կայանալու էր լուրիկի դաշտերում: Արարատյան դաշտում աճում էին մինչ այսօր իմ տեսած ու ճաշակած լուրիկի ամենահրաշալի տեսականիները: Այդ տարի բերքն առատ էր ու աշունն ավելի քան գեղեցիկ:

Որոշեցի կնոջս հետ ես ևս մասնակցել այդ խաղին:

Աշխատանքներից առավելագույն արդյունք ստանալու համար ստեղծվում էին գործակիցների խմբակներ՝ թիմեր, հաղթող էր դուրս գալիս այն թիմը, որն ամենաշատ բերքն էր հավաքել:

Գովասանագրերը պատրաստ էին, անունները գրվում էին տեղում...

Ահել ու ջահել, աղջիկ ու տղա, դաշտերին սովոր ու անսովոր, ընկել էին թփերի մեջ, ոտքերի տակ անխնա կոխկրտում էին արևահամ, լույս ճառագող, հրաշալի լուրիկներն ու երբեմն էլ մի քանի հատ գցում էին դուլերի մեջ: Անվարժները, այդ թվում նաև իմ կինը, հաճախ էին նստում, երբեմն էլ մի հասած լուրիկ փեշով մաքրում, կծում ու դեն էին չպրտում: Այնպես պատահեց, որ դրանցից մեկը դիպավ աշխատակիցներից մեկի երեսին: Նրան թվաց, թե կատակ են արել, ինքը ևս մի լուրիկ չպրտեց, ծիծաղի զվարթ

ձայնը տարածվեց դաշտով մեկ: Մի քանի ըոպելից կանաչ դաշտն ու կարմիր լուլիկը «ձնագնդի» խաղ հիշեցրին ու կանաչք կարմրին տվին:

Դաշտը դարձավ եղեռնազարկ: «Արյունը» առել տանում էր: Վարիչներից մեկը կատաղած մոտեցավ դեռևս ծիծաղող կանանց, այն էր պիտի բերան բաց աներ կարմիր լուլիկը ուսմբի պես պայթեց նրա սպիտակ շապիկին: Վարիչին պաշտպանող միջահասակ մի տղամարդու բերանից դուրս թռավ «բող» բառը: Ես վազեցի դեպի այդ բողի ծնունդը, դեռ չհասած մի լուլիկ ևս նրա դեմքին պայթեց:

Դաշտը լռեց:

Վիկտոր Հյուգոն կասեր. «Այստեղից թուրքն է անցել»:

* * *

Երեկոյան տանը նստած էի, կինս ձայն տվեց. «Խորեն, պոմիդորով ձվածեղ կուտե՞ս»:

ՄՈՍԿՈՎԱՆ ՉԱՄԵՐԳ

Կուլտուրայի տանը աշխատելիս, ես ու կինս մասնակցում էինք երգչախմբի փորձերին: Որպես համամիութենական փառատոնների դափնեկիր, մեր երգչախումբը հյուրախաղերով մեկնել էր Մոսկվա:

Առիթից օգտվելով, մեր փորձառու վարորդի՝ Պարեղիկի հետ պայմանավորվեցինք այնտեղից մեքենա գնել ու մեքենայով վերադառնալ: Մի քանի համերգներից հետո մեզ հրավիրեցին կենտրոնական հեռուստատեսություն՝ ուղիղ եթերով մի քանի համար կատարելու: Տղաներից մի քանիսս երկար մազեր ունեինք: Ստուգիայում, հաղորդման պատասխանատուն երկար մազերով տղաներին խնդրեց մազերը այնպես կապել, որ հեռուստատեսությամբ չերևա: Ես չհամաձայնվեցի: Ճիշտ է, իմ բացակայությունը ոչինչով չէր ազդելու համերգի որակի վրա, բայց համառոտեցի ու ինձ հանեցին, այսինքն թույլ չտվեցին երկար մազերով ելույթ ունենալ: Վարորդ Պարեղիկը առիթից օգտվելով հիվանդ ձևացավ ու ինձ հետ դուրս ծլկեց, հայդե, ուղիղ ավտոբազար:

Մեր ձմռանկույան մի հսկա տարածություն վրա, հազարավոր մեքենաների սեփականատերեր, իրենց մեքենաները փայլեցնելով, հաճախորդների էին սպասում: Կովկասցի տեսնելուն պես վրա էին տալիս: Չորս-հինգ ժամ փնտրելուց հետո մի ժիգուլի հավանեցինք, փորձեցինք, արժեքի վրա համաձայնության եկանք: Ամենադժվարը վճարման կարգն էր: Երկու տարվա մեքենա էր: Այդ մեքենայի նորի պետական գինը, եթե չեմ սխալվում վեց հազարի սահմաններում էր: Երկու տարվա օգտագործածին պիտի վճարենք ութ հազար հինգ հարյուր ուրլի: Բայց ինչպե՞ս:

Ինչպե՞ս:

Հարցի լուծումը խրթին էր: Մեքենան իմ անվամբ անցկացնող գրասենյակը չորս, առավելագույնս հինգ հազար պիտի գնահատեր: Փաստորեն, ես կրկնակի գին էի տալիս: Չորս կամ հինգ հազարը պետք է մոծեի գրասենյակի համապատասխան բաժնում, որտեղից էլ փոխանցվելու էր մեքենան վաճառողներին, իսկ մնացածը: Վաճառողը ինչպես վստահեր մեզ, որտե՞ղ պիտի հանձնեինք չորս-հինգ հազար կանխիկ գումարը: Այդպիսի գումարի փոխանցման դեպքում զգուշավորութուն էր պետք: Վաճառողը, ի՞նչ հիմքերով պետք է համոզված լիներ, որ մենք նախապես ոստիկանությանը չենք հայտնելու: Ճիշտ է, ոմանք բավականին համարձակ էին, բայց մեզ բաժին ընկած վաճառողը բարդու պես դողում էր: Ոչ մի կերպ չէր համաձայնվի, եթե նրա երիտասարդ տղան ամենաայլանդակ հայհոյանքներով վեճի չբռնվեր հոր հետ: Մենք պատրաստ էինք անգամ մի քանի հազար նախապես վճարել, բայց այդ խեղճ գյուղացին, ըստ երևույթին, առաջին անգամն էր նման առևտուրի մեջ մտնում: Համաձայնվեց երկու հազար նախապես վճարելուն, բայց չար աչքերից հեռու:

Մեկնեցինք: Թե հայր ու որդին ուր էին տանում մեզ՝ չգիտեինք: Տաս-տասնհինգ կիլոմետր գնալուց հետո մտանք մի ծառուղի: Մեքենան կանգնեց:

Երիտասարդը արագ-արագ վրա բերեց. «Տվեք, երկու հազարը տվեք՝ շարժվենք»: Հայրը իջավ, աջ ու ձախ նայեց: Վերադարձավ: Կանխիկ դրամը որդու ձեռքը տեսավ, հանգստացավ: Մեքենան նորից շարժվեց:

Չգիտեմ ընկերս ինչ էր զգում, բայց ես իմ կյանքում այդպիսի վախ չեմ ապրել: Մոտս տասնմեկ հազար ռուբլի կանխիկ դրամ և աշխարհի մի անհայտ ծայրամաս: Ինչ իմանաս, մեծ աշխարհ է:

Ծառուղուց դուրս գալուն պես, դեմներս դուրս եկավ մի ոստիկան ու սուլեց:

Երիտասարդը աջ քաշեց մեքենան ու կանգնեց: Մեզ էլ զգուշացրեց՝ իրենց հյուրերն ենք:

Ոստիկանը մոտեցավ, բարևեց, պատշաճ ներկայացավ, ստուգեց փաստաթղթերը, վարորդական իրավունքի միջից ինչ-որ գումար հանեց, ետ վերադարձրեց ու բարի ճանապարհ մաղթեց:

Բոլորիս շունչը տեղն ընկավ: Շարժվեցինք: Գրանցման գործերն ավարտեցինք, բարեբախտաբար շատ արագ ստացվեց, այն, ինչ Հայաստանում երկու-երեք օր էր տևում, Մոսկվայում տևեց ընդամենը երկու-երեք ժամ: Մեզ մնում էր հավելյալ երեք հազարը վճարել: Որոշեցինք հենց մեքենայի մեջ այդ հարցը լուծել ու նրանց ինչ-որ տեղ իջեցնել: Համաձայնվեցին: Մի քանի անգամ փորձեցինք փողը գրպանը խոթել: Հայր ծնողը վախենում էր: Հաշվել էր պետք, տեսնող կլիներ: Պարենային մի խանութի մոտ

մեքենան քաշեցինք անկյուն: Հայրը տղային ուղարկեց լիմոնադ բերելու, մինչև ինքը փողը կհաշվեր: Տղան գնաց: Հայրը վերցրեց գումարը: Ձեռքերը դողում էին, բերանը չորացել էր: Սկսեց հաշվել, մի քանի անգամ սխալվեց, ամեն մի անցորդ նրան գաղտի ոստիկան էր թվում, ամեն մի շարժում՝ վտանգ: Համոզված եմ, որ այդպես էլ չիմացավ, թե ինչքան ենք վճարել: Այդքան կանխիկ գումար ամբողջ կյանքում չտեսած ուսմուծիկը փողը խոթեց գրպանն ու մեքենայից իջավ, միացավ խանութից դուրս եկող տղային ու անհայտացան:

«ՇՏԱՊ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՄ ԱՆՃԱՐԱԿ ԶԱՅՐԸ

Հիվանդ էր: Միզապարկը պայթում էր՝ միզել էր ուզում: «Շտապ օգնություն» էինք կանչել: Ժամից ավելի էր, ինչ սպասում էինք: Նորից զանգահարեցի: «Ա՛յ տղա, ասացի ավտո չկա, որ գան՝ կուղարկենք, լեզու չե՞ս հասկանում...», - եղավ պատասխանը: Հոգոց հանեցի, վար դրեցի լսափողը և աննլիքս չիմանալով միացրեցի հեռուստացույցը...

«Սովետական տիեզերագնացների նվաճումներն արդեն ավանդույթ են դարձել մեր հզոր պետություն՝

Սովետական Միություն, գիտություն ու տեխնիկայի զարգացման ու առաջընթացի համար: Եղբայրական ժողովուրդների համատեղ ջանքերով ու լայնածավալ գոհողություններով ձեռք բերված գիտատեխնիկական մեր փայլուն նվաճումները ծառայում են սովետական բազմազգ ժողովուրդներին, նաև ողջ աշխարհում խաղաղ ու բարեկեցիկ կյանք ստեղծելուն...»:

Անջատեցի հեռուստացույցը: Դառը ժպտացի:

Մշուշը վարագուրել էր Արարատի վեհությունը, իսկ փողոցում եռուզեռ էր՝ պարենային խանութում ինչ-որ բան էին ստացել, հերթ էր գոյանում:

Բնակարանում հավաքված հարազատներս վրդովված, երբեմն լուռ, երբեմն բարձրաձայն տրտնջում էին: Թանձր ծուխը ծանրացել էր սենյակում, իսկ ննջարանում, հիվանդի շուրջը խմբված հարազատները, խոնավ աչքերով նրա ճակատին կաթիլ դարձող ցավն էին սրբում:

Պատշգամբում կանգնած՝ սիգարետս չպրտեցի փողոց, ընկերոջս մի կողմ հրեցի, վազեցի հորս սենյակն ու ականայից բոռացի. «Եկա՛ն»:

Սպիտակ համազգեստով տղամարդը ձեռքին մի փոքրիկ թիթեղյա թուփ ուներ: Ներս մտավ:

- Ո՞ւր է հիվանդը:

- Այնտեղ:

- Էս ո՞վ ա:

- Հայրս:

- Ի՞նչ ա պատահել, այ ընկեր:

Հայրս գլուխը մի կողմ թեքեց ու դողդոջուն ձեռքով փորձեց միզապարկը, ցավոտ տեղը ցույց տալ...

Բժիշկը նկատեց ցավից դուրս ցցված հիվանդի աղերսագին աչքերը...

- Չգիտեմ, բժիշկ, միզել չի կարողանում:

- Ի՞նչ ա, ինքը լեզու չունի՞,- խոժոռվեց բժիշկը:

- Ո՛չ:

- Տանը անալգին, պենտալգին՝ որևէ դեղ չկա՞:

- Իհարկե, կա, բայց նա...

- Նա, ի՞նչ, որ չի կարողանում միզել, ես ի՞նչ անեմ, չե՞ք ամաչում, միզելու համար շտապ օգնություն կկան-չե՞ն: Որ բժշկությունը ձրի ա, դուք էլ աջ ու ձախ կանչեք էլի: Ամեն ինչ տեսել ու լսել էինք, էս մեկը... Ասեիք գառչոկ էլ բերեինք:

Մթնոլորտը շիկացած տեսնելով «բժիշկը» խելացի գտնվեց, վերցրեց տուփիկն ու զայրացած ձևանալով փախավ:

Թեթև իրարանցումից հետո, մի երկու հոգու հետ վերցրեցի այդ «կծկված ցավին» ու շտապեցի հիվանդանոց:

- Այ ընկեր, հասկանում ես, ներս թողնելու իրավունք չունեմ: Ո՞ւմ մոտ ես գնում, ի՞նչ հարցով, ուղեգիր ունե՞ս:

Ուղեգիր՞ը, ինքս ինձ հարցնելով վազեցի դեպի

հայրս, կիսագրկած ոտքերը գետնին քարչ տալով հասցրեցի պահակին, ուղիղ նայեցի աչքերին ու ասացի. «Այ, քեզ ուղեգիր»:

- Տո, խելառ ա էս տղան,- իրեն մի կողմ քաշելով մոթմոթած պահակը:

Տհաճ երևույթը հաճելի դարձնելու նպատակով, հորս պառկեցրի գետնին ու պահակի ականջին ինչ-որ բան փսփսացի ու ձեռքս խոթեցի խալաթի գրպանը:

Պահակը ձեռքը տարավ գրպանը, հայացքը հառեց անհայտ մի կետի ու զգայուն մատներով հաստատեց թղթադրամի իսկույթունը, ինչու ոչ, նաև ինչքան լինելը:

Երևույթը սովորական էր: Սառնասրտորեն մի քանի հոգու հարցերին պատասխանելուց հետո բացեց դուռն ու դժգոհ ձևանալով նորից փնթփնթաց. «Էկե՛ք, էկե՛ք, էլ զահլա չկա»:

Թափով ներս մտա: Միջանցքի խորքում կանգնած համազգեստով կինը գոռաց.

- Ո՞ւր, այ տղա, էդ ու՞ր ես քշում,:

- Բժիշկ եմ խնդրում, ընկերուհի, բժիշկ:

- Ի՞նչ է պատահել, ի՞նչ բժիշկ, ի՞նչ բան...

- Ընկերուհի ջան, հայրս, խնդրում եմ էլի, մի բժիշկ կանչիր:

Ինձ հետ եկողներն արդեն հորս ներս էին բերել:

- էս ի՞նչ ա պատահել,- միջամտեց աստիճաններից դանդաղ իջնող մի բժիշկ:

- Հայրս...

Հապճեպ, մի քանի խոսքով պատմեցի իրողությունը: Նա մոտեցավ հիվանդին, թեթևակի շոշափեց հորս ստամոքսն ու բարձրացավ երկրորդ հարկ:

Հորս տեղափոխեցին բուժ-սենյակ: Ընկերներիս շենքից դուրս հրավիրեցին: Ես միջանցքում անհանգիստ ետ ու առաջ էի անում: Մոտեցա պատին կախված ուղիղոյին, ուղեցի ձայնը կտրել, բայց հանկարծ սրվեց լսողությունս. «...ժամանակակից տեսնողագիայի բարձր մակարդակով ու ազնիվ սպասարկությամբ ոչինչ չեն խնայում ծառայելու աշխատավոր, բանվոր ու գյուղացի դասակարգի կենսամակարդակը էլ ավելի բարձրացնելու գործում: Մեր եղբայրական հանրապետություններում՝ ողջ Սովետական Միությունում փոքր չէ բժշկական գիտությունների մարզին նվիրված հայրենասերների այն բանակը, որը անձնուրաց լծվել է աշխատանքի՝ սովետական քաղաքացու պատիվը բարձր պահելու նշանաբանով: Եթե այսօր Հայաստանը հարուստ է բժիշկներով ու բուժօգնություն ժամանակակից բոլոր հարմարություններով, եթե այսօր մեր երկիրն օժտված է հարուստ ու հարմարավետ հիվանդանոցներով, բուժ-հիմնարկություններով չըջուն դարմանատներով և վերջապես կոմունիզմի ոգով դաստիարակված ազնիվ, անշահախնդիր ու նվիրյալ բժիշկ մասնագետներով, ապա դրա համար երախ-

տապարտ ենք Հոկտեմբերյան Մեծ Հեղա...»:

Վերելակի դռների տհաճ ձայնը սթափեցրեց ինձ: Հաղորդումը շարունակվում էր, իսկ ես նկատեցի հորս ժպիտը:

Մոտեցա բժիշկին:

- Մեր պարտքն է, երիտասարդ,- կոահելով իմ նպատակը՝ առաջ անցավ բժիշկն ու իր անձնական հեռախոսի համարը տվեց ինձ,- երբ պետք աս, զանգ տուր:

Ելքի դռան մոտ, պահակատանը, «չտապ օգնության» «բժիշկը» նարդի էր խաղում: Ոչ, չէի սխալվում, մի պահ զգաստացա, ջղերս պրկվեց, բայց... Թողեցի իր նարդին շարունակեր:

Հայրս չէր բուժվել, պարզապես միզել էր, ավելի ճիշտ միզաթափ էին արել, հետևաբար հաջորդ օրը կրկնվեց նույն երևույթը և ես ստիպված կես գիշերին դանդահարեցի բժշկին.

- Կներեք, բժիշկ, ոչ է, բայց ստիպված եմ, ես երեկվա տղան եմ, հիշում եք, հայրս միզելու պրոբլեմ ուներ:

- Մեքենա ունե՞ք:

- Այո, կա:

* * *

Սենյակից լսվում էր հորս տնքոցները, բժիշկը իր գերի մեջ էր: Մի քանի ըոպե ևս... մերոնք ներս մտան: Հայրս ձեռքը միզապարկին գլուխն էր տարուբերում:

Ձէի հասկանում, գոհունակությա՞ն, թե՞ ցավի նշան էր:

Բժշկին ճանապարհելիս մի կոկիկ գումար խոթեցի գրպանը.

- Բժիշկ, խնդրում եմ, մի մերժիր, մեր միակ հույսը դու ես:

- Մեր պարտականությունն է, այ ցավդ տանեմ, պետք լինի ամեն օր կգամ, չմտածես:

* * *

Եվ ամեն օր, բժիշկը մեծ սիրով հանդիպում էր մեզ, օգնում էր հորս, վճարվում ու մեծ գոհունակությամբ հեռանում էր: Մի խոսքով հայրս բժիշկի համար շահութաբեր հիվանդ էր:

Անցան օրեր, շաբաթներ: Ես ու բժիշկը մտերմացանք: Եվ մի օր, հերթական վճարման ժամանակ, բժիշկը հրաժարվեց դրամից.

- Գիտե՞ս ինչ, հերիք եղավ, չեմ վերցնի, մեղք ես, մինչև ե՞րբ կարող ես հսպես շարունակել: Արի քեզ սովորեցնեմ, մեծ բան չի:

- Ի՞նչը սովորեցնես, բժիշկ:

- Միզեցնել:

- Բայց դա բուժում չի: Հերս բուժման կարիք ունի:

- Ինձ լսիր, ամաչելու բան չկա, պիտի մի քիչ սառնասիրտ լինես, մոռանաս, որ հիվանդը հայրդ ա ու մտնես սենյակ: Էս ռեզիլնից չլանզը տեսնու՞մ ես,

դանդաղ մտցնում ես հիվանդի միզանցքի մեջ ու զգույշ հպումների ու անդամի խաղերի միջոցով տանում ես՝ մինչև մեղապարկը, հենց որ հասավ, մեզը ինքնըստինքյան դուրս կգա: Երկու ըուպեի գործ ա:

Տեսական բացատրությունից հետո՝ նա անցավ գործնականին: Զգում էի, որ դեմքս այլայլվում է, հոգիս տակն ու վրա է լինում, սրտխառնոցի պես բան էի զգում, հայրս էլ անընդհատ ձեռքով հասկացնում էր, որ սենյակից դուրս գամ: Ըստ երևույթին ամաչում էր:

- Բռնիր, շլանգը բռնիր, պահիր ամանի մեջ,- ասաց բժիշկն ու գնաց լվացվելու:

Մեզը կաթկթում էր: Շլանգը հարմարացրի ապակյա ամանի մեջ ու երկու նոր խողովակները առա ձեռքս: Ռետինե պարզ խողովակներ էին: Բժիշկը վերադարձավ:

- Բժիշկ ջան, ես ո՞նց կարամ...

- Այ, ցավդ տանեմ,- մտերմորեն նա կանխեց ինձ ու շարունակեց,- ի՞նչ ես խառնվում, սրանից հեշտ բան, իմ գալն արդեն ավելորդ է, մենք կմնանք բարեկամներ, երբ կուզես՝ զանգիր, երբ պետք եմ՝ զանգիր, բայց էս գործը դու էլ կարող ես անել, բարդ բան չի, կանես, կանես...

Հաջորդ օրը, ինչպես միշտ, մեր տանը լիքն էին: Հորս ցավերը գնալով սաստկանում էր, իսկ ես չէի համարձակվում: Հաճախ մտնում էի սենյակ, փորձում

էի հանգստացնել, բայց... ելք չկար: Մի կողմից էլ տնեցիներին էի խղճում, նրանք ինձ լավ էին հասկանում, նրանք էլ էին տակնուվրա լինում, բայց օգնել չէին կարող: Բոլորը լուռ էին: Հանկարծ հոգիս փոթորկվեց: Մարմնիս ծայրամասերում ծակոցներ զգացի: Մի քանի անգամ մատներս բռունցք դարձրի, բացեցի, նորից փակեցի, գլուխս վեր՝ խոր շնչեցի: Լացը կոկորդիցս չէր իջնում, ոչ էլ դուրս գալու նպատակ ուներ, խեղդվում էի: Ելք չկար: Ներս մտա: Վերցրի օձ հիշեցնող խողովակն ու մոտեցա հորս: Ամոթխածությամբ իջեցրի պիժաման ու դողդոջուն մատներիս ծայրով մատիտի հաստությամբ այդ «օձը» մտցրի հորս միզանցքը: Առաջին իսկ թեթև հպումից նա բղավեց, ես ցնցվեցի, խողովակը ձեռքիցս դուրս պրծավ: Երկրորդ փորձս ավելի համարձակ ստացվեց: Հայրս տնքաց, չնայած աչքերը խոռոչից դուրս էին գալիս, բայց կարծես թե չգիտեր «բժիշկի» ով լինելը: Հորս ցավը փոխանցվել էր ինձ, կպչել կոկորդիս, արճիճ էր դառել: Մի պահ ամեն ինչ թողնելու, բղավելու ցանկություն զգացի, բայց ևս մի քանի հպում, մի քանի շարժում ու հորս ահավոր հառաչի հետ մատներս ողողվեց արյունով:

Սենյակի դուռը բացվեց, մի քանի գլուխ ներս մտան ու նորից ետ քաշվեցին:

Ես լուռ հեկեկացի: Արագացրի գործողությունը՝ հպում, շարժում, աջ, ձախ, վեր, ներքև նորից հպում ու

ձեռքերս անզոր կախվեցին:

Մեզը լվաց արյունոտ մատներս: Հայրս ժպտաց:

* * *

Ես երգվեցի՝ չկրկնել: Հաջորդ օրը դիմեցի բժշկին: Դեղատոմս տվեց: Դեղատոմսը ձեռքիս եղա տեղի ու մայրաքաղաքի, համարյա բոլոր դեղատներում: Ապարդյուն: Դիմեցի բարեկամ բժիշկի օգնություն, վերջինս հեռաձայնային մի կարճ խոսակցությունը հնարավոր դարձրեց «անհնարը»:

* * *

Հասցեն ծանոթ էր: Մի քանի ժամ առաջ այնտեղ էի: Ներս մտա, բարևեցի, դեղատոմսը մեկնեցի, մի քանի ընդհատումներով անց դեղագործը դեզը սեղանին դնելով, մունալթով ասաց. «հիսուն ուրլի»:

Չնայած գինը իմ տասնհինգ օրվա աշխատավարձն էր, բայց վճարեցի, դեղերը հափշտակած շտապեցի դեպի մեքենաս: Ճանապարհին ավտոտեսուչի սուլոցին ուշադրություն չդարձրի, արագություն հավաքեցի: Նա ինչ-որ գրառումներ արեց:

Մեր փողոցի առաջին իսկ կեռամանից շենքի մոտ նկատեցի շտապօգնության մեքենան:

Հայրս մեքենայի մեջ էր: Վարորդը պատրաստվում էր մեկնելու: Մոտեցա հորս.

- Պապ, դեղերը բերել եմ,- հուզված ասացի ես:

Հայրս ձեռքը միզապարկին, փորձեց երերուն

գլուխը բարձրացնել՝ չհաջողեց, բայց արտասովախառն աչքերից կարդացի միտքը՝ «Բա՛ անա՛լա՛ ջանա՛ն»:

Մեկ շաբաթ հայրս մնաց հիվանդանոցում:

Մի օր դիմեցի բժշկին.

- Բժիշկ ջան, ի՞նչ է լինելու հորս վիճակը:
- Լավ կլինի, երիտասարդ, մի մտահոգվիր:
- Բայց, մինչև ե՞րբ, չէ որ բացի թմրադեղերից...
- Բժիշկը դու՞ ես, թե՛ ես:

Ելք չունեի, մտածեցի մոտենալ ընդունված կարգով: Հաջորդ օրը գնացի գրասենյակ.

- Բժիշկ ջան, խնդրում եմ, ինչ որ պետքն ա՛ արեք, մենք էլ մարդ ենք, հասկանում ենք, հայրս դեռ ջահել ա, մեծ հույսեր է փայփայում...

- Հայրենադա՞րձ ես:

- Այո:

- Հայրդ վիրահատման կարիք ունի, կգնաս հետո կգաս:

Նորեն գնացի:

- Հը՛, եկա՞ր, նատիր:

Նստեցի, սպասեցի: Սենյակում սառը լուռություն տիրեց: Այն խղելու համար բժիշկը թեմա գտավ.

- Այսօր, հայրդ ո՞նց էր:

- Առանձնապես փոփոխություն չեմ տեսել:

Նորից երկարատև ու ձանձրալի լուռություն:

- Ե՞րբ եք վիրահատելու, բժիշկ,- համարձակեցի

ես:

- Պարզ չի, վաղը արի, կպարզենք:

Հաջորդ օրը նորից շտապեցի բժիշկի մոտ:

- Հը՞, ի՞նչ որոշեցիր, համաձա՞յն ես, վիրահատե՞նք, թե...

- Եթե դուք գտնում եք, որ անհրաժեշտ ա, ինչու՞ չէ...

Բժիշկի և իմ մեջ հաստատված լուռ[թյունը բեռլինյան պատ դարձավ:

Երկու օր անց հորս դուրս գրեցին: Գլուխս պատեպատ խփեցի, բան դուրս չեկավ: Ընկա մայրաքաղաքի բժիշկների հետևից: Գտա մեկին, որը խորհուրդ տվեց հիվանդին անմիջապես փոխադրել Երևան: Եվ շեշտեց, որ անպայման լինի տեղի բժշկի համաձայնությունը՝ ուղեգիրը:

- Բայց, բժիշկ, դուք գիտեք, որ նրանք ուղեգիր չեն տա,- ասացի ես:

- Փորձիր, եթե չստացվեց մի բան կանենք:

* * *

Ես ճիշտ էի, ոչ մի կերպ չկարողացա համոզել, ուղեգիր ստանալու: Երեք երկար շաբաթներից հետո ծանոթի միջոցով հորս տեղափոխեցի Երևան: Հայրս ենթարկվեց քննությունների, ամեն ինչ գնում էր նորմալ հունով, սակայն վիրահատման նախօրերին բժիշկը մոտեցավ ինձ.

- Յավում եմ, երիտասարդ, հիվանդի արյունը թունավորված է մեզով, շատ ուշ է, նրան մի քանի օրվա կյանք է մնացել:

Հորս սպանեցին հիսունվեց տարեկան հասակում:

* * *

Հորս թաղման հաջորդ օրն իսկ էջմիածնի սոցապ բաժնից կանչ ստացա: Գնացի: Գրասենյակի աշխատողը բարեխա պատասխանելուց հետո հարցրեց.

- Անունդ ի՞նչ է:

- Խորեն:

- Արամ Գեղիչյանը ձե՞ր հայրն էր:

- Այո:

- Թոշակառու՞ էր:

- Այո:

- Արդեն թաղե՞լ եք:

- Այո:

- Ինչ-որ է, մեզ մոտ օրենք է, մեր պետությունը հաշվի առնելով իր քաղաքացիների նյութական կարողությունները, պարտավորվում է այսպիսի դրժբախտ առիթների դեպքում հոգալ հանգուցյալի թաղման ծախսերը: Այ, հատեղ, ստորագրեք,- մի գունատ թուղթ մեկնեց ինձ ու մատը դրեց տողերից մեկի վրա:

- Ինչի՞ համար:

- Տասնվեց ուրբի ստանալու համար:

- Ինչքա՞ն,- չհավատացի ականջներիս:

- Տասնվեց ուրլի:
- Բայց ինչի՞ համար:
- Ասի չէ՞, հորդ թաղման ծախսերի համար:
- Ձե՞ռ ես առնում,- արժանապատվությունս վիրավորվելով բղավեցի ես:
- Բայց, խի՞ ես գոռում, արա, ե՞ս եմ որոշողը, ինչ հասնում է, ես էլ տալիս եմ:
- Բայց ես երբևէ ողորմություն ուզե՞լ եմ, ինչու՞ եք ինձ վիրավորում, ախր ես մարդ եմ, վերջապես...
- Դուրս եկա: Հետևիցս լսվեց.
- «Արա, իսկականից սրանք չառ են, հեչ էլ ուզեք...»:

ՊԱՅԱԿԻ ԴՈՒՄԸ

Առաջնեկս՝ Վահագնը, արյան քաղցկեղով էր տառապում: Երևանի մանկական առաջին հիվանդանոցում էր: Եթե երևանում դա «առաջինն» էր, երևի աշխարհում կլիներ նախավերջինը:

Հիվանդանոցի բոլոր աշխատողները «դուխ» ունեին, իսկ ամենադուխավոյը դուան դեմ կանգնած պահակը, կամ գուցե ասենք՝ դոնապահն էր:

Մեծ չրջապատ ունեի, բոլորի մոտ կարեկցանք կար, բոլորն էլ ուզում էին մեր տառապանքը ինչ-որ չափով թեթևացնել, վերջապես հայ ենք ու հայ-

ավարի ապրել էինք ուզում: Երեխայիս այցելողները շատ էին, իսկ հիվանդին տեսության համար հատուկ թույլտվություն էր պետք: Առանց գլխավոր բժշկի թույլտվության, խստիվ արգելվում էր ծանր հիվանդներին այցելելը: Բայց պահակի ճիվերուն չէր, մուտքը ազատ էր բոլոր այն այցելուների համար, որոնք մեկական ուրլի էին խոթում գրպանը:

Տղաս երկար էր մնում հիվանդանոցում, երբեմն շարաթներ: Պահակի հետ լեզու էի գտել, օրը տասը ուրլի նախապես վճարում էի, որպեսզի հիվանդին տեսակցելու եկած հարազատներին համար կանաչ լույս վառվեր:

Մեր մտերմությունը պահակի հետ սերտացավ: 1946 թվականի հայրենադարձ էր: Պատմեց գլխի եկածը, թե ինչպես են հորը աքսորել, միայնակ մայրը ինչպիսի տառապանքներով է չորս որբ մեծացրել...

«Տասնհինգ տարի կոշկակար եմ աշխատել», - մի օր սկսեց պատմել իր կյանքն ու շարունակեց, - «Տասնհինգ տարի և ոչ մի առաջադիմություն, մի կերպ յուր էինք գնում: Որոշեցի աշխատանքս փոխել: Երկար դես ու դեն ընկնելուց հետո հետաքրքիր մի առաջարկ եղավ, խորհուրդ տվեցին հիվանդանոցում պահակ աշխատել: Սկզբում ամաչում էի, պատիվ չբերող աշխատանք էր թվում, բայց երբ համաձայնվեցի ասացին, այդ աշխատանքը տաս հազար ուրլի արժե: Փող չունեի: Դեսից-դենից հավաքեցի: Աշխա-

տավարձի մասին խոսք չեղավ, ասացին այնքան եկամուտ կունենաս, որ ամիսը յոթանասուն ուսուցիչ ծրագրերի կլծվա: Այդպես էլ եղավ, այնպես որ չգիտեմ աշխատավարձը ինչ բան է, անգամ ամեն ամիս վերևներին, սկսած գլխավորից, նալոկ եմ տալիս, չտալ չեմ կարող, կաշառակերություն մեջ բռնել կտան ու հայդե, հինգ-վեց տարի կորար: Բայց լավ դուխ եմ հավաքել, ցավդ տանեմ, փողը դուխ է տվել, վերցնում եմ, չեմ ամաչում, սովորություն է, չեմ էլ զգում, որ կաշառք եմ վերցնում, դա օրենքի պես բան է դարձել, ինձ թվում է, թե հենց սա է ճիշտը, ոնց կարելի է առանց վճարելու հիվանդ տեսնել, սա դարձել է կենսաձև, որից չեմ զժգոհում: Փող ունեմ, սաղին էլ ք---ծ ունեմ...

Սա պահակն էր, իսկ բժիշկներն ու բուժքույրերը...

SUՔՄԻ-SUՔՄԻ

Պահակը մի կողմից, բժիշկներն ու բուժքույրերը մյուս կողմից, «նվերի» անվան տակ թալանում էին: Կինս երեխային էր խնամում, իսկ իմ իննիսուն ուսուցիչ աշխատավարձով...

Հորաքրոջս, Իրանից ուղարկած զառ կտորներով գնած ավտոմեքենան գցեցի «գրդոնի»: Այդպես էին

ասում փափախչի տաքսիներին: Ես էլ դարձա փափախչի: Աշխատանքս՝ աշխատանք չէր, դիրեկտորս իր քաչաժ օդին խմում, ժամը մեկին-երկուսին փախչում էր, մյուս աշխատակիցներս էլ ըմբռնումով էին մոտենում իմ բացակայությունը...

Օրը երեք ուրբի աշխատավարձ ստացողի համար, չորս-հինգ ժամ փափախ անելով տասնհինգ կամ քսան ուրբի ձեռք բերելը մեծ բավականություն էր:

Առաջին օրերը ամաչում էի, ուղևորներին կասկածանքով էի նայում, չէի կանգնում, երբեմն էլ կանգնում էի, նրանց մոտեցման ձևից վախենում, հրաժարվում էի. «Ձէ, ախպեր ջան, ճանապարհս այդ կողմից չի» արդարանում ու քամակիցս իջնող քրտինքով հեռանում էի: Բայց շատ շուտ հարմարվեցի, այլևս չէի քրտնում, քամակս՝ չոր, ամեն ձեռք մեկնողի համար արգելակում էի: Ռուբլու համ էի առել: Ամեն մի հաճախորդի վերցնելիս, հպարտ ու համարձակ, այսինքն՝ դուխով, հիվանդանոցի պահակի պես (մտքումս) հայհոյում ու ոտքս սեղմում էի գազի լեզվակին: Կարճ ժամանակում հետաքրքիր մարդկանց հանդիպեցի, մտավորական, բանվոր, արհեստավոր, հիվանդ, խմած, պոռոնիկ, մարդասպան, նստած-հելած, պարտիական, մի խոսքով նախարարից սկսած մինչև վերջարար:

Այս մեկը աչքիս մի քիչ տարօրինակ թվաց:

«Բարեկամություն, Կենտկոմ», - նստեց ու ասաց

Հաճախորդս:

Զգաստացա: Փորձեցի առանց կանոններ խախտելու հասնել կենտկոմ:

- Ի՞նչ ես աշխատում,- խորհրդավոր հարցրեց նա:
- Թանգարանում, գիտ-աշխատող, բայց...
- Հասկանալի ա, մի բացատրիր:

Որքան վատ բան կա՝ ասուպի պես անցավ մտքովս ու ինձ զգացի բանտի մեջ, իսկ երեխայիս, անտեր, անտիրական հիվանդանոցում... Ուզում էի լաց լինել, հաճույքով լաց կլինեի, բայց մեզ մոտ տղամատղու լացը ընդունված չէր:

Կենտկոմի դարպասի մոտ կանգնեցի, դռնապանը հաճախորդիս տեսավ, դռները բացվեցին, ներս մտա:

- Էստեղ կանգնիր, հիմա կվերադառնամ:

Կանգնեցի: Զգիտեմ քանի ժամ, քանի օր ու քանի տարի կանգնեցի, թեև այդ ամենը տևեց տաս րոպե: Հաճախորդս երեք մարդու հետ վերադարձավ:

- Քչիր Հաղթանակի այգի:

Քչեցի: Ռուսերեն էին խոսում: Կիսով չափ հասկանում էի: Ոոսքը հանցագործ աշխարհի մասին էր: Հսկա գումարների կաշառքների մասին: Օգտագործվող լեզուն գոեհիկ, մթնոլորտը լարված էր:

Հասանք Հաղթանակի այգի:

- Բարձրացիր, երկրորդ փողոցը՝ աջ թեքվիր:

Իջան: Առաջին նստարանին նստած՝ առաջին հաճախորդս քսանհինգանոց դրեց նստարանին,

փորձեցի մանր վերադարձնել, բանի տեղ չդրեց: Հետևից իջնողներից մեկը ևս տաս ուրբլի գցեց ու հեռացան:

Դանդաղ շարժվեցի մինչև առաջիկա խաչմերուկն ու դիմեցի փախուստի, թե ինչից էի փախչում՝ չգիտեմ, գուցե ինքս՝ ինձանից...

Որոշեցի այլևս փողոց դուրս չգալ: Երկու օր դիմացա: Փողի համ էի առել: Ընտանիքիս փող էր պետք, բժիշկն ուզում էր, քույրերն ուզում էին, պահակն ուզում էր, միլիցիան ուզում էր...

Ուզողները շատ էին, սկսած մարոմնի ու սիգարետ վաճառողներից, մինչև բարձրաստիճան նախարարներ...

Նորից ընկա փողոցից՝ փողոց: Նորից համարձակություն ձեռք բերեցի ու սովորականի պես արգելակեցի երկու միջահասակ մարդկանց մոտ: Վիճում էին: Վիճելով նստեցին ետևի նստարանին: Ամենագոնհիկ արտահայտություններն ուղղված ինչ-որ մեկի հասցեին, ասացին. «Երրորդ մաս»:

Ճանապարհս շարունակեցի: Հայտնի էր, թէ ինչ հարց էին շոշափում, մեկ էլ նրանցից մեկը շատ ջղաջին ասաց. «Կանգնիր»: Արգելակեցի: Մեքենայի մեջ հինգ ուրբլի մեկնեց ինձ, փողի ծայրը դեռ չբռնած մյուսը գրպանից մի տոմս հանեց.

- Քչիր բաժին:

Աշխարհը փլվեց գլխիս:

- Քչիր բաժին, քեզ հետ չե՞մ:

Չգիտեի ինչ անել: Մի՞թե ես պիտի դատվեի, կամ մեքենան...

- Արա, քեզ հետ չե՞նք, Քչիր էլի...

- Ախր, ես էդ մարդը չեմ, մի ըոպե համբերեք...

- Քչում ես, թե՛ քչել տամ,- գրողն ես անում գյաղա, էդ մարդը չեմ, ո՞րն ա:

- Պարտավոր եմ, ցավդ տանեմ, մի ըոպե լսեք, բացատրեմ, ուսուցիչ եմ, թանգարանի աշխատող...

- Որտե՞ղ ես աշխատում:

- Էջմիածնի պատկերասրահում:

- Բա էս մեքենան որտեղի՞ց:

- Մերոնք Պարսկաստանից են օգնել:

- Ջառ են ուղարկե՞լ, թե՞...

- Այ, ցավդ տանեմ, քչիր բաժին, միլիոնների հետ եք խաղում, չե՞ք ամաչում:

- Ձեր ցավը տանեմ, հիվանդ ունեմ, չեմ հասցնում, հասկանում եք: Քաղաքով մեկ խայտառակ կլինեմ, բոլորը ճանաչում են, ես էդ մարդը չեմ, եկեք գրպաններս խուզարկեք, ինչ կա ձեզ, նոր եմ դուրս եկել...

- Քանի՞ տարի ա, էստեղ ես:

- Յոթ:

- Ոնց որ դասերդ լավ ես սովորել, խելոք ես երևում, ինչքա՞ն կա մոտդ:

- Չգիտեմ, ինչ կա ձեզ,- ասացի ու գրպաններս դատարկեցի: Ութսուն հինգ ութըլի էր: Մեկնեցի

նրանց:

- Գյաղա էս ի՞նչ փող ա, որ:

- Մի ամսվա աշխատավարձս ա, դրա համար էլ:

Փողը վերցրեցին ու իջան:

Բենգին ունեի, ինձ հասցրի տուն ու համոզվեցի, որ
ով փող ունի, իսկականից սաղին ք---ծ ունի:

ԶՐՈՍԱՇՐՋԻԿԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՌԱԿԻՂԸ

Սովետական և իրանական պետությունների քիչ
թե չատ առաջընթաց ապրած բարիդրացիական
հարաբերությունները մեզ՝ հայրենադարձներիս, բե-
րեց մեծ երջանկություն: Ճիշտ է իրանական
պետությունը մեզ չէր թույլատրում այցելել ծննդա-
վայր, բայց թույլ էր տալիս, որ իր հայ քաղա-
քացիները այցելեն Հայաստանում գտնվող իրենց
հարազատներին:

Հրավիրել էինք հորաքրոջս ու հորեղբորս: Ըստ
կարգի նրանց տարանք ՕՎԻՐ գրանցելու: Գրան-
ցեցին ու այցելուների համար գրանցված վայրից,
այսինքը մեր տանից հեռանալու չառավիղ գծեցին՝
քսան կիլոմետր:

Նախ չհավատացինք, զարմացած նայեցինք միմ-

յանց երեսին.

- Օրենք է, մի զարմացեք, քսան կիլոմետրից ավելի հեռանալու դեպքում պիտի իրավունք վերցնեք,- հանգիստ կրկնեց պաշտոնյան:

- Քեոիս Արարատում է ապրում, ինչպե՞ս պիտի գնանք տեսնելու:

- Թող ինքը գա,- ասաց պաշտոնյան:

- Հիվանդ է:

- Բուժեք:

- Երկար տարիների հիվանդ է, անբուժելի:

- Ես մեղավոր եմ, օրենք է և վերջ:

* * *

Հետո իմացա, որ բացառությամբ արտասահմանյան այն ուսանողների, որոնք հետագայում արտասահմանյան որևէ երկրում ծառայելու էին սովետաժողովրդյան կա-կե-բե-ին, նրանք ևս իրենց հանրակացարանից քսան կիլոմետր շառավիղով միայն կարող էին վայելել երկիրը:

* * *

Տուրիստների հետ, առանց ՕՎԻՐ-ի թույլտվության, չրջեցինք ողջ Հայաստանը, հասանք Լենինգրադ, Մոսկվա, Սոչի, վայելեցինք ծովափնյա հրաշալիքները, այսինքը եղանք այնտեղ՝ ուր որ ցանկանում էինք: Իսկ որտեղ անձնագիր էր պահանջվում՝ փող էինք ցույց տալիս:

Տուրիստի հետ գնացքով կամ մեքենայով ճամփորդելն ավելի դյուրին էր, անձնագրի խնդիր քիչ էր լինում:

Վերադառնում էինք Մոսկվայից: Նպատակահարմար գտանք Երևանի փոխարեն իջնել Հոկտեմբերյան ու այնտեղից էջմիածին տաքսիով հասնել: Չորս հոգի էինք՝ ես, հորեղբորս տղան և երկու տուրիստները: Երկու տաքսիների մեջ տեղավորեցինք մեր ճամպրուկներն ու ճանապարհվեցինք դեպի էջմիածին: Ճանապարհին Հոկտեմբերյանի ԳԱՅԻ-ն բոլոր մեքենաներին պարտադիր պահում, ստուգումներ էր անցկացնում: Խաղողահավաքի ամիս էր, խաղողագողեր էին փնտրում, մեզ ևս կանգնեցրին: Տաքսին, որի մեջ նաև ես էի, ավտոտեսուչին ծանոթ էր, առանց ստուգման շարժվեց, նրան տվեցի մեր տան հասցեն ու խնդրեցի հորաքրոջս տեղ հասցնի: Մյուս տաքսին ենթարկվեց ստուգման, խաղողի փոխարեն ճամպրուկներ իջեցրին, թվով չորս ու սկսվեց ստուգում-խուզարկումը:

Մոտս չորս-հինգ հազար ուրբլի փող կար, տվեցի տուրիստ հորեղբորս ու ուղարկեցի հիսուն-հարյուր մետր հեռավորության վրա, միակ ծառի մոտ, մեզ սպասելու, և զգուշացրի՝ հարցումների դեպքում ասի, որ իրենց հորեղբայրն է, եկել է կայարան դիմավորելու, որ ինքը Մոսկվայում կամ Լենինգրադում չի եղել:

Ինչպիսի լուտանքներ ասես, որ մեր գլխին չթափեցին, էլ սրիկա, սպեկուլյանտ, ախպար, անբան պարսիկ... Համոզված էին, որ ես ու հորեղբորս տղան ճամպրուկները Մոսկվայում լցրել ենք՝ Հայաստանում վերավաճառելու նպատակով: Սկզբում ես նրանց հինգ հարյուր ուրլի առաջարկեցի, որպեսզի հորեղբորս Մոսկվայում լինելը չբացահայտվի, բայց մեծ ախորժակներ փայփայելով չհամաձայնվեցին այնքան ժամանակ, որ ստիպված պահանջեցի մեզ ուղարկեն քաղբաժին՝ ոստիկանատուն:

Մեկ ժամից ավել սպասեցինք: Երևացին երկու Վոլգա, իջան չորս հոգի, հանդիսավոր մոտեցան մեզ, առանձնացրին, սկսվեց հարցերի տարափր: Ջանգա՜հարեցին էջմիածին, իմացան մեր ով լինելն ու մոտեցան ավտոտեսուչներին.

- Արա, գող բռնեք, գող, էս երիտասարդը թանգարանի գիտաչխատող ա, դասատու, խելքը գլխին տղա ա, անասուններ, գող բռնեք, ոչ թե մտավորական...

Ավտոտեսուչներից մեկը մոտեցավ ինձ, օգնեց ճամպրուկները հավաքելու՝ ականջիս տակ ասաց.

- Տուր, խոստացածդ հինգ հարյուրը, տուր՝ գնա:

- Հիմի ինչի՞ տամ, տալիս էի, որ դրանց չկանչեք:

- Տուր, տուր՝ պրծի, էսքան ապրանք ես տանում, բա մեր փայր ո՞րն ա, Հոկտեմբերյան ես գնում գալիս, քեզ կանգնեցնող չի լինի...

Երկու հարյուրով բարիչեցինք:

Ամեն ինչ անցավ խաղաղ ու «բարեկիրթ»...

Մի քանի ամսով հարթվեցին Հոկտեմբերյան տանող ճանապարհի խոչընդոտները...

ՈՒՂԻՂ ԵԹԵՐ

Մեր երգչախումբն ինչ-որ հաջողություններ արձանագրելուց հետո, Հայաստանի ինքնագործ խմբերի առաջնությունում գրավեց առաջին պատվավոր տեղն ու ոսկե մեդալով պարգևատրվելուց հետո հրավիրվեց կենտրոնական հանրային հեռուստատեսություն:

Մեր ելույթի հեռարձակումը պիտի լիներ ուղիղ եթերով: Երգչախմբի գեղարվեստական ղեկավարի, խմբավարի բոլոր պնդումները զուր անցան: Ասում էին պլյոնկա չունենք ու վերջ:

Պատրաստ էինք: Ելույթից առաջ խմբավարը մոտեցավ ինձ ու ասաց, որ նրանք ուզում են մի համարից հետո տեղում կանգնած մի քանի խոսք ասես, թե՛ որպես հայրենադարձ, թե՛ մշակույթի տան աշխատող՝ գեղմասվար:

Համաձայնվեցի:

Տաս րոպե անց, ոմն «մեկը» մի թերթիկ բերեց ու

փակցրեց իմ առջևում կանգնած աղջկա թիկունքին, ապա նայելով աչքերիս՝ ասաց. «Երբ կզգուշացնենք սա կկարդաս, բայց մինչ այդ մի քանի անգամ կարդա, որ վարժվես»:

Կարդացի ու հրաժարվեցի:

Հետո ինձ կանչեցին ու պատճառաբանելով սանրվածքս ու մորուքս, թույլ չտվին մասնակցելու համերգին:

Իմ փոխարեն, հեռուստալրագրողները կազմել էին այնպես, որ համարյա ամփոփվում էր հետևյալ ձևով. «Կապիտալիստները քաք են, սովետները՝ պուպուշ, իսկ ես՝ Սովետական Միությունում ձեռք եմ բերել ազատություն ու ապրում եմ, որպես երջանիկ քաղաքացի»:

ԴԻՊԼՈՄՆԵՐ... ԴԻՊԼՈՄՆԵՐ...

Պիտի նորից խոստովանեմ, որ իրոք մեր երգչախումբը լավն էր: Թմբկիկ, գեղադեմ ու տաղանդավոր խմբավարի շնորհիվ, ինքնագործ խմբերի մեջ, կարողացել էինք մեծ հաջողությունների հասնել:

Բաքու գնալու հարց կար: Էջմիածնի չրջանային մշակույթի բաժինն ու Կուլտուրայի մինիստրությունը գժտվել էին: Ինչ-որ գումարների խնդիր էր ծագել,

մեկը՝ մյուսի վրա էր բարդում: Այդպիսի հարցեր լուծելու մեջ մեր թմբլիկ ու գեղաղեմ ղեկավարը միակն էր: Նա կարողացավ շատ կարճ ժամանակամիջոցում, երկու հաստատություններին լարել միմյանց դեմ ու ձեռք բերել Բաքու գնալու համաձայնությունը, պայմանով, որ Հայաստանի Հանրապետության սահմաններում մի քանի համերգներ տանք: Մի խոսքով, մեզ անհրաժեշտ էր գովասանագրեր ու դիպլոմներ:

Առաջին համերգը տեղի ունեցավ Էջմիածնի «վայենի չաստում» (գորանոցում):

Բազմազգ զինծառայողների ուրախությունը չափ չկար: Երգչախմբում բավականին երիտասարդ ու սիրուն աղջիկներ կային: Լեփ-լեցուն դահլիճում սուլոցներ լսվեցին: Վարագույրի հետևում պատրաստվում էինք համերգին: Ղեկավարը նստեց դաշնամուրի մոտ: Ստեղներ փնտրեց, չկային, ոչինչ չկար, եղածն էլ կամ ջարդված էր, կամ պարապ տեղն էր սեղմվում: Թմբլիկի աչքերը չուվեցին, այտերը կասկարմիր՝ բեմից թռավ դուրս: Մենք խառնվեցինք:

Համբոն մեր երգչախմբի ուրախությունն էր: Հրաշալի ակորդեոն էր նվագում: Միշտ գինովցած էր ներկայանում փորձերին, առավել ևս համերգներին: Չէր մոռանում իր ուրախությունը մասնակից դարձնել նաև երգչախմբի բասերին: Իրավիճակը տեսնելով տրամադրությունը բարձրացավ: Առիթից օգտվեց,

բացեց օդու շիշն ու սկսվեց կարճ ու կտրուկ կենացները: Շիշը դատարկվեց: Մոտեցավ դաշնամուրին ու սկսեց նվագել. Ինչ-որ ձայների տակ սկսեց երգել «Արա վայ վայ, վայ վայ ու վայ»: Մեր ծիծաղն ու դահլիճի հրճվանքը խառնվեց, Համբոն ոգևորվեց, դահլիճը ոտքի կանգնեց, ուրթմիկ ծափերով թեթևացրեց դաշնամուրի հոգսը, իսկ մենք փլվել էինք:

Մեկ էլ ղեկավարը ներս մտավ.

- Այլանդակ, ես էդպես էլ գիտեի, հո խայտառակ չես անելու,- գնաց դեպի Համբոն, իսկ վերջինս, անմեղ գառնուկի պես՝ ուղիղ գնաց իր տեղը: - Ի՞նչ ես ոչխար ձևանում, տունդ մոտիկ ա, գնա ակորդեոնդ բեր:

Երգչախմբի անդամները ծիծաղից թուլացել էին: Դասական երգեր և ակորդեոն: Համբոն էլ դրան էր սպասում: Վայրկյանապես չքվեց: Դահլիճը համբերութունից դուրս էր գալիս: Սուլոցներն ու աղմուկը ղեկավարին հանեց բեմի եզր՝ վարագույրի առաջ: Զինվորներն իրար խառնվեցին, խտացան, մոտեցան բեմին ու զարմացական ու հիացմունքի հառաչանքներով սկսեցին ծափահարել.

- Սիրելի զինվորներ,- սեթևեթևով սկսեց խմբավարն ու շարունակեց,- մի քիչ էլ համբերեք, խնդրում եմ, հրաչալի երեկո ենք ունենալու, միայն դաշնամուրի հարցն է, հիմա, մի քանի ըոպելից ամեն ինչ կկարգավորվի: Խնդրում եմ, մի քիչ էլ համբերեք:

Բեմ բարձացավ մի բարձրաստիճան սպա, հրամայեց բոլորին գրավել իրենց տեղերն ու խեղդվեն մինչև համերգի սկսելը:

Ակորդեոնի ձայնը ավետեց Համբոյի գալուստը, իսկ մենք պատրաստ էինք: Մինչ խմբավարն ու ուս սպան կուլիսներում տաք-տաք «զրուցում» ու բարձր ծիծաղում էին, արևելյան ուրախ պարեղանակով Համբոն մտավ բեմ ու դահլիճից լսվեց ուրիշ մի Ժամեր:

- Վերջ տուր, էդ այլանդակությանը, մենք լուրջ համերգի ենք պատրաստվել,- գոռաց թմբկի խմբավարն ու գնաց դեպի Համբոն:

- Լուրջ համերգ, ակորդեոնով,- ծիծաղը խեղդելով ասաց Համբոն ու ակորդեոնը ուսին վազեց դեպի դաշնամուրը, այն դրեց դաշնամուրի վրա ու անցավ խմբի հետևը, բասերիս մոտ ու օղին գրպանից հանեց:

- Այ, տղա, ես գիտեմ, նորից այլանդակությունով ես զբաղված, դուրս արի ասում եմ:

Համբոն օղին թողեց ու գնաց: Մենք դանդաղ, առանց շտապելու, վայելեցինք նաև այդ շիշն ու հետևեցինք խմբավարի ցուցմունքներին:

Ակորդեոնը փոխարինել էր դաշնամուրին: Համերգը արտասովոր էր: Ամեն մի դասական ու ժողովրդական երգ ավարտվում էր պարեղանակով: Զինվորները պար էին բռնում, խմբի կեսը թավալվում էր

միմյանց ոտքերի տակ, խմբավարը ուրախ էր, խմբի հետ ծիծաղում, նույնիսկ ոգևորում էր, որպեսզի զինվորների տրամադրությունը ավելի բարձրանա: Նրանք կուտակվում էին բեմի առաջ, երգչախմբի, խմբավարի ու հանդիսատեսի անմիջական շփումն այնքան խորացավ, որ մի քանիսը բեմ բարձրացան ու սկսեցին պարել: Խմբավարի աչքերից՝ արտասուք էր գլորվում, նա շարունակում էր չափ տալ: Թե ինչ էր չափ տալիս՝ ինքն էլ արդեն չգիտեր: Չղիմացավ, բեմից դուրս եկավ: Համբոն թռավ մեջտեղ ու մի ուրախ երաժշտությունը զինվորներին հրավիրեց պարելու: Երգչախումբը նստեց ու սկսեց ծափ տալ: Համերգը վերածվեց քեֆի, որտեղից՝ որտեղ հայտնրվեց նաև մի դհոլ: Զինվորներից մեկը միացավ ակորդեոնին:

Առաջին անգամ էի ակորդեոնով երգչախմբային համերգ լսում, այն էլ իմ մասնակցությունը:

Կուլտուրայի տուն վերադարձանք երեք դիպլոմ-գնահատագիր-գովասանագրով:

Բաքու զնալու պայմանները բավարարվել էր:

ԴԵՊԻ ԲՈՒԼՂԱՐԻԱ

Բաքվից ևս բերինք մի խուրձ «Գովասանագրեր» ու պատիվ ունեցանք ուղևորվելու Բուլղարիա՝ համերգներին:

Երգչախմբի բոլոր անդամների տվյալները ուղարկեցին համապատասխան հաստատություն: Վիզա կամ թույլտվություն էր անհրաժեշտ:

Ես ու կինս մերժվեցինք: Ինչու... Համոզված էինք, որ պատճառը մեր Իրանի ծնունդ լինելն էր...

Տասնհինգ տարի անց, Լոս Անջելեսում ծանոթացա սովետական նախկին պաշտոնյա, հարգարժան մի մարդու հետ, որը քրքիջով հիշեցրեց մեր կենսագրությունն այդ էջը ու ասաց, որ իմ և կնոջս Բուլղարիա մեկնելու արգելքը եղել է ինքը: Իմ ինչու՞-ին՝ պատասխանեց այսպես.

- Պլան էր, ցավդ տանեմ, ես շատ եմ հասկանում ինչու: Մի քանի հոգու պիտի մերժեինք, ամենահարմարը դուք էիք, համ ամուսիններ էիք, համ էլ Իրանի ծնունդ:

- Իսկ էդ տաս ավելորդ անունները ովքեր էին, հարցրի ես:

- Է, պարզ չի, ոնց որ չգիտես, կամ ջոջերի հարազատներ, կամ էլ կա-կե-բե-ի աշխատողներ:

ԱՆՂՐԵԱՍԻ ԷՇՆ ՈՒ ՅՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին գտնվում էր մեր տանից մոտավորապես մեկ կիլոմետրի վրա: Իսկ Անդրեասը ապրում էր մեր շենքի հարևանությամբ գտվող, բնակելի շենքի երրորդ հարկում: Հայաստան մուտք գործելուս առաջին իսկ օրերին իմացա, որ նրա էջը պահվում է Շողակաթ պատմական մեծ նշանակություն ունեցող եկեղեցում, արժանահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս, շինարարի համբավ ձեռք բերած Վազգեն Առաջինի, ճիշտ քթի տակ:

70-ականների վերջերին, նկատեցի, որ Անդրեասի էջի երգեցիկ ձայնը ավելի հաճախակի է հասնում մեր տուն: Անդրեասի էջին հանել էին եկեղեցուց և Անդրեասը նրան մի կերպ տեղավորել էր երկու մետաղյա ավտոտնակների արանքում: Գիշերները Անդրեասը էջին բաձրացնում էր բնակելի շենքի երրորդ հարկ, որպես ընտանի կենդանի:

Բակի երեխաների ուրախությունն էր: Ամեն օր էջին երեք հարկ աստիճաններով բարձրացնելը դարձել էր ծես: Չէինք հասկանում, Անդրեասը չէր ուզում բաժանվել էջից, թե՞ էջը՝ Անդրեասից: Սա, մինչև օրս առեղծված է մնացել, որովհետև քաղաքի կենտրոնական մասում այդ տեսակի էջի գոյությունը անհասկանալի էր ոչ միայն ինձ, այլև ամբողջ քաղաքի համար...

1996 թվականին էջմիածին կատարած այցե-

լուծյան ժամանակ տեսա, որ էչի զոռոցին փոխարինելու են եկել, միջնադարյան հրաշալի շարականները:

ԾՊՏՎԱԾ ՀԱՎԱՏԱՅՅԱԼԸ

Երևանում, ծնունդ էինք հրավիրված: Էջմիածնից պետք է գնայի Աբովյան քաղաք, վերցնեի ընկերոջս ու նրա կնոջը, վերադառնայինք Երևան, ուտեինք, խմեինք ու նորից գնայի Աբովյան ու վերադառնայի Էջմիածին:

Հաճախ էի լինում Աբովյանում: Ամեն մի շենք ու ճանապարհին ամեն մի թուփ՝ ծանոթ էր: Լավ չեմ հիշում Երևանի որ մասում էր ընկերոջս տունը, ընկերներ էինք, բայց հազվադեպ էինք միմյանց տանը հանդիպում, Երևանի կենտրոնը ամեն ինչով բավարարում էր մեզ:

Մի քիչ ուշացումով ներս մտանք: Երեսուն-քառասուն հոգի նստած զիլ քեֆ էին անում, զգացվում էր, որ տրամադրությունները բարձր է: Մեր մուտքը նոր թա՛փ տվեց քեֆին, դեռ չտեղավորված կատակասեր սղաններից մեկը վրա բերեց.

- Արա, Խորեն, մի հարց ունեմ, ցավդ տանեմ, մինչև նստելդ կարա՞մ հարցնել:

- Ասա, ցավդ տանեմ, ի՞նչ ա էղել, որ...

- Ցավդ տանեմ, խորեն ջան, չնեղանաս էլի, բայց ուզեմ մի հարց տալ, ցավդ տանեմ, ասում եմ, ճի՞շտ ա, որ պարսկահայերը մրգի փոխարեն, ղոնաղի առաջ, խիար են դնում,- կատակասեր ծանոթս վերջացնելով հարցը, ինքը իր հարցով հիացած, սկսեց բարձր ծիծաղել, ակնկալելով նաև մյուսների ծիծաղը:

- Հա, ցավդ տանեմ, ճիշտ ա,- շատ լուրջ պատասխանեցի ես ու շարունակեցի,- պարսկահայերը նայում են իրենց ղոնաղին, ինչի նման, որ կան՝ դրանից էլ դնում են սեղանին, ի միջի այլոց տանձ էլ են դնում:

Ներկաների ծիծաղն ու հրճվանքը երկար տևեց, սկիզբ առած մեր քեֆը շարունակվեց մի քանի ժամ, մինչև կես գիշեր: Գինովցանք այն աստիճանի, որ մոռացանք. այդպիսի վիճակում չի կարելի մեքենա վարել, բայց...

Ժամը երկուսի շուրջ տանից դուրս եկանք: Ոտքի վրա մի կերպ կանգնած ընկերս համոզում էր, որ մեքենան ինքը վարի, ես պնդում էի, որ ամեն ինչ կարգին է, փողոցները ազատ են, դանդաղ տեղ կհասնենք:

Մեքենան աշխատացնելուն՝ պես սկսեցինք երգել, ես իմ գիտցած միակ երգը, նա իրը: Երևանի փողոցները ամայի էին, թվում էր, թէ դրանք միայն

մեզ համար են ասֆալտապատել: Հասանք մի խաչ-մերուկի, կանգնեցի: Ազդանշանը ցույց էր տալիս, որ ձախ թեքվելը արգելված է: Օրենք էին դրել վաճառքի, բայց այդ կես գիշերին ո՞վ էր օրենք ...

- Արա, ձախը արգելված է, գնա՞մ, թէ...

- Գնա, արա, գնա, ես օրենք դնողի, քչիր...

Ի՞նչպես կարող էի չգնալ, տղամարդ էի չէ, օրենքի հերն էլ անիծած...

Երգը շուրթերիս, ձախ թեքվելուն պես, սուլոցի ձայնն ու երկու միլիցիայի հայտնվելը դադարեցրին մենահամերգս:

Քաչեցի աջ, դանդաղ կանգնեցի:

- Արա, թող ես իջնեմ, դու շատ ես խմել,- լավության առաջարկով ընկերս դիմեց ինձ:

- Չէ, արա, ի՞նչ ես ասում, ոտքիդ վրա չես կարում կանգնել, ես կիջնեմ: Արա, պրավաս ու՞ր ա,- ինքս հարցրի ինձ ու գտա:

Իջա:

«Նորեն, ի մի արի, քայլերդ ուղիղ դիր, չխառնես, շատ չմոտենաս միլիցիային, լեզուդ ծոր չտաս...»: Ինքս ինձ խրատելով ու հինգ ուրլի, վարորդական իրավունքիս մեջ տեղադրելով մոտեցա միլիցիոներին:

- Բարի երեկո:

- Վարորդական իրավունքդ,- առանց բարևիս պատասխան տալու պահանջեց նրանցից մեկը:

Մեկնեցի:

- Էս, որտեղի՞ց ես գալիս, լավ տղա:

«Լավ տղա»ն ինձ հույս ներշնչեց: Ժպտացի:

- Բարեկամիս ծնունդն էր...

- Գիտես չէ՞, որ խախտում ես արել:

- Այո, բայց կես գիշեր է...

- Օրենքը գիշեր ու ցերեկ չի ճանաչում, լավ տղա, խախտել ես և վերջ: Խմա՞ծ ես:

- Ոչ:

- Որտե՞ղ ես ապրում:

- Էջմիածնում:

- Հենց մե՞ջը:

- Այո:

- Բայց խմած ես երևում:

- Ձէ, գավակս, մենք խմելու իրավունք չունենք:

Միայն գինի, դա էլ չափավոր:

- Էս, ինչ ա, դու տերտե՞ր ես:

- Ոչ, գավակս, վարդապետ,- ուզեցի կատակի տալ:

- Վայ, քո ցավը տանեմ, վարպետ ջան, ես էջմիածնի զորությանը մեռնեմ, վարպետ ջան, ես ինքս Հիսուսին էլ, Աստվածին էլ, հավատում եմ, նրանց Սուրբ զորությանը մեռնեմ: Էդպես էլ գիտեի, որ դու սովորական մարդ չես, քո սուրբ ջանին մեռնեմ, Սուրբ էջմիածնա զորությանը մեռնեմ, վարպետ ջան, վեկալ, տոմսդ վեկալ, քեզ բան ասող չի լինի ցավդ

տանեմ, ճիշտ ա, մենք միլիցիա ենք, բայց մարդ ենք էլի, մենք էլ ենք հավատում, որ թողեն՝ մենք էլ էջմիածին կզանք, կաղոթենք, բա ոնց... Գնա, զնա Աստծուդ մեռնեմ:

Ես չվար կանգնել ու վախենում էի վերադառնալ դեպի մեքենան: «Աստված օրհնյալ է» ասացի ծպտված հավատացյալին ու մտքիս մեջ նորից ինքս ինձ զգուշացրի. «Նորեն, ի մի արի, քայլերդ ուղիղ դիր, չխառնես...»:

ԸՍՏ ՈՒՂՂԻՉ ՏԱՆ՝ ԼԱՎՈՒԹՅՈՒՆ

Որդիս երեք տարին չբոլորած՝ մահացավ: Արյան քաղցկեղով էր տառապում:

Սովետական Միությունում միակ ձրի բանը՝ գերեզմանի հողն էր, եթե անգամ վաճառվում էր, ապա այնքան չնչին գումարով, որը չարժի հիշել: Տեղը որոշվել էր: Աներհորս հետ գնացել էինք գերեզմանատուն տապանաքար ու դագաղ պատվիրելու: Դագաղը եղավ, ամեն ինչի փոքրիկն ու նուրբը անուշ է, բացի դագաղից: Քարի համար դիմեցինք արտադրամասի վարիչին.

- Երեխա է մահացել, տապանաքարի համար ենք եկել:

- Վայ, ձեր ցավը տանեմ, օղորմի իրան, արա էս Աստված էլ ա գժվել, ի՞նչ քար եք ուզում, ասեք:

- Չեմ իմանում, մե բան տուր, որ ցրտին ու տաքին դիմանա, չճաքի,- միջամտեց աներհայրս:

- Սպասեք, էս ա, կգամ,- ասաց ու մտավ մի տնակ:

Տաս-տասնհինգ ռոպե սպասեցինք: Տնակից դուրս եկավ, նստեց մեքենան, շարժվեց ու հեռվից բղավեց. «Սպասեք, կես ժամից կվերադառնամ»:

- Այ, քո հերն անիծեմ, անիծվես հը, նամարդ, այ մարդ չես տսնում սգի մեջ ենք,- ասաց աներհայրս ու սիգարետով մի նոր սիգարետ վառեց:

Բարեբախտաբար շատ չուշացավ:

- Չուշացա, չէ՞: Էկեք, էկեք: էս քարը որ ուզեք, լավ գնով կտամ, նոր ենք բերել, ուկրաինական ա, ճաք չունի, երակներն էլ ուղիղ են, սիրուն ու դիմացկուն քար ա:

Միայն մնում էր ասել՝ շնորհավոր լինի:

Համոզեց: Խոսք բացվեց գնի մասին:

- Ձեր ցավը տանեմ, գիտեմ հայրենդարձ եք, վիշտը մեծ ա, էս քարը ամեն մարդու չէի տա, նոր երկիր եք եկել, երեխա եք կորցրել, նրա մատաղ ջանին մեռնեմ, նրա հրեչտակ հոգու խաթեր հազար երկու հարյուր ռուբլիով կտամ, բայց խոսքը մեր մեջ մնա, գնի մասին մեկին բան չասեք...

Աներհայրս սակարկելու փորձառություն ուներ: Գինը իջեցրեց մինչև ինն հարյուրի, փողը կանխիկ

տվեցինք երկու-երեք ամսից քարը մշակված ստանալու պայմանով:

* * *

Քսան տարի անց, Լոս Անջելես:

Աշխատանքի վայրում նստած եմ, հեռախոսը հնչում է.

- Այբբեն, ինչո՞վ օգնեմ,- անզլերենով պատասխանում եմ:

- Պարոն Խորենին կարելի՞ է,- հարցնում է հայերենով:

- Ես եմ, համեցեք:

- Ո՞նց ես, ցավդ տանեմ, Հ-ն եմ ախպեր, հիշո՞ւմ ես, էջմիածնի Հ-ն:

- Կներես, բայց չեմ կարողանում տեղը բերել, ո՞ր Հ-ն:

- Այ, տենց ա, էլի, լավությունն էլ չի հիշվում: Այ ցավդ տանեմ, էջմիածնում, որ Հ-ն ա քեզ լավություն արել:

- Կներես, բայց չեմ հիշում, ե՞րբ, որտե՞ղ, ինչի՞ համար:

- Ցավդ տանեմ, ավելի լավ ա չհիշեցնեմ, լավությունը արվել գնացել ա, ավելի լավ ա դրա մասին մոռանանք: Դու էն ասա, ձեր տպարանում գիրք տպու՞մ եք:

- Այո, իհարկե:

- Ցավդ տանեմ, պատմվածքների մի ժողովածու

ունեմ, հանճարեղ գործեր են, ասին դուք տպում եք, երկու հարյուր էջնոց գիրք ա, չե՞ք ասի ինձ ի՞նչ կնաստի:

- Սիրելիս, մինչև գործը չտեսնեմ, արժեք չեմ կարող ասել, բայց հազար օրինակի համար հինգից վեց հազար պիտի նկատի ունենաք: Բայց խնդրում եմ ասեք ինձ, ի՞նչ լավություն եք արել, գուցե կարողանամ փոխհատուցել:

- Հիշու՞մ ես, աներհորդ հետ եկար երեխայիդ տապանաքարի համար, հազար երկուհարյուր ուրբլիանոցը հինգ-վեց հարյուրով տվի, դե էն ժամանակ մարդկություն կար էլի, էս օրերին, էս անկախություննից հետո... Թե ու՞մ էր պետք՝ չեմ հասկանում...

- Հա, հիշեցի, լավ եմ հիշում, անասուն, բա դա լավություն ա, բա դա հիշեցնելու բան ա, հարյուրերկու հարյուր ուրբլիանոց քարին, ոչ թե հինգ-վեց, այլ ինն հարյուր եմ վճարել, սովետի թերմացք, հիմի գրող ես դարձել ու երեսով ես տալիս, որ քիչ ես կոխել: Հա, գիտեմ, վարիչ դառնալու համար կաշառել էիր, ամեն ամիս էլ վերևներին նալով էիր տալիս, բայց...

Երեք տարի անց:

Գիրք, մակագրված ինձ, գրախոսականի խնդրանքով: Հեղինակ՝ Հ. -յան

Գրախոսականս՝

Եվ այսպես Լուս Անջելեսի գրողների անդաստանին ավելացավ ևս մեկ, ինչպես Չարենցն էր ասում՝
ՔՋՋՈՂ:

«ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋԻՆ ԾՈՐՁՍ, ԿԱՄ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՅՅԱԼԻ ԳԵՐԵՋՄԱՆԻ ՊԵՂՈՒՄԸ

Ինն ամիս էր, ինչ երիտասարդը տուն չէր եկել: Եղել էին դեպքեր, որ մեկ, երկու տարով էլ տուն չէր գալիս, բայց հեռագիր տալու, զանգելու կամ երկտող ուղարկելու սովորություն ուներ, այս անգամ ընտանիքը ինն ամիս նրանից լուր չուներ:

Որոշեցին միլիցիա հայտնել: Հայտնեցին: Մի քանի շաբաթ հետաքննելուց հետո, միլիցիան հայտնեց, որ ինը-տաս ամիս առաջ, մի քանի անհայտ մեռելների թաղում է եղել, լուսանկարներ կան, կարող եք գալ նայել, գուցե ձեր փնտրածը նրանց մեջ է:

Գնացին: Մայր, եղբայրներ, քույր: Լուսանկարներից մեկը նրանց մոտ կասկածի տեղիք տվեց: Հավաստիանալու համար պահանջեցին բացել գերեզմանը: Պահանջը, ինչ-որ մի նիստություն ու սանբուժկենտրոնի համաձայնությունը ու հրամանով բավարարվեց:

Երևույթը աննախադեպ էր: Մի քանի հոգի էինք, սանպետկայանի և միլիցիայի ներկայացուցիչների հետ ուղղվեցինք դեպի անհայտի գերեզմանը: Լուռ էինք, չգիտեինք ուր են առաջնորդում մեզ: Միլիցիան ինչ-որ թմբի մոտ կանգնեց, սիգարետը դեն չպրտեց ու դիմեց սանպետկայանի ներկայացուցչին.

- Արա, Վալոդ, ոնց որ էս ա:

- Համոզված ես, արա, չբացենք խայտառակ լինենք:

- Չէ, արա էս ա, բաց արա:

- Ո՞վ բացի, արա,

- Ես չատ գիտեմ, ես հո չեմ բացելու:

- Կարո՞ղ ա, ես պիտի քանդեմ:

Զավեչտը պատկերացնել չէր կարելի: Մեզ թվում էր նախապես գերեզմանը բացված կլինի, կամ ինչ-որ մարդկանց կարգադրություն՝ այն բացելու համար: Ոչ մարդ կար, ոչ՝ հնարավորություն: Ստիպված տղաներից մեկը վերադարձավ քաղաք՝ բահ ու քլունգ բերելու:

Դեռ պարզ չէր՝ ում գերեզմանն էինք բացում, բոլորը սարսափի մեջ էին, բահն ու քլունգը մեկը՝ մյուսին փոխանցելով, մոտենում էին ինն ամիս առաջ թաղված, սովետական ինչ-որ անհայտ քաղաքացու, որի ինքնությունը պետք է պարզեինք մենք:

Քլունգը դիպավ տախտակին, երիտասարդը փոսից թռավ դուրս:

Տաս-տասնհինգ մետրի վրա կանգնած միլիցիան ու սանպետկայանի ներկայացուցիչը մոտեցան:

Ոչ ոք չէր ցանկանում բացել դազադի կափարիչը: Անգամ կափարիչի բացելու համար ոչ մի գործիք չկար: Տղաներից մեկը վազեց դեպի ավտոմեքենան, ինչ որ գործիքներ բերեց: Մեզ կապիչներ տվեցին: Մեխերը ճոռալուն պես՝ ահավոր հոտ փչեց, բոլորը ետ քաշվեցին, միայն սանպետկայանի ներկայացուցիչն ու հանգուցյալի եղբայրը քիթ ու բերան փաթաթելով մոտեցան կիսաբաց դազադին ու անմիջապես կափարիչը դրին ու հող լցրին:

Հանգուցյալի ինքնությունը հաստատեց եղբայրը:

Նույն քաղաքի միլպետը հանգուցյալի հինգ տարվա կիպ հարևանն էր, քանի, քանի անգամ էին միասին ճաշի նստել, խաչ կերել, միասին քեֆերի սեղանների մասնակցել... բայց նա պնդում էր, որ հանգուցյալին չի ճանաչել ու հանցագործից ոչ մի հետք չկա:

Ոչ մի թերթում, ոչ տեղեկություն, ոչ էլ լուսանկար, իսկ ուղիոններն ու հեռուստահաղորդումները, ընդհանրապես, հանցագործություններից գաղափար անգամ չունեին, լրատվամիջոցներին արգելված էր քիթ խոթել սովետական կարգերին ոչ հարիր երևույթների մեջ: Էջմիածնի միլիցիայի հատուկ բաժանմունքը նույնպես վարվեց նաև սպանվողի եղբոր հետ: Նրան կանչել ու ասել էին. «Եթե քիթդ

ամեն տեղ խոթես վերջը լավ չի լինի, բան է, պատահել է, գնա կյանքդ շարունակիր, ընտանիք ունես, մեղք ես...»:

Կյանքը շարունակվեց...

ՓԵՉԱՏԻ ԿՈՒԿ

1969 թվականից, եթե չեմ սխալվում, այսինքն՝ Կոմիտաս վարդապետի հարյուրամյակին, նախկին Գևորգյան ճեմարանի շենքում բացվել էր մեծ երգահանի թանգարանը, որտեղ գտնվում էր նաև Երևանի պետական պատկերասրահի մասնաճյուղը: Այդ հարկի տակ կրթվել և հասակ էին առել մեր ժողովրդին պատիվ բերող տասնյակ հսկաներ, ինչպիսիք էին՝ Կոմիտաս վարդապետը, Հ. Հովհաննեսյանը, Ռ. Պատկանյանը, Լեո Կամսարն ու շատ ուրիշներ...

70-ականներից այդ շենքի ներսում պատերազմ էր սկսվել: Խնդրո առարկան փեչատն էր:

Ոմն, աշխարհագրություն դասատուի նշանակել էին Կոմիտասի թանգարանի դիրեկտոր: Վայել-չակազմ, միշտ նույն կոստյումով, կոկիկ հագնված, փողկապը չմոռացող, քթի տակ խոսող մարդ էր նա: Անելիքի և պարտավորությունների մասին ոչ ոք ոչինչ չգիտեր: Չնայած իր երիտասարդ տարիքին, ուսերին միշտ ձյուն կար, թեփոտ էր, թեփը նկատելի

էր անգամ դեմքին: Իսկ Երևանի պետական պատկերասրահի էջմիածնի մասնաճյուղի վարիչը, որը նշանակվել էր Երևանից, արվեստաբան էր, դասախոս, կարճահասակ ու ճաղատ, քչախոս, անելիքը միայն նկար կախելու ժամանակ, նկարի տեղը ցույց տալն ու երբեմն էլ թեքությունների համար նկատողություն անելն էր: Այս երկու հիմնարկները մի շենքում պիտի ունենային մի հրամանատար՝ որի տրամադրություն տակ պիտի լիներ այդ հիմնարկի փեչատը: Իսկ ո՞վ էր հրամանատարը, պարզ չէր: 1977 թվականին ինձ, գիտաշխատողի հաստիքով, գործուղեցին Երևանի Պետական Պատկերասրահի, նույն այս մասնաճյուղում աշխատելու: Դեռ «փեչատի» հարցը լուծված չէր: Իմ անելիքը նույնպես անհայտ էր:

Գիտաշխատող: Ինչ գիտություն, ինչ բան: Երեք գիտաշխատող, մի ավագ գիտաշխատող, երեք էքսկուրսավար և Երևանից ժամանած մի վարիչ: Եթե հաշվի առնենք նաև յուրաքանչյուր սենյակում նստած մի-մի հսկիչներին ու Կոմիտասի թանգարանի գիտաշխատողներին, դիրեկտորին, տոմսավաճառին ու հավաքարարներին, շուրջ քսանհինգ աշխատող կար նույն հարկի տակ:

Առավոտյան ժամը իննին աշխատանքը սկսվում էր: Մինչև տասնմեկը ծխելու և աղջիկների հետ կատակելու, անեկդոտներ պատմելու ժամ էր: Տասնմեկին ժամանում էր Երևանից նշանակված վաթսուներե անց վարիչը՝ ընկեր Հովհաննիսյանը:

Սուրճը պատրաստվում ու մատուցվում էր ժամը տասնմեկանց կեսին: Վարիչս չէր ծխում ու ամեն անգամ սուրճը խմելիս ասում էր. «Սուրճը առանց ծխելու չի կարելի խմել, բայց ես խմում եմ», խմում ու գրպանից հանելով տափաշիչը, իր քաշած տնական օղուց մի-մի բաժակ հյուրասիրելով նաև ինձ, համարյա դատարկում էր այն, ապա չրջում միջանցքներով ու ցուցասրահներով, այս ու այն նկարները անտեղի տեղաչարժում ու վերադառնում էր գրասենյակ, այսպես ամեն օր մի կերպ ժամանակը սպանելով, ժամը երկուսին «Թագավորությունը» հանձնում էր մեզ ու... «Գնում եմ մինիստրություն, այս փեչատի հարցը դեռ չենք լուծել», - այս կամ մեկ այլ պատրվակով դուրս էր գալիս ու գնում:

Պատմեմ տասնյակ ղեպքերից մեկը:

Ինչ-որ մեկը մի քանի կտավ պիտի տաներ Երևան՝ ցուցադրության: Երևանից գրություն կար, մեր վարիչը այդ գրության տակ պիտի դներ իր ստորագրությունն ու փեչատը, իսկ փեչատը Կոմիտասի թանգարանի դիրեկտորի մոտ էր: Վարիչս ինձ ուղարկեց երկրորդ հարկ՝ փեչատը բերելու: Դիրեկտորը տեղում չէր, անելիք չուներ՝ ինչու պիտի տեղում լիներ: Սպասեցինք: Երկու-երեք ժամ հետո ժամանեց: «Երևանում էի, մինիստրությունում», - առանց հարցի սպասելու պատասխանեց նա: Ի՞նչ ա եղել, ի՞նչ եք խառնվել:

Փեչատը խնդրեցի: Չտվեց:

- Ես պիտի փեչատեմ, գրությունը բերեք վերև, ես փեչատեմ:

Վարիչս կատաղեց, իրարանցումը հասավ քաշկըռտոցի: Թանգարանն ու պատկերասրահը վերածվեց շուկայի, հայհոյանքները հասան մինչև վերին հարկ՝ Կոմիտասի ականջին, ապա քաղսովետ, ուայկոմ ու մինիստրություն:

Ինչ արած, այդպես էր: Տարեկան 900- 1000 այցելու ունեցող, շուրջ իննը բարձրագույնավարտ, երկու գիտությունների թեկնածու և տասնչորս չարքային աշխատող ունեցող այդ երկու հիմնարկները, մինչև Հայաստանի անկախությունը չկարողացավ լուծել փեչատի հարցը: Փեչատ, որը ամիսը մեկ կամ երկու անգամ օգտագործելու համար մի բարձրագույնավարտ ու մի դոցենտ աշխատավարձ էին ստանում:

Ի միջի այլոց: Մի օր դիմեցի Երևանի Պետական պատկերասրահի մեր դիրեկտորին՝ ընկեր էդվարդ Իսաբեկյանին, հետևյալ առաջարկով. «Ընկեր Իսաբեկյան, ամիսը ստանում եմ իննիսուն ռուբլի, ունենք քսանհինգ աշխատող և տարին շուրջ հազար այցելու, եթե ինձ իննսուն ռուբլու փոխարեն վճարեք երկու հարյուր ռուբլի, ընդամենը տաս աշխատող է ինձ պետք, որը կարողանամ մեր այցելուների թիվը հասցնել մինչև հինգ, անգամ ութ հազարի»:

«Ջահել ես, տղա ջան, մենք էլ ենք հասկանում, միջնակարգ, թե բարձրագույնն ավարտած, գիտաչ-

խատող, թե՛ հսկիչ, բոլորդ էլ գործազուրկ եք, պարզապես հաստիքներ են, ստեղծում ենք, որպեսզի փողոցներում չթափառեք, Ամերիկայում գործազուրկը ձեզանից լավ է ապրում, գնա, գնա և մեզ մի խրատիր»:

Սա էր ազնիվ մարդու պատասխանը: Իսկ ես կամաց-կամաց դառնում էի հարբեցող, որովհետև իմ վարիչը ամեն օր, մինչև ժամը երկուսը մեկ կամ երկու բաժակ հյուրասիրելուց հետո, ինչ-որ պատրվակով Երևան վերադառնալուն պես, ես ևս ծլկում էի մեր մոտի սրճարանը, որտեղ հավաքվում էին քաղսովեստի ու ռայկոմի բարձրագույնավարտ «անգործներն» ու գարեջրի չչեր դատարկում: Ժամը հինգից հետո, տղերքով ինչ-որ տեղ ժամանակ էինք անցկացնում: Տնական օդին ընդամենը երկու ութլի արժեք:

Մի օր էլ, աշխարհագրության մասնագետ, Կոմիտասի թանգարանի դիրեկտորին հարցրինք, թե ինչու՞ Կոմիտասի ծննդայան 110-ամյակը չեն տոնում, զարմացած, հարցին պատասխանեց հարցով. «Խի՞, ե՞րբ ա, որ»:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՈՂԲԸ

Ամեն օր, աշխատանքի ժամերին, հավաքվում էինք կենտրոնական հրապարակի վրայի սրճարանում ու ալարկոտ զրուցում, ծխում, սուրճ ու գարեջուր էինք վայելում: Հետաքրքիր միջավայր էր, արվեստի բոլոր բնագավառներից ներկայացուցիչներ ունեինք, քաղաքի առօրյան գալիս, այդ սրճարանով անցնում էր:

Մեր զուսպ ու բարեկիրթ ճարտարապետներից մեկը այդ օրը հայհոյում էր, թե ու՞մ՝ ինքն էլ չգիտեր:

«Արա, ես դրա տիրու մաման, արա, փաստաթղթեր են դեմ տվել, ասում են ստորագրի, արա ո՞նց, արա, ես ձեր լավի... հա, հասկացանք, մի շենք հանձնել ենք, մեկը դեռ հինգերորդ հարկի վրա ենք, ո՞նց ստորագրեմ, հլա էդ հեչ, արա, բա ես ձեր լավի....., Բոյինի շենքի հիմքը նոր ենք դրել, էդ խի՞ եք հանձնած ներկայացնում, բա որ վաղը մյուս օրը... Արա ես դրա... Արա կարայի չստորագրել, արա, վաղը մյուս օրը մի բան գլխիս կսարքեն ու հայդե... Ընտանիք ունեմ արա...

Քաղաքը կառուցվում, ընդլայնվում էր, շենքեր չավարտված, «լցվում» էր բնակիչներով: Քաղաքը բնակիչների աճ էր արձանագրում, պլանները կատարվում էին հինգ հարյուր տոկոսով, ծայրահեղ

ղեպքում ինչ-որ տեղ, ինչ-որ մեկը սպանվում կամ արխիվ էր հրղեհվում ու ամեն ինչ ընթանում էր խաղաղ հունի վրա...

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՏՎԵՑԻՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ես ու մի փողկապավոր տղամարդ, հա', հա', հենց այն փողկապավորը, որի հետ հայրենադարձվել եմ, հիշում եք, թարգմանչի դեր էր կատարում, մեր ինքնակոչ ղեկավարը: Լավ, հույսով եմ հիշեցիք, նստած էինք ՕՎԻՐԻ պետի գրասենյակում ու սպասում էինք: Լուռ էինք, այնպես, ինչպես Իրանում, նույնատիպ հիմնարկում էինք սպասում ճակատագրական պատասխանի:

Պետը ժամանեց: Զգաստացանք: Փողկապավորը ոտքի կանգնեց, արևելքցու սովորությամբ, ձեռքը դրեց կրծքին ու թեթև խոնարհվեց: Նստեց միայն թույլտվությունից հետո: Ես նույնպես բարևեցի:

-«Մենք նպատակահարմար ենք գտել ձեր Ամերիկա մեկնելը», - մի քանի թղթեր նայելուց հետո ասաց նա:

Ցնցվեցի: Մի մեծ հարցական ծառացավ աչքերիս առաջ՝ զնա՞լ, թե՛ չզնալ: Նայեցի փողկապավորին: «Զգնալը էլություն է» կարդացի նրա աչքերի մեջ:

Նա գաղտագողի ժպտաց: Բոլորն էին այդ կարծիքին, անգամ օվիրի պետը, որը ուշացումով, բայց լքեց...

Հիշեցի հայրենի հողին ոտք դնելուս առաջին օրը, հողիս ինչպիսի հպարտությունը լցվեց: Հողը ոտքիս տակ ամրացավ և սփյուռքածին երիտասարդիս ձգեց, խառնեց իր հետ՝ կապեց արմատներին, նոր շունչ ու նոր արյուն ներարկեց: Ես ինձ իրավունք վերապահեցի ջարդելու պանդխտության ցուպը: Ուղիղ կեցվածք ընդունեցի, գլուխս՝ վեր, բաց ճակատով տեսա լուսավոր հորիզոնը... «Ես եմ այս հողի տերը, - ասացի ինքս՝ ինձ, - ես իմ տանն եմ, այս հողը մշակել է իմ պապը, այս ծառը տնկել է իմ պապը, այս պատը շարել է իմ պապը, այս վանքում աղոթել է իմ պապը: Այս սարը վկա է, որ այս ծառը տնկել է պապս, այս պատը շարել է պապս ու պապս աղոթել է այս վանքում... Պապս չկա, սարը կա: Սարը վկա է, իսկ ես ժառանգն եմ այս հողի, ծառի, վանքի ու վկա՝ Արարատի»:

Ի՞նչ եղավ հպարտությունս: Ինչու՞ ոտքիս տակի հողը նորից երերաց, ինչու՞ էր մթնում իմ տեսած լուսավոր հորիզոնը...

Դավաճանի զգացումը խեղդեց ինձ, ողնաշարի սուր ցավ զգացի, փորձեցի շտկվել, ծառանալ...

Դրսում սպասողներ ունեինք: Թե՛ դրական, թե՛ բացասական պատասխանները յուրովի էին ազդելու

նրանց վրա: Հուզված էի: Երկիրը լքելու թույլտվություն էի ստացել: Տանիցս դուրս գալու թույլտվություն էի ստացել ու այդ «ավետիսով» պետք է ներկայանայի հարազատներիս, ասեի՝ աչքներդ լույս, մեր տունը լքելու թույլտվություն ենք ստացել: Աստված իմ, մարդիկ ինչքան թանկ էին վճարում իրենց իսկ տունը լքելու համար...

Ու հանկարծ, դրսում սպասող երկու առանձին խմբեր, հարցական հայացքով շտապեցին դեպի մեզ.

- Մա քէ ռաֆթիմ, վայ բեհալե բաղիե (մենք զնացինք, վայը մնացողներին), - ասաց փողկապավորն ու շտապեց դեպի իրեն սպասող մեքենան:

ՄԵԾ ԳՈՐԾԱՐՔ

Մեկնելու համար մի քիչ էլ փող էր պետք:

Հորաքույրս տուրիստ էր եկել Հայաստան, նրա հետ գործարքի մեջ էինք մտել, փայլվիլուն էժանագին կտորներ էր ուղարկել, մեծաքանակ տվել էինք մեկին, նա էլ տարել էր Բաքու կամ Տաշքենդ ու իրացրել էր:

Ամերիկայի ճանապարհի համար չոչափելի գումար էր մնացել, դրա մասին իմացավ թանգարանի վարիչս: Դե, դասախոս էր, ղոցենտ, պատկառանք ներ-

չնչող անձ, երեք տարվա բարեկամ: Խորհուրդ տվեց ձեռքիս գումարով մի աղամանդ գնել, ասում էին՝ սովետական աղամանդը Ամերիկայում ինչ-որ արժեք է ներկայացնում: Խորհուրդ տվեց ու ասաց, որ իր տղան ծանոթ ունի, վստահելի մարդիկ են, լավ ապրանք կտան:

Դիմեցի նրա տղային: Պայմանավորվեցինք: Ապրանքը գնահատել էր ինը հազար յոթ հարյուր ուրբլի: Ահ ու սարսափը սրտիս մեջ դիմեցի ռիսկի: Տաս տարվա աշխատավարձիս համահավասար կանխիկ գումար գրպանս, իմ անձնական մեքենայով, մեկնեցի Երևան:

Մթնել էր: Վարիչիս տղան էր ու ընկերը: Ճիշտ ժամին եկել էին: Նրանք ևս մեքենայով էին: Մտա նրանց մեքենան: Նստեցի: Դողում էի: Բերանս դառնացել, չորացել էր: «Մաֆիա-մաֆիա» էի խաղում: Անփորձ էի: Բռնվելու ղեպքում տաս տարուց ավել ազատազրկումից բացի, նյութական ամբողջ կարողությունս ու կանխիկ դրամս տանուլ էի տալու: Առաջին անգամ էի մտնում այս տեսակի խաղի մեջ: Նրանց մոտ գտնվող ամեն մի առարկա, աչքիս հրացան էր թվում: Անծանոթը ձեռքը տարավ ծոցը: Ոտքերս թուլացան: Գրպանից հանեց մի մատանի, տվեց վարիչիս տղային:

- Էս ա, ախպեր,- ասաց նա ու մատանին փայլեց:

- Պիտի տանեմ էս շենքի երկրորդ հարկ, մասնա-

գետը տեսնի, նոր,- չորացած կոկորդա մի կերպ թրջելով, դողացող ձայնով ասացի ես:

- Ցավդ տանեմ, գումարը տուր, ուր կուզես տար, բան չունենք ասելու, վերադարձար, չուզեցիր՝ փողդ կտանք, ախպեր ջան:

- Տասը ռոպե չի տեի,- մեղավորի պես ասացի ես:

- Հա, ցավդ տանեմ, գումարը տուր, մենք հո չփախանք,- խռով տոնով ասաց վարիչիս տղան ու սիգարետ կպցրեց,- կարո՞ղ ա մենք էրեկվա լակոտներն ենք, այ ցավդ տանեմ:

- Արա, էս խի ես մեղ քաչե էստե, ցավդ տանեմ, հել, հել գնանք, արա,- վշտացավ անձանոթն ու ուղղվեց դեպի դեկը,- արա փող չենք տեսե՞լ, ի՞նչ ա, պրոստը հորդ խաթերն էր, արա...

Համոզեցին, թե վախեցրին, չհասկացա, ինը հազար յոթհարյուր կանխիկ դրամս առան, մատանին տվին, պայմանով, որ մինչև տաս ռոպե վերադառնամ:

Ծտի պես թռա շենքի երկրորդ հարկ: Նրանք էլ ինձ էին սպասում, մատանին ցույց տվի, ստուգեցին, «Ապակի ա», ասացին

Ես դուրս թռա:

Այդ ամենը տեեց ոչ ավելի, քան ութ ռոպե:

Չկային:

Մինչև այսօր մատանին ձեռքիս Աղթամարի պես նստել եմ խաղաղականի ափին ու նրա փայլի հույսով

սպասում եմ... ոչ թե իմ տաս տարվա աշխատավարձիս համաչափ գումարը ետ ստանալու, այլ նրա ապրանքը վերադարձնելու հույսով...

ՈՎ ՍԱՐԵՐ, ՄՈՎ ՍԱՐԵՐ, ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՍ ԵՏ ԲԵՐԵՔ

Ամերիկայում, առաջին իսկ օրերից հանդիպելով սիյուուքահայ հայրենակիցներին, արժանացա «հայաստանցի» պատվավոր պիտակին, նախկին իրանահայս, ապա հայաստանում՝ պարսիկ կամ ախպար որակումս, Ամերիկայում փոխարինվեց «Հայաստանցի»ով, որին այդքան երազել էինք:

Նաև տեղեկացա, որ մանկության ու պատանեկությանս ամենամոտ ընկերներից մեկը ապրում է իմ հարևանությամբ:

Հանդիպեցինք: Թվաց, թե մանկությունս են ետ բերել:

Նոր էր ամուսնացել: Ամուսնացել ու եկել էր Ամերիկա:

Մեր ընկերությունը տևեց շատ կարճ, ասուպային: Շատ էինք փոխվել: Ես՝ «ՈՒՂ ՂԻՉ ՏԱՆԸ», նա ...

